

# ՄԵՐ ՀԱՎԱՏԱՄՔԸ

16 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՇՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**Մաս Բ**

**19 - 36 դասեր**

ԵՐԵԿԱՆ  
«ՏԻԳՐԱՆ ՄԵԹ»  
2012

ՀՏԴ 23/28(07)  
ԳՄԴ 86.37g 7  
Մ662

Մ662 ՄԵՐ ՀԱՎԱՏԱՄՔԸ: 16 տարեկան երեխաների  
քրիստոնեական ուսուցման ձեռնարկ. -Եր.:  
«Տիգրան Մեծ», 2012.  
Մաս Բ: 19-36 դասեր: - 132 էջ

ՀՏԴ 23/28(07)  
ԳՄԴ 86.37g 7

ISBN 978-99941-0-417-8

© World Vision, 2012  
© Wordirect, 2012



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՑՆՈՂ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ **WORLD VISION**  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ



ԵՎ WORDIRECT ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԻՉ՝ ԼԵՎՈՆ ԶԱԲՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՐԱՄ ՈՒՌՈՒՏՅԱՆԻ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Գլուխ Զ

### **ԳԱԼՈՒ Է ՆՈՒՅՆ ՄԱՐՄՆՈՎ... .. 7**

---

|   |    |
|---|----|
| ԴԱՍ 19. ՎԵՐՍՏԻՆ ԳԱԼՈՒ Է ՆՈՒՅՆ ՓԱՌՔՈՎ .....  | 9  |
| ԴԱՍ 20. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ... ..                                   | 15 |
| ԴԱՍ 21. ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻ.<br>ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀՐԱՇՔՆԵՐ .....  | 21 |
| ԴԱՍ 22. ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻ.<br>ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ԱՌԱԿՆԵՐ ..... | 27 |

## Գլուխ Է

### **ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ... .. 33**

---

|   |    |
|---|----|
| ԴԱՍ 23. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ .....        | 35 |
| ԴԱՍ 24. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԽՈՍԵՑ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ..... | 41 |
| ԴԱՍ 25. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԽՈՍԵՑ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ..... | 47 |
| ԴԱՍ 26. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՊՐՈՒՄ Է ԵԿԵՂԵՑՈՒՄ .....        | 53 |

## Գլուխ Ը

### **ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՄԻԱՅՆ ՄԵԿ, ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ .....**

---

|  |    |
|--|----|
| ԴԱՍ 27. ՄԵԿ Է ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ .....       | 61 |
| ԴԱՍ 28. ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՏԱՃԱՐ .....            | 67 |
| ԴԱՍ 29. ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Է .....   | 73 |
| ԴԱՍ 30. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ. ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ..... | 79 |

**Գլուխ Թ**

**ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ,  
ՄԵՂՔԵՐԻ ՔԱՎՈՒԹՅԱՆԸ... 85**

---

ԴԱՍ 31. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ..... 87

ԴԱՍ 32. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՂՔԵՐԻ ՔԱՎՈՒԹՅԱՆԸ ԵՎ  
ԹՈՂՈՒԹՅԱՆԸ ..... 93

ԴԱՍ 33. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆԸ ..... 99

ԴԱՍ 34. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ..... 105

**Գլուխ Ժ**

**ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 111**

---

ԴԱՍ 35. ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՇՈՅԸ ..... 113

ԴԱՍ 36. ՍԱՂՄՈՍՆԵՐՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 119

ԱՂՈԹՔՆԵՐ 16 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ..... 125

ՀԱՎԵԼՎԱԾ ..... 128

# ԳԱԼՈՒ Է ՆՈՒՅՆ ՄԱՐՄՆՈՎ...



Նիկիական Հանգանակը շարունակում է սահմանել...

**«Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դասելու ողջերին ու մահացածներին, և նրա քաղաքությունը վախճան չունի»:**

Սույն գլուխը նվիրված է Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստին և իր Արքայության հաստատմանը:

- Դաս 19** ներկայացնում է Եկեղեցու հավատքը Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյան մասին
- Դաս 20** բացահայտում է Հիսուսի հայտարարությունը Վերջին դատաստանի մասին:
- Դաս 21** առաջին դասն է, որը Հիսուս Քրիստոսի առակների միջոցով մեզ պատկերացում է տալիս Երկնքի արքայության որպիսության մասին:
- Դաս 22** ներկայացնում է մի քանի առակներ, որոնցով Հիսուսն օգնում է մեզ հասկանալ Երկնքի արքայության քաղաքացիության էությունը:



### ***Ծնողների համար***

6-րդ գլխի չորս դասերը ներկայացնում են Եկեղեցու ըմբռնումը Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան մասին, երբ Տերը պիտի դատի բոլոր նրանց, ովքեր ողջ են և նրանց, ովքեր մահացել են: Հենց այս ժամանակ է, որ Երկնքի արքայությունը պիտի հաստատվի:

Եկեղեցին ապրում է Երկրորդ գալստյան սպասումով և մշտապես զգոն, քանի որ մեր ներկա կյանքն ապրելու կերպով պիտի վճռվի մեր իսկ դատաստանը, երբ Հիսուսը գա Վերջին դատաստանն անելու համար: Հիսուս Քրիստոսի հատընտիր հրաշքերի և առակների ուսումնասիրության միջոցով 21-րդ և 22-րդ դասերը կօգնեն ձեր զավակին հասկանալ, թե ինչպիսի՛ն պիտի լինի Երկնքի արքայությունը, և թե ի՛նչ է ակնկալվում նրա քաղաքացիներից:

Ժամանակ հատկացրեք և ձեր զավակի հետ զրուցե՛ք սույն գլխում ներկայացված հրաշքների և առակների շուրջ: Միասի՛ն փորձեք ուղիներ գտնել, որոնցով դուք կկարողանաք ապրել հիշյալ առակներում տրվող պատգամների համաձայն՝ որպես նախապատրաստություն Երկնքի արքայության մեջ քաղաքացիություն ստանալու համար:



# 19. ՎԵՐԱՏԻՆ ԳԱՎՈՒ Է ՆՈՒՅՆ ՓԱՌԻՐՈՎ

«Արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե ե՞րբ կգա ձեր Տերը»:

Մատթեոս 24.42



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Առօրյա մեր կյանքում կան գործեր, որոնց կատարումը պահանջում է որոշակի նախապատրաստություն: Երբեմն գիտակցորեն ենք նախապատրաստվում և ժամանակ ու եռանդ տրամադրում: Երբեմն էլ անգիտակցորեն ենք նախապատրաստվում, որովհետև այդպիսի մտտեցումն արդեն իսկ դարձել է աշխատանքային կարգապահության անբաժանելի մասը, և մենք այլևս չենք մտածում դրա մասին:

- Նայի՛ր ներքևի նկարներին: Գրի՛ր երկու կամ երեք եղանակ, թե ինքդ ինչպե՞ս կնախապատրաստվեիր պատկերված յուրաքանչյուր իրավիճակում: Նշի՛ր, թե իրավիճակներից ո՞րն է պահանջում գիտակցական, և ո՞րը՝ անգիտակցական նախապատրաստություն:



1. ....

1. ....

2. ....

2. ....



1. ....

1. ....

2. ....

2. ....

**Աստվածաշնչի** դասի մեջ պարզի՛ր, թե ինչպե՞ս է Զրիստոսը կոչում մեզ նախապատրաստվելու իր Երկրորդ գալուստին:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ԴԻՍՈՒՄԸ ՎԵՐՍՏԻՆ ՊԻՏԻ ԳԱ ՆՈՒՅՆ ՓԱՌՔՈՎ

Մատթեոս 24.30-31, 36-39, Մարկոս 13.32-37 և Գործք առաքելոց 1.7-11

Նիկիական Հանգանակը հաստատում է. «Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դասերու ողջերին ու մահացածներին»: Կարդա՛ սուրբգրային հետևյալ հատվածները և խորհրդածի՛ր դրանց շուրջ: Գտի՛ր այն մտքերը, որոնք հայտնում են Քրիստոսի վերադարձի խոստման մասին, և թե ի՞նչ է հանձնարարվում հավատացյալներին անել նախապատրաստվելու համար:

Այա Մարդու Որդու նշանը կերևա երկնքում, և աշխարհի բոլոր ժողովուրդները կողքան, երբ տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է ամպերի վրա բազմած՝ զորությանը և մեծ փառքով: Եվ երբ մեծաշայն փողը հնչի, նա իր հրեշտակներին կուղարկի, որպեսզի հավաքեն իր ընտրյալներին աշխարհի չորս կողմերից՝ երկնքի մեկ ծայրից մինչև մյուսը:

Սակայն ոչ ոք չգիտի, թե երբ է գալու այդ օրը կամ ժամը. ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը: Եվ ինչպես եղավ Նոյի օրերին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալստյան ժամանակ: Այդ օրերին, երբ տակավին ջրհեղեղը չէր պատահել, մարդիկ ուրում էին ու խմում, կին էին առնում կամ մարդու գնում մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տակավին: Բայց ժողովուրդը չիմացավ այդ, մինչև որ ջրհեղեղն սկսվեց և բնաջնջեց բոլորին: Ահա այդպես կլինի նաև Մարդու Որդու գալստյանը:



Մատթեոս 24.30-31, 36-39



Սակայն ոչ ոք չգիտի, թե երբ է գալու այդ օրը կամ ժամը, ո՛չ երկնքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, այլ միայն Հայրը: Չգո՛ւյշ եղեք, արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որովհետև չգիտեք, թե երբ է ժամանակը: Դա նման է այն մարդուն, որը թողնում է իր տունը և գնում ուրիշ երկիր: Չգնացած՝ իր ծառաներից յուրաքանչյուրին պարտականություն է տալիս և դռնապանին էլ պատվիրում, որ արթուն մնա: Ուրեմն դո՛ւք էլ արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե տակավին զիշերվա ո՞ր պահին կգա, երեկոյա՞ն, կեսգիշերի՞ն, աքլորականչի՞ն, թե՞ առավոտյան. որպեսզի չլինի թե հանկարծ գա և չեզ քնի մեջ գրնի: Արդ, ինչ որ չեզ եմ ասում, բոլորին եմ ասում. արթո՛ւն կացեք:

Մարկոս 13.32-37

Դուք չեք կարող իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրը որոշել է իր իշխանությանը: Բայց երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորությանը կլցվեք և իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև աշխարհի ծայրամասերը: Այս խոսքերից հետո, երբ նրանք դեռ նայում էին նրան, Հիսուսը երկինք համբարձվեց, և մի անպ նրան ծածկեց նրանց տեսողությունից: Եվ երբ առաքյալները, իրենց աչքերը հառած, նրա երկինք գնալն էին դիտում, սհա երկու սպիտակագգեստ մարդիկ երևացին նրանց և ասացին.

- Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ եք կանգնել նայում երկնքին: Այս Հիսուսը, որ երկինք վերացավ, մի օր դարձյալ կգա այնպես, ինչպես տեսաք նրա երկինք գնալը:

Գործք առաքելոց 1.7-11

**Բառարան**

**ԳԱՆՈՒՍ**  
վերաբերում է Քրիստոսի՝ երկրորդ անգամ աշխարհի գալուճ, երբ տեղի պիտի ունենա դատաստանը:

## ԽՈՐՀՐԴԱԾԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՊԱՏԳԱՄԻ ՇՈՒՐՋ

- Փոքր խմբերով քննարկե՛ք սուրբգրային ընթերցվածներին առնչվող հետևյալ հարցումները և մտորե՛ք դրանց շուրջ.
1. Մատթեոսի Ավետարանում նկարագրվում է մի տեսարան, թե ինչպե՛ս պիտի լինի Մարդու Որդու վերադարձը: Կարո՞ղ ես հիշել մեկ այլ նկարագրություն Նոր Կտակարանում, երբ Մարդու Որդին հայտնվում է ամպերի վրա երկնքում: Կարելի է օգտագործել համաքարքառը՝ այդպիսի հատված գտնելու համար:
  2. Ըստ **Մատթեոս 24.30-31, 36-39** քաղվածքների, մարդիկ ինչո՞վ էին զբաղվում Նոյի օրերին մինչև ջրհեղեղը: Արդյո՞ք նախապատրաստվում էին: Ինչպե՞ս կփոխելիդ կյանքիդ ընթացքը, եթե իմանալիդ երկրորդ գալստյան ժամանակը:
  3. **Մարկոս 13.32-37** հատվածում Քրիստոսը խոսում է զգոն և արթուն լինելու կարևորության մասին մինչ իր վերադարձը: Ի՞նչ ես հասկանում զգոն ասելով: Ի՞նչ քայլեր կձեռնարկելիդ զգոն լինելու համար՝ ըստ Հիսուսի հորդորների: Գրի՛ր դրանցից մի քանիսը:
  4. Նայի՛ր Համբարձման սրբանկարը, որը պատկերում է **Գործք 1.7-11** հատվածը: Նշմարի՛ր, թե ինչպե՛ս են աշակերտները «աչքերը դեպի երկինք հառել»: Արդյոք նրանք անուշադի՞ր են կատարվող իրադարձությանը, թե՞ զգոն են և աղոթահոգի: Մենք ինչպե՞ս պիտի նախապատրաստվենք Քրիստոսի երկրորդ գալուստին: Ունե՞ս նոր մտորումներ: Ո՞րն է քեզ ուղղված Աստծո պատգամը:

## ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՎՈՐՑԻՆ՝ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարսեղ վարդապետը Կիլիկյան Հայաստանի Սև լեռներում հաստատված նշանավոր Մաշկերի վանքի ակնառու միաբաններից էր: Նա 1325թ. հեղինակել է Մարկոսի Ավետարանի մեկնությունը, որի միայն երկրորդ մասն է մեզ հասել: Բարսեղ վարդապետն արթնության մասին գրում է հետևյալը.

1. Արթնությունն առաքինություն է: Սակայն բավական չէ արթուն լինել, այլ հարկ է նաև զինված լինել հավատի ու սիրո զրահով: Եթե արթուն լինենք՝ այսինքն ուղիղ հավատով, բայց անզեն ու մերկ լինենք առաքինությունից, ոչինչ չի արգելի սատանային սրով հարձակվելու մեզ վրա: Պետք է հագնել նաև փրկության հույսի սաղավարտը, քանզի ինչպես սաղավարտն է պահպանում գլուխը բռնոր կողմերից, նույնպես և հույսը թույլ չի տալիս մտքին մոլորվել, այլ պահում է զգոն ու կանգուն:
2. Հարկ է մտքով ևս արթուն լինել, որովհետև եթե մարդ մարմնով արթուն է, իսկ մտքով ննջում է, իզուր է աշխատում: Երբ մարմինը քնում է, նրան տիրում է բռնությունը, այլ ոչ մեր կամքը: Իսկ երբ հոգին ընկած է ձանձրալի քնի մեջ, նրան տիրում է թշնամին և կառավարում ըստ իր ցանկության: Ուստի արթուն մնալն առավել վերաբերում է հոգուն, քան մարմնին:
3. Արթուն լինել նշանակում է հսկել, այսինքն՝ աղոթել Աստծուն, որովհետև աղոթքը զորություն ունի փրկել մեզ ահեղ դատաստանից և արժանի դարձնել Երկրորդ գալուստին կանգնելու Մարդու Որդու առջև:
4. Արթուն լինել նշանակում է բարի գործերով զարդարել կյանքը, այսինքն՝ Քրիստոսի գալուստին պատրաստվել սրբությանը և վառած ճրագներով, քանզի աշխարհս նման է գիշերվա և կարոտ է արդարության լույսին:

- Խմբով քննարկե՛ք և նշե՛ք յուրաքանչյուր տեսակի արթնության իմաստը: Ինչպե՞ս կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում զգոնությունը զորացնելու համար՝ ընդառաջ Երկրորդ գալստյանը:
- Գրի՛ր, թե ինչպե՞ս է Հիսուսի ուսուցումների հանդեպ աշակերտների զգոնությունը ներշնչում քեզ:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՄԵԾ ՊԱՅՔ. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՏՈՆԵՐԻ ՏՈՆԻՆ

Ինչպե՞ս է փոխվում վերաբերմունքդ ամեն անգամ, երբ մոտենում է Մեծ Պահքը: Սկսում ես բողոքե՞լ մյուսներին՝ իմանալով, որ հրաժարվելու ես շատ բաներից: Թե՞ ուրախությամբ ես լցվում՝ իմանալով, թե որքան մոտենում է Մեծ Պահքը, այնքան մոտենում է նաև Քրիստոսի Հարության տոնը՝ Սուրբ Ջատիկը: Կարևոր է հիշել, որ Պահքի իմաստը մտեղեցից ու կաթնամթերքից պարզապես հրաժարվելու մեջ չէ, այլ պահք պահելով մենք պատրաստվում ենք բարեփոխել մեր մտածելակերպն ու վարվելակերպը: Միայն կենդանական ծագումով սննդից պահք պահելը բավարար չէ, հարկ է նախ և առաջ պահք պահել մեղքից: Ուրեմն, եկեք մտածենք, թե ինչպե՞ս պետք է հեռու մնանք մեղք գործելուց:

- Լրացրո՛ւ ներքևի գծապատկերն այն եղանակներով, որոնցով կկարողանաս նախապատրաստվել Մեծ Պահքին՝ դիմավորելու տոների տոնը՝ Սուրբ Ջատիկը: Ամեն տարի Մեծ Պահքի հոգևոր ճամփորդությունն սկսելուց առաջ մտածի՛ր, թե ի՞նչ կարող ես անել կյանքիդ նշված ոլորտներում: Պատասխաններդ պետք է լինեն պարզ ու հստակ: Յուրաքանչյուր բաժնից ընտրի՛ր մեկ կետ և հաճճ առ իրականացնել:

### ԵՂԱՆԱԿՆԵՐ ՄԵԾ ՊԱՅՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽՊԱՏՐԱՍԿԵԼՈՒ ԶԱՄԱՐ


| Պաշտամունք և աղոթք | Ծառայություն | Ուտելիք և ըմպելիք |
|--------------------|--------------|-------------------|
| 1. ....            | 1. ....      | 1. ....           |
| 2. ....            | 2. ....      | 2. ....           |
| 3. ....            | 3. ....      | 3. ....           |

Առաքելական Ուղղափառ մեր Սուրբ Եկեղեցին ապաշխարության գեղեցիկ ու հոգեզմայլ արարողություններ է կատարում Մեծ Պահքի ընթացքում: Պահք պահելուն զուգահեռ հիշյալ արարողությունները խաղաղեցնում են մեր հոգին, որպեսզի մինչև Ավագ Շաբաթ կարողանանք մաքրագործվել և խոնարհեցնել մեր անձը: Քո կարծիքով՝ ինչո՞ւ է կարևոր անձի խոնարհությունը Ջատիկին նախապատրաստվելու համար:

Մեծ Պահքի ընթացքում մեր Եկեղեցին Սուրբ Պատարագը մատուցում է փակ վարագույրի ետևում և սովորաբար Սուրբ Հաղորդություն չի տալիս հավատացյալներին, որպեսզի լիարժեք կերպով կարողանան ապաշխարել ու նախապատրաստվել: Սովորաբար ուրբաթ երեկոյան կատարվում է Հանգստյան Ժամերգություն, որի ընթացքում ամբողջությամբ կարդացվում է Սբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի բոլոր քսանչորս տները:

Մեծ Պահքը հրաշալի առիթ է նաև բարի գործ կատարելու համար, երբ մենք անձնապես հասնում ենք կարիքավորներին և փորձում օգտակար լինել նրանց: Եկեղեցին հաճախ է ձեռնարկում բարեսիրական նման միջոցառումներ, որոնց համար պետք են կամավորներ: Կա՞նք քո շրջապատում կամ համայնքում մարդիկ, ովքեր անօրևան են և չունեն ուտելիք: Ինչով կարող ես, օգնության հասի՛ր այդպիսի մարդկանց: Մտածի՛ր, թե ինչպե՞ս կարող ես օգտագործել Աստծուց քեզ տրված շնորհները և ձեռք մեկնել օգնության կարոտ մարդկանց:

- Փոքր խմբերով մտածե՛ք եղանակներ, որոնցով կկարողանաք, որպես անհատ և որպես խումբ, օգնության հասնել ձեր համայնքին:
- Գրի՛ր մի աղոթք կարիքավոր այն մարդու համար, որին կցանկանաս օգնել:



## ԱՐԱ ՓԵՍԱՆ ԳԱԼԻՍ Է

Ավագ Երեքշաբթի, Երեկոյան ժամերգության ավարտին կատարվում է տասը կույսերին նվիրված եկեղեցական մի արարողություն, որի ընթացքում կարդացվում է Հիսուսի պատմած համանուն առակը:

- Համարարբառի օգնությամբ գտիր առակի հետևյալ նախադասությունը. «Ահա փեսան գալիս է, դիմավորելո՛ւ ելեք նրան»: Դո՛ւրս գրիր հիշյալ առակը բովանդակող գրքի անունը, գլուխը և համարները: Կարդա՛ առակը և մտածի՛ր դրա պատգամի շուրջ:



Հետևյալ շարականը (Օրհնություն ԲԿ) երգվում է Ավագ Երեքշաբթի Գիշերային ժամերգության ընթացքում: Կարդա՛ շարականը և տե՛ս, թե ինչպե՞ս է հոգևոր երգն արտահայտում առակի պատգամը: Այստեղ փեսան խորհրդանշում է Քրիստոսին: Իսկ Տիրոջ սիրելի հարսը Եկեղեցին է:

*Իմաստուն կույսերը լապտերների համար յուղ պատրաստելով երկնավոր Փեսային ընդառաջ ելան վառած լապտերներով:*

*Իսկ հիմար կույսերի լապտերները յուղից դատարկ լինելով Փեսայի գալուստին անպատրաստ գրնվեցին մարած լապտերներով:*

*Ուստի մենք էլ հոգևոր յուղ պատրաստենք, որպեսզի անմահ Փեսայի առազաստը մտնենք վառած լապտերներով:*

- Փոքր խմբերով քննարկե՛ք հետևյալ հարցումները և գրե՛ք պատասխանները գրատախտակին:
1. Ինչպիսի՞ն պետք է լինի փեսայի ու հարսի փոխհարաբերությունն ամուսնական կյանքում (նկատի պետք է առնել սերը, նվիրումը և միմյանց նկատմամբ դրսևորվող հոգատարությունը):
  2. Ըստ շարականի իմանալով «փեսա» բառի նշանակությունը՝ ինչպիսի՞ն է Քրիստոսի հարաբերությունն իր «հարսի»՝ Եկեղեցու, այսինքն՝ հավատացյալների համայնքի հետ: Ինչպիսի՞ն պետք է լինի «հարսի» հարաբերությունը Քրիստոսի հետ:
  3. Ինչո՞ւ Քրիստոս Փեսան պիտի վերադառնար «կեսգիշերին»: Դա ի՞նչ է նշանակում Քրիստոսի հետևորդների համար: Երկրորդ գալուստն ինչպե՞ս է ավելի նպաստավոր մեզ համար այս կերպ, քան եթե իմանալինք նրա գալստյան ժամը:

- Ինքնուրույն գրիր մի աղոթք կամ նկարի՛ր մի պատկեր՝ արտահայտելով քո սեփական պատասխանն առակի կամ շարականի վերաբերյալ:



## ԵՐԳԵՆՔ

Ավագ Երեքշաբթի օրը, Երեկոյան ժամերգության ընթացքում, մինչ տասը կույսերին նվիրված եկեղեցական արարողությունը, երգվում է հետևյալ շարականը:

### Համբարձի ԲԶ

*Շնորհի՛ր մեզ, Տե՛ր, արթնություն իմաստուն կույսերի հեյր, և պայծառացրո՛ւ մեր հոգիների լսարանները:*

*Երկնչում ենք քեզնից, ո՛վ Տե՛ր, զարհուրելով քո հեյրկյալ պարասխանից՝ նշմարիւր եմ ասում, թե չեզ չեմ ճանաչում:*

*Տե՛ր, երբ Հոր փառքով ամբողջ աշխարհը դարելու գաս, մե՛զ էլ շնորհի՛ր, որ քո աջ կողմում կանգնենք:*

*Երկնավոր Փեսայի ողորմության դուռը թող բացվի մեր առջև, որպեսզի իմաստուն կույսերի հեյր առագաստ մտնենք:*

*Փեսային ընդառաջ գնանք և նրա առագաստը մտնենք, որպեսզի հիմար կույսերի նման դուրսը չմնանք:*

*Թող պայծառանան մեր հոգիների լսարանները, երբ մեզ երկնքի արքայության խրախմանքի հրավիրյալների հեյր բազմեցնես:*

(Նոտաները տես՝ **Հավելվածում**, էջ՝ 128):

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Եթե Քրիստոսը զար այսօր, ինքդ քեզ պատրաստ կհամարելի՞ր: Խորհրդածի՛ր այնպիսի եղանակների մասին, որոնցով պատրաստ կլինեիր կամ էլ՝ չէիր լինի Երկրորդ գալստյանը: Ինչպե՞ս կարող ես փոխել կենսակերպը, որպեսզի ինքդ քեզ նախապատրաստված համարես:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Աստվածաշնչյան համապատասխան քաղվածքների, ծիսապաշտամունքային արարողությունների և եկեղեցական հայրերի խրատների միջոցով աշակերտները խորացրեցին իրենց գիտելիքները Հիսուսի երկրորդ գալստյան վերաբերյալ: Այսօրվա դասում շեշտվում էր երկրորդ գալստյանը պատրաստ լինելու կարևորությունը: Ոչ ոք, բացի Հորից, չգիտի այդ իրադարձության ժամանակը:

Աշակերտները տեղեկացան նաև Մեծ Պահքի ընթացքում Սուրբ Զատկին նախապատրաստվելու կարևորության մասին: Շարականում նկարագրված կեսգիշերին Փեսայի գալուստը բացահայտում է, թե ինչպե՞ս ենք եկեղեցական արարողության միջոցով հասկանում պատրաստվելու անհրաժեշտության պատգամը:

Ընտանիքով հաճախե՛ք Ավագ Շաբաթվա եկեղեցական արարողություններին և գրառումներ արե՛ք հատկապես սուրբգրային ընթերցվածքների և շարականների մասին, որոնք վերաբերում են մշտապես պատրաստ լինելուն՝ ընդառաջ մեր Տիրոջ հետ հանդիպման:

# 20. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՍԱՆԻՆ...

«Եվ Հայրը ոչ մեկի չի դատում, այլ դատելու իշխանությունն ամբողջությամբ հանձնել է Որդուն, որպեսզի բոլորն էլ պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը»:

Յովհաննես 5.22-23



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

■ Դատաստան բառը բազմակի իմաստներ ունի: Ծանոթացի՛ր բառարանային հետևյալ մի քանի սահմանումների.

1. Դատավճիռ — դատարանի կողմից կայացված և հրապարակված որոշում:
2. Դատավորի որոշում — դատի ընթացքում մեկ կամ ավելի դատավորների կողմից կայացված որոշում:
3. Առողջ դատողություն — խելամիտ կարծիք կազմելու, բանական որոշում կայացնելու և արժանահավատ կռահումներ կատարելու կարողություն:
4. Գնահատում ըստ դիտարկման — որևէ բանի, ասենք՝ արագության կամ տարածության հաշվարկ, կատարված աչքի կամ մեկ այլ զգայարանի օգնությամբ:
5. Ո՞րն է դատաստանի մասին քո սահմանումը: .....



■ Հիշյալ հինգ սահմանումներից ո՞րն է լավագույնս բնորոշում վերևի աջ կողմի տեսարանը:



Ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ կարծես թե խոսում են իրենց նոր դասընկերոջ մասին, որին դեռևս չեն ճանաչում: Նորեկի՝ ինչպիսի անձ լինելու մասին նրանք փորձում են կռահումներ կատարել անբավարար տեղեկության, անհիմն դատողությունների կամ զգայական տպավորությունների հիման վրա:

Ներքևի ո՞ր հասկացությունը լավագույնս կբնորոշեր նրանց վերաբերմունքը:

դատողական                      կանխակալ                      ինքնավստահ

■ Ինչպիսի՞ն է քո փորձառությունը՝ դատելու կամ դատվելու հետ կապված: Որտե՞ղ, ո՞ւմ կողմից և ինչպե՞ս ես զգացել վերևում նկարագրված վերաբերմունքները և գրի՛ր դրանց մասին:

**Աստվածաշնչի դասում Կեն, թե ի՞նչ ասաց Հիսուս Քրիստոսը դատաստանի մասին:**

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՔՐԻՍՏՈՍ ԱՐՔԱՆ ՎԵՐԱՏԻՆ ՊԻՏԻ ԳԱ ԴԱՏԵԼՈՒ

Հովհաննես 5.25-30, Մատթեոս 25.31-46

Կարդա՛ սուրբգրային հետևյալ քաղվածքները և գտի՛ր նրանց պատգամի արձագանքը Նիկիական հանգանակում, ինչպես խոստովանում ենք. «Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դարելու ողջերին ու մեռածներին, որի թագավորությունը վախճան չունի»:

- Հասարակ իմացեք, կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ մեռելները կլսեն Աստծո Որդու ձայնը, և լսողները կսպրեն. որովհետև, ինչպես Հայրը կյանքը պարգևելու գործընդուն ունի իր մեջ, այդ գործընդունը փվել է նաև Որդուն: Նույնպես և դարելու իշխանություն է փվել Որդուն, որովհետև նա Մարդու Որդի է: Ուրեմն մի՛ զարմացեք, որ ասացի ձեզ, թե կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան նրանք, որ բարիք են գործել, հարություն կառնեն և կսպրեն, իսկ նրանք, որ չարիք են գործել, հարություն կառնեն և կդատարարվեն: Ես ինքս ինչնից դարելու չեմ կարող, այլ դատարարում եմ այնպես, ինչպես լսում եմ իմ Հորից, ուստի և իմ դատարարանն արդար է, որովհետև ոչ թե իմ կամքն եմ գործադրում, այլ կամքը նրա, ով ինչ ուղարկեց:



Հովհաննես 5.25-30

- Եվ երբ Մարդու Որդին իր փառքով գա բոլոր հրեշտակների հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր թագավորական գահի վրա: Բոլոր ազգերը կհավաքվեն նրա գահի դիմաց, և նա մարդկանց պիտի բաժանի իրարից, ինչպես որ հովիվն է գալուստում ոչխարներն այծերից: Ոչխարները պիտի կանգնեցնի իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ կողմը: Հերոս թագավորը պիտի ասի իր աջ կողմը կանգնածներին. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, և ժառանգեցե՛ք այն արքայությունը, որ պատրաստված է ձեզ համար աշխարհի սկզբից ի վեր, որովհետև ես քաղցած էի, և ինչ կերակրեցիք, ծարավ էի, և ինչ հագցրիք, հիվանդ էի, և ինչ խնամեցիք, բանրում էի, և այցելեցիք ինձ»:

Այն ժամանակ արդարները կհարցնեն. «Տե՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած և կերակրեցիք, կամ ծարավ և ջուր փվեցիք: Ե՞րբ տեսանք քեզ օտարական և ընդունեցիք, կամ մերկ և հագցրիք: Ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանրի մեջ և այցի եկանք քեզ»: Թագավորը պիտի պատասխանի նրանց. «Ասում եմ ձեզ, որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, ինչ արած եղաք»:

Այա նա իր ձախ կողմը կանգնածներին պիտի ասի. «Անիծյալներ, հեռացե՛ք ինչնից, գնացե՛ք հավիտենական կրակը, որ պատրաստված է Սատանայի և նրա հրեշտակների համար. որովհետև ես քաղցած էի, և ինչ չկերակրեցիք, ծարավ էի, և ինչ ջուր չփվիք, օտարական էի, և ինչ չընդունեցիք, մերկ էի, և ինչ չհագցրիք, հիվանդ էի ու բանրի մեջ, ասկայն այցի չեկաք ինձ»:

Այն ժամանակ նրանք պիտի հարցնեն. «Տե՛ր, ե՞րբ քեզ տեսանք քաղցած, ծարավ, օտարական, մերկ, հիվանդ կամ բանրի մեջ ու չօգնեցիք քեզ»: Թագավորը պիտի պատասխանի նրանց. «Ասում եմ ձեզ, որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին չօգնեցիք, ինչ օգնած չեղաք»:



Եվ այսպես նրանք պիտի գնան դեպի հավիտենական պատիժ, իսկ արդարները՝ հավիտենական կյանք:

Մատթեոս 25.31-46



## ԱՐՁԱԳԱՆՔԵՆՔ ՀԻՍՈՒՄԻ ՊԱՏԳԱՄԻՆ

- Խորհրդածենք Հովհաննեսի և Մատթեոսի ավետարանների քաղվածքների շուրջ՝ կապված Վերջին դատաստանի հետ: Ինչպե՞ս կհաղորդեիր Հիսուսի պատգամն այսօր քո ընկերներին, որ այն հաղորդակից լինեիր նրանց կյանքի փորձառություններին: Քո ուղերձն ինչպե՞ս կառաջնորդեր նրանց նմանվելու Մատթեոսի Ավետարանում նկարագրված արդարներին:

**ՈՒՂԵՐՁ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ**

---



---



---



---

## ՊԱՏԱՍԱՆՆ ԱՅՆ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՈՉԻՆ

- Հովհաննեսի ավետարանում կարդում ենք ի ծնե կույրի տեսողության վերականգնման հրաշքի մասին: Կարդա՛ Հիսուսի կատարած այս հրաշքի մասին **Հովհաննես 9.1-41** հատվածում: Փոքր խմբով մտածենք ձեզ նշանակված հարցերի մասին՝ ընդհանուր քննարկմանը պատրաստվելու համար: Հետքննարկման՝ պատմությունից ընտրի՛ր մի բան, որը մեծապես տպավորել է քեզ, իմաստ հաղորդել, և գրի՛ր դրա մասին:

---



---



---



---

- Վերընթերցի՛ր ի ծնե կույրի բժշկության մասին ավետարանական քաղվածքը և վերհիշի՛ր Սբ Հովհաննես ավետարանչի խոսքը **5.25-30** հատվածում, թե ովքեր լսեն Աստծո Որդու ձայնը, կապրեն:
  - *Չարմանալին էլ այդ է, որ դուք չգիտեք, թե նա որտեղից է, և սակայն նա իմ աչքերը բացեց: Գիտենք, որ Աստված մեղավորներին չի լսում, բայց լսում է նրանց, ովքեր աստվածապաշտ են և կատարում են նրա կամքը: Աշխարհի սկզբից ի վեր լսված բան չէ, որ մեկն ի ծնե կույր մարդու աչքերը բացած լինի: Եթե այդ մարդը Աստծուց եկած չլիներ, ոչ մի բան անել չէր կարող:*

*Նրանք պատրասխանեցին.*

- *Դու ինքդ ամբողջովին մեղքի մեջ ես ծնված և մեր գլխին ուսուցի՞չ ես ուզում լինել: Եվ ժողովաբանից դուրս արի՞ն նրան: Հիսուսը լսեց, թե նրանք դուրս են արել մարդուն, և երբ գրավ նրանց, ասաց.*

- *Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն: Նա պատրասխանեց.*

- *Տե՛ր, ո՞վ է նա, որպեսզի հավատամ նրան: Հիսուսն ասաց նրան.*


- *Դու արդեն տեսար նրան. քեզ հետ խոսողն է:*

- *Հավատում եմ, Տե՛ր,- ասաց նա և երկրպագեց նրան: Հիսուսն ասաց.*

- *Դատարան անելու համար եկա այս աշխարհը, որպեսզի ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան: Փարիսեցիներից ոմանք, որ Հիսուսի շուրջն էին, լսեցին այս և հարցրին.*

- *Արդյոք մե՞նք էլ կույր ենք: Հիսուսը նրանց պատրասխանեց.*

- *Եթե կույր լինեիք, մեղք չէիք ունենա, բայց քանի որ ասում եք, թե տեսնում եք, նշանակում է՝ հաստատում եք ձեր մեղավոր լինելը:*



Հովհաննես 9.30-41

1. Որոշի՛ր, թե հիշյալ պատմության մեջ մարդկանց ո՞ր խումբն է, որ իսկապես լսում է, և ո՞րը, որ իբրև թե լսում է, բայց չի լսում:
2. Հիսուս Քրիստոսի ներկայությունն ինչպե՞ս է առաջնորդում յուրաքանչյուր խմբի դեպի ինքնադատաստան: Հիշյալ հատվածում Հիսուս Քրիստոսի ո՞ր խոսքերն են օգնում քեզ ձևակերպելու մտածումներդ: Ինքնուրույն արտահայտվիր ներքևի տողերին:

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ԽՐԱՏՆԵՐ ՍԲ ՀՈԿՅԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻՑ

**Հովհաննես 5.22-23** համարների վրա հիմնված Սբ Հովհան Ոսկեբերանի քարոզի ներքոդրյալ քաղվածքը երիտասարդներին ու մեծահասակներին զորավոր կերպով խոսում է Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյան կամ Վերջին դատաստանի ժամանակ յուրաքանչյուր անհատի պատասխանատվության մասին:

- Հիշյալ մասն ընթերցելիս այն համեմատիր **Սաղմոս 10.3-6** համարների հետ, որում սաղմոսերգուն խոսում է միայն ներկայով ապրող չար մարդու վարքագծի մասին: Քարոզի մեջ գտիր խրախուսական կետեր, որ Սբ Հովհանը հղում է երիտասարդներին ու մեծերին: Այս ինքն թեզ համար գրիր կյանքի կանոններ, որոնք կարծարծեն Ոսկեբերան հայրապետի խրատները և կսահմանեն այնպիսի կյանք, որով Դատաստանի օրը կարժանանա Քրիստոսի հետևյալ կոչին. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ, և ժառանգեցեք այն արքայությունը, որ պատրաստված է ձեզ համար աշխարհի սկզբից»:



*Միրելիներ, հարկ է, որ մենք մեծ նվիրում դրսևորենք մեր բոլոր գործերում: Եվ սա ստում եմ, որովհետև հաշվեդրո եներ և խիստ հաշիվ պիտի տանք թե՛ մեր խոսքերի և թե՛ արարքների համար: Մեր գործերը չեն սահմանափակվում ներկա կյանքով, այլ տակավին կյանքի մեկ այլ փնակով, որը պիտի ընդունենք այս աշխարհից մեկնելուց հետո և պիտի կանգնենք ահեղ դատաստանի առջև: «Մենք բոլորս, - ստում է Պողոս, - պետք է կանգնենք Քրիստոսի դատաստանի առջև, որպեսզի յուրաքանչյուրս ստանա այն, ինչ նա վատարակել է մարմնով ըստ բարի կամ չար գործերի»:*

*Ուրեմն, եկեք միշտ զգոնություն դրսևորենք այս դատաստանի նկատմամբ, որով ի գորու կլինենք անդադար հարարելի առաքինության մեջ: Նա, ով մտահան կանի այդ օրը, եներակա կլինի կործանման, ինչպես չին, որ կորցնում է սանչը. քանզի Աստվածաշունչն ստում է. «Մշտապես պիղծ են նրա ճանապարհները» (Սաղմոս 9.5), և սպա պարճառը նշելու համար ավելացվում է. «Չկա Աստված նրա աչքերի առջև»: Արդ, նա, ով անընդհար մտքում պահում է դատաստանի երկյուղը, միտքարություն կգտնի:*

*«Հիշիր քո վերջը, - ստում է Սուրբ Գիորը, - և դու երբեք չես մեղանչի»: Նա, ով այժմ ներում է մեր մեղքերը, այն ժամանակ պիտի նստի դարելու համար. նա, ով մահացել է ի սեր մեզ, պիտի վերստին հայրնվի դարելու փեզերքը: «Երկրորդ անգամ նա պիտի երես բոլոր նրանց, ովքեր առանց մեղքի մեջ մասնակցություն ունենալու սպասում են նրան մինչև փրկություն»: Ահա թե ինչու է նա ստում այսպեղ. «Իմ Հայրը չի դարում ոչ մեկին, այլ ամբողջ դատաստանը հանչել է Որդուն, որպեսզի բոլոր մարդիկ պարվեն Որդուն, ինչպես կարավեն Հորը»:*

**Սբ Հովհան Ոսկեբերան, 39-րդ քարոզ**

**Բառարան**  
**ԴԱՏԱՍԱՆ**  
 Դատարան կամ դատելու իրավունք ունեցող մարդկանց ատյան: Քրիստոնեական ընթրնումը վերաբերում է Վերջին դատաստանին, երբ Հիսուս Քրիստոսը պիտի դատի:

**ԻՄ ՆՇԱՆԱԲԱՆԸ.**  
**ԳԻՏԱԿՑՎԱԾ ԿՅԱՆՔ ԴԱՏԱՍԱՆԻ ԵՐԿՅՈՒՂՈՎ**

---



---



---



---



---

## ԱՂՈԹՔ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Աստծո պատվիրանների միջոցով և Հիսուս Քրիստոսի անձնական օրինակով քրիստոնյաներս առատ օգնություն և ուղորդում ենք ստանում՝ աստվածահաճո կյանք ապրելու համար: Մինչդեռ մեր մարդկային անկյալ բնության պատճառով ոչ մի մարդկային էակ չի կարողացել գերծմնալ մեղքից՝ բացի մեր Տեր Հիսուս Քրիստոսից:

Մենք հնարավորություն ունենք մեր գործած մեղքերի համար ներում ստանալ Ապաշխարության խորհրդի միջոցով՝ ըստ աշակերտներին ուղղված մեր Տիրոջ հետևյալ խոսքերի. «Հասարա՛յր իմացեք, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում» (Մատթեոս 18.18):

Եկեղեցին նույնպես, հենվելով Աստծո ողորմածության վրա, մխիթարություն և հույս է ներշնչում հավատացյալներին: Մենք շարունակ աղոթում ենք, որ Աստված Վերջին դատաստանի ժամանակ քաղցր ողորմության արժանացնի հավատքով ննջած մեր հանգուցյալներին: Սուրբ Պատարագի հիշատակությունների պահին պատարագիչ քահանան աղոթում է եկեղեցու բոլոր անդամների՝ թե՛ ողջերի և թե՛ հանգուցյալների համար ասելով. «Հիշի՛ր, Տե՛ր, նաև հանգուցյալ (այս անուն) ծառայի հոգին և հանգստություն պարգևի՛ր քո լուսեղեն օրհասներում»: Ննջեցյալների համար մենք նաև աղոթում ենք Հոգեհանգստյան արարողության ընթացքում, որը մատուցվում է հանգուցյալի մահվան յոթնօրեքի, քառասնօրեքի և տարելիցի առիթներով: Ահա շարականի մի տուն, որը Հոգեհանգստյան կարգի ընթացքում երգվում է Ավետարանի ընթերցումից հետո: Աստվածաշնչից կարդա՛ **Ծննդոց 5.23-24** և **Գ Թագավորություններ 2.1-12** հատվածները, որոնցում խոսվում է Ենոքի և Եղիայի մասին: Քո կարծիքով՝ ինչո՞ւ են նրանք հիշատակվում հետևյալ շարականում.



*Վերին Երուսաղեմում՝ հրեշտակաների բնակարանում, ուր աղավնակերպ ծերացած Ենոքն ու Եղիան ապրում են Եդեմի դրախտում՝ պայծառ և արժանապես. ողորմա՛ծ Տե՛ր, ողորմի՛ր մեր ննջեցյալ հոգիներին:*

- Կարդա՛ Հոգեհանգստյան կարգի մեկ այլ շարականը: Յուրաքանչյուր տան մեջ մենք խնդրում ենք Քրիստոսի ներողամտությունը, երբ Երկրորդ գալուստին պիտի գա դատելու իր արարածներին: Ընթերցի՛ր յուրաքանչյուր տունը և գտի՛ր Նիկիական Հանգանակում արտահայտված ընդհանուր թեմաներ Հիսուս Քրիստոսի մասին: Բառացանկի համարակալված բառերի թվերն ըստ համապատասխան թեմաների գրի՛ր շարականի տների սկզբի դատարկ գծերի վրա: Տներից մեկն ունի երկու համընկնող բառեր:

— Խոսքդ Աստծո՛ւ՝ արարչակից Հոր, որ ոչնչից սրեղծեցիր ամեն բան. թողություն շնորհի՛ր ննջեցյալ քո ծառաներին, երբ գաս դատելու անարար շեռքերիդ սրեղծվածներին:

— Դու Հոր կողմից ուղարկվեցիր և սուրբ Կույսից մարմնացար. թողություն շնորհի՛ր ննջեցյալ քո ծառաներին, երբ գաս դատելու անարար շեռքերիդ սրեղծվածներին:

— Խաչի վրա անշնչացար և մահվան իշխանությունը կործանեցիր. թողություն շնորհի՛ր ննջեցյալ քո ծառաներին, երբ գաս դատելու անարար շեռքերիդ սրեղծվածներին:

— Պսակիչ ես քո սուրբերին և բաշխող անվախձան բարիքների. թողություն շնորհի՛ր ննջեցյալ քո ծառաներին, երբ գաս դատելու անարար շեռքերիդ սրեղծվածներին:

1. մարդեղություն

2. մահ

3. հարություն

4. Փրկիչ Թագավոր

5. Ամեն ինչի արարիչ

## **Տեր Յերկնից ԴՁ**

*Երբ փողի հրաշալի շայնով մեռելները հարություն առնեն և քո ահավոր բեմի առջև կանգնեն, գթա՛, Տեր, մեր ննջեցյալների հոգիներին և ողորմությամբ հիշիր նրանց, որովհետև քո սուրբ արյան գինն են:*

*Երբ փողի հրաշալի շայնով մեռելները հարություն առնեն և քո ահավոր բեմի առջև կանգնեն, մեղքի ահավոր ծովում ընկղմվածներին և Սուրբ Երրորդություն դավանողներս փրկի՛ր գեհեներից:*

*Երբ փողի հրաշալի շայնով մեռելները հարություն առնեն և քո ահավոր բեմի առջև կանգնեն, սուրբ ավագանի ծննդյամբ լուսավորվածներին բարկությամբ մի՛ խրատիր և սրտմտությամբ մի՛ հանդիմանիր:*

(Նոտաները տե՛ս **Հավելվածում**, էջ՝ 129):

### **ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ**

Քրիստոսի երկրորդ գալստյան հետ առնչվող այս երկրորդ դասը հիմնված է մարդկության դատաստանի վրա, ինչպես որ հռչակված է Նիկիական Հանգանակում. «Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դատելու ողջերին ու մահացածներին, և նրա թագավորությունը վախճան չունի»:

Դասն աշակերտներին ուղղորդում է բացահայտել իրենց սեփական ընկալումները դատաստանի մասին, ինչպես սովոր են տեսնելու աշխարհիկ դատարանների գործունեությունը: Ապա համապատասխան սուրբգրային հատվածների միջոցով նրանց ուղղորդվում է սովորել, թե Հիսուսն ինչ ասաց Աստծո դատաստանի վերաբերյալ: Այո՛, Հիսուսը պիտի գա դատելու ողջերին ու մեռածներին, քանի որ Հայրն ամբողջ դատաստանը տվել է Որդուն: Մինչդեռ Հիսուսի ուսուցումները հստակորեն մեր դատաստանի պատասխանատվությունը դնում են յուրաքանչյուր անհատի վրա: Ինչպես մարդ հետևի և ապրի Հիսուս Քրիստոսի ուսուցանած պատգամները, այնպես էլ կդատվի, ըստ Տիրոջ հետևյալ խոսքի. «Սակայն կա մեկը, որ պիտի դատապարտի նրան, ով անարգում է ինձ և չի ընդունում իմ խոսքերը: Աստծո խոսքը, որ ես ասացի ձեզ, դա՛ պիտի դատապարտի նրան վերջին օրը»: (Հովհաննես 12.48)

Ձեր պատանին նաև հնարավորություն ունեցավ սույն դասի պատգամը կիրառելու իր անձնական կյանքում՝ որպես հրավեր ընտրելու մի կենսաձև, որով վկայում է Հիսուս Քրիստոսին աշակերտելու մասին:

Այն պատկառելի պատասխանատվությունը, որ դրվում է մարդկության ուսերին վաստակելու իրենց փրկությունը Հիսուս Քրիստոսի միջոցով, հաճախ մարտահրավեր է դառնում մեր տկար մարդկային բնությանը բախվելիս: Ինչևէ, Եկեղեցին մեզ մատուցում է ներման մխիթարությունը Ապաշխարության խորհրդի միջոցով, իսկ ի Քրիստոս ննջեցյալների համար մենք աղոթում ենք Սուրբ Պատարագի և Հոգեհանգստյան արարողության ընթացքում՝ խնդրելով Աստծո գթառատ ողորմությունը Վերջին դատաստանի ժամանակ: Ձեր զավակի հետ վերանայե՛ք հիշյալ արարողությունների ընթացքում երգվող շարականները, որոնցից շատերը կարող են արդեն ծանոթ լինել ձեզ:

Որպես ընտանիք՝ չանտեսե՛ք ննջեցյալ ձեր հարազատների հոգիների հանգստության համար աղոթելու սովորությունը, քանզի բոլորս էլ ակնդետ սպասում ենք Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալուստին: Միասին արտասանե՛ք հոգեհանգստյան հետևյալ աղոթքը.

*«Ո՛վ Քրիսոս, Ասծո Որդի, անոխակալ և բարեգութ, արաչական ֆո սիրով գթա ֆո հանգուցյալ ծառաների հոգիներին: Հի՛շի՛ր նրանց ֆո արժայության գալստյան մեծ օրը: Արժանի՛ արա ողորմության, մեղքերի ֆավության և թողության: Լուսավորի՛ր նրանց և ֆո սուրբերի հետ դասի՛ր ֆո աջ կողմում, ֆանգի դու ես Տերը և Արարիչը բոլորի, դասավորը ողջերի ու մահացածների: Եվ ֆեզ են վայելում ֆառքը, ի՛ծխանությունն ու դասիվը, այժմ և մի՛շտ և հավիճյանս հավիճենից. ամեն»:*

# 21. ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻ. ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀՐԱՇՔՆԵՐ

«Դրանից հետո Հիսուսն սկսեց քարոզել՝ ասելով.  
- Ապաշխարեցե՛ք, որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը»:

Մատթեոս 4.17



## ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Պատմականորեն մարդիկ ապրել են համայնքում: Ժամանակի հետ ստեղծվել են կառավարման որոշակի ձևեր՝ համայնքի կյանքը կազմակերպելու համար: Կառավարման յուրաքանչյուր ձև ունեցել է իր դրական ու նաև բացասական առանձնահատկությունները: Մարդիկ ապրել են ցեղային, քաղաքական, կայսերական, օլիգարխիկ և ժողովրդավարական կացութաձևերով:

- Կառավարման յուրաքանչյուր ձևի համար բնութագրի՛ր մի դրական և մի բացասական կողմ, որոնք կազդեին նրա քաղաքացիների բարեկեցության վրա:



քաղաքացիություն

---



---



ցեղ



կայսրություն

---



---



ժողովրդավարություն



օլիգարխիա

---



---

*Աստվածաշնչի դասում ինչպե՞ս է նկարագրվում Աստծո արքայությունը:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ԱՍԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ԳՐԱՇՔՆԵՐ

**Մատթեոս 11.2-5, 12.22-30, Մարկոս 6.34-43**

Նիկիական Հանգանակում հռչակում ենք. «*Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դասելու ողջերին ու մահացածներին, և նրա թագավորությունը վախճան չունի*»: Հիսուսը կատարեց Աստծո արքայության բացումը, երբ սկսեց իր առաքելությունը՝ ասելով. «*Հասել է փրկության ժամանակը, և եկել է Աստծո արքայությունը, ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավերարանին*»: (Մարկոս 1.15)

Ի պատասխան Հովհաննես Սկրտչի հարցման, եթե արդյոք նա է սպասված Մեսիան, ով պիտի հաստատեր Աստծո թագավորությունը՝ Հիսուսը նկարագրում է, թե ինչպիսին է Աստծո արքայությունը **Մատթեոս 11.2-5** ներքևի հատվածում՝ Հովհաննեսին հրավիրելով ինքնաեզրահանգման:

*Երբ Հովհաննեսը բանտում լսեց Քրիստոսի կատարած գործերի մասին, իր աշակերտներից ոմանց ուղարկեց Հիսուսի մոտ՝ հարցնելու նրան.*

- *Դո՞ւ ես նա, որ զայն էր, թե՞ մեկ ուրիշին սպասենք: Հիսուսը պատասխանեց:*
- *Գնացե՛ք և Հովհաննեսին պատմեցե՛ք, ինչ որ լսում եք ու տեսնում. ահա կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլները՝ լսում, մեռելները՝ հարություն առնում, և Ավերարանը քարոզվում է աղքատներին:*

Մատթեոս 11.2-5



- Կարդա՛ այս բաժնում ներկայացված հրաշքների մասին հատվածները՝ ուսուցչի հետ քննարկելու համար:
  - Աստվածաշնչից գտի՛ր և կարդա՛ լրացուցիչ հրաշքներ ըստ ներքոնշյալ հղումների, որոնք կհանճնարարվի քո խմբին: Գտի՛ր համապատասխան նկարները:
  - Փոքր խմբով քննարկի՛ր հարցերը և ներկայացրո՛ւ քո եզրահանգումներն ամբողջ դասարանին:
- Յուրաքանչյուր նկար համապատասխանեցրո՛ւ **Մատթեոս 11.2-5** հատվածում Հիսուսի կողմից թվարկված դասակարգումներին, որոնք գրված են բառացանկում:
  - Գրի՛ր համապատասխան սուրբգրային հղումները յուրաքանչյուր նկարի տակ և հրաշքի տեսակի համարը:

**Մատթեոս 9.27-30 Մարկոս 1.40-42 Մարկոս 7.32-35 Ղուկաս 5.17-26 Ղուկաս 8.40-42, 49-56**

*Այս Հիսուսի մոտ բերեցին կույր ու համր մի դիվախարհ, և Հիսուսը բժշկեց նրան, այնպես որ համր և կույր մարդն սկսեց խոսել ու տեսնել: Բոլոր ներկաները զարմացան և հարցնում էին.*

- *Մի՞թե սա է Քրիստոսը՝ Դավթի Որդին: Բայց փարիսեցիները երբ այս լսեցին, ասացին.*
- *Նա դևերի իշխանի՝ Բեեղզեբուդի զորությամբ է հանում դևերին: Երբ Հիսուսն իմացավ նրանց միտքը, ասաց.*

*- Ամեն թագավորություն, որ ինքն իր մեջ բաժան-բաժան է լինում, կործանվում է, և ամեն քաղաք կամ ընդհանրապես, որ ինքն իր մեջ բաժանված է, կանգուն չի մնում: Եթե Սալանան իր գործակալների դեմ է ելնում, ուրեմն իր մեջ բաժան-բաժան է եղած. արդ, նրա թագավորությունն ինչպե՞ս կարող է կանգուն մնալ: Եվ եթե ես Բեեղզեբուդի զորությամբ եմ դուրս հանում դևերին, չե՞ր հեղուկները ո՞ւմ զորությամբ են դուրս հանում դրանց: Ուրեմն հենց չե՞ր հեղուկները պիտի դատապարտեն չեզ: Իսկ եթե Աստծո Հոգու զորությամբ եմ հանում չար ոգիներին, նշանակում է Աստծո թագավորությունն արդեն հասել է չեզ վրա:*

*Ոչ ոք չի կարող մի ուժեղ մարդու տունը մտնել և կողոպտել նրա ունեցվածքը, եթե նախապես չկապի այդ ուժեղ մարդուն: Դրանից հետո միայն նա կկողոպտի նրա տունը:*

*Ով ինչ հեղ չէ՝ հակառակ է ինչ, և ով ինչ հեղ չի հավաքում, ցրում է: Դրա համար ասում եմ չեզ. մարդիկ ինչքան էլ մեղք գործեն կամ հայտնություն անեն, Աստված պիտի ների նրանց այդ բոլորը, բայց նա չի ների նրան, ով հայտնում է Սուրբ Հոգուն, այսինքն՝ նախատում է նրան: Ով որ Մարդու Որդու դեմ խոսք ասի, Աստված պիտի ների նրան, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նա չի ների նրան ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում:*

Մատթեոս 12.22-30

Երբ Հիսուսը նավակից դուրս ելավ և տեսավ ամբոխին, գթաց նրանց, որովհետև նման էին հովիվ չունեցող ոչխարների: Ապա սկսեց շար քաներ ուսուցանել նրանց: Երբ քավական ժամանակ անցավ, աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին.

- Ամսյի տեղում ենք գտնվում, և ժամանակն էլ ուշ է. արչակիր ժողովրդին, որպեսզի գնան շրջակա քաղաքներն ու գյուղերը և իրենց համար ուրելիք գնեն, որովհետև ուրելիք չունեն:

Հիսուսն ասաց նրանց.

- Դո՛ւք տվեք նրանց ուրելիքը: Նրանք հարցրին.

- Ոգո՞ւմ ես, որ գնանք և երկու հարյուր արծաթ դահեկանի հաց գնենք նրանց կերակրելու համար: Հիսուսն ասաց.

- Քանի՞ հաց ունեք, գնացեք ստուգեցե՛ք: Աշակերտներն ստուգեցին և ասացին.

- Հինգ հաց և երկու շուկ:

Հիսուսը հրամայեց աշակերտներին, որ ժողովրդին խումբ-խումբ նստեցնեն դալար խորի վրա, և նրանք նստեցին. տեղ-տեղ՝ հարյուր, տեղ-տեղ՝ հիսուն հոգուց բաղկացած խմբերով: Ապա Հիսուսը վերցրեց հինգ հացն ու երկու շկները, աչքերը բարձրացրեց դեպի երկինք, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին, որ բաշխեն, իսկ երկու շկներն էլ բաժանեց ժողովրդին: Բոլորն էլ կերան կշտացան և ավելացած հացի և շկան կտորտաքաները հավաքելով՝ տասներկու սակառ լցրին: Իսկ ուրողների թիվը, միայն տղամարդկանց հաշված, շուրջ հինգ հազար էր:

Մարկոս 6.34-43



1. կույրերը տեսնում են

2. կաղերը քայլում են

3. բորոտները մաքրվում են

4. խուլերը լսում են

5. մեռելները հարութայում են առնում

6. քաղցածները կերակրվում են

7. աղքատներին քարոզվում է Ավետարանը



- Ծանոթանալով Հիսուսի կատարած հրաշքներին, քո կարծիքով, ի՞նչ էր մտածում Հովհաննես Սկրտիչը Հիսուսի մասին: Արդյո՞ք նա համոզված էր, որ Հիսուսն սպասված Մեսիան է, ով պիտի վերահաստատեր Աստծո թագավորությունը: Եթե այո, ապա՝ ինչո՞ւ:

## ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

### ՍՈՒՐԲ ԶԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ. ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՇԱԿ

Սուրբ Պատարագի ընթացքում, երբ պատարագիչ քահանան պատրաստվում է մատուցել Սուրբ Հաղորդությունը, հետևյալն է աղոթում.

*Ո՛վ մեր Տեր Հիսուս Քրիստոս, նայի՛ր մեզ երկնքից՝ քո սրբությունից և քո քաղավորության փառապանծ գահից: Դու Հոր աջ կողմը նստած ես, բայց այսպեղ ես մատուցվում որպես պատարագ: Արի՛ և մաքրի՛ր և փրկի՛ր մեզ: Արժանի՛ արա մեզ բաշխելու քո անարար Մարմինը և պարվական Արյունը և մեր միջոցով այս ամբողջ ժողովրդին:*



- Հիշյալ աղոթքում ո՞ր բառերն են նշում, թե Աստծո արքայության նախաճաշակն արդեն ապրել են բոլոր նրանք, ովքեր հաղորդվում են Տիրոջ Մարմնով և Արյամբ ամեն անգամ Սուրբ Պատարագին մասնակցելիս: Օգտագործելով հիշյալ բառերը՝ գրի՛ր մի կարճ աղոթք ըստ քո ըմբռնման:

---

---

---

---

---

---

---

---

### ԳՈՐԿԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԶԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՅ ԴՅՏՈ

Եկեղեցու աղոթքներն ու շարականները նույնպես հայտնում են, որ Աստծո արքայությունը մեր մեջ է, ինչպես նրանք, ովքեր վայելում էին Հիսուս Քրիստոսի ներկայությունը Տիրոջ երկրային կյանքի ընթացքում նրան հետևելիս: Կարդա՛ հետևյալ աղոթքը և տե՛ս, թե ինչպես է այն արտացոլում Աստծո քաղավորությունը:

*Գոհություն ենք հայտնում քեզ, ո՛վ Քրիստոս մեր Աստված, որ մեզ սուրբ կյանքի բաժնեկից դարձրիր այսպիսի բարի ճաշակում շնորհելով. մեզ պահի՛ր սուրբ և անարար քո աստվածային խնամքի տակ: Հովվի՛ր մեզ քո սուրբ և բարեսեր կամքի անդաստանի մեջ, որպեսզի ամուր մնանք բանասարկուի ամեն հարձակումների դեմ, և արժանի լինենք լսելու քո շայնը միայն, և հեղինակու քեզ՝ միակ քաջ և ճշմարիտ հովվիդ, և քեզնից ընդունելու երկնքի արքայության մեջ մեզ համար պատրաստված տեղերը: Ո՛վ մեր Աստված և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ օրհնյալ ես Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:*



- Աստծո արքայության մասին երեք ինչպիսի՞ հատկանիշներ են նշվում աղոթքում: Որտե՞ղ և ինչպե՞ս կարող ենք խնդրել Աստծուն, որ մեզ նախաճաշակ դարձնի այդ երեքին: Գրի՛ր սեփական մտածումներդ:

---

---

---

---

---

---

---

---



## ԱՍԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշքները հայտնում են մեզ Աստծո կամքը համայն մարդկության համար: Նրանց միջոցով Հիսուս Քրիստոսն ամոքեց իր ժողովրդի ցավն ու տառապանքը և ցույց տվեց նրանց, որ Սուրբ Հոգու զորությամբ տապալված ու կործանված է սատանայի իշխանությունը: Տիրոջ ներկայությամբ նրա հետևորդները կարող են նախաճաշակել Աստծո արքայությունը, որը պիտի հաստատվի Քրիստոսի Երկրորդ գալաթյանը:

Քրիստոսը նաև հստակ պատկերում է մեզ Աստծո կամքը Երանիների մեջ:

*Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:*

*Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք Աստծուց մխիթարություն պիտի գրեն:*

*Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:*

*Երանի՛ նրանց, որոնք արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագնան:*

*Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք Աստծուց ողորմություն պիտի գրեն:*

*Երանի՛ նրանց, որոնք հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:*

*Երանի՛ չեզ, երբ մարդիկ չեզ նախատեն ու հալածեն, կամ սրելով՝ չեք մասին ամեն տեսակ զրպարություն անեն իմ հետևորդը լինելու համար: Յնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև մեծ է չեք վարձարությունը երկնքում: Հիշեցե՛ք, որ նույն չեք հալածանքի ենթարկվեցին նաև չեզնից առաջ սպրած մարգարեները:*



Մատթեոս 5.3-12

- Առաջին երանին ուղղված է հոգով աղքատներին: Եբրայերենում «աղքատ» բառը նշանակում է թե՛ նյութապես չունևոր և թե՛ Աստծո ժողովրդի մեջ ապրող հավատացյալ: «Հոգով աղքատ» արտահայտությունը, հետևաբար, վերաբերում է այն մարդկանց, որոնց վարքագիծը նման է աղքատին, ով իր գոյության համար ամբողջությամբ կախված է Աստծուց: Հիշյալ բացատրությունը մտքումդ պահելով՝ խորհի՛ր Հիսուսի հրաշքով փրկված մարդկանց մասին, որոնց արդեն ծանոթացար: Նրանք որքանո՞վ են պատշաճում «հոգով աղքատ» լինելու հասկացությանը: Ինչպիսի՞ վկայություն է նրանցից յուրաքանչյուրը տալիս:

- Տրված յուրաքանչյուր երանին բնորոշում է Աստծո արքայության մի կողմը: Ընտրի՛ր մեկը, որը մեծ նշանակություն ունի քեզ համար, հոգեհարազատ է քեզ, և նշո՛ւմ արա կողքին:
- Քո խմբի հետ պատրաստի՛ր պատի թերթ, որի վրա կներկայացնես քո տպավորություններն ու ըմբռնումներն Աստծո արքայության վերաբերյալ՝ որպես արդյունք խմբակային աշխատանքի: Մտածի՛ր ճանաչած մարդկանց մասին, որոնք առօրյա կյանքում բարի օրինակ են ըստ այս կամ այն երանիի: Նրանց անունները ևս ընդգրկի՛ր պատի թերթի համապատասխան որևէ մասում:

## ՇԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Քրիստոսի բժշկության իրողությունը չէր սահմանափակվում այն մարդկանցով, որոնց Տերը բժշկեց իր երկրային կյանքի ընթացքում: Եկեղեցու Խորհուրդների միջոցով մենք ապրում ենք Տիրոջ ներկայությունը մեր կյանքի որևէ իրավիճակում: Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում անունով հայտնի մեր Եկեղեցու 7-րդ Խորհուրդը հիշեցնում է մեզ առաքյալներին ուղղված Տիրոջ պատգամը. «*Եվ ահա ես չեզ հետ կլինեմ միշտ՝ մինչև աշխարհի վախճանը*» /**Մտ 28.20**/: Եկեղեցու՝ իր կենդանի մարմնի միջոցով Քրիստոսը ներկա է բոլոր նրանց կյանքում, ովքեր ցավի մեջ են՝ մարմնական, զգացմունքային կամ հոգևոր, և ուժ է տալիս նրանց դիմագրավելու կյանքի մարտահրավերները: Ահա մի քանի տուն ապաշխարության շարականից, որը երգվում է հիշյալ կարգի ընթացքում.

*Մարդասե՛ր Ասրված, դու, որ մաքսավորին արդարացրեցիր, քավի՛ր ինչ՝ մեղավորիս:  
Դու, որ հագուստիդ քղանցքով քեզ մոտեցողին բժշկեցիր, քավի՛ր ինչ՝ մեղավորիս:  
Դու, որ հրամանիդ խոսքով անդամալուծին առողջացրեցիր, քավի՛ր ինչ՝ մեղավորիս:*

- ➔ Համաբարբառի օգնությամբ գտի՛ր հրաշքները, որոնք արժարժված են հիշյալ շարականում:
- ➔ Աշխատի՛ր ներկա լինել Վերջին օծման արարողությանը և ունկնդրել Ավետարանի ընթերցանությունը: Ուշադրությամբ լսի՛ր: Պարզապես թո՛ւյլ տուր, որ Աստծո Խոսքը լցվի ականջներիդ մեջ և իջնի սրտիդ հատակը:
- ➔ Գրի՛ր մտածումներդ ներքևի տողերի վրա:

- Կարդա՛ և դերակատարի՛ր այդ հրաշքը դասընկերներիդ հետ՝ ուշադրություն դարձնելով Հիսուսի խոսքերին:

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Ըստ սովորածներիդ, թե ինչպես են Հիսուս Քրիստոսի հրաշքները հայտնում մեզ Աստծո արքայության մասին և փրկում մարդկությանը սատանայի կործանարար իշխանությունից, գրի՛ր, թե դու ինչպես ես ապրում Աստծո արքայությունը քո կյանքում: Որո՞նք կարող են լինել այն պարագաները, որոնցում կարիք կունենաս բժշկության, և ինչպե՞ս կարող ես մասնակցել Աստծո արքայության ուրախությանը:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ունի աշակերտներին իրազեկել, թե Քրիստոսի հրաշքներն ինչ են պատմում Աստծո արքայության մասին: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի գործած յուրաքանչյուր հրաշք բժշկում և դարմանում էր մարդկային ցավն ու տառապանքը՝ հայտնելով Աստծո կամքը մարդկության փրկության համար, մի կյանք Աստծո ներկայության մեջ՝ հեռու տառապանքից ու ցավից: Այս հրաշքներն օգնում են մեզ հասկանալ, թե իրականում ինչպիսին է Աստծո արքայությունը:

Աղոթքների ու շարականների միջոցով ձեր գավակը ծանոթացավ մեր Եկեղեցու ծիսական ավանդությանը և Սուրբ Պատարագին, որոնք ցույց են տալիս, թե վաղ Եկեղեցին ինչ է հավատում և ուսուցանում Աստծո արքայության մասին:

Պատանհներն իրազեկ դարձան Աստծո արքայության մասին, թե ինչպես է այն ընկալվել Եկեղեցու կողմից դարերի ընթացքում, ինչպես նաև այն ձևերին, որոնցով իրենք ևս անդամ և մասնակից են Աստծո արքայությանը:

Հրավիրե՛ք ձեր գավակին՝ միասին քննարկելու, թե նա ինչ սովորեց մեր Տեր և Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշքների մասին, և թե դրանք ինչ են հայտնում մեզ մարդկության հանդեպ Աստծո ունեցած կամքի մասին: Առիթներ ստեղծե՛ք կանոնավոր կերպով գրուցելու այն ուղիների մասին, որոնցով ձեր գավակը կապի Աստծո արքայությունն իր կյանքում, և այն ուղիների մասին, որոնցով դուք որպես ծնող ապրում եք Աստծո Արքայությունը: Ձեր գավակին քաջալերե՛ք համառոտ գրառումներ կատարել Աստծո արքայությունն ապրելու իր փորձառությունների մասին: Նո՛ւյնը կատարե՛ք նաև ինքներդ և ժամանակ առ ժամանակ միասին քննարկե՛ք ձեր փորձառությունները:

# 22. ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ԱՌԱԿՆԵՐ

«Հաստատ՛ո իմացեք, եթե չփոխվեք ու չլինեք մանուկների նման, երկնքի արքայությունը չեք մտնի»:

Մատթեոս 18.3



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Ճանաչի՛ր հետևյալ խորհրդանիշները և գրի՛ր դրանց նշանակությունը:



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....

- Ներքևի վանդակների մեջ ինքնուրույն գծանկարիր ևս երկու խորհրդանիշ և նշի՛ր, թե դրանք ինչ են ներկայացնում:



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....



Խորհրդանիշ՝ .....

Իմաստ՝ .....

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը նշաններ օգտագործեց առակներով խոսելիս, որոնք լինելով կարճ, պարզ պատումներ բացահայտում էին Երկնքի արքայության բնույթը: Աստվածաշնչի դասի մեջ փորձի՛ր հայտնաբերել Քրիստոսի գործածած խորհրդանիշների նշանակությունը:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ԱՍԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ԱՌԱՎՆԵՐԸ

### Մատթեոս 13.1-9

Նիկիական Հանգանակը հետևյալն է սահմանում Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան մասին. «Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դարելու ողջերին ու մեռածներին, և նրա թագավորությունը վախճան չունի»:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսն առակներով խոսեց Աստծո թագավորության և Աստծո կամքի հետ կապված այլ պարագաների մասին: Երբ իր աշակերտները հարցրեցին, թե ինչո՞ւ է առակներով խոսում, նա պատասխանեց, որ Երկնքի արքայության խորհուրդները կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր հավատքով են մոտենում Աստծուն: (Մատթեոս 13.10-17)

- Կարդա՛ Մատթեոս 13.1-9 հատվածը դասարանի հետ՝ մտածելով նրանում գործածված խորհրդանիշների և առակի նշանակության մասին:

*Նույն օրը Հիսուսը փոխեց դուրս եկավ և գնաց նստեց լճի եզերքին: Նրա շուրջը մի այնպիսի մեծ բազմություն հավաքվեց, որ նա նավակ մտավ և նստեց այնտեղ, իսկ ամբողջ բազմությունը կանգնած մնաց լճի եզերքին: Եվ նա առակներով շատ քաներ էր սովորեցնում նրանց և ասում.*

*-Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Երբ նա սերմնանում էր, հատիկների մի մասն ընկավ ճանապարհի եզերքին, և թռչունները եկան ու կերան դրանք: Ուրիշներ ընկան ժայռոտ մի տեղ, ուր շատ հող չկար և որովհետև հողը խորություն չունեի, իսկույն բուսան. քայց երբ արևը ելավ, խանջվեցին, և քանի որ արմատ չունեին, չորացան: Ուրիշ հատիկներ ընկան փշերի մեջ, և փշերը բարձրացան ու խեղդեցին դրանք: Իսկ ուրիշներն ընկան լավ հողի մեջ և պտուղ տվեցին. մի մասը՝ մեկի տեղ հարյուր, ուրիշները՝ վաթսուն և կամ երեսուն: Ով լսելու ականջ ունի, թող լսի:*

- Գրի՛ր երկու հարցումներ հիշյալ առակի մասին, որը կօգնի քեզ հասկանալու դրա իմաստը:

1. ....
2. ....

- Դասարանի հարցումներին քո խմբով պատասխանելուց հետո ուսուցիչը կընթերցի Հիսուս Քրիստոսի բացատրությունն առակի մասին: Ուշադի՛ր լսիր, որ հասկանաս, թե որքանո՞վ է քո պատասխանը համընկնում Ավետարանում ասվածին: Եթե պատասխանը նույնն է, ապա գրի՛ր այն ներքևի տողերի վրա: Եթե տարբերվում է, նշի՛ր, թե ի՞նչ սովորեցիր հետևյալ խորհրդանիշներից:

**Բառարան**

**ԱՌԱՎ**

Գրական ժանր: Կարճ պատմվածք, որում ներկայացված հերոսները, պարագաները և դեպքերը խորհրդանշաբար պատկերում են ճշմարտությունը և Աստծո արքայության բնույթը:

- Ճամփեզրին ընկած հատիկ՝ .....
- Ժայռոտ տեղում ընկած հատիկ՝ .....
- Փշերի մեջ ընկած հատիկ՝ .....
- Լավ հողի մեջ ընկած հատիկ՝ .....

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱԿՆԵՐԸ

➤ Կարդացե՛ք ձեր խմբին նշանակված առակներից մեկը:

**Մատթեոս 13.24-30   Մատթեոս 13.31-32   Մատթեոս 13.33   Մատթեոս 20.1-16   Մատթեոս 22.1-14**

- Միասին գրեք երկու հարցումներ առակների մասին և պատասխանե՛ք:
- Պատրաստե՛ք մի ձև՝ ներկայացնելու ձեր խմբին նշանակված առակը դասարանին. կարելի է նկարել, դերախաղալ կամ պարզապես հստակ կարդալ:
- Առակի ներկայացումից հետո դասարանին տվե՛ք ձեր երկու հարցումները:
- Երբ ներկայացվեն ներքևի նկարներում պատկերված բոլոր առակները, նշե՛ք առակի անունը և սուրբգրային հղումը:



Անուն .....  
Հղում .....



Անուն .....  
Հղում .....



Անուն .....  
Հղում .....



Անուն .....  
Հղում .....



Անուն .....  
Հղում .....

■ Մեր Տեր Հիսուս Քրիստոսն առակների միջոցով ուսուցանեց Աստծո թագավորության բնույթը: Յորենի և որոմի մասին առակն ի՞նչ է սովորեցնում մեզ, երբ փորձում ենք դատել մեր նմանին՝ կարծելով, թե նա արժանի չէ մտնելու Աստծո արքայություն: Բույսերի աճելու ընթացքում որոմին հանդուրժելն ի՞նչ է հայտնում մեզ մարդկության հանդեպ Աստծո ունեցած համբերության և ցանկության մասին: Վերաշարադրի՞ր ցորենի և որոմների առակը ժամանակակից լսարանի համար: Ի՞նչ խորհրդանիշներ կրճարեիր միևնույն իմաստն արտահայտելու համար: Ներկայացրո՛ւ քո առակը գրելու կամ նկարելու միջոցով:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐ ԸՍՏ ԱՌԱԿՆԵՐԻ

Մեր Տիրոջ պատմած առակները կիրառական նշանակություն ունեն մեր կյանքում: Եկեղեցին մըշտապես կարևորել է առակների ներգործական դերակատարությունը և ըստ այդմ՝ շատ առակներ շարահյուսել շարականների մեջ: Այսպիսով ցույց է տրվում, թե ինչպե՛ս պետք է արձագանքենք նրանցում անթեղված պատգամին:

- Օգտագործելով Աստվածաշունչը՝ կարդա՛ հետևյալ շարականները և յուրաքանչյուր շարական գծով միացրո՛ւ իրեն համապատասխան սուրբգրային հղումին:

### **Կանոն Ավագ Երեքշաբթիի, Օրհ. ԲԿ**

*Իմաստուն կույսերը լապտերների համար յուղ պատրասարելով երկնավոր Փեսային ընդառաջ ելան վառած լապտերներով: Իսկ հիմար կույսերի լապտերները յուղից պարպված լինելով, Փեսայի գալուստին անպատրաստ գրնվեցին մարած լապտերներով:*

### **Կանոն Ե Կիրակիի Աղուհացից, Օրհ. ԲԿ**

*Իսկ անիրավ դատավորը, որի հեյր մեր մարդկային բնությանը համաքաղաքի ենք, քո սուրբ երկյուղը չունենալով և մարդկանցից չպարկառելով, գրկվածի դատը չբեւսավ:*

### **Կանոն Ապաշխարության, Ողբ. ԳԶ**

*Մարդասեր Ասրված, դու որ մաքաավորին արդարացրեցիր, քավի՛ր ինչ՝ մեղավորիս:*

### **Կանոն Ապաշխարության, Ողբ. ԳԶ**

*Մաքաավորը տաճարի մեջ հառաչանքով քավություն սրացավ. նույն չայնով ես էլ եմ գոչում՝ ողորմի՛ր ինչ Ասրված:*

### **Կանոն Գ Կիրակիի Աղուհացից, Օրհ. ԳԿ**

*Անառակ որդու հեյր գթառար Հորդ գոչում ենք՝ մեղանչեցինք երկնքում և քո առջև, ո՛վ հանցանքների քավիչ, սիրով ընդառաջ ելիր, համբույրով գրկի՛ր և մաքրի՛ր մեզ մեր մեղքերից:*



- Առակներից շատերը, ինչպես օրինակ՝ սերմնացանի առակը, մանանեխի հատիկի առակը, քթսմորի առակը և նույնիսկ տաղանդների առակը նկարագրում են Աստծո արքայությունը իբրև մի իրականություն, որն աճում է մեր մեջ, սակայն պահանջում է մեր գործակցությունը հարատև աճելու համար: Մտածի՛ր կյանքիդ մասին դեպի չահափասություն աճելիս ու զարգանալիս: Գրի՛ր առնվազն երեք գործնական եղանակ, որ կարող ես անել քո ներսում Աստծո արքայությունն աճեցնելու համար:

## ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ՎԱՒՃԱՆ

4-րդ դարում Սբ Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետը ձեռնամուխ եղավ պաշտպանելու Աստծո արքայության մասին Եկեղեցու վարդապետությունն ընդդեմ Մարկիոնի սխալ ուսմունքի: «Քրիստոնեական ուսուցումներ» աշխատության մեջ, որը հրապարակեց Երուսաղեմում, Սբ Կյուրեղը զգուշացնում է հավատացյալներին Երկնքի արքայության մասին հերետիկոսական գաղափարներից, որոնք հակառակ էին Եկեղեցու դավանանքին՝ հաստատված Սուրբ Գրքի վրա: Ահա մի հատված նրա 15-րդ ուսուցումից: Կարդա՛ այն և տե՛ս, թե ինչպե՛ս է Սբ Կյուրեղը բացատրում և հաստատում Եկեղեցու դիրք-րոշումը, թե Աստծո արքայությունը վախճան չունի:



*Եվ միգուցե լսես մեկին, որ կասի, թե Քրիստոսի թագավորությունը վախճան պիտի ունենա, հեռու վանիտ այդ հերետիկոսությունը, դա վիշապի մեկ այլ գլուխն է, որ վերջերս դուրս է գցվել Գաղափայտում: Մեկ ուրիշը համարձակվել է պնդել, որ աշխարհի վախճանից հետո Քրիստոսն այլևս չի թագավորելու: Նա նաև համարձակվել է ասել, որ Քանը ծնվելով Հորից, վերադին պիտի ներքաշվի Հոր մեջ և այլևս չպիտի լինի՝ այսպիսի աստվածայինությանը կործանման դատապարտելով ինքն իրեն: Քանի որ նա սկսանք չի դնում Տիրոջ խոսքին, որ ասում է. «Որդին մնայուն է» (Հովհաննես 8.35): Նա չի լսել Գաբրիելի ավերիսը. «Եվ նա հավիտյան կրթագավորի Հակոբի սերունդների վրա: Նրա թագավորությունը վախճան չի ունենա»: Նկատի՛ առեք այս խոսքերը: Մերօրյա հերետիկոսներն ուսուցանում են նսեմացնելով Քրիստոսին, մինչդեռ Գաբրիելը հրեշտակապետը վկայեց Փրկչի հավիտենական կենդանության մասին. «սա, ուրեմն, ո՛ւմ կգերադասեք հավապալ: Արդյոք չպիտի՞ առավել հավապ ընծայեք Գաբրիելին: Ունկնդիր եղեք Գանիելի հեղինակ վկայությանը. «Գիշերային փեսիքում փեսանում էի, որ, սա, երկնքի ամպերի միջից գալիս էր մեկը մարդու Որդու նման և հասնում Ճերունում...: Նրան իշխանություն, պարիսկ և արքայություն տրվեց. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները պիտի ծառայեն նրան. նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և նրա թագավորությունը չի կործանվի» (Պ-անիել 7.13-14):*

**Քրիստոնեական ուսուցումներ**

- Հիշյալ հատվածում Սբ Կյուրեղը հղում է անում սուրբգրային երեք հատվածների՝ դրանց վրա հիմնելով Եկեղեցու ուսմունքը: Երկուսի հղումներն արդեն արված են: Գտի՛ր երրորդ հղումը համաբարբառի օգնությամբ և նշի՛ր գիրքը, գլուխը և համարը: Հիշի՛ր, որ բանալի բառերով կկարողանաս գտնել ու՛զածդ հատվածը համաբարբառից:

- Կարդա՛ ներքևի աղոթքի երկու քաղվածները Սուրբ Պատարագից: Առաջինը նվիրված է Հիսուս Քրիստոսին, իսկ երկրորդը՝ Հայր Աստծուն: Ընթերցի՛ր նաև շարականը: Ինչպե՛ս է դրանցից յուրաքանչյուրն հաստատում Սբ Կյուրեղի ասածները Աստծո արքայության վերաբերյալ Եկեղեցու վարդապետության մասին: Ընդգծի՛ր բանալի բառերը յուրաքանչյուրում, ապա դրանցով կազմի՛ր մի նախադասություն՝ ըստ «Նրա թագավորություն չունի վախճան» թեմայի քո ընկալման:

*Ո՞վ Աստված մեր Տեր, դու փիրում ես երկնավորներին և երկրավորներին՝ քերովբեական գահի վրա բազմած. դու ես միայն սուրբ և բնակվում ես սուրբերի մեջ, ո՞վ սերովբեների Տեր և Իսրայելի թագավոր:*

**Աղոթքներ Սբ Պատարագից**

*Ո՞վ Տեր փրկերի, Աստված աստվածների, հավիտենական թագավոր, արարիչ բոլոր արարածների, Հայր մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի. մեզ մի՛ փանհր դեպի փորձություն, այլ պահպանի՛ր չարից և ազատի՛ր փորձությունից:*

**Ճաշու շարական ԳՉ**

## ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Գասարանով միասին երգեք Ապաշխարության կանոնի Ողորմեա ԱԶ շարականը.

*Բազումողորմ Հայր, անառակ որդու նման խոսարովանում եմ քեզ, ների՛ր ինչ իմ մեղքերը և ողորմի՛ր: Տե՛ր, դու որ քանանացի կնոջը գթացիր, ինչ՝ մեղավորիս էլ գթա՛ և ողորմի՛ր:*

*Տե՛ր, դու որ մաքսավորին ճշմարիտ գիրություն դարձրիր, ինչ՝ մոլորվածիս էլ դարձի՛ բեր և ողորմի՛ր:*

1. ա. Դայր բա - զում - ո - դորմ խոս - տո - վա - նիմ առ քեզ  
 2. որ - պէ - ս զա - նա - ռակ որ - դիմ. թո - ղ  
 3. ինձ ըզ - մեղս ի - մ եւ ո - դոր - մեա:  
 4. Բ. Տեր որ զը - թա - ցար ի կի - նըն Քա - նա - նա - ցի.  
 5. զը - թա եւ յիս ի մե - դա - ւո - ռս եւ ո - դոր մեա:  
 6. Գ. Տեր որ դար - ծու - ցեր ըզ - մաք - սա - ւորն ի զի - տու - թիւն  
 7. ճըշ - մար - տու - թեան. դար - ծո եւ զիս ըզ - մո - լոր -  
 8. եա - լս եւ ո - դոր - մեա - :

### ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Գասից ընտրի՛ր առակներից մեկը, որն առնչվում է առաքինությունների կամ մոլությունների հետ: Գտի՛ր անհրաժեշտ մի առաքինություն՝ Աստծո արքայություն մտնելու համար: Եվ մի մոլություն, որ կանխում է մարդկանց մուտքն այնտեղ: Ինչպե՞ս ես ընկել առակում նկարագրված մոլության մեջ: Ի՞նչ ձևերով կարող ես վարժվել առակում ներկայացված առաքինությանը:

### ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասի նպատակն էր աշակերտին իրազեկել, թե Քրիստոսի առակներն ինչ են հայտնում Աստծո արքայության մասին: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատմած յուրաքանչյուր առակ բացահայտում է մեզ Աստծո կամքը մարդկության համար և օգնում մեզ հասկանալ Աստծո արքայության բնույթը. թե ինչն է թույլ տալիս մեզ մտնել արքայություն և թե ինչն է կասեցնում մեր մուտքը դեպի արքայություն:

Ձեր զավակը ծանոթացավ նաև Եկեղեցու ծիսական ավանդությանը պատմության, աղոթքների և շարականների միջոցով, որոնք ցույց են տալիս, թե նախնական Եկեղեցին ինչ է դավանում և ուսուցանում Աստծո արքայության մասին:

Նրանք իմացան նաև, որ Աստծո թագավորությունը հավիտենական է, ապրում է և աճում նրանց ներսում: Արքայության մասին առակներն օգնում են նրանց ուղղորդել իրենց կյանքը դառնալու Երկնքի արքայության քաղաքացիներ:

Պատանի ձեր զավակին հրավիրե՛ք միասին քննարկելու իր սովորածը, թե ինչ են մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի առակները հաղորդում մեզ Երկնքի արքայության և Աստծո կամքի մասին հանուն մարդկության: Հաճախակի զրույցներ ունեցե՛ք այն եղանակների շուրջ, որոնք թույլ կտան Աստծո արքայության աճել ձեր զավակի կյանքում և այն ձևերի շուրջ, որոնք դուք որպես ծնող ապրում եք Աստծո արքայությունը ձեր կյանքում: Քաջալերե՛ք ձեր զավակին արքայության իր փորձառությունների մասին կատարելու առանձին փոքրիկ գրառումներ: Նույնը կատարե՛ք ինքներդ և երբեմն քննարկում ունեցե՛ք միասին ձեր փորձառությունների մասին:



# ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ...



Նիկիական Հանգանակը շարունակում է՝ խոսելով Սուրբ Երրորդության երրորդ անձի մասին.

**Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, որ անստեղծ է և կապարյալ, ով խոսեց Օրենքի, մարգարեների և Ավետարանի մեջ, իջավ Հորդանան գետ, քարոզվեց առաքյալների կողմից և բնակվեց սուրբերի մեջ:**

Սույն գլխի չորս դասերն օգնում են մեզ հասկանալ, թե ո՞վ է Սուրբ Հոգին Հոր և Որդու հետ հարաբերության մեջ:

- Գ-աս 23** ուսուցանում է, որ Սուրբ Հոգին Հոր և Որդու հետ հավիտենական Տեր է, էակից, համագո, արարչակից և աշխարհին կյանքի պարգևիչ:
- Գ-աս 24** բացատրում է Սուրբ Հոգու ներշնչումն օրենքի, մարգարեների և ավետարանների միջոցով:
- Գ-աս 25** երկու դասերից առաջինն է, որ պատկերացում է տալիս մեզ, թե ինչպիսին է Երկնքի արքայությունը Հիսուս Քրիստոսի հրաշքների միջոցով:
- Գ-աս 26** ներկայացնում է Սուրբ Հոգուն, ով լիագորեց առաքյալներին և սուրբերին և շարունակում է լինել Եկեղեցու առաքելական քարոզության շարժիչ ուժը: Հաստատում է, որ Սուրբ Հոգին, որ Հոգեգալստյան օրը տրվեց առաքյալներին, այսօր ևս ապրում է Սուրբ Եկեղեցու կյանքում և առաջնորդում նրա անդամներին:



### ***Ծնողների համար***

7-րդ գլխի չորս դասերը խոսում են Սուրբ Երրորդության երրորդ անձի՝ Սուրբ Հոգու մասին: Չեր գավակը կաշխատի աստվածաշնչյան հատվածների, շարականների և աղոթքների, ինչպես նաև Եկեղեցու հայրերի գրվածքների հետ՝ հասկանալու, որ Սուրբ Հոգին հավիտենական Տեր է, արարչակից, էակից, համագո Հորը և Որդուն, և գոյություն ունեցող ամեն ինչի կյանքի պարզևիչը: Կժանոթանա Հին Կտակարանում, մարգարեություններում և ավետարաններում նկարագրված Սուրբ Հոգու գործին: Կբացահայտի նաև, որ Հոգեգալստյան օրը առաքյալներին տրված Սուրբ Հոգին այսօր ևս ապրում և գործում է Սուրբ Եկեղեցու կյանքում և առաջնորդում նրա անդամներին:

Առաջնահերթություններից մեկը դարձրե՛ք ձեր գավակի հետ մշտապես աղոթքով դիմելու Սուրբ Հոգուն՝ ուղղություն ստանալու առօրյա գործունեության մեջ: Ներշնչվե՛ք Եկեղեցու աղոթքներից և Եկեղեցու հայրերի խրատներից, որպեսզի կապված մնաք կյանքի աղբյուրի՝ Սուրբ Հոգու գործությանը, ով շարունակում է վերանորոգել և ամրապնդել մեր կյանքը:

# 23. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

«Այա Հոգիդ ես ուղարկում, և նորերն են ստեղծվում,  
և այսպիսով աշխարհը վերանորոգում ես»:

Սաղմոս 104.30



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երբևէ ունեցե՞լ ես այնպիսի փորձառություն, երբ մի հաճելի ու լավ բան ես զգացել, ինչը, սակայն, չես կարողացել տեսնել կամ շոշափել: Ահա այդպիսի մի քանի օրինակ.



Հովնանը պատրաստվում է ֆուտբոլային խաղին, որը վճռորոշ է լինելու առաջնությունը հաղթելու համար: Իր լավ ընկերներից մեկն ասում է. «Չնայած չեմ կարողանալու ներկա լինել խաղին, բայց միտքս քո կողմն է լինելու, հոգով սրտով քեզ հետ կլինեմ, վստահ եմ՝ լավ ես խաղալու»: Արդեն խաղի ընթացքում Հովնանը համարյա զգում էր իր ընկերոջ գորակցությունը և քաջալերանքը՝ չնահանջելու և ամբողջ թափով խաղալու համար:



Անին վայելում է թանգարանում բացված ցուցահանդեսը: Ցուցադրության էին ներկայացված հին Հայաստանի կենցաղում օգտագործված կահ-կարասիներ և կիրառական առարկաներ: Նա ուշադիր դիտում է հնաճ զգեստները, խոհանոցային պարագաները, գյուղատնտեսական գործիքները, խաղալիքները և զենքերը: Անին սովորում է հնագիտության բաժնում և ուսումնասիրում է հին հայերի կենցաղավարությունը, նիստն ու կացը: «Այս միջավայրում ինձ թվում է,- կարծում է Անին,- թե այս մարդիկ իմ կողքին են իրենց կյանքով»:

Հարութը միշտ սիրում էր այցելել գյուղում ապրող իր տատիկին ու պապիկին: Նա գիտեր, որ տատիկը սովորաբար համով ուտեստներ է պատրաստում, իսկ պապիկն իրեն սովորեցնում է տնայնագործական ամեն տեսակի հմտություններ՝ փայտից առարկաներ պատրաստել, մեխն ուղիղ մեխել, վրան հավաքել անտառի բացատում, որտեղ տատիկը նրան սովորեցնում էր ծառերի և թռչունների անունները: Բայց Հարութի տատիկն ու պապիկն արդեն մահացած են, և նա է օգնում իր հորը տան մաքրության հարցերում: Հարութն ասում է հորը. «Այս գործերն անելիս տխրում եմ՝ հիշելով ու կարոտելով տատիկիս ու պապիկիս: Սակայն մի տեսակ ինձ թվում է, թե նրանք այստեղ են. զգում եմ նրանց շունչը, որ ջերմությամբ է լցնում տունը: Կարելի է ասել, որ այստեղ ապրած մարդիկ երջանիկ են եղել»:



- Նկարագրի՛ր ապրածդ մի փորձառություն, որը չես կարողացել շոշափել կամ տեսնել, բայց գիտես, որ իրական էր և լավ:

---

---

---

---

---

**Ասրվածաշնչի դասից պարզի՛ր, թե ինչպես Սուրբ Հոգին, որին չենք կարող շոշափել կամ տեսնել, ներկա է մեր կյանքում:**

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

**Ծննդոց 2.7, Սաղմոս 104.24-30, Հոբ 34.14-15, Եսայի 63.7-8, 10-14, Եզեկիել 37.13-14, Ա Կորնթացիներին 2.9-12**

Նիկիական Հանգանակը սահմանում է. «Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն...»: Եկեղեցին դավանում է Սուրբ Հոգուն, ով կատարյալ է և հավիտենապես գոյակից Հորը և Որդուն, ով արարչակից է Հորը և Որդուն, ով պաշտվում և փառաբանվում է Հոր և Որդու հետ: Կարդա՛ սուրբգրային հետևյալ քաղվածքները և պարզի՛ր, թե ինչպես է յուրաքանչյուրը նկարագրում Սուրբ Հոգուն:



Տեր Աստված մարդուն արեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ:

Ծննդոց 2.7



Ինչքա՛ն բազմազան են գործերդ, Տեր, նրանց բոլորին իմաստությամբ ես արարել. աշխարհը լեցուն է քո արեղծածներով: Ահա ծովը՝ մեծ և ընդարձակ, որտեղ վիպում են փոքր և մեծ անհամար կենդանիներ. որտեղ նավերն են երթևեկում, որտեղ խաղում է վիշապը, որին դու արեղծեցիր: Սրանք բոլորը քեզանից են սկսկալում իրենց ուրելիքը, որ դու փայխ ես իր ժամանակին: Տալիս ես նրանց, և բոլորը կերակրվում են, շեռքերդ բացում ես, և նրանք լիանում են բարիքներով: Երբ նրանցից երես ես դարձնում, խռովքի են մարմնվում, երբ նրանցից առնում ես հոգին, մեռնում են և հողին դառնում: Ապա Հոգիդ ես ուղարկում, և նորերն են արեղծվում, և այսպիսով աշխարհը վերանորոգում ես:

Սաղմոս 104.24-30



Աստծո Հոգին է, որ արեղծել է ինձ, և Ամենակալի շունչն է, որ ուսուցանում է ինձ:

Հոբ 33.4

Ու պիտի իմանաք, որ ես եմ Տերը, երբ բաց անեմ ձեր գերեզմաններն ու հանեմ ձեզ ձեր գերեզմաններից, ով իմ ժողովուրդ: Իմ հոգին փալու եմ ձեզ, և դուք կենդանանալու եք:

Եզեկիել 37.13-14

Տիրոջ ողորմությունը պիտի հիշեմ, Տիրոջ մեծագործությունը միտքս պիտի բերեմ այն բարիքների համար, որ Տերն է հատուցելու մեզ: Տերն Իսրայելի փան բարերար դարավորն է, որ իր ողորմածությամբ և իր մեծ արդարությամբ վարչարարելու է մեզ: Նա էր, որ ասաց. «Իմ ժողովուրդն իմ որդիներն են, որոնք չեն անարգի ինձ»։ և նա նրանց փրկություն բերեց իրենց բոլոր նեղություններից: ...Բայց նրանք ըմբոստացան ու բարկացրին նրա Սուրբ Հոգին, և Տերը նրանց թշնամի դարձավ, ինքն իսկ պատերազմեց նրանց դեմ: Այնժամ նրանք հին ժամանակները հիշեցին՝ ասելով. «Ո՞ւր են Մովսեսը և նրա ժողովուրդը, ո՞ւր է նա, որ երկրից դուրս բերեց հուրերի հովիվին, ո՞ւր է նա, որ նրանց մեջ դրեց Սուրբ Հոգին. ո՞վ էր, որ իր աջով բարձրացրեց Մովսեսին և որի առաջ իր փառավոր բազկով կասեցրեց ջրերը՝ իր անունը հավերժացնելու համար: Նրանց անցկացրեց անդունդներով, ինչպես ձին է անցնում անապատով, կամ ինչպես գրասար՝ դաշտով, ու նրանք չհոգնեցին: Տիրոջ Հոգին իջավ և առաջնորդեց նրանց»։ Թո ժողովրդին դու այնպես առաջնորդեցիր, որ քո անունը փառավորեն:

Եսայի 63.7-8, 10-14



Սակայն, ինչպես գրված է. «Աստված իրեն սիրողների համար պատրաստեց այնպիսի մի փառք, որ ոչ մի աչք չի տեսել, ոչ մի սկանջ չի լսել, և ոչ մեկի մտքով իսկ չի անցել»։ Բայց Աստված մեզ հայրենեց այդ խորհուրդն իր Հոգու միջոցով, որովհետև Հոգին, որ ամեն ինչ քննում է, գիրի Աստծոն անյնիսկ ամենածածունկ ծրագրերը: Մարդկանցից ո՞վ կարող է ձևանալ մարդու խորհուրդները, եթե ոչ նույն ինքը՝ մարդու հոգին, որ նրա մեջ է: Նույնպես և ոչ ոք չի կարող իմանալ Աստծո խորհուրդները, եթե ոչ Աստծո Հոգին: Արդ, մենք ոչ թե աշխարհի հոգին առանք, այլ Աստծուց ուղարկված Հոգին, որպեսզի ճանաչենք Աստծուց մեզ շնորհված հոգևոր պարգևները:

Ա Կորնթացիներին 2.9-12



- Վերստին ուսումնասիրիր ընթերցածդ աստվածաշնչյան քաղվածքները: Ներքևի գծապատկերում նշիր նկարագրական խոսքերին համապատասխան սուրբգրային հղումները:

| Սուրբ Հոգի   | Սուրբգրային Հղում |
|--|-------------------|
| Հավիտենապես գոյակից Հորը և Որդուն<br>Արարիչ, կյանք պարգևող<br>Կյանքի նորոգող<br>Առաջնորդում և սրբացում է |                   |

## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ ՓՆՏՐԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ


- Աստվածաշունչը պատմում է մեզ շատ բաներ Սուրբ Հոգու մասին թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում: Կարդա՛ ստորև տրված սուրբգրային հատվածները և հուշումների օգնությամբ լրացրո՛ւ խաչքառը: Այնուհետև, խաչքառի բառերի օգտագործումով շարադրի՛ր քո ինքնուրույն հավատքի սահմանումը Սուրբ Հոգու վերաբերյալ:

### Հորիզոնական

1. Չունենալ վերջ կամ սկիզբ: (**Եբրայեցիներին 9.14**)
2. Հոգին ի՞նչ է անում մեզ համար, երբ մենք մեղք ենք գործում: (**Հռոմեացիներին 8.26-27**)

### Ուղղահայաց

3. Հոգին ի՞նչ է անում մեզ: (**Եփեսացիներին 3.14-19**)
4. Ստորոգելի, որ ունի Սուրբ Հոգին, մասն Հայրը և Որդին: (**Ք Կորնթացիներին 3.17**)
5. Բոլոր տեղերում՝ ըստ **Սաղմոս 139.7-8**:



**Հավատ ում եմ նաև Սուրբ Հոգուն...**

.....

.....

.....

.....

.....

### Բառարան

#### ԲԱԶՄԱԶԱՆ

Տարբեր ձևեր, առանձնահատկություններ, մասեր ունեցող, որոնք տարբերվում են միմյանցից: Աստծուն ճանաչելու ձևերից մեկն էլ նրա գործերն են, ստեղծածները, որոնք բազմազան են:

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՈԹՔՆԵՐՈՒՄ

Աստվածաշնչյան նախորդ հաստիքներից տեղեկացար, որ Սուրբ Հոգին բնորոշվում է որպես Հոր և Որդու հետ հավիտենապես համագոյակից և արարչակից, ով շունչ և կյանք է տալիս մարդկային և մյուս կենդանի էակներին, ով առաջնորդում է մարդկանց և սրբացնում մեր կյանքը: Եկեղեցու աղոթքներն արտահայտում են մեր դավանանքը Սուրբ Հոգու վերաբերյալ:

- Կարդա՛ Սուրբ Պատարագի աղոթքների քաղվածքը և պարզի՛ր, թե ինչպես են դրանք արտահայտում հիշյալ գաղափարները Սուրբ Հոգու մասին: Ընդգծի՛ր այն բառերը, որոնք նկարագրում են Սուրբ Հոգուն:

Մինչ սարկավազը վերաբերում է սուրբ ընծաները՝ հացը և գինին, պատարագի քահանան ծածուկ արտասանում է մի աղոթք, որն ավարտվում է հետևյալ տողերով.



*Քեզ խոնարհեցնելով իմ գլուխը՝ խնդրում եմ, որ քո երեսը չդարձնես ինչնից և չմերժես ինչ՝ որպես քո ծառաներից մեկը, այլ արժանի դարձնես ինչ, որքան էլ մեղավոր ու անարժան լինեմ, քեզ մատուցելու այս ընծաները. որովհետև դու ես, որ մատուցում ես, մատուցվում, ընդունում ես և փալիս, ո՛վ Քրիստոս մեր Աստված: Եվ քեզ, քո անսկիզբ Հորը և ամենասուրբ և բարերար Սուրբ Հոգուն մատուցում ենք փառք, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:*



Պատարագի ընթացքում մինչ սարկավազները երգում են «Գոհություն» քարոզ-մաղթանքը, քահանան ծածուկ կարդում է հիշատակությունները: Ահա այդ աղոթքներից մեկն ավարտվում է հետևյալ խոսքերով.

*... Եվ մաքրելով մեր մտքերը, մեզ դարձրո՛ւ այն փառարը, որը կրկնունի Մարմինն ու Արյունը քո Միածնի՝ մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի, որի հետք քեզ, ո՛վ ամենակալ Հայր, քո կենդանարար և ազարիչ Սուրբ Հոգու հետ վայելում է փառքը, իշխանությունը և պարիվը, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:*



«Հայր մեր»-ից հետո պատարագի քահանան ծածուկ արտասանում է հետևյալ աղոթքը.

*«Ո՛վ Սուրբ Հոգի, դու կյանքի աղբյուրն ես և ողորմության բխումը, ողորմի՛ր այս ժողովրդին, որ խոնարհվելով երկրպագում են քո Աստվածությանը»:*

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ՄԵՋ ՄՐԲՈՒԹՅԱՆ

Մբ Բարսեղ Մեծը խոսում է Սուրբ Հոգու մասին իր համանուն աշխատության մեջ: Նա օգտագործում է հետևյալ համեմատությունը՝ Աստծո ժողովրդի կյանքում Սուրբ Հոգու գործունեությունը բացատրելու համար:

*Նայի՛ր արևի ճառագայթին. յուրաքանչյուր անչ, որի վրա քնքշորեն ընկնում է լույսը, գվարձանում է. կարծես թե արեգակը ծնվել է միայն այդ անչի համար, բայց և այն լուսավորում է երկիրն ու ծովերը և խառնվում օդի հետ: Նույն կերպ Հոգին է փրվում ամեն մեկին, ով ընդունում է, որով թվում է, թե այն պարկանում էր միայն այդ անչին, սակայն նա հղում է բավական շնորհներ՝ ամբողջ տիեզերքը լցնելու համար: Ով որ մասնակից է դառնում այդ շնորհին, լցվում է ուրախությամբ՝ ըստ իր կարողության, բնական կարողությամբ, այլ ոչ թե իր ուժով:*


*Երբ արևի ճառագայթն ընկնում է քափանցիկ նյութի վրա, այն ինքնին պայծառ է դառնում և շողեր արձակում: Նույնպես և հոգիները, որոնց մեջ Հոգին բնակվում է, լուսավորվում են նրանից և դառնում ինքնին հոգեոր, և նրանց շնորհը հեղվում է մյուսներին: Մրանից էլ գալիս է սպազայի գիտելիքը, խորհուրդների ըմբռնումը, հրաշալի պարզեցումների բաշխումը, երկնային քաղաքացիությունը, մի վայր հրեշտակների խմբերի հետ, անսպառ երջանկություն Աստծո ներկայությամբ, որով նմանվում ենք Աստծուն և որպես գերագույն չգտնում դառնում Աստված: Մրանք միայն մի քանիսն են այն շատ բաներից, որ սովորեցինք Սուրբ Հոգու մեծության, արժանապարվության և գործունեության վերաբերյալ և մենք սովորեցինք դրանք Հոգուց իսկ բխած խոսքերով:*

Սուրբ Հոգու մասին, 9/22,23



- Ահա մի քաղվածք երանելի Ներսես Լամբրոնացու՝ Ամենասուրբ Հոգի Աստծո գալստյանը նվիրված ներբող-աղոթքից, որը կարդացվում է Հոգեգալստյան տոնի Երեկոյան ժամերգության ավարտին: Ընթերցի՛ր այն Սուրբ Հոգու մասին Սբ Բարսեղի գրվածքի լույսի ներքո: Ինչպե՞ս է այն հաստատում Սբ Բարսեղի մտածումները: Ընդգծի՛ր այն բառերը, որոնք նկարագրում են Սուրբ Հոգու յուրահատուկ գործերը:

*Ո՛վ Սուրբ Հոգի, որ Ասրված ես Ասրծուց և նորոգիչ ամեն ինչի, քո պահպանության խնամքի ներքո Քաջ Հովիվն իր հույրին ապաստան Կրկեց, և սիրեց քո նառագայթը իր եկեղեցուն մինչև հավիտյան: Քեզանով են շարժվում մեր լեզուները պատարագի օրհնության ժամանակ, և մեր անչեքը նշանակվեցին սպասավորելու քո զանազան շնորհների պաշտամունքին: Եվ մենք միաբերան օրհնում ենք քեզ Հոր և Որդու հետք քո մշտնջենավոր և անվախճան կյանքի մեջ. ամեն:*



- Երկյուղածությամբ արտասանի՛ր Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքի հետևյալ տողերը, երբ մտովի պատրաստվես ընդունելու Սուրբ Հոգին՝ ըստ աղոթքում ներկայացված խնդրանքների: Գրի՛ր քո ինքնուրույն աղոթքը՝ արտահայտելով քո ցանկությունները:

*Տե՛ր Հիսուս Քրիստոս, արժանի՛ արա քո ծառաներին ասրվածային քո պարգևներին՝ իմաստությանը և հանճարին, խորհրդին և զորությանը, գիտությանը և ասրվածպաշտությանը, և Հոգուդ միջոցով քո երկյուղը լցրո՛ւ մեր մտքերի մեջ և մեր մեջ նորոգի՛ր սուրբ սիրտ, ուղիղ հոգի և մաքուր միտք, ո՛վ Մարդասեր:*

## ՍԲ ԱՐՍԵՆԸ ԽՈՍՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Սբ Արսենը ծնվել ու մեծացել է քրիստոնեական ընտանիքում, 4-րդ դարում: Նա բարեկիրթ, եկեղեցասեր մարդ էր և որպես սարկավազ ծառայում էր Հռոմի եկեղեցիներից մեկում: Շուտով կայսրը նրան հրամայում է դառնալու իր որդիների ուսուցիչը:



Որոշ ժամանակ անց, փնտրելով ավելի պարզ կյանք, նա թողնում է քաղաքական պալատը, հագնում սովորական մավաստու շորեր և մավաստելով ուղևորվում է դեպի Եգիպտոս: Նա բնակություն է գտնում եգիպտական անապատում, միանում այնտեղ հաստատված վանքերից մեկին և իր ամբողջ ժամանակն անցկացնում է աղոթելով, զամբյուղներ գործելով և լռության ուխտ պահելով: Նրա աղոթական կյանքը հրաշալի օրինակ եղավ մյուսներին, և շատերը գալիս էին նրա մոտ հոգևոր խրատ և խորհրդատվություն ստանալու համար:

Մի օր մի վանական մոտենում է նրան և ասում.

- Հա՛յր սուրբ, ես մի վատ խնդիր ունեմ: Երբ կարդում եմ Աստվածաշնչի խոսքերը, ինձ թվում է, թե չեմ զգում դրանց զորությունը, ոչ էլ դրանցից քաղցրանում է սիրտս:

Արսենը պատասխանում է.

- Որդի՛ս, պարզապես շարունակի՛ր կարդալ: Մեզ պատմում են, որ օձ բռնողները կախարդում են օձին ինչ-որ բառեր ասելով, որոնց իմաստը իրենք էլ չեն հասկանում: Օձերը, սակայն, լսելով այդ խոսքերը, զգում են դրանց զորությունը և ենթարկվում: Համարյա նույն բանն է պատահում մեզ հետ: Երբ անընդհատ մեր շուրթերին և մեր մտքում ենք պահում Սուրբ Գրքի խոսքը, նույնիսկ եթե չենք զգում դրանց զորությունը, չար ոգիները լսում են դրանք և ահաբեկված փախչում: Քանի որ նրանք ատում են Սուրբ Հոգու խոսքերը: Ուրեմն, վերստին շարունակի՛ր կարդալ: Սուրբ Հոգին, որի ներշնչմամբ գրիչները գրի են առել աստվածային խոսքերը, կլսի և կհասկանա և կշտապի օգնության հասնել քեզ: Արդ, երբ չար ոգիները հասկանան և փախչեն, Սուրբ Հոգին ևս կհասկանա և կգա օգնության: Դու միանգամից կստանաս երկու լավ բան՝ քեզնից հեռու կքշես չարքերին և օգնության կկանչես Սուրբ Հոգուն:

- Կարդա՛ **Անգե 2.4-6** և **Ղուկաս 4.1-15** հատվածները: Ինչպե՞ս են հիշյալ երկու քաղվածները ներկայացնում մեզ Սուրբ Հոգու ներգործությունն այնպես, ինչպես Սբ Արսենը նկարագրում է: Գրի՛ր մտածումներդ ներքևի տողերի վրա:

---



---

## ԵՐԳԵՆՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ Պատարագի ընթացքում, երբ պատարագիչ քահանան ավարտում է հացի և գինու նվիրագործումը և Աստծուն խնդրում, որ այդ ընծաները մեզ՝ ճաշակողներիս համար լինի անդատապարտություն, մեղքերի քավություն և բողոքություն, ժողովուրդը երգում է «Հոգի Աստուծոյ» շարականը:

*Հոգի Աստծո, դու երկնքից իջնելով քո փառակցի խորհուրդն ես կայարարում մեր շեռքով. իր արյունի հեղումով աղաչում ենք քեզ, հանգիստ փուր մեր անջեցյալների հոգիներին:*



Andante *mf* *mf*

Հո - գի Ա - ս - տու - ծոյ, որ գփա -

նա - կ-ցի Քո գիտր-հու - րդ ի - ջեալ

ի յե - ր-կնից կա - տա - րեսի

ձե - ոը - ս մեր. հե - ղ - մամբ

ա - րեա - ն Սո - րա, ա - ղա -

ջե - մբ ը - գ - Քե - գ.հա - ն-գո գին

գիս մեր նը - ն - ջե - ցե - լո - - ց:

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ



Գիտես, որ Սուրբ Հոգին կոչվում է «կենսատու կամ կենդանարար»: Ինչպե՞ս է Սուրբ Հոգին կյանք տալիս կամ ապրեցնում քեզ: Քեզ տրված կյանքի ո՞ր մասից ես ամենաշատը գոհ և ինչպես ես արտահայտում երախտագիտությունդ:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սուրբ Հոգու վերաբերյալ այս դասին ձեր զավակը ուսումնասիրեց այն, ինչ Սուրբ Գիրքը պատմում է Սուրբ Հոգու գործունեության մասին: Դրանք հատկապես կարևոր են, որովհետև օգնում են մեզ հիշել, որ Սուրբ Հոգին աստվածային անձ է, ինչպես Հայրը և Որդին: Միասին կարդացեք **Հովհաննես 14.26** համարը, որում Քրիստոսը խոստանում է մեզ ուղարկել Սուրբ Հոգուն: Միասին զրուցեք հետևյալ հարցումների շուրջ.

1. Որո՞նք են այն բաները, որ Հիսուս Քրիստոսը կատարեց և ուսուցանեց, թե Սուրբ Հոգին «կիիշեցնի» առաքյալներին:
2. Սուրբ Հոգին ինչպե՞ս է «հիշեցնում» մեզ Հիսուս Քրիստոսի կատարածի և ուսուցանածի մասին:
3. Ի՞նչ է նշանակում «Մխիթարիչ» բառը, որ գործածվում է Սուրբ Հոգու համար: Սուրբ Հոգին ինչպիսի՞ Մխիթարիչ է մեզ համար:



# 24. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԽՈՍԵՑ ՄԱՐԳԱՐԵՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

«Բայց Աստված մեզ հայտնեց այդ խորհուրդն իր Հոգու միջոցով, որովհետև Հոգին, որ ամեն ինչ քննում է, գիտի Աստծո նույնիսկ ամենաձածուկ ծրագրերը»:

Ա Կորնթացիներին 2.10



## ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Մեծանալիս և մարտահրավերների ու կյանքի դժվարին իրավիճակների հանդիպելիս գուցե քաջալերանք գտնես և ուղղություն ստանաս ուրիշ մարդկանց կենսափորձից կամ նրանց խրատներից ու բարի խոսքից: Կարո՞ղ ես մտածել նրա մասին, ով քեզ օգնել է և ներշնչել նեղ վիճակում:



- Ստորև գրի՛ր այդպիսի մի դեպքի և մեկից քաջալերանք ստանալու մասին:

---

---

---

---

---

---

---

---

Ի՞նչ դաս առար տվյալ իրավիճակից:

---

---

---

---

---

---

---

---

Աստվածաշնչում կարդում ենք շատ մարդկանց՝ ներառյալ թագավորների, մարգարեների, քահանաների, դատավորների և նույնիսկ երիտասարդների մասին, ովքեր իրենց կյանքում դիմագրավել են մարտահրավերներ ու պայքարներ: Նրանցից շատերը ժողովրդին առաջնորդել են պատերազմների, ոմանք դարձել են ազգերի առաջնորդներ, ոմանք հալածվել են, ոմանք մատնվել են սովի և ստրկության, իսկ ոմանք էլ տառապել են, քանի որ նրանց բերանով է Աստծո Սուրբ Հոգին խոսել: Այդպիսիք շատ են պայքարել, կրել բազում փորձություններ և անցել անթիվ դժվարությունների միջով:

*Ծանոթացի՛ր Աստվածաշնչի դասին և տե՛ս, թե ով ներշնչեց և զորացրեց նրանց աստվածահաճո կյանք ապրելու համար:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՍՈՒՐԲ ԶՈԳԻՆ ԽՈՍՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋՈՅՈՎ

**Ծննդոց 41.38-40, Թվեր 11.16-17, Ա Թագավորություններ 10.10-11, Բ Թագավորություններ 23.1-2, Եզեկիել 11.5**

Նիկիական Հանգանակը սահմանում է, որ Սուրբ Հոգին խոսեց մարգարեների միջոցով: Հին Կտակարանում կան բազում դրվագներ, որտեղ Աստված իր Հոգին իջեցնում է մարդկանց վրա: Կարդա՛ ներքևի քաղվածքները և տե՛ս, թե ինչպես Հոգին գործեց ներկայացված մարգարեներից յուրաքանչյուրի միջոցով:



*Փարավոնն ասաց իր բոլոր պաշտոնյաներին. «Մի՞թե կգտնենք այսպիսի մի մարդ, որ իր անձի մեջ կրի Աստված Ոգի»:* Եվ փարավոնն ասաց Հովսեփին. «Քանի որ Աստված քեզ հայրնեց այդ ամենը, ուրեմն քեզնից ավելի իմաստուն ու խելացի մարդ չկա: Դո՛ւ եղիր իմ տան վերակացուն, և քո հրամանին թող ենթարկվի իմ ամբողջ ժողովուրդը: Իմ գահով միայն ես քեզնից բարձր կլինեմ»:

Ծննդոց 41.38-40

*Տերը պատրաստեց Մովսեսին. «Իսրայելացի ծերերի միջից ինչ համար հավաքի՛ր յոթանասուն տղամարդ, որոնց նանաչում ես իբրև ժողովրդի մեջ ամենածեր մարդիկ և իսրայելացիների գրագիրներ: Նրանց կբերես վկայության խորան, և նրանք այնտեղ կկանգնեն քեզ հետ: Ես կիջնեմ այնտեղ, կիստեմ քեզ հետ և քեզ տվածս ոգուց կառնեմ ու կդնեմ նրանց մեջ: Նրանք ի վիճակի կլինեն կրելու այդ ժողովրդի հանդգնության քեռը. և դու միայնակ չես կրի դա:*



Թվեր 11.16-17

*Երբ նա մտրեցավ բլրին, մարգարեների խումբը նրան ընդառաջ գնաց, նրա վրա Աստված Հոգին շարժվեց, և նա նրանց մեջ մարգարեություն արեց: Երբ նախկինում նրան տեսնողները բոլորն էլ ճանաչեցին իրեն, թե ինչպես նա մարգարեների մեջ մարգարեություն է անում, մեկը մյուսին հարցրեց. «Ի՞նչ է պատահել Կիսի որդուն, մի՞թե Սալուդը ևս մարգարեների մեջ է»:*

Ա Թագավորություններ 10.10-11

*Ահա և Դավթի վերջին խոսքերը. «Հավատարիմ է Հեստի որդի Դավիթը, հավատարիմ է նա, որին Տերը բարձրացրեց և իբրև Աստված օձյալ՝ Հակոբի ցեղի վրա թագավոր կարգեց: Գեղեցիկ են Իսրայելի երգերը: Տիրոջ Հոգին իմ մեջ խոսեց, նրա խոսքն իմ լեզվի վրա է»:*

Բ Թագավորություններ 23.1-2



*Տիրոջ Հոգին իջավ վրաս և ասաց ինձ. «Այսպես է ասում Ամենակալ Տերը. «Այսպես և ասացիք, Իսրայելի՛ տուն, ու ես գիտեմ ձեր հոգու խորհուրդը»:*

Եզեկիել 11.5

## ԱՇԽԱՏԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐԲՈՎ

- Քո խմբակի հետ կարդա՛ նշանակված սուրբգրային հատվածը՝ կա՛ն **Ծննդոց 41.1-41** և կա՛ն **Թվեր 11.1-17** և քննարկի՛ր ուսուցչի կողմից տրված հարցումները: Գրի՛ր քո պատասխանը մեկ կամ երկու նախադասությամբ, ապա այն ներկայացրու դասարանին:

1. Մտածի՛ր, թե ինչպես Աստված Հոգին գործեց Մովսեսի մեջ: Սեփական բառերով ամփոփի՛ր, թե ինչպես Աստված օգտագործեց Մովսեսին՝ Եգիպտոսի ժողովրդին դիմելու համար:
2. Նկատի՛ առ Հովսեփի պատմությունը: Աստված ինչպե՞ս գործեց նրա միջոցով:
3. Ի՞նչ կարող ես նշմարել Սուրբ Հոգու գործի մասին Եզեկիելի և Դավթի մեջ, եթե այն համեմատելու լինես Մովսեսինի և Հովսեփինի հետ:

**Բառարան**

**ՄԵՏԻԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
Մեսիային վերաբերող մարգարեություններ. Զին Կտակարանի մարգարեություններ, որ Քրիստոսը կատարեց, ինչպես որ Սուրբ Զոգին ասել էր մարգարեների բերանով:

## ԳՏԻՐ ՀԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

- Սուրբ Հոգու գործունեությունը մարգարեների միջոցով կարելի է տեսնել Նոր Կտակարանում հինկտակարանյան մարգարեություններն իրականանալիս, հատկապես Քրիստոսի կյանքում: Աստվածաշնչի օգնությամբ լրացրո՛ւ գծապատկերը:

| Մեսիական մարգարեություններ | Նշիր, թե Հին Կտակարանի ո՞ր մարգարեությունն է կատարվում Հիսուսի կյանքում | Կատարումը          |
|----------------------------|---|--------------------|
| Եսայի 7.14                 | օրինակ՝ կույսից ծնվելը  | Մատթեոս 1.21-23    |
| Միքիա 5.2                  |   | Մատթեոս 2.1-6      |
| Զաքարիա 9.9                |   | Ղուկաս 19.28-40    |
| Սաղմոս 41.9                |   | Ղուկաս 22.3-4      |
| Զաքարիա 11.12              |   | Մատթեոս 26.14-15   |
| Եսայի 53.7                 |   | Մատթեոս 27.12-14   |
| Սաղմոս 69.21               |   | Հովհաննես 19.28-30 |

## ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐՈՒՄԸ

- Աստվածաշնչից կարդա՛ **Ղուկաս 3.21-22** և **Ղուկաս 4.1-2** հատվածները, ապա գրի՛ր բաց թողնված բառերը ներքևի նախադասությունները լրացնելու համար:

*Ներկա ամբողջ ժողովրդի մկրտվելուց հետո Հիսուսը ևս մկրտվեց: Երբ Հիսուսն աղոթում էր, երկինքը բացվեց և ..... տեսանելի կերպարանքով ..... նման իջավ նրա վրա: Երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր.*

- *Դո՛ւ ես ....., որ ունես իմ բարեհաճությունը:*

*Հիսուսը, ..... լցված, վերադարձավ Հորդանանից: Ապա ..... առաջնորդված՝ գնաց անապատ, որտեղ քառասուն օր փորձվեց Սաղմոսայից:*

Ինչպե՞ս են հիշյալ հատվածները կապակցվում Եսայի մարգարեի միջոցով ասված Սուրբ Հոգու խոսքերի հետ: Կարո՞ղ ես դա բնորոշող մի բառ կամ կապակցություն գրել գծի վրա:

.....

## ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՀԱՄԱԲԱՐԲԱՈԸ

- Գտի՛ր Ղուկասի ավետարանի այն հատվածը, որտեղ Հիսուսը հղում է **Եսայի 61.1** համարը: Հղումը գրի՛ր գծի վրա:

.....

*Տիրոջ Հոգին ինչ վրա է, դրա համար իսկ օժեց ինչ, ուղարկեց ինչ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով քեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն...:*

**Եսայի 61.1**

- Ի՞նչ սովորեցիր նախորդ էջի սուրբգրային տողերն ընթերցելիս և այս վարժությունը կատարելիս: Ինչպիսի՞ եզրահանգումներ կարող ես կատարել Սուրբ Հոգու վերաբերյալ:

.....

.....

.....

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՕՐԵՆՔԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Այս նույն Հոգին է, որ խոսեց Հին Ուխտի մարգարեների միջոցով և այսօր խոսում է Աստվածաշնչի և Եկեղեցու միջոցով՝ առաջնորդելով մեզ քացահայտել Աստծո կամքը մեր կյանքի համար:

Սուրբ և Անմահ Պատարագում նշվում է, որ Քրիստոսն է կատարումը Օրենքի և մարգարեների, որոնց միջոցով Սուրբ Հոգին խոսեց: Այս մասին իմացարարդեն կատարած վարժությունից, որում Հին և Նոր Կտակարանի հատվածների համեմատությամբ ծանոթացար Քրիստոսին առնչվող մարգարեություններին: Պատարագի վերջավորությամբ, երբ քահանան խորանից իջնում է ատյան, Ավետարանը ձեռքին բարձրաձայն արտասանում է Սբ Հովհան Ոսկերեբանի հետևյալ աղոթքը.

*Ո՛վ Քրիստոս Աստված Փրկիչ մեր, դու ես լրումը օրենքի և մարգարեների, որ կարարեցիր Հոր կամքով փնտրիմված քո առաքելությունը: Մեզ ևս լցրո՛ւ քո Սուրբ Հոգով:*

Եկեղեցու աղոթքներն ու շարականները ևս սովորեցնում են, որ Սուրբ Հոգին խոսեց մարգարեների միջոցով: Ուսումնասիրի՛ր մարգարեների տոնին նվիրված շարականները:

### Կանոն Սբ Մարգարեների

#### Օրհնություն ԱԿ

*Ճշմարիտ Հոգի, դու որ սկզբից քո պարգևներն իշխանաբար մարգարեներին բաշխելով քո աստվածային զորությունը հայրանեցիր. նրանց բարեխոսությամբ խնայի՛ր մեզ:*

*Դու, որ սուրբ մարգարեներին աստվածությանդ իբրև բնակարան մաքրեցիր և նրանց անչեղի մեջ անապական և երկնաբուխ շնորհներդ աղբյուրի պես հոսեցրիք. նրանց բարեխոսությամբ խնայի՛ր մեզ:*

*Դու, որ ծածուկ խորհուրդը քեզ սիրող մարգարեներին հայրանեցիր և նրանց քո էակցի՝ Աստծո Խոսքի մարդկային ասպազանձանի դեպքերի պարմող դարչրիք. նրանց բարեխոսությամբ խնայի՛ր մեզ:*



#### Ողորմեա ԴՁ

*Դու, ո՛վ արարածների Սրբեծիչ, եկեղեցու փառքը կերպեցիր հավայրի վեմի վրա ավելի բարձրապարիվ, քան առաջին փանարը, և մարգարեները Սուրբ Հոգու իմաստությամբ ծանուցեցին սրա մասին գերազվարթ վայելչությամբ. նրանց բարեխոսությամբ, ո՛վ Քրիստոս, ողորմի՛ր մեզ:*

- Հիշյալ շարականներից դո՛րս գրիր այն կապակցությունները, որոնք արտահայտում են Սուրբ Հոգու գործը մարգարեների միջոցով: Գրի՛ր մի նախադասություն՝ նկարագրելով այդ գործը:

---



---



---



---

## ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ


- Հայրերի գրվածքները ստորև ընթերցելիս ընդգծի՛ր այն բառերը կամ նախադասությունները, որոնք մատնանշում են Սուրբ Հոգու գործը մարգարեների միջոցով:

Ես Կեղյակ եմ, իհարկե, որ որոշ անմիջապես մարդիկ խոսում են «Հոգու նորության» մասին այնպես, իբրև թե Հոգին նոր է, կարծես թե նա նախապես գոյություն չուներ և ոչ էլ նախնիներն են ճանաչել նրան: Եվ չեն գիտակցում, որ այսպես արքայազգայնորեն հայտնում են Աստուծոն: Քանզի Հոգին ներկա է օրենքում, Ավետարաններում և մշտապես է Հոր և Որդու հետ, և նա միշտ եղել է, կա ու կլինի ինչպես Հայրը և Որդին: Հեղինակաբար, նա նոր չէ, այլ նորոգում է նրանց, ովքեր հավատում են, երբ նա առաջնորդում է նրանց հին մեղքերից դեպի նոր կյանք և Քրիստոսի նոր դավանանքին և երբ նա նյութական մարմիններին վերածում է հոգևոր մարդկանց:

Որոգիներս  
[Մեկնություն առ Հռոմեացիս, Գիրք 2, 7.19]

Նա [Աստուծոյ], ապա, լինելով Աստուծո Հոգին և Քարշրայի սկիզբը, իմաստությունը և գործությունը, իջավ մարգարեների վրա և նրանց միջոցով խոսեց աշխարհի արարման և մնացյալ ամեն ինչի սրբազան մասին քանզի մարգարեները գոյություն չունեին, երբ աշխարհն սրբազանացաւ, բայց կար Իմաստություն, որը Նրա մեջ էր և որը Աստուծոց էր, և Իր Սուրբ Բանը, ով հավիտյան Նրա հետ էր:

Թեոֆիլոս Անտիոքացի



Սուրբ Հոգին մեկ է և նույնը, Ով խոսեց մարգարեների և առաքյալների միջոցով, Ով Աստուծո և Քրիստոսի Հոգին է, Որին Սուրբ Գիրքը բնութագրում է որպես Միսկիսից, կյանքի և ճշմարտության Հոգի... Սակայն ոչ ոք կասկած ունի, որ Հոգին մեկ է, չնայած շարքեր կասկածում են, թե Աստուծո մեկ է: ... ինչպես որ Հայրը մեկ է, Ով խոսեց նախնիների հետ, ինչպես կարողում ենք, մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, իսկ այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով (Եբրայեցիներին 1.1-2) և ինչպես որ Որդին մեկ է, Որին, ըստ Հին Կտակարանի Ժամանակագրության, վիրավորեց Ադամը (Ծննդոց 3.17), Կեսավ Աբրահամը (Ծննդոց 18.22-23), երկրպագեց Հակոբը (Ծննդոց 28.17), այնպես էլ Սուրբ Հոգին մեկ է, Ով գործարեց մարգարեներին (Ք Պետրոս 1.21), ներշնչեց առաքյալներին (Հովհաննես 20.22) և միացավ Հորը և Որդուն միությունից խորհրդով (Մատթեոս 28.19): Ուստի Գավիթն ասում է Նրան. «Քո Սուրբ Հոգին մի վերցրու ինձնից»: Եվ մեկ ուրիշ փոքր ասում է. «Ես ո՛ր կարող եմ փախչել Քո Հոգուց...»: Թե՛ առաքյալները և թե՛ մարգարեները սրացան այդ միևնույն Հոգին, որպես ընտրության անոթ հեթանոսների Բժիշկն ասում է. «Որովհետև մենք ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք» (Ա Կորնթացիներին 12.13): Նա, ինչպես ասվում է, չի բաժանվում, այլ հեղվում է մարդկանց հոգիների մեջ և հոսում գիտակցության մեջ, որպեսզի հագեցնի այս աշխարհի կիզիչ ծարավը:

Ամբրոսիոս [Սուրբ Հոգու մասին, Գիրք Ա, Գլուխ 4]

- Գրի՛ր քո նախընտրած կապակցությունները հիշյալ քաղվածքներից:

Որոգիներս .....

Թեոֆիլոս Անտիոքացի .....

Ամբրոսիոս .....

- Համեմատիր Հայրերի գրվածքներից և շարականներից դուրս գրածդ կապակցությունները Սուրբ Գրքի արդեն քեզ ծանոթ քաղվածքների հետ (**Եզեկիել 11.5, Եսայի 61.1**): Նշիր նմանությունների կամ համեմատության ընթացքում արված դիտարկումներիդ մասին:

.....

.....

.....

.....

.....

.....


## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ



Գրիր երկու կամ երեք լարված միջադեպերի մասին, որոնց հանդիպել ես քո առօրյա կյանքում (օրինակ՝ ճնշում հասակացի կողմից): Նկատի առնելով, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում մարդկանց միջոցով, խորհրդածիր և գրիր մի դեպքի մասին, երբ զգացել ես Սուրբ Հոգու օգնությունն այդպիսի լարվածության հանդիպելիս:

## ԱՂՈԹՔ՝ ՆԿԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

- Գրիր Սուրբ Հոգուն նվիրված մի աղոթք՝ շնորհակալություն հայտնելով քեզ ներշնչելու և կյանքում ուղղություն ցույց տալու և առաջնորդելու համար:



## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը նպատակ ունի ձեր զավակին ծանոթացնել Սուրբ Հոգու հետ, Ով ի զորու է խոսելու նրա միջոցով: «Սուրբ Հոգին խոսեց մարգարեների միջոցով...» Սիկիական Հանգանակի սահմանումն ուսումնասիրվեց այս դասին աստվածաշնչյան զանազան հատվածների միջոցով: Անցանք նաև, թե ինչպես է Եկեղեցին պատկերում Սուրբ Հոգու գործունեությունը ծեսում օգտագործվող տարբեր շարականների ու երգերի միջոցով: Աշակերտներին ներկայացվեց նաև մի քանի եկեղեցական հայրերի, ովքեր խոսում են Սուրբ Հոգու մասին որպես Աստծո և հավիտենականի: Նրանց նաև հնարավորություն ընձեռնվեց խորհրդածելու իրենց սեփական կյանքի մասին:

Ձեր զավակն այն տարիքում է, երբ անցնում է շատ ու շատ պայքարների միջով: Նրանք գուցե հանդիպում են դժվարին իրավիճակների դպրոցում: Նրանք գուցե ստիպված են լինում գործ ունենալ իրենց հասակակիցների ճնշումների, վնասակար տեղեկատվության և այլ ուժերի հասարակության մեջ: Մինչ նրանք պայքարում են այս ամենի դեմ, պետք է իմանան, որ Սուրբ Հոգին նրանց հետ է բոլոր պահերին որպես Մխիթարիչ և խորհրդատու: Նրանք պետք է սովորեն հետևել նրանց օրինակին, ովքեր ի զորու են եղել ապրելու ճշմարիտ և հավատարիմ կյանք Աստծո առաջ, նույնիսկ փորձանքների մեջ: Նրանք պետք է իմանան, որ Սուրբ Գիրքը սովորելու և Եկեղեցում իրենց հոգևոր կյանքի միջոցով մտահոգում և օգնություն կստանան Աստծուց՝ Սուրբ Հոգուց, կյանքում հանդիպող մարտահրավերներին դիմագրավելու համար: Դա մի կյանք է՝ ենթակա Սուրբ Հոգուն, Ով ապահովում է մեզ այդ շնորհով:

Քաջալերեք ձեր զավակին Աստծո հետ համաքայլ ընթանալ և առիթներ ստեղծեք առողջ քննարկումներ կազմակերպելու համար, որը կնպաստի հավատքի զարգացման գործընթացին և Սուրբ Հոգուն ավելի շատ ապավինելուն: Շարունակեք ուսումնասիրել Աստվածաշունչը և մասնակցել Եկեղեցու կյանքին և միասին աճել որպես մի ընտանիք, որի անդամների միջոցով գործում է Սուրբ Հոգուն, ինչպես մարգարեների պարագային:

# 25. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԽՈՍԵՑ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգու, որը  
դուք Աստծուց եք առել»:

Ա Կորնթացիներին 6.19



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Մտածի՛ր քո ամենամոտ և ամենասիրելի ընկերներից մեկի մասին: Գրի՛ր այդ անձի մասին և անդրադարձի՛ր, թե որքան կարևոր է նա քեզ համար:



---

---

---

---

---

---

- Կա՞ մի բան, որ անում ես, ինչը ամեն օր կամ շաբաթը մեկ գորացնում է քեզ: Նկարի՛ր մի պատկեր կամ գրի՛ր նրա մասին, ինչը ներշնչանք է տալիս քեզ:

- Գրի՛ր մի երգի մասին, որը ներշնչում, ուժ է տալիս քեզ և ավելի նպատակասլաց դարձնում:

---

---

Գուցե ունես ներշնչանքի մի բանի աղբյուրներ: Աստված մեր կյանքում օրհնում է մեզ ընկերներով և ընտանիքով: Սա արտահայտությունն է մեր հանդեպ Աստծո սիրո: Մենք կարող ենք հիմնվել նրանց վրա և ստանալ նրանց օգնությունն ու ուղղությունը, երբ անցնում ենք դժվարին իրավիճակների միջով այս աշխարհում ապրելիս: Աստվածաշնչում կարդում ենք շատ մարդկանց մասին, ովքեր մեծ գործեր են արել: Առաքյալները, օրինակի համար, ի գորու եղան մեծ գործեր կատարել Աստծո համար և փառաբանել Աստծուն իրենց կյանքով:

*Անցի՛ր Աստվածաշնչի դասին և պարզի՛ր, թե ով ներշնչեց և նպատակասուղղեց առաքյալներին:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԽՈՍԵՑ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հովել 2.28, Հովհաննես 14.25-26, Գործք 13.1-5, 16.6-7, 20.2, Հռոմեացիներին 8.9-11


Նիկիական Հանգանակը սահմանում է, որ Սուրբ Հոգին խոսեց առաքյալների միջոցով:

*Տերը խոսեց Հովել մարգարեի միջոցով՝ ասելով, որ «...իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա»:* (Հովել 2.27)

Հիսուսը խոստացավ իր առաքյալներին մինչ խաչվելը՝ ասելով. «Այս բոլորն ասացի ձեզ, քանի որ տակավին ձեզ հեղեմ: Բայց Միտրիսիչը՝ Սուրբ Հոգին, որին իմ Հայրը կուղարկի ձեզ մոտ իմ անունով, նա ձեզ ամեն ինչ կսովորեցնի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ»: (Հովհաննես 14.25-26)



- Կարդա՛ **Գործք առաքելոցի 2-րդ** գլուխը և տե՛ս, թե ինչպե՛ս են հիշյալ մարգարեությունը և խոստումը կատարվում:
- Համեմատի՛ր սուրբգրային տեքստը Հոգեգալստյան սրբապատկերի հետ և հերթով նշի՛ր ընդհանրությունները:
- **Գործքի 2-րդ** գլուխն ուշադիր կարդալուց հետո խորհրդածի՛ր և գրի՛ր, թե ինչ պատահեց Հոգեգալստյան օրը: Սուրբ Հոգու ընդունելությունն ինչպե՛ս ազդեց առաքյալների վրա: Ո՞ր առաքյալի վրա գորավոր կերպով ներգործեց Սուրբ Հոգին, և ինչպե՛ս կնկարագրեիր դա:



- Ընթերցի՛ր ներքևի հատվածները և խորհրդածի՛ր առաքյալների միջոցով կատարված Սուրբ Հոգու գործերի մասին՝ ըստ վերջընթեր հարցումների:

*Անտիոքի եկեղեցում կային մարգարեներ և ուսուցիչներ, ինչպես՝ Բառնաբասը և Շնավոնը, որ կոչվում էր Նյուգեր, Կյուրենացի Դուկիոսը և Մանասյենը, որ Հերովդես չորրորդապետի սննդակիցն էր, և Սողոսը: Մի օր, երբ սրանք պաշտամունք էին մատուցում Տիրոջը և ծոմապահության մեջ էին, Սուրբ Հոգին ասաց.*

*- Տրամադրեցե՛ք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որին ես կոչել եմ նրանց:*

*Այն ժամանակ նրանք ծոմապահությամբ և աղոթքով ձեռք դրեցին նրանց վրա և ուղարկեցին: Ուարի Բառնաբասն ու Սողոսը, Սուրբ Հոգուց ուղարկված, իջան Սելևեկիա և այնպեղից նավով գնացին դեպի Կիպրոս: Մալամինա հասնելով՝ նրանք սկսեցին Ասրծո խոսքը քարոզել հրեաների ժողովարաններում:*

Գործք առաքելոց 13.1-5

*Պողոսը, Շիղան և Տիմոթեոսը շրջեցին Փռյուզիայի և Գաղատիայի կողմերում, բայց Սուրբ Հոգին թույլ չրվեց, որ նրանք Ասիայի նահանգում քարոզեն Տիրոջ խոսքը: Նույնպես, երբ դեպի Մյուսիա եկան և փորձում էին գնալ Բյուքանիա, Հիսուսի Հոգին թույլ չրվեց նրանց:*

Գործք առաքելոց 16.6-7

*Ուշադիր եղե՛ք ձեր անձերին և ձեր ամբողջ հոտին, որի վրա Սուրբ Հոգին տեսուչ կարգեց ձեզ: Հովվեցե՛ք Տիրոջ եկեղեցին, որ նա իր արյունով գնեց:*


Գործք առաքելոց 20.28



Եթե Ասործո Հոգին իսկապես բնակվում է շեր մեջ, նշանակում է, որ դուք այլևս մարմնական ցանկությունների համաշայն չեք ապրում, այլ Սուրբ Հոգու կամեցած ձևով: Իսկ նա, ով չունի Քրիստոսի Հոգին, չի պարկանում նրան: Եթե Քրիստոսը շեր մեջ է ապրում, թեկուզև շեր մարմինները կմեռնեն, որովհետև մեղանչեցիք, բայց Սուրբ Հոգին դարձյալ կյանք կրա չեզ, որովհետև արդարացած եք: Այսինքն, եթե Ասործո Հոգին բնակվում է շեր մեջ, Ասորված, որ Հիսուս Քրիստոսին հարություն արվեց մեռելներից, իր Հոգու միջոցով, որը բնակվում է շեր մեջ, կկենդանացնի նաև շեր մահկանացու մարմինները:

Յոնեացիներին 8.9-11

1. Վերևում տրված հատվածներից ո՞ր մեկում ես տեսնում, որ որոշ առաքյալներ առանձնացվում են: Ի՞նչ համատեքստում են նրանք լսում Սուրբ Հոգու խոսելը:
2. Քո կարծիքով՝ Պողոսը և Տիմոթեոսն ինչպե՞ս իմացան, որ Սուրբ Հոգին չի ուզում, որ նրանք քարոզեն Ասիայում: (Հուշում. **Գործք 13.1-5** հատվածում կգտնես մի քանի գաղափարներ):
3. Ո՞ւմ մասին է խոսում Պողոսը **Գործք 20.28**-ում: Անդրադարձի՛ր ավելի ընդլայնված հատվածին՝ **Գործք 20.14-36** հատվածում և նկատի՛ առ հետևյալը.
  - Ի՞նչ գործ է Սուրբ Հոգին վստահում առաքյալներից:
  - Ովքե՞ր են այսօրվա եկեղեցու «տեսուչները»:
4. **Հոնեացիներին 8.9-11** հատվածում Պողոս առաքյալն օգտագործում է «մարմնական ցանկություն» հասկացությունը՝ մեր մարդկային բնությունը մատնանշելու համար, որը հակված է մեղանչելուն: Նաև հակադրում է Սուրբ Հոգուց չլուսավորված մարդկային ըմբռնումը և աշխարհիկ զբաղումներով տարվելն այն կյանքի հետ, որն ուղղորդվում է Հոգու թելադրությամբ և առաջնորդությամբ: Առաջինը տանում է ի վերջո մահվան, իսկ երկրորդը՝ Սուրբ Հոգով կյանքին՝ լի խաղաղությամբ և ուրախությամբ:



- Ըստ **Գործք 13.1-5** համարների՝ քարտեզի վրա ուրվագծի՛ր Սբ Պողոս առաքյալի և Բառնաբասի ճամփորդությունը:
- Մտածելով վերստին կարդա՛ հոնեացիներին ուղղված Պողոս առաքյալի նամակը: Ի՞նչ առնչություն ունի այս պատգամը նաև քեզ հետ, դու, որ մկրտվել ես Հիսուս Քրիստոսի անունով: Գրի՛ր մտածումներդ այս էջի տողերի վրա:



# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ


## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈՐԾԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այդ նույն Սուրբ Հոգին, որ հնում խոսեց մարգարեների և առաքյալների միջոցով, այսօր խոսում է Եկեղեցու միջոցով և Եկեղեցում: Հոգեգալստյան տոնին՝ Պենտեկոստեի օրը, մատուցվող Սբ Պատարագի ընթացքում խորանից մաս առ մաս ընթերցվում է Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքը՝ նվիրված Սուրբ Երրորդությանը: Հայր Աստծուն ուղղված հատվածն ընթերցվում է մինչ այն պահը, երբ պատարագի քահանան բարձրաձայն պիտի երգի «Առե՛ք, կերե՛ք...» աղոթքը: Այնուհետև կարդացվում է Որդի Աստծուն նվիրված մասը, որի ավարտին դպիրներն սկսում են երգել «Որդի Աստուծոյ» շարականը, իսկ քահանան ցածրաձայն աղոթքով նվիրագործում է հացը և գինին: Եվ ապա ընթերցվում է Սուրբ Հոգուն ուղղված հատվածը, որից հետո երգվում է «Հոգիդ Աստուծոյ» շարականը:

Ծանոթացի՛ր Սուրբ Հոգուն նվիրված աղոթքի հետևյալ հատվածին.

*Դու, որ ինքդ ես զորությունների Տեր, ո՛վ ճշմարիտ Աստված, լույսի և կյանքի աղբյուր՝ անքննելի կերպով քիսած Հորից, հրաշագործ Սուրբ Հոգիդ, որին խոստացավ ուղարկել սուրբ առաքյալներին Քրիստոս մեր Աստված, երկնային խաղաղությունդ շնորհիլ և նորոգի՛ր մեր հոգիներն ու մարմինները մեղքի հնությունից՝ վերստին ծնվելու ապաշխարությամբ ու արտասուքով և զորացրո՛ւ ամենքին զգասարությամբ և արդարությամբ սուրբ առաքյալների հետ, որպեսզի բնակվես մեր մեջ, և մեր ներսում չարը մուրք ու տեղ չունենա:*

- Մտորի՛ր հիշյալ աղոթքի շուրջ: Ո՞րը եղավ Սուրբ Հոգու արդյունքը՝ առաքյալների վրա իջնելուց հետո:



- Սուրբ Սկրտության խորհրդի ընթացքում, մինչ մկրտվող երեխային դրոշմելը քահանան արտասանում է հետևյալ աղոթքը: Ինչպե՞ս է աղոթքում նկարագրվում Սուրբ Հոգու ներգործությունը մկրտված անձի կյանքում:

*Քրիստո՛ս Աստված, քո արարածներին լուսավորեցիր՝ աստվածգիտության լույսը մեր մեջ ծագելով, և հիմա քո այս ծառային ազատեցիր, սրբեցիր և արդարացրիր, և որդեգրության պատիվը տվեցիր նրան: Ո՛վ Տեր, ամենակա՛լ Աստված, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Հայր, քո ճշմարտության գիտությունը շնորհեցիր բոլոր հավատացյալներին և իշխանություն տվեցիր ջրից և Հոգուց վերստին ծնվելով Աստծո որդիներ լինելու: Դու, որ սուրբ Ավագանի շնորհած քավությամբ նորոգեցիր /անուն/ ծառայիդ, մաքրագործի՛ր նրան քո ճշմարտությամբ և Սուրբ Հոգու շնորհի լույսով, որպեսզի աստվածությանդ տաճար և բնակարան լինի, կարողանա արդարության ճամփաներով քայլել և համարչակությանը կանգնել քո Միածնի՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի սահմիր արյանի առջև:*



- Պատրաստի՛ր մի դրոշ խմբիդ անդամների հետ և նրա վրա պատկերի՛ր Սուրբ Հոգու ներգործությունը մկրտվող անձի կյանքում:

## ՄԲ ՀՈՎԻԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆԸ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

- Մբ Հովհան Ոսկեքերանը խոսում է Սուրբ Հոգու պարգևների մասին, որոնք շնորհվում են քահանաներին: Ընթերցելու ընթացքում մտածիր հետևյալ հարցումների մասին և պատասխաններդ գրիր տետրակի էջի վրա:



- Սուրբ Հայրապետը ո՞ր շնորհի մասին է խոսում հիշյալ հատվածում:
- Ավետարաններում որտե՞ղ ես հանդիպում առաքյալներին տրված այդ նույն շնորհին: Համաբարբառի օգնությամբ գտիր համապատասխան հատվածն ավետարաններում:

*Քանզի, եթե որևէ մեկը մրտաժի, թե որքան մեծ բան է դա, մարդ լինելով՝ կազմված միս ու արյունից, ի վիճակի լինելով մոտենալու այդ օրհնյալ և անարատ բնությանը, սպա նա հայրակ կհասկանա,*



*թե ինչ մեծ պատիվ է Հոգու շնորհը տալիս քահանաներին, բանի որ ի պաշտոնն այսպիսի ծիսակարգերը նշվում են, և մյուսները որևիցե չնով ստորադաս չեն սրանց թե՛ մեր արժանապատվության և թե՛ մեր փրկության առումներով: Ուրեմն, նրանք, ովքեր բնակվում են երկրի վրա և շինում են իրենց տունն այնպեղ, նրանց վարահվում են վարելու բաներ, որոնք գտնվում են երկնքում, և սրացել են իշխանություն, որը Աստված չի տվել անգամ հրեշտակներին կամ հրեշտակապետերին: Քանզի նրանց չասվեց. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արչակեք երկրի վրա, արչակված կլինի երկնքում»: Նրանք, ովքեր կառավարում են երկիրը, անշուշտ, ունեն իշխանություն կապելու, բայց միայն մարմինը. ուր որ այս կապը դրվում է հոգու վրա, այն ներթափանցում է երկինք, և ինչ որ քահանաներն անում են այսպեղ ներքևում, Աստված հաստատում է վերևից, և Տերը ամրագրում է իր ծառաների խոսքերը: Գրա համար, իհարկե, ինչ է սա, եթե ոչ այն ամենը, ինչ վերաբերում է երկնային իշխանությանը, որը Աստված տվել է նրանց՝ ասելով. «Ում մեղքերը ներեք, ներված կլինեն, և ում մեղքերը չներեք, ներված չեն լինի»: Էլ ի՞նչ կարող է ավելի մեծ լինել, քան սա: «Հայրն ամեն դարաստրան հանչնել է Որդուն»: Մակայն ես տեսնում եմ այդ ամենը Որդու կողմից հանչնված հիշյալ մարդկանց չեռքերում:*

Մբ Հովհան Ոսկեքերան, «Քահանայություն», 3.5 (387թ.)

## ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԿԱՆԸ

Քահանայական ձեռնադրության աղոթքներն ու շարականները ցույց են տալիս Սուրբ Հոգու գործն առաքյալների կյանքում և Եկեղեցում: Հետևյալ շարականը երգվում է ձեռնադրության այն պահին, երբ եկեղեցականները երգելով երիցս հայցում են Սուրբ Հոգու շնորհները ընծայացուին.

*«Աստվածային և երկնավոր շնորհը, որ Առաքելական Եկեղեցու սուրբ ծառայության կարիքները միշտ հոգում է, սարկավագությունից քահանայության է կոչում (այսինչին), Սուրբ Եկեղեցուն ծառայելու համար, իր անչի և ամբողջ ժողովրդի վկայության համաչայն»:*

Իսկ հավատացյալները երգակցելով երիցս կրկնում են՝ Արժանի՛ է:

**Բառարան**

**ՇՆՈՐՀ**  
Սուրբ Հոգու պարգևը:

- Ի՞նչ է նշանակում շարականում հիշված այն միտքը, թե «...շնորհը հոգում է Եկեղեցու ծառայության կարիքները»: Գրիր մտածումներդ:

## ԹԱՆԿԱԳԻՆ ՔԱՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Քահանայական ձեռնադրությունից հետո, եթե ձեռնադրվածն ամուսնացյալ չէ և ընդունելու է կուսակրոնության ուխտը, Երեկոյան Ժամերգության ընթացքում տեղի է ունենում կուսակրոն եկեղեցականի՝ արեղայի օրհնության կարգը: Ձեռնադրող եպիսկոպոսը վեղար է դնում նորած քահանայի գլխին: Ահա մի հատված այն աղոթքից, որն արտասանում է եպիսկոպոսը վեղարի տվչության ընթացքում: Աղոթքին ծանոթանալուց հետո անդրադարձի՛ր, թե դու ինքդ ինչպես կարող ես լինել «թանկագին քար»՝ Քրիստոսի Եկեղեցու համար:



*Դու՛ թողր արարածների վերանորոգ կյանքի հույս, Հոր Միածին Որդի և Բան, որ հոգևոր պարգևներով և լուսածագ վարդապետությամբ եկար ամբողջ մարդկությունը վերանորոգելու, քո ընկրությանը, նախահրավեր կոչումով և Սուրբ Հոգով ծանուցեցիր առաքյալների խումբը, և քո կենարար խոսքով սրբելով՝ քեզ բարեկամ անվանեցիր նրանց, և հրեղեն լեզուներով զինելով՝ նրանց հաստատեցիր իբրև անշարժ վեմ և որպես թանկագին քար, զարդն ու պարծանքը Նոր Միոնի՝ Եկեղեցու զավակների: Մաքրի՛ր, ո՛վ Տե՛ր, քո այս զավակի միտքն ու զգայարանները, և լուսավորի՛ր նրա մտածողությունն ու հասկացողությունը, ինչպես քո երանելի աշակերտներին շնորհը փվեցիր ճանաչելու քեզ և քարոզելու քո սպույզ և ճշմարիտ աստվածությունը: Ծնորհարուխ հոգի փուր նրան, որպեսզի քեզ միայն սիրի և ճշմարիտ արդարությունը չեռք բերի:*

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Աչքի առաջ ունենալով, թե ինչպես Սուրբ Հոգին խոսեց առաքյալների միջոցով և Եկեղեցում, նաև ձգտում է գործել քո միջոցով այսօր, գրի՛ր մի աղոթք՝ նշելով, թե քեզ ինչպես ես հանձնում Սուրբ Հոգուն: Անդրադարձի՛ր այն ուղիներին, որոնցով տեսնում ես Սուրբ Հոգու գործը քո միջոցով:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ունի ձեր զավակին ծանոթացնել Սուրբ Հոգուն, ով ի գորու է խոսել նրա միջոցով: «Սուրբ Հոգին խոսեց առաքյալների միջոցով»՝ Նիկիական Հանգանակի սահմանումն ուսումնասիրվում է այստեղ՝ սուրբգրային զանազան հատվածներով հանդերձ: Նաև ներկայացվում է Սուրբ Հոգու գործունեությունը Եկեղեցու կյանքում՝ սկսյալ առաքյալներից մինչև եկեղեցական շարականներն ու հոգևոր երգերը: Աշակերտներն առիթ ունեցան անդրադառնալու նաև Սուրբ Հոգու գործունեությանն իրենց կյանքում:

Ձեր զավակն այն տարիքում է, երբ ոգեշնչվում է տարբեր բաներից: Նրանք կարող են ներշնչվել և օգնություն ստանալ մյուսներից: Նրանք գուցե կողմորոշում ստանալ որոշակի լրատվամիջոցներից: Նրանք գուցե հայտնաբերեն տիպար օրինակներ իրենց կյանքի համար: Այս ամենի միջով անցնելիս նրանք պետք է իմանան, որ Սուրբ Հոգին իրենց հետ է ամեն պահի՝ որպես Մխիթարիչ, խորհրդատու և Կատարյալ Օգնական: Աշակերտները պետք է սովորեն նմանվել նրանց, ովքեր իրենց հանձնել են Սուրբ Հոգուն: Նրանք պետք է իմանան, որ Աստվածաշունչը սերտելու և Եկեղեցում իրենց կյանքի միջոցով ուղղություն և օգնություն պիտի ստանան Աստուծոց՝ Սուրբ Հոգուց, կյանքում ներշնչվելու և որոշումներ կայացնելու համար: Սա այն կյանքն է, որ հանձնառու ենք դառնում Սուրբ Հոգուն, ով էլ ընդունակ է դարձնում մեզ անելու դա:

Քաջալերե՛ք ձեր պատանուն դեպի Աստված գնալու մեջ և առիթներ ստեղծե՛ք առողջ քննարկումներ ունենալու, որոնք կօգնեն հավատի զարգացման գործընթացին և Սուրբ Հոգի Աստծուն առավել ապավինելուն: Շարունակե՛ք ուսումնասիրել Սուրբ Գիրքը և մասնակցել Եկեղեցու կյանքին և միասին աճել որպես մեկ ընտանիք, որը տեղ է հասկացնում Սուրբ Հոգուն ձեր միջոցով գործելու համար, ինչպես որ գործեց առաքյալների միջոցով:

# 26. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՊՐՈՒՄ Է ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Թեև պարզևները զանազան են լինում, բայց նույն Հոգին է պարզևողը: Չանազան հոգևոր պաշտոնների կան, այո՛, բայց նույն Տերն է դրանք բաշխողը»:

Ա Կորնթացիներին 12.4-5



## ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Ի՞նչ է սուրբ լինելը: Ի՞նչն է մարդուն սուրբ դարձնում: Ահա հնարավոր մի քանի նկարագրություններ: Այսպիսի ✓ նշան դիր այն մտքերի կողքին, որոնք, քո կարծիքով, լավագույնս բնութագրում են, թե ո՛վ է սուրբը և ի՞նչ է անում:

- ..... Մտածում է կյանքի մասին այլ կերպ, քան շատ մարդիկ:
- ..... Չի փնտրում հաջողություն այս աշխարհում:
- ..... Երբեմն կարող է ճիշտ չհասկացվել մյուսների կողմից:
- ..... Մի բան անելու համար որոշում կայացնելիս ինքն իրեն հարցնում է՝ Աստված ի՞նչ կկամենար, որ անեի:
- ..... Կասկածներ չունի Աստծո մասին:
- ..... Շատ ժամանակ է տրամադրում միայնակ աղոթելուն՝ փոխանակ ուրիշ մարդկանց հետ շփվելու:
- ..... Հազվադեպ է մեղանշում:



- Գրի՛ր կամ նկարի՛ր ներքևում, թե ըստ քեզ ինչպիսի՞ն է սուրբը և ի՞նչն է մարդուն սուրբ դարձնում:

.....

.....

.....

.....

.....

.....



*Աստվածաշնչի դասում գրի՛ր նրանց, որոնց Սուրբ Գիրքը բնորոշում է որպես սուրբ:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԵԿԵՂԵՑՈՒՆ

Ա Կր 2.1-5, 12.1-11, Գղ 3.1-14, Եփ 2.14-22, Ա Թս 1.1-10

Նիկիական Յանգանակը հաստատում է, որ Սուրբ Հոգին քարոզեց առաքյալների միջոցով, բնակվեց սուրբերի մեջ՝ զարգացնելով և աճեցնելով Եկեղեցին: Աստծո Սուրբ Հոգին տրվեց բոլոր ազգերին Հոգեգալստյան օրը, և իրականացավ այն խոստումը, որ Աստված տվեց Աբրահամին, ինչպես կարդում ենք հետևյալ հատվածում:

*Ես էլ, եղբայրներ, երբ եկա ձեզ մոտ, իմաստասիրական մեծ-մեծ խոսքերով չէի, որ դասնեցի ձեզ Աստծո փրկության ծրագրի մասին, որովհետև իմ մտքում դրել էի միայն մի նպատակ. ձեզ ճանաչեցնել Հիսուսին՝ Քրիստոսին, այսինքն՝ նույն խաչված Փրկչին: Ես ձեզ մոտ գալու ժամանակ էլ սկսեցի ձեզ հարցնել, սաստիկ վախի ու դողի մեջ և իմաստության ճարտար խոսքերով չխոսեցի կամ ֆարոզեցի, այլ Սուրբ Հոգու զորությամբ և ներգործությամբ, որդեսգի ձեր հավատը հիմնվի Աստծո զորության վրա և ոչ թե մարդկային իմաստությամբ:*

Ա Կորնթացիներին 2.1-5

*Թեև դարձանք զանազան են լինում, բայց նույն Հոգին է դարձնողը: Զանազան հոգևոր դասեր են կան, այո՛, բայց նույն Տերն է դրամք բաշխողը: Նույնդեպ և ծառայելու զանազան կարողություններ կան, բայց նույն Աստվածն է դրամք տալիս յուրաքանչյուրին: Սուրբ Հոգին ամեն մեկի մեջ տալիս է հայտնվում ընդհանուր օգուտի համար: Այսպես, Սուրբ Հոգին մեկին տալիս է իմաստությամբ հորդորելու կարողություն, մյուսին նույն Հոգին տալիս է հոգևոր գիտության հասնելու և ուսուցանելու կարողություն: Նույն Հոգին մի երրորդի տալիս է հավատ, մեկ ուրիշին՝ բժշկելու զորություն, մեկ ուրիշին՝ հրաշագործության կարողություն, մեկ ուրիշին՝ մարգարեական դաստիարակություն, ուրիշ մեկին՝ Հոգուց սրված դարձնելու ճանաչելու կարողություն, ուրիշ մեկին՝ հափժակության մեջ ճեղք-ճեղք լեզուներով խոսելու շնորհ, իսկ մեկ ուրիշին էլ՝ այդ լեզուներով խոսվածը մեկնաբանելու կարողություն: Միևնույն Հոգին է կասարում այս բոլորը՝ յուրաքանչյուրին տալով մի դարձ, ինչպես ինքն է կամենում:*

Ա Կորնթացիներին 12.1-11

Արդ, Աբրահամը «Հավասաց Աստուն, և այդ հավասի համար էլ Աստված արդար համարեց նրան»: Իմացե՛ք, ուրեմն, որ հավասին աղավիհներն են Աբրահամի իսկական որդիները: Սուրբ Գրքում կանխատեսված էր, որ Աստված հավասով է արդարացնելու բոլոր ազգերին, ուստի նախատես խոստում էր տրվել Աբրահամին, թե՛ «Քեզանով են օրհնվելու բոլոր ազգերը»: ... Քրիստոսն Օրենի այդ անեծքից ազատեց մեզ՝ մեր փոխարեն ինքը դառնալով անեծքի առարկա ... որդեսգի բոլոր ազգերն Աբրահամին խոստացված օրհնությունն ունենան Քրիստոս Հիսուսով, և մենք, հավասալով նրան, ստանանք խոստացված Սուրբ Հոգին:

Գաղատացիներին 3.1-14 (քաղվածաբար)

Կարդա՛ սուրբգրային հետևյալ հատվածները և պարզի՛ր Սուրբ Հոգու գործունեությունը Եկեղեցում:

Նա՛ է մեր հաճախողը, որ միացրեց հրեային ու հեթանոսին՝ իր մարմնի զոհաբերումով ֆանդելով նրանք բաժանող թեմանության դասը և խափանելով Մովսիսական Օրենքն իր դասվիրաններով ու հրահանգներով, որդեսգի հրեային ու հեթանոսին միավորելով իր անձի մեջ՝ ստեղծի նոր և միակ մի ժողովուրդ, այդդիսով խաղաղություն հաստատեց և մեկ մարմին դարձրեց երկուսին իր խաչով հաճեցնի Աստծո հետ: ... Դեռևս արդ, դուք այլևս օտար և խորթ չեք Աստծո համար, այլ Աստծո ընտրյալ ժողովրդի հետ համաբաղաբանություն եք և Աստծո ընտանիքի հարազատ անդամները: Դուք մասերն եք այն մեծ կառույցի, որի հիմքն առաքյալներն ու մարգարեներն են, և որի անկյունաքարն է ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Նրանով է ամբողջ կառույցը ներդառնակ միասնությամբ աճում ու դառնում Տիրոջ սեփական սուրբ տաճարը: Նրան միացած՝ դուք էլ բոլորի հետ միասին դառնում եք Աստծո բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով:

Եփեսացիներին 2.14-22

... գրում ենք ձեզ՝ թեսաղոնիկեցիներին եկեղեցում, որ դասկանում է Հայր Աստծուն և Տեր Հիսուս Քրիստոսին: Շնորհ և խաղաղություն ձեզ: Մեր աղոթքներում միշտ հիշում ենք, թե ինչպես կյանքի եք վերածում ձեր հավատը, սիրուց մղված՝ ծառայում եք ուրիշներին և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին հուսալով՝ համբերում ներդրությունների: Եղբայրներ, գիտե՛ք, որ Աստված ձեզ սիրեց և ընտրեց, որովհետև մեր ֆարոզությամբ Աստված ձեզ հայտնեց իր Ավետարանը ոչ միայն խոսքով, այլ նրա զորությամբ, այսինքն՝ Սուրբ Հոգու ներգործությամբ, և կասարյալ վստահություն ներշնչեց ձեզ: Դուք լավ գիտե՛ք, թե մենք ինչպես աղոթեցինք ձեր մեջ՝ ձեզ օրհնակ լինելու համար: Նմանվելով մեզ՝ դուք նմանվեցիք Տիրոջը, ֆանի որ հակառակ ձեր կրած բոլոր ներդրություններին՝ Սուրբ Հոգու դարձնեց նրախոսությամբ ընդունեցիք մեր ֆարոզությունը և ձեր այդ ընթացքով օրհնակ եղաք Մակեդոնիայի և Աֆայիայի բոլոր հավասացյալներին: Ար-

### Բառարան

#### ՄԱՐԳԱՐԵԱՆԱԼ

քարոզել ոգեշնչումով և մարդկանց հայտնել Աստծո կամքը: Սբ Պողոսը սովորեցնում է, որ շատերը, ովքեր աղոթքով և ճշմարտությամբ փնտրեցին Աստծո կամքը, կարողացան մարգարեանալ:

դարև, դուր ձեր օրհնակով Տիրոջ խոսքը հոչակեցիք ոչ միայն Մակեդոնիայում և Աֆայիայում, այլև ամեն տեղ, ուր տարածվեց Աստուծո հանդեպ ձեր ունեցած հավատի համբավը: Այնպես որ այլևս ոչ կարիքն ենք զգում որևէ բան ավելացնելու, ոչ էլ մեզ ներկայացնելու, որովհետև ուր որ գնում ենք, մարդիկ իրենք են դասնում մեր մասին, թե ինչպես եկանք ձեզ մոտ, թե ինչպես դուր, թողնելով կուռքերը, դարձաք Աստուծո՝ ծառայելու համար ճշմարիտ և կենդանի Աստուծո, և թե ինչպես եք սղասում, որ երկնից վերսին գա Աստուծո Որդին՝ Հիսուսը, որին նա հարություն սվեց մեռելներից, և որը մեզ փրկելու է գալիք բարկությունից:

Ա Թեսաղոնիկեցիներին 1.1-10

**ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՎ**

- Քո խմբակով օգտագործիր կարդացածը սուրբգրային հատվածները, կարդա՛ նաև կողքի աղյուսակում նշված հավելյալ հղումները Աստվածաշնչից և լրացրո՛ւ ներքևի աղյուսակը՝ պարզելու, թե Սուրբ Գրքում որտե՞ղ ենք հանդիպում Սուրբ Հոգուն, և ինչպե՞ս են մարդիկ ազդվում նրա ներկայությունից: Կարելի է նշել մեկից ավելի հղում ցանկի յուրաքանչյուր սյունակի համար:

Գրծ 13.49-52  
Գրծ 20.28  
Հռ 8.26-27

| Սուրբ Հոգու մասին                                      | Տեղը Աստվածաշնչում |
|--|--------------------|
| Սուրբ Հոգին բնակվում է Հիսուս Քրիստոսի հետևորդների մեջ |                    |
| Սուրբ Հոգին տալիս է                                    |                    |
| Սուրբ Հոգին ուրախություն է                             |                    |
| Սուրբ Հոգին իմաստություն է շնորհում                    |                    |
| Սուրբ Հոգին միավորում է                                |                    |
| Սուրբ Հոգին միջնորդ է մեզ համար                        |                    |
| Սուրբ Հոգին շնորհներ է բաշխում                         |                    |

**ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԲԱՌԱՐԱՆԸ**

- Աստվածաշնչից կարդա՛ ստորև նշված հատվածները և Եփեսացիներին ուղղված նամակի քաղվածքը հանդիպակաց էջից, որպեսզի կարողանաս ինքնուրույն գրել «սուրբ» բառի սահմանումը բառարանում՝ ըստ Սուրբ Գրքի և Նիկիական Հանգանակի նշանակության: Ապա գրի՛ր մտածումներդ ի պատասխան հետևյալ հարցումի. ինչպե՞ս են ինքս պատշաճում սուրբ բառի սահմանմանը:

**Հոմեագիներին 1.1-7, 12.11-13, 15.25-26, Ա Կորնթացիներին 1.1-3**



**Արդյո՞ք ես սուրբ եմ**

---



---



---



---



---



---

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԱՍՏԾՈ ժՈՂՈՎՐԴԻՆ

**Ա Կորնթացիներին 12-րդ** գլխում Սբ Պողոսը համեմատություն է անցկացնում մարդկային մարմնի և նրա բազում անդամների և Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու միջև:

*Ինչպես որ մարմինն իր զանազան անդամներով մեկ ամբողջություն է, այսինքն՝ բոլոր անդամները միասին մեկ մարմին են կազմում, այդպես է նաև Քրիստոսը, որովհետև մենք ամենքս՝ հրեա թե հեթանոս, ծառա թե ազատ, նույն Հոգով մկրտվեցինք մեկ մարմին կազմելու համար, և ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք:*

Այդ, դուք թեև առանձին-առանձին անդամներ եք, բայց միասնաբար կազմում եք Քրիստոսի մարմինը: Այդ մարմնի, այսինքն՝ եկեղեցու մեջ Աստված կարգեց բազում անդամներ՝ զանազան ծառայությունների համար: Նախ՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ ուսուցանողներին, ասպա՝ հրաշագործ զորություն ունեցողներին, հետո՝ բժշկելու շնորհ ունեցողներին, ուրիշներին օգնելու ընդունակներին, վարչական կարողությամբ օժտվածներին, համարակազմության մեջ զանազան լեզուներով խոսողներին և այդ լեզուներով խոսվածը մեկնաբանելու ընդունակ մարդկանց:

Ա Կորնթացիներին 12.12-13, 27-28



Մենք կարող ենք գտնել մարդկանց օրինակներ, որոնք ստացել են Սուրբ Հոգու պարգևները Աստվածաշնչի միջոցով: Այդ պարգևներն են՝ առաջնորդելը, ծառայելը, ողորմություն անելը, հավատալը, տալը, ուսուցանելը, մարգարեանալը, Աստծո Խոսքը մեկնաբանելը:



- Քո խմբակի հետ միասին գտի՛ր և կարդա՛ հանձնարարված սուրբգրային հատվածները: Որոշի՛ր, թե Սուրբ Հոգու ո՛ր պարգևներն են տրվում սուրբգրային հատվածում նշված անհատին: Գրի՛ր աստվածաշնչյան հղումը և անձի անունը ներքևի ցանկի համապատասխան պարգևի կողքի սյունակում:

|                          |                     |
|--------------------------|---------------------|
| Ծննդոց 12.4,5            | Գործք 7.55-59       |
| Դատավորներ 4.4           | Գործք 8.30,35       |
| Ա Թագավորություններ 10.1 | Գործք 9.36,39       |
| Հռուբ 2.15-16            | Հռոմեացիներին 8.9   |
|                          | Հռոմեացիներին 15.26 |

| Պարգև             | Սուրբ Գիրք | ԱՆՃ | Պարգև       | Սուրբ Գիրք | ԱՆՃ |
|-------------------|------------|-----|-------------|------------|-----|
| առաջնորդել        |            |     | ուսուցանել  |            |     |
| ծառայել           |            |     | մարգարեանալ |            |     |
| ողորմություն անել |            |     | մեկնաբանել  |            |     |
| հավատալ           |            |     | տալ         |            |     |

- Ի՞նչ իրադարձություններ են կատարվում քո եկեղեցական համայնքում, որոնք ցույց են տալիս Սուրբ Հոգու գործելը, և մարդիկ լցվում են շնորհներով: Գրի՛ր դրանց մասին կողքի գծապատկերի տողերի վրա: Կարելի է նաև ըստ ցանկության նկարագրել այնպիսի բաներ եկեղեցական կյանքում, երբ մարդիկ արձագանքում են Սուրբ Հոգու գործունեությանը:





## ՄԲ ԶԱՐԻՏՈՆԸ ՊԱՏԿՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ



Մենք իմացանք, թե ինչպես Սուրբ Հոգին պարզներ շնորհեց Հին Կտակարանի և Նոր Կտակարանի մարդկանց և ինչպես է շնորհում մեր այսօրվա աշխարհում: Շատ սուրբեր հիշատակում են հավատացյալներին տրված Սուրբ Հոգու պարզների մասին, որոնք ապրել են իրենցից առաջ: Նրանք պատվել են հավատացյալներին շնորհված պարզները նույնակերպ ապրելու միջոցով, իսկ երբեմն էլ նրանց ապրած վայրերում բնակվելով:

Սուրբ Հովհաննես Փարոսվանեցին ապրում էր Պաղեստինում գտնվող մի քարանձավ վանքում, որտեղ մի սրբակենցաղ վանական էր ապրել նրանից վեց դար առաջ: Հովհաննեսը, որը հայտնի էր նաև Քարանձավեցի անունով, Սուրբ Հոգուց ստացել էր բազում շնորհներ իր այդ քարայրում:

Սբ Հովհաննեսից վեց դար առաջ, Ավրիդիանոս կռապաշտ արքայի օրոք Քարիտոն անունով մի մարդ գնաց Երուսաղեմ՝ նպատակ ունենալով այցելել այնտեղի տա-



ճարներն ու եկեղեցիները: Մակայն մի գիշեր քաղաքով շրջելիս ընկնում է ավազակների ձեռքը: Նրան բռնում են, կապում և բանտարկում մի քարանձավում: Ապա որոշում են հետո սպանել նրան, քանի որ ուզում էին շարունակել իրենց կողոպուտն ու թալանը գիշերվա մթության շղարշի տակ:

Մի քանի ժամ անց մի օձ ներս սողաց դեպի քարայր և խմեց ավազակների թողած գինու մեծ սափորից: Երբ ավազակները վերադարձան, կերան ու անհագ խմեցին սափորի գինուց և բոլորը մահացան:

Սբ Քարիտոնը շնորհակալություն հայտնեց Աստծուն, որ իր կյանքը փրկվեց և ուխտեց իր կյանքի մնացյալ օրերն անցկացնել ավազակների քարանձավում՝ անդադար աղոթելով աշխարհում ապրողների համար: Այդ քարանձավում նա վանք հաստատեց և անվանեց Փարոս:

600 տարի հետո միևնույն Սուրբ Հոգին ներշնչեց Սբ Հովհաննես Փարոսվանեցուն, ով բազում հրաշքներ կատարեց և հազարավոր աղոթքներ մատուցեց պարկեշտ ու երանելի կրոնավոր Քարիտոնի կողմից սրբացված այդ նույն վայրից:



## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՊՈՒՄ Է ՄԵՋ ՄԵՐ ԶՐԻՏՈՆՅԱ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀԵՏ

Սբ Պատարագի այն պահին, երբ երգվում է «Տէր, ողորմեա»-ն, պատարագի քահանան վերցնելով նոր նվիրագործված Սբ Հաղորդությունից մի մաս, գոհություն է հայտնում Աստծուն և ցածրաձայն արտասանում հետևյալ աղոթքը.

*Ո՛վ Հայր Սուրբ, դու մեզ Քրիստոնյա անվանեցիր քո Միածնի անունով և մեզ լուսավորեցիր հոգևոր ավազանում մկրտվելով, արժանի՛ արա մեզ այս սուրբ խորհուրդն ընդունելու մեր մեղքերի թողության համար: Սուրբ Հոգու շնորհները տրամադրի՛ր մեզ վրա, ինչպես տրամադրեցիր սուրբ առաքյալներիդ, ովքեր քո մարմինդ ճաշակեցին և դարչան մաքրիչները համայն աշխարհի: Եվ արդ, ո՛վ Տէր, Հայր բարերար, վերացրո՛ւ մեղքերի խավարը, և մասնակցությունն այս սեղանին նույնացրո՛ւ քո աշակերտների Վերջին Ընթրիքի մասնակցության հետ:*

1. Ըստ քեզ ի՞նչ պարզներ ստացան Սբ Քարիտոնը և ապա Սբ Հովհաննեսը:
2. Աղոթքի ո՞ր բառերն են արտացոլում Սբ Հովհաննես Փարոսվանեցու փափագը Սբ Քարիտոնի հաստատած վանքում ապրելիս:
3. Աղոթքում ինչպե՞ս է ասվում, թե Սուրբ Հոգին միավորում է մեզ սուրբերի հետ: Ինչպե՞ս ես զգացել այդ կապը քեզանից առաջ ապրած երանելի մարդկանց հետ:

## ՄԵՆՔ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻՋՆԻ ՄԵՋ ՎՐԱ

Սուրբ Պատարագի ամենակարևոր պահերից մեկն այն է, երբ պատարագիչ հոգևորականը խընդրում է Աստծուն, որպեսզի Սուրբ Հոգին առաքի նվիրագործվող հացի և գինու վրա, որը մենք ընդունում ենք որպես Քրիստոսի Մարմին և Արյուն, որպես Սուրբ Հաղորդություն:

Հիշատակություններից և Գոհությունից հետո սարկավագները երգելով քարոզում են և խորանից հորդորում հավատացյալ ժողովրդին խնդրամատույց լինել Աստծուն հետևյալ աղոթքով.

*Որպեսզի մեր Տեր Ասրված, որ ընդունեց այս պատարագն իր սուրբ, երկնային և իմանալի խորանի վրա, փոխարենը մեզ ուղարկի՛ր Սուրբ Հոգու շնորհներն ու պարգևները, Տիրոջն աղաչենք:*

- Հիշյալ խնդրանքի մեջ ինչպե՞ս են ներկայանում Սուրբ Երրորդության անձեքը: Ինչպե՞ս են նրանք նկարագրվում և ի՞նչ գործողություն են կատարում (ընդունող՝ մեկը, որ մատուցվում է, ուղարկվում որպես պարգև): Գրի՛ր մի նախադասություն Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձի մասին:



Հայր՝ .....

Որդի՝ .....

Սուրբ Հոգի՝ .....

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ



Որպես Եկեղեցու անդամ, որ նաև ստացել ես Սուրբ Հոգու պարգևները մկրտության և դրոշմի խորհրդակատարության ժամանակ, պարզի՛ր, թե ինչ են այդ պարգևները քեզ համար: Ինչպե՞ս կօգտագործես դրանք Եկեղեցում կամ համայնքում՝ հօգուտ բոլորի:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ունի սուրբգրային հատվածների միջոցով ցույց տալու, որ Սուրբ Հոգին, որ իջավ առաքյալների վրա Հոգեգալստյան օրը, կատարեց Աստծո խոստումը՝ տրված Աբրահամին, որ նրա սերունդների միջոցով ամբողջ մարդկությունը պիտի օրհնվի: Նույն Սուրբ Հոգին ներշնչեց սուրբերին և այժմ բնակվում և գործում է Եկեղեցում՝ առաջնորդելով հավատացյալներին:

Աշակերտները հնարավորություն ունեցան աշխատելու մի շարք սուրբգրային հատվածների վրա՝ ճանաչելու, թե ինչպես է Սուրբ Հոգին գործել զանազան մարդկանց մեջ և ինչպես են նրանք ազդվել Հոգու ներկայությունից: Այս վարժության միջոցով նրանք գտան տղամարդկանց և կանանց շատ օրինակներ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում, ովքեր օգտագործեցին այդ պարգևներն ի նպաստ իրենց ժողովրդի և Եկեղեցու: Թող ձեր զավակն անվանի Հոգու հիշյալ պարգևներից մի քանիսը, և դրանց մասին միասին փնտրե՛ք Աստվածաշնչում: Եկեղեցական աղոթքները երախտագիտությամբ են անդրադառնում այդպիսի մարդկանց, և խնդրում ենք, որ Աստված օգնի մեզ միանալու նրանց հետ, ինչպես որ աղոթում ենք ամեն անգամ Սուրբ Պատարագին:

Ընտանիքով ստեղծե՛ք մի աղոթք՝ խնդրելով, որ Սուրբ Հոգին զարգացնի ձեր պարգևները, և ուղիներ գտե՛ք օգտագործելու դրանք հանրության օգտի համար:

# ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔՆԱԵՎ ՄԻԱՅՆ ՄԵԿ, ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ



Նիկիական Հանգանակի վերջին պարբերությունը նվիրված է Եկեղեցուն:

**«Հավարում ենք նաև միայն մեկ, ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցուն...»:**

Սույն գլխի չորս դասերը նկարագրում են Եկեղեցու բնույթը կամ յուրահատկությունը:

- Դաս 27** հաստատում է Եկեղեցու միությունը, քանի որ նա Քրիստոսի Մարմինն է: Չնայած բաղկացած է շատ անդամներից, բայցև նրանք բոլորը միասին կազմում են մեկ միություն՝ Սուրբ Երրորդության հանդեպ իրենց դավանած հավատքով:
- Դաս 28** Եկեղեցին բնորոշվում է որպես սուրբ, որովհետև նա Սուրբ Աստծո տաճարն է:
- Դաս 29** հաստատվում է Եկեղեցու ընդհանրական և առաքելական բնույթը՝ ըստ Հիսուս Քրիստոսի՝ առաքյալներին տված հանձնարարության:
- Դաս 30** անդրադառնում է Սուրբ Հոգուն, ով զորացրեց առաքյալներին և սուրբերին և շարունակում է լինել Եկեղեցու առաքելության շարժիչ ուժը: Հաստատվում է, որ Սուրբ Հոգին, տրված առաքյալներին Հոգեգալստյան օրը, այժմ էլ ապրում և գործում է Եկեղեցում:



### ***Ծնողների համար***

8-րդ գլխի չորս դասերը կենտրոնանում են Եկեղեցու բնույթի վրա, որը մեկ է, սուրբ ընդհանրական և առաքելական: Քրիստոսի Մարմնի միությունը կամ մեկ լինելը խարսխված է Սուրբ Երրորդության միության վրա, և դա մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավիտենական կամքն է: Եկեղեցու սրբությունը հիմնված է Քրիստոսի այն խոսքի վրա, թե մենք Սուրբ Հոգու տաճարն ենք: Մինչ Սուրբ Հոգին շարունակում է ապրել և գործել Եկեղեցու անդամների կյանքում՝ օգնելով նրանց սուրբ լինել, ինչպես որ Աստված է սուրբ, Եկեղեցին ավելի ու ավելի հարազատ է մնում իր առաքելական և ընդհանրական բնույթին. Հիսուս Քրիստոսի գոհաբերությունը խաչի վրա համայն աշխարհի մարդկության համար եղավ, և առաքյալների միջոցով մենք ընդունեցինք ճշմարտության լիությունը, որ Հիսուս Քրիստոսը եկավ հայտնելու Սուրբ Երրորդության և մեր փրկության մասին:

Սույն գլխի վերջին դասում ուսումնասիրվում է Սուրբ Պատարագի խորհուրդը՝ որպես Հիսուս Քրիստոսի մշտական ներկայություն և նախաճաշակ Աստծո արքայության:

Ընտանիքով առիթներ ստեղծեք կարդալու սուրբգրային այն հատվածները, որոնք վերաբերում են Եկեղեցու միությանը և սրբությանը: Գործնականորեն մասնակցե՛ք ընդհանրական և առաքելական Եկեղեցու առաքելությանը՝ ճշմարտապես կիսելով Աստծո Խոսքը և սրբությունը ձեր շրջապատի մարդկանց հետ: Որպես ընտանիք կանոնավոր կերպով մասնակցե՛ք Սուրբ Պատարագի արարողությանը, որպեսզի ապրեք Հիսուս Քրիստոսի բժշկարար ներկայությունը:

# 27. ՄԵԿ Է ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆԸ

«Աղոթում եմ, որ նրանք բոլորն էլ մի լինեն, ինչպես որ դու,  
 ո՛վ Հայր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ...»:

Հովհաննես 17.21



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Մարդկային եակները հակված են կազմելու խմբեր զանազան պատճառներով: Սովորաբար կիսված համոզմունքները, հավատալիքները կամ ընդհանուր նպատակները կապող օղակ են դառնում հիշյալ խմբերի համար կամ միավորում են նրանց: Ուսումնասիրի՛ր խմբերի և միությունների հետևյալ օրինակները և որոշի՛ր, թե որն է նրանց միավորող ընդհանուր հարթությունը: Ի՞նչը կամ ո՞վ է կապում նրանց իրար հետ:



Ամերիկայի Միացյալ Նահանգներ

---

---

---

---

---



Եվրամիություն

---

---

---

---

---



Գյուղացիական միություն

---

---

---

---

---

- Ինչպիսի՞ տարբերանշան կստեղծեիր գիտնականների խումբ ներկայացնելու համար, որոնք համախմբելով գիտական միտքը, զբաղվում են շրջակա միջավայրի պահպանության, առողջ սննդի ապահովման, մաքուր էներգիայի ստացման և համընդհանուր տաքացման խնդիրներով: Բառերի կամ նկարների միջոցով գծագրի՛ր այդ տարբերանշանը:

**Աստվածաշնչի** դասում պարզի՛ր, թե ի՞նչ ասաց Հիսուս Քրիստոսն իր եկեղեցու միության և միասնության մասին:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՄԵԿ Է ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Հովհաննես 15.1-11, 17.20-26

Նիկիական Հանգանակի վերջին պարբերությունն սկսվում է հետևյալ սահմանումով. «Հավատում ենք նաև միայն մեկ, ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցուն»: Սույն հռչակումն ամուր կերպով ընձյուղված է մեր Տիրոջ աղոթքից: Հովհաննեսի Ավետարանում կարդում ենք աշակերտներին ուղղված Հիսուսի խոսքերը, որոնք գորավոր կերպով պատկերագրում են իր հետ միության և հաղորդության գաղափարը: Ընթերցի՛ր սուրբգրային հատվածները և քո խմբի հետ քննարկի՛ր ուսուցչի կողմից տրվող հարցումները, որպեսզի ավելին իմանաս մեր Տիրոջ մեծ փափագի մասին՝ կապված եկեղեցու միասնության և միության մասին:



Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակն է: Նա կրթում է ինձ վրա հաստատված բոլոր այն ճյուղերը, որոնք պրտուղ չեն տալիս, իսկ այն բոլոր ճյուղերը, որոնք պրտուղ են տալիս, էրեղյով մաքրում է, որպեսզի ավելի պրտրաբեր լինեն: Դուք արդեն մաքրված եք այն խոսքի համար, որ չեզ ասացի: Մնացե՛ք ինձ միացած, և ես միացած կմնամ չեզ: Ինչպես որ ճյուղն ինքն առանձին պրտուղ չի տա, եթե միացած չլինի որթատունկին, նույնպես և դուք չեք կարող պրտուղ տալ, եթե միացած չլինեք ինձ: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով միացած է ինձ, և ես՝ նրան, նա առատ պրտուղ կտա, որովհետև առանց ինձ դուք ոչինչ անել չեք կարող: Ով ինձ միացած չի մնա, նա կտրվելով դուրս կնետվի և կչորանա այն ճյուղերի նման, որ հավաքում և կրակը նետելով այրում են: Եթե ինձ միացած մնաք, և իմ խոսքերն էլ չեք մեջ մնան, Աստուծոց խնդրեցե՛ք, ինչ որ ուզե՛նաք, և նա կտա չեզ: Իմ Հայրը փառավորված կլինի, երբ դուք առատ պրտուղ տաք և այդպիսով իմ աշակերտները լինեք: Ինչպես որ իմ Հայրն ինձ սիրեց, նույնպես էլ ես չեզ սիրեցի: Մնացե՛ք իմ սիրո մեջ: Եթե իմ պատվիրանները գործադրեք, կմնաք իմ սիրո մեջ, ինչպես ես, իմ Հոր պատվիրանները գործադրելով, մնում եմ նրա սիրո մեջ: Այս բաներն ասացի չեզ, որպեսզի իմ ուրախությունը չեք մեջ լինի, և չեք ուրախությունը կատարյալ լինի:

Հովհաննես 15.1-11



Չեմ աղոթում միայն նրանց համար, այլ նաև նրանց համար, որոնք քարոզչությանը հավատարմի են ինձ: Աղոթում եմ, որ նրանք բոլորն էլ մի լինեն, ինչպես որ դու, ո՛վ Հայր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ, այնպես էլ նրանք լինեն մեր մեջ, որպեսզի աշխարհը հավատա, որ դու ուղարկեցի ինձ: Այն փառքը, որ դու ինձ տվեցի, ես տվեցի նրանց, որպեսզի մի լինեն, ինչպես որ ես և դու մի ենք: Ես լինեմ նրանց մեջ, և դու՝ իմ մեջ, այնպես որ նրանք կատարելապես մի լինեն, որպեսզի աշխարհը գիտենա, որ դու ուղարկեցի ինձ, և ես սիրեցի նրանց, ինչպես որ դու ինձ սիրեցի: Հայր, ում որ ինձ տվեցի, ուզում եմ, որ ինձ հետ լինեն, ուր որ ես լինեմ, որպեսզի տեսնեն իմ փառքը, այն փառքը, որ դու ինձ տվեցի, որովհետև ինձ սիրեցի աշխարհի սրբազանությունից առաջ: Արդար Հայր, քեզ աշխարհը քեզ ճանաչեց, քայց ես քեզ ճանաչեցի, և սրանք էլ իմացան, որ դու ես ինձ ուղարկել: Ես քեզ ճանաչեցի նրանց և պիտի շարունակեմ ճանաչեցնել, որպեսզի այն սերը, որով ինձ սիրեցի, նրանց մեջ լինի, և ես լինեմ նրանց մեջ:

Հովհաննես 17.20-26

### ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ՄԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՉ

■ Գրի՛ր մի նախադասություն կամ նկարի՛ր մի խորհրդանիշ, որը կարտահայտի բարձրագույն նպատակը Հիսուս Քրիստոսի աղոթքի ուղղված իր աշակերտներին՝ ըստ հիշյալ հատվածներից քո ընկալման:

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԵԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Հիսուս Քրիստոսի ցանկություն և աղոթքը, նվիրված իր հետևորդների միությանն ու միասնությանը, մտահոգությունն էր վաղ Եկեղեցու, որի համար նրանք ջանասիրաբար ու նախանձախնդրորեն աշխատանք էին տանում: Կորնթացիների եկեղեցական համայնքին ուղղված հետևյալ հատվածում Սբ Պողոս առաքյալը հորդորում է նրանց մի կողմ դնել վիճաբանությունը և անջատողական խմբավորումները: Իր տված երեք հարցումները նվիրված էին կորնթացի հավատացյալներին՝ լրջորեն մտածելու իրենց հավատի մասին:

- Կարդա՝ հատվածը և փորձի՛ր պատասխանել Պողոսի երեք հարցումներին: Այս մեկ նախադասությամբ գրի՛ր, թե ըստ Սբ Պողոս առաքյալի, միաբանության հիմքերն ինչպիսի՞նք պետք է լինեն եկեղեցու անդամների մեջ:

*Եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով կոչ եմ ուղղում ձեզ, որ բոլորդ միաբանվեք, և պատակություններ չլինեն ձեր մեջ, այլ միանաք նույն մտքի և նույն խորհրդի մեջ, քանզի, եղբայրներ, Քղվեի ընդհանրից ոմանք ձեր մասին խոսելիս տեղեկացրին ինձ, թե հակառակություններ կան ձեր մեջ: Ասեմ, ինչ որ լսեցի. թե ձեզնից յուրաքանչյուրը փարբեր բան է ասում: Մեկն ասում է՝ «Ես Պողոսին եմ հեղկում», մյուսը՝ «Ես Ապողոսին եմ հեղկում», մի երրորդն ասում է՝ «Ես Կեփասին եմ հեղկում», իսկ մի ուրիշը, թե՛ «Ես հեղկում եմ Քրիստոսին»: Մի՞թե Պողոսը իսպառ ձեզ համար, կամ Պողոսի անունով մկրտվեցիք: Փառք Աստուծո, որ ձեզնից միայն Կրիստոսին և Գալիստոսին եմ մկրտել. այնպես որ մեկը չի կարող ասել, թե իմ անունով մկրտվեցիք:*

Ա Կորնթացիներին 1.10-15

## ՊԱՇՏԱՊԱՆԵՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

- Կարդա՝ սուրբգրային ցանկագրված հատվածներն Աստվածաշնչից և ճանաչի՛ր այն դրսևորումներն ու պայմանները, որոնք վտանգում են Քրիստոսի Մարմնի միությանը, և նրանք, որոնք դրա հիմքերն են և սատարում են միասնության կառույցին: Գրի՛ր բնութագրող բառեր կամ կապակցություններ (տողի համարներով) ըստ յուրաքանչյուրի՝ համապատասխան սյունակում:

| Սուրբ Գիրք               | Միություն | Միությունը վտանգող |
|--------------------------|-----------|--------------------|
| Հռոմեացիներին 12.4-5     |           |                    |
| Ա Կորնթացիներին 3.1-11   |           |                    |
| Ա Կորնթացիներին 12.12-13 |           |                    |
| Գաղատացիներին 3.27-29    |           |                    |
| Եփեսացիներին 1.15-23     |           |                    |
| Եփեսացիներին 4.1-6       |           |                    |

### Արձագանքում եմ հավատով

- Եկեղեցու միության համար ի՞նչ պարզ և մինչ այժմ տրվել քեզ: Ինչպե՞ս կարող ես լինել հավատարիմ վկան Հիսուս Քրիստոսի հետևյալ աղոթքի՝ «...որ մեկ լինեն, ինչպես որ մենք մեկ ենք»:

.....

.....

.....

.....

.....

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՄԵԿ ՀԱՅ, ՄԵԿ ՄԱՐՄԻՆ

Մահանալու նախորդ գիշերը Հիսուսն աշակերտների հետ տոնում էր Չատիկը, որը մենք գիտենք որպես Վերջին ընթրիք: Ծառակերտության ընթացքում, վերհիշելով Չատիկի պատմությունն ըստ սուրբգրային ծեսի պահանջի, Հիսուսը վերցնելով հացը և գինու բաժակը գոհություն հայտնեց և մատուցեց իր աշակերտներին որպես իր մարմին և արյուն՝ հորդորելով, որպեսզի շարունակեն իր հաստատած այս ավանդությունը «ի հիշատակ իրեն»:

Հետհարության Եկեղեցին հաճախ էր հավաքվում միասին՝ հնազանդվելով Հիսուս Քրիստոսի պատգամին: Գործք առաքելոցում կարդում ենք.

*Նրանք առաքյալներից հարարեորեն սովորում էին Քրիստոսի վարդապետությունը և մասնակցում հավաքական ճաշերին, հացը կտրելու արարողությանը և աղոթքներին:*



Գործք առաքելոց 2.42

Ծառի հենց այս սեղանի շուրջ է, որ Եկեղեցին շարունակում է ապրել Քրիստոսի ներկայությունը և իրականացնում Քրիստոսի Մարմնի միությունը՝ Տիրոջ Խոսքը լսելով և նրա բանկազին Մարմինն ու Արյունը ճաշակելով մեր մեղքերի թողության և Աստծո արքայության մեջ հավիտենական կյանքի համար: Սբ Պողոս առաքյալն ամփոփում է հիշյալ միտքը կորնթացիներին ուղղված իր նամակում:

*Երբ խմում ենք այն բաժակից, որ օրհնում ենք ի հիշարակ Տիրոջ ընթրիքի, մի՞թե հաղորդված չենք լինում Քրիստոսի արյանը: Եվ երբ ճաշակում ենք այն հացից, որը կտրում ենք, մի՞թե հաղորդված չենք լինում Քրիստոսի մարմնին: Մենք բոլորս մեկ հաց, մեկ մարմին ենք, որովհետև նույն և միակ հացից ենք ճաշակում:*

Ա Կորնթացիներին 10.16-17

Կարդա՛ հետևյալ աղոթքները Սուրբ Պատարագից, որոնք քահանան ընթերցում է ծածուկ կերպով: Ինչպե՞ս ես արտահայտված տեսնում Սբ Պողոսի մտքերը հիշյալ աղոթքներում: Ո՞ր նախադասություններն են կապակցում Հիսուս Քրիստոսի՝ խաչի վրա գոհաբերությամբ մեր փրկության գաղափարը և աղոթքի ո՞ր տողերն են հայտնում Քրիստոսի հետ մեկ լինելու միևնույն միտքը: Յուրաքանչյուր աղոթքի մեջ + դի՛ր այն նախադասությունների սկզբում և վերջում, որոնք առնչվում են մեր փրկության անհրաժեշտության հետ: \* նշան դի՛ր այն նախադասությունների սկզբում և վերջում, որոնք վերաբերում են Քրիստոսով մեր միությանը:

*Պարզան է և իրավացի երգել քեզ, օրհնել, փառաբանել, գոհանալ և երկրպագել քեզ քո տերության ամեն վայրում, քանզի դու աննառելի Աստված ես՝ մեր ընթրումից վեր, անտեսանելի՝ մեր հասկացողությունից վեր, մշտնջենավոր գոյությանը և միշտ նույնը դու և քո Միածին Որդին և քո Սուրբ Հոգին: Դու ոչնչից գոյության կոչեցիր մեզ, և երբ սայթաքեցինք, դու վերստին բարձրացրիր մեզ: Երբեք չդադարեցիր գործելուց, մինչև որ առաջնորդեցիր մեզ դեպի երկինք և պարզեցիր մեզ քո գալիք արքայությունը: Այս ամենի համար մենք գոհություն ենք հայտնում քեզ և քո Միածին Որդուն և քո Սուրբ Հոգուն. այն ամենի համար, ինչ մենք գիտենք կամ չգիտենք, տեսանելի և անտեսանելի այն օրհնության համար, որը շնորհվել է մեզ:*

Սբ Հովհան Ոսկեբերանի Սբ Պատարագից

*Արդար է սրուգապես և իրավացի՝ փութաջան ջերմեռանդությամբ երկրպագելով փառավորել քեզ, ո՛վ ամենակալ Հայր, որովհետև քո անզննելի և արարչակից Խոսքի միջոցով՝ մեղքի հետևանքով առաջացած անեծքը վերացրիր: Նա Եկեղեցին ընդունեց որպես իր ժողովուրդ՝ սեփականացնելով իրեն հավաքացողներին. կուսական ծննդյան խորհրդով զննելի մարդկային բնությունն առավ և հաճո եղավ մեր մեջ բնակվելու և որպես նարարապետ Աստվածային նոր կառույցի՝ երկիրը երկնքի վերածեց:*

Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքն ըստ Հայ Եկեղեցու Պատարագամատույցի



## ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Հավատարիմ մեր Տիրոջ կամքին, որն արտահայտվեց իր աշակերտներին ուղղված աղոթքի մեջ, Եկեղեցին յուրաքանչյուր Սուրբ Պատարագի ընթացքում շարունակում է աղոթել միության համար: Հիշատակությունների մեջ Եկեղեցին հիշատակում է թե՛ ողջ և թե՛ ի Քրիստոս հանգուցյալ իր բոլոր անդամներին: Այս թվում աղոթքով հիշատակվում են նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը և թեմակալ առաջնորդը: Կարդա՛ այն աղոթքը, որը պատարագիչը ցածրաձայն արտասանում է բոլոր եպիսկոպոսների համար: Ապա ընթերցի՛ր 3-րդ դարի ակնառու եկեղեցական հայրերից Սբ Կիպրիանոսի գրվածքներից, ով միության համար իր ոգեշնչումներն արտահայտել է «Եկեղեցու միության մասին» իր աշխատության մեջ: Համեմատի՛ր հիշյալ երկուսը Հիսուս Քրիստոսի աղոթքի հետ՝ **Հովհաննես 17.20-26**:

➔ Ինչպե՞ս ես հասկանում եպիսկոպոսի դերը Եկեղեցու միությունը պաշտպանելիս:


➔ Ո՞րն է այն հիմքը, որի վրա միությունը կառուցվում է և պահպանվում:

Լրացրո՛ւ հետևյալ գծապատկերը՝ արտահայտելով ըմբռնումներդ, և յուրաքանչյուրի մեջ գտի՛ր գուգահեռ մտքեր, այնուհետև ամփոփի՛ր գտածներդ ինքնուրույն խոսքերով:

**Հիշի՛ր, ո՛վ Տեր, ողորմի՛ր և օրհնի՛ր բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, որոնք ուղիղ վարդապետությանը մեզ ուսուցանում են ճշմարիտ խոսքը:**  
**Քահանայի ծածուկ աղոթք (հիշատակություն Սբ Պատարագից)**

*Եվ այս միությունը մենք պեպր է ամուր պահենք և պահպանենք հաղկապես մեզանից նրանք, որոնք եպիսկոպոս են և նախագահում են Եկեղեցում, որպեսզի մենք ևս ապացույց ունենանք, թե եպիսկոպոսությունն ինքնին մեկ է և անբաժան: Թող ոչ ոք չհաքի միաբանությանը սխալ ըմբռնումներով, թող ոչ ոք չխեղաբարձի հավաքի ճշմարտությունը՝ թերահավատորեն սակարկության մեջ մտնելով: Եպիսկոպոսությունը մեկ է, որի յուրաքանչյուր մասը շղկապված է մեկ ամբողջությանը: Եկեղեցին նույնպես մեկ է, որը լայն տարածում և բազմազան ընդգրկում ունի՝ հարաճուն պրոպագանդային: Ինչպես որ արեգակն ունի շար ճառագայթներ, բայց մեկ լույս, և ծառը՝ շար ճյուղեր, սակայն մեկ բուն՝ հասարակված իր սնուցող արմատի վրա... Բաժանի՛ր արևի ճառագայթն իր իսկ լույսից, իր մարմնի միությունը թույլ չի տալիս լույսի բաժանում: Կրթի՛ր ծառից մի ճյուղ, երբ որ այն կտրվի, այլևս չի բողբոջի... Այսպիսին է նաև Եկեղեցին, որ Տիրոջ լույսից լուսավորված իր ճառագայթներն է ափռում համայն աշխարհի վրա, բայց մեկ է նրա լույսը, որ տարածվում է ամենուր, և ոչ էլ նրա մարմնի միությունն է բաժանվում: Քրիստոսի լույսը լուսավորում է Եկեղեցին իր խոսքի միջոցով:*

**Սբ Կիպրիանոս, «Եկեղեցու միության մասին», գրվածք 1.5**



| Հղում                     | Եպիսկոպոսի դերը միության պաշտպանության մեջ | Միության հիմքը |
|---------------------------|--|----------------|
| Հովհաննես 17.20-26        |  |                |
| Աղոթք եպիսկոպոսների համար |  |                |
| Սբ Կիպրիանոս              |  |                |

**Իմ ամփոփումը**

---



---



---




---



---

**ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ**



Քո կարծիքով՝ կրոնի ուսուցիչներն ինչպե՞ս կարող են օգնել իրենց եպիսկոպոսներին Եկեղեցու միության կարևոր գործն առաջ տանելու համար: Ի՞նչ կարող ես անել ինքդ Քրիստոսի Եկեղեցու միության առաջընթացի ուղղությամբ:

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՔՈՒՅՐԸ

Սուրբ Պատարագի Մեծ մուտքին, երբ վերաբերվում է անմահարար սուրբ հացը և գինով սկիհը և դրվում սուրբ սեղանի վրա, բուրվառակիր սարկավազը համբուրում է սուրբ սեղանը և քարոզում. «Ողջո՛ւյն Կրկնք միմյանց սուրբ համբուրով...»: Խորանից ողջույնի փոխանցման պահին դպիրները և ժողովուրդը միասին երգում են.

*Քրիստոս մեր մեջ հայտնվեց,  
Աստված որ է այսպեղ բազմեց.  
Խաղաղության շայնը հնչեց.  
Սուրբ ողջույնի կոչ ուղղվեց:  
Եկեղեցին միանչնացավ.  
Սիրո համբուրով ամրացավ.  
Թշնամությունը հեռացավ.  
Սերն ամեն կողմ փարածվեց:  
Արդ, ո՛վ պաշտոնյաներ,  
Բարձր շայնով միաբերան օրհնեցե՛ք  
Միասնական Աստվածությանը,  
Որին սերովքեներն են սրբաբանում:*

(Նոտաները տե՛ս Հավելվածում, էջ՝ 130):

- «Սուրբ համբուրի» փոխանցումը վաղ ժամանակներից դարձել է Եկեղեցում մատուցվող Պատարագի արարողության անբաժանելի մասը: Համաբարբառի օգնությամբ գտի՛ր «սուրբ համբուր» կապակցությունը Նոր Կտակարանում: Կարելի՞ նաև փնտրել «սիրո համբուր» արտահայտությունը: Ներքևի գծերի վրա նշի՛ր սուրբգրային հղումները:

Սուրբ .....  
 Համբուր .....  
 Սիրո .....  
 Համբուր .....

## ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը կենտրոնացած էր մեր Տիրոջ աղոթքի վրա՝ ի խնդիր իր աշակերտների և իր ամբողջ Եկեղեցու միության: Որպես մեկնարկ ունենալով Նիկիական Հանգանակի սահմանումը՝ առնչված Եկեղեցու «մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական» բնույթի հետ, աշակերտներն ուսումնասիրեցին սուրբգրային հատվածները, որոնք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի խոսքերն իր Եկեղեցու միության վերաբերյալ, ինչպես նաև նրա մասին, թե ինչպես էր վաղ Եկեղեցին աշխատում առաջ տանել և պահպանել հավատքի միությունը ի սեր Հայր Աստծո:

Նաև սովորեցին ծիսապաշտամունքային մի քանի աղոթքներ, որոնցով Եկեղեցին շարունակում է աղոթել Սուրբ Եկեղեցու միության համար, որովհետև Սուրբ Պատարագի մատուցման ընթացքում է, որ ընդունելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմնի և Արյան Սուրբ Հաղորդությունը, իրականացնում ենք և ապրում որպես մեկ Եկեղեցի՝ ըստ Քրիստոսի Մարմինը լինելու պատգամի:

Նկատի առնելով, որ մեր Տերն աղոթում էր, որ իր առաքյալների խոսքով շատերը հավատան իրեն, Եկեղեցին պարտականությունն ունի անշեղորեն պահպանել Ավետարանի ճշմարտությունը: Սույն պարտականությունն ընկնում է բոլոր եպիսկոպոսների ուսերին, որոնց համար Եկեղեցին մշտապես աղոթում է, որպեսզի նրանք շարունակեն «ուսուցանել մեզ Աստվածաշնչի ճշմարտությունն ուղղափառ վարդապետությամբ»: Նաև երգում ենք Ողջույնի հոգևոր երգը, որը մեր մեկ լինելու խորհրդանիշն է Հիսուս Քրիստոսով հաշտվելիս:

Ձեր զավակին հնարավորություն տրվեց մտածելու քրիստոնեական դաստիարակության ուսուցիչների դերի շուրջ, ովքեր նպաստում են եպիսկոպոսների գործունեությանը՝ սովորեցնելու ուղղափառ քրիստոնեական հավատքը: Նրանց նաև առիթ ընձեռվեց խորհրդածել, թե ինչպե՛ս կկարողանան նպաստել Սուրբ Եկեղեցու միությանը: Քաջալերե՛ք նրանց հարատևել քրիստոնեական կրթության մեջ:

Որպես ընտանիք դուք նույնպես կարող եք օգնել ձեր զավակին աճել Աստծո խոսքի իմացության մեջ, ինչպես որ ընդունված է մեր ուղղափառ հավատքի մեջ: Խրախուսե՛ք նրանց ընթերցել Սուրբ Գիրքը, կանոնավոր կերպով հաճախել Եկեղեցական արարողություններին, հատկապես Սուրբ Պատարագին: Սույն ջանքերի շնորհիվ նրանք լավագույնս պատրաստ կլինեն դիմագրավելու կյանքի մարտահրավերները՝ զինված մեր Տիրոջ սիրով, ով շարունակ կրչում է մեզ մնալ իր մեջ, ինչպես որ խաղողի ճյուղերը կարիք ունեն չկտրվելու վազից՝ պտղաբեր լինելու համար:

# 28. ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՏԱՃԱՐ


«...որովհետև Աստծո տաճարը սուրբ է, և դո՛ւք եք այդ տաճարը»:

Ա Կորնթացիներին 3.17




## ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Ի՞նչ բառեր գիտես, որոնք կապակցվում են սրբության հետ: Մտածի՛ր առնվազն չորս բառեր և գրի՛ր կողքի շրջանակների մեջ:



- Ինչպիսի՞ պատկերացումներ ես ունենում, երբ մտածում ես սրբության մասին: Ներքևի ո՞ր նկարներն են համընկնում սրբության մասին քո ըմբռնումներին: ✓ այս նշանը դի՛ր ընտրածդ նկարի կողքին: Գրավոր բացատրի՛ր, թե ինչո՞ւ ընտրեցիր հենց այդ նկար(ներ)ը և ինչո՞ւ մյուսները չեն համընկնում քո պատկերացումներին:



*Աստվածաշնչի դասից պարզի՛ր, թե ինչո՞ւ ենք Եկեղեցին սուրբ կոչում:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՒՐԲ Է

Հո 12.1-2, Ա Կր 3.16-17, 6.19-20, Կղ 1.21-23, Ա Պտ 1.14-16, 2.9-10

Մենք շարունակում ենք հռչակել Նիկիական Հանգանակի հետևյալ սահմանումը. «Հավատում ենք նաև միայն մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական Եկեղեցուն»: Կարդա՛ և քննարկի՛ր ներքևի հատվածները՝ քաղված առաքելական մամակներից, որպեսզի իմանաս, թե ինչպես է Եկեղեցին միշտ ընկալել իր սրբությունը: Գտի՛ր ընդհանուր թեմաներ, որոնք ի հայտ են գալիս յուրաքանչյուր քաղվածքում և լրացրո՛ւ ուսուցչիդ կողմից տրվածը:

Ուստի, եղբայրներ, քանի որ Աստված այնքա՛ն ողորմած եղավ մեր հանդեպ, աղաչում եմ, որ դուք չեզ Աստծուն ընծայեք որպես նրան վերապահված կենդանի մի զոհ, որովհետև դա՛ է Աստծո ուզած հոգևոր պաշտամունքը: Մի՛ ընդօրինակեք այս աշխարհի մարդկանց վարմունքը, այլ նոր մա՛րդ եղեք նորոգված մտքերով, որպեսզի իմանալով Աստծո կամքը՝ ձեր փորձառությանը ընդդեմ լավը, այսինքն՝ ինչ որ բարի է, ինչ որ ընդունելի է նրան և կատարյալ:

Հոմեոսացիներին 12.1-2

Չգիտե՞ք, որ Աստծո փաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ: Հերեսարար, եթե մեկն Աստծո փաճարը քանդի, Աստված էլ կորստի պիտի մատնի նրան, որովհետև Աստծո փաճարը սուրբ է, և դո՛ւք եք այդ փաճարը:

Ա Կորնթացիներին 3.16-17

Չգիտե՞ք, որ ձեր մարմինները փաճարն են Սուրբ Հոգու, որը դուք Աստծուց եք առել, և այն բնակվում է ձեր մեջ: Իմացե՛ք, որ դուք չեք ձեր անջի փերը, այլ Աստված, որ փրկագնով գնեց ձեզ համար: Ուստի այնպե՛ս ապրեցեք, որ Աստված փառավորվի ձեր մարմիններով:

Ա Կորնթացիներին 6.19-20

Դուք էլ մի ժամանակ օտարացել էիք Աստծուց և թշնամացել նրան ձեր մտածելակերպով ու չար գործերով: Բայց այժմ Քրիստոսն իր մարդեղությանը և մահվամբ ձեզ հաշտեցրեց Աստծո հետ, որպեսզի դուք նրան ներկայանաք մաքուր, անբիծ և անարար: Ուստի հարարեցե՛ք ձեր հավատի մեջ՝ այն հաստատելով ամուր հիմքերի վրա, անխախտ պահելով այն հույսը, որ ունեցաք Ավետարանի քարոզչությունը լսելով: Ես՝ Պողոսս, ինքս էլ ծառա եմ այդ Ավետարանին, որ քարոզվում է երկնքի փակ գրնվող բոլոր արարածներին:

Կողոսացիներին 1.21-23

Աստծուն հնազանդ զավակներ եղեք և մի՛ առաջնորդվեք անցյալ ցանկություններով, որոնցով ապրում էինք, երբ դեռ չէինք ճանաչում Քրիստոսին: Այլ ինչպես որ ձեզ կանչողը՝ Աստված, սուրբ է, դուք էլ սո՛ւրբ եղեք ձեր ամբողջ կյանքով, քանի որ գրված է. «Սո՛ւրբ եղեք, որովհետև սուրբ եմ ես»:

Ա Պետրոս 1.14-16

Բայց դուք ընտրյալ մի ցեղ եք, թագավորելու կոչված քահանաներ, մի սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդը, և ձեր պարտականությունն է քարոզել նրա՛ գործությունը, ով իսավարից ձեզ կանչեց իր սքանչելի լույսին: Որովհետև դուք այժմ Աստծո ժողովուրդն եք, մինչդեռ նախապես նրանք չէիք. այժմ վայելում եք նրա ողորմությունը, մինչդեռ նախապես զրկված էիք դրանից:

Ա Պետրոս 2.9-10

- Կարդացածդ հատվածներից դո՛ւրս գրի՛ր բառեր կամ կապակցություններ, որոնք Եկեղեցու հոմանիշներ են: Մտապահի՛ր այդ բառերը և նրանց գտնվելու սուրբգրային հատվածը:

.....

.....

.....

.....

.....

- Ըստ քո ընթերցածների և խմբակային քննարկումների՝ գրի՛ր քո սեփական «նամակը» ընկերոջդ՝ բացատրելով, թե ինչո՞ւ է Եկեղեցին սուրբ: Կարող ես նաև ըստ ցանկության ասելիքդ արտահայտել նկարի միջոցով:

**Եկեղեցին սուրբ է...**

---



---



---



---

## ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է

Կարդացիր քաղվածներ Առաքելական նամակներից, որոնք քաջալերում են վաղ եկեղեցու անդամներին հավատարիմ մնալ Աստծո սեփական ժողովուրդ դառնալու նրանց ստացած կոչին: Մեր Տերը քաջ գիտեր, որ սուրբ լինելը, Աստծո սեփական ժողովուրդ դառնալն այս անբարյացկամ աշխարհում այնքան էլ հեշտ չպիտի լինի:



- Կարդա՛ **Հովհաննես 16.1-15** քաղվածքները: Հիշյալ հատվածն ամբողջությամբ կարելի է ընթերցել Աստվածաշնչից: Նրանում Հիսուսը խոսում է Սուրբ Հոգու գործի մասին, որը պիտի ուղարկի իր հետևորդներին: Սա համեմատի՛ր Սուրբ Հոգու մասին Սբ Երանոսի ասածների հետ: Հիսուսի խոսքերն ինչպե՞ս են արձագանք գտնում Սբ Երանոսի գրվածքում:

*Այս բաներն ասացի չեզ, որպեսզի չեք հավալոր չկորցնեք: Իրենց ժողովարաններից դուրս կհանեն չեզ, և կգա ժամանակ, երբ ով որ չեզ սպանի, պիտի կարծի, թե Աստծուն ծառայություն է մատուցում: Մարդիկ այս բաները կանեն չեզ, որովհետև չճանաչեցին ո՛չ Հորը և ո՛չ էլ ինձ: ...եթե չգնամ, Միսիթարիչը չի գա չեզ մոտ, իսկ եթե գնամ, նրան կուղարկեմ չեզ մոտ: ...Բայց երբ գա ինքը՝ Սուրբ Հոգին, որ ճշմարտությունն է հայտնում, նա կառաջնորդի չեզ դեպի ամբողջական ճշմարտություն, որովհետև ինքն իրենից չի խոսի, այլ ինչ որ լսի, այն կասի և չեզ կպատմի գալիք բաների մասին: Նա կփառավորի ինձ, որովհետև ինչ որ առնի ինձնից, կհայտնի չեզ: Ինչ որ ունի Հայրս, իմն է. դրա համար ասացի չեզ, թե ինչ որ առնի ինձնից, կհայտնի չեզ:*

*Որ որ Եկեղեցին է, այնպեղ է Աստծո Հոգին. և ուր որ Աստծո Հոգին է, այնպեղ է Եկեղեցին և ամեն տեսակի շնորհ: Բայց Հոգին ճշմարտություն է: Հեղուհարար ովքեր հաղորդակից չեն Հոգուն, չեն սնվել և կյանք չեն սրացել իրենց մոր կրծքից, ոչ էլ հագնում այն փրփրացող աղբյուրից, որ բխում է Քրիստոսի մարմնից:*

**Սբ Երանոս Լիոնացի,  
«Ընդդեմ հերձվածոց», III, 24. 1**

| Հիսուսն ասաց   | Սբ Երանոսն արձագանքում է  |
|--|---|
| Երբ գա ինքը՝ Սուրբ Հոգին, որ ճշմարտությունն է հայտնում, նա կառաջնորդի ձեզ դեպի ամբողջական ճշմարտություն... | Հետևաբար ովքեր հաղորդակից չեն Հոգուն, չեն սնվել և կյանք չեն ստացել իրենց մոր կրծքից, ոչ էլ հագնում այն փրփրացող աղբյուրից, որ բխում է Քրիստոսի մարմնից: |

**Բառարան**

**ՄԽԻԹԱՐԻՉ**

վերաբերում է Սուրբ Հոգուն: Նշանակում է ոչ միայն «միսիթարող», այլ նաև «քաջալերող, խորհրդատու, օգնական, միջնորդ և բարեխոս»:

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ԶԳՏԵՆԸ ՍՐԲՈՒԹՅԱՆ

Նախորդ դասին ծանոթացանք Եկեղեցուն՝ որպես Քրիստոսի մարմնի, ինչպես որ այն ներկայացված է Ա Կորնթացիներին 12-րդ գլխում. «...որովհետև մենք ամենքս՝ հրեա թե հեթանոս, ծառա թե ազատ, նույն Հոգով մկրտվեցինք մեկ մարմին կազմելու համար, և ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք: Արդ, դուք թեև առանձին-առանձին անդամներ եք, բայց միասնաբար կազմում եք Քրիստոսի մարմինը»:

Եկեղեցին սուրբ է, որովհետև Քրիստոսը՝ այդ մարմնի գլուխը, սուրբ է: Երկրավոր Եկեղեցու անդամները սուրբ են այն առումով, որ նրանք ապրում են Աստծո հետ միության մեջ: Հենց սա է այն մարտահրավերը, որ Եկեղեցու անդամները պետք է ընդունեն՝ ապրելու մի կյանք, որը թելադրված չէ աշխարհիկ չափանիշներով, այլ առաջնորդված Աստծո սիրով ու պատվիրաններով:

- **Եփեսացիներին 5-րդ** գլխում Սբ Պողոսը կոչ է անում քրիստոնյաներին մերժել կռապաշտությունը՝ փոխարենը հրավիրելով նրանց նմանվել Աստծուն՝ որպես սիրելի զավակներ: Խմբակի հետ կարդա՝ և քննարկիր **Եփեսացիներին 5.1-20** հատվածը:

- Վերևի տողերին ցանկագրիր սրբությանը հակոտնյա վարվելակերպը բնորոշող բառեր:
- Անվանիր մի քանի «կռապաշտական» ձևեր, որոնք ծառանում են մեր առջև նույնիսկ ներկա ժամանակներում:
- Դրոշի վրա գրիր քո սեփական սահմանումը՝ նկարագրելով սրբության մի կենսակերպ, որը կուզեիր ընդունել որպես Քրիստոսի աշակերտ:


### Սրբությանը դեմ վարվելակերպ

.....

.....

.....

.....



## ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

**Եփեսացիներին 5-րդ և 6-րդ** գլուխներում շեշտվում է, որ լույսի որդիները լցված են Սուրբ Հոգով: Սուրբ Հոգով լցված լինելու մեկ ուրիշ նշան է նաև այն փոխադարձ հնազանդությունը, որ ընտանիքի անդամներն ունեն միմյանց հանդեպ՝ ի սեր Քրիստոսի: **Եփեսացիներին 5.21-6.4** հատվածը վերաբերում է ամուսիններին, զավակներին ու ծնողներին:

**Եփեսացիներին 5.22-33** հատվածն ընթերցվում է Սուրբ Պասկի խորհրդակատարության ընթացքում: Հիշյալ մասը հաճախ սխալ է հասկացվում, երբ **Եփեսացիներին 5.22-24** համարները դուրս են բողոքվում համատեքստից: Կարդա՝ և տես, որ սույն հատվածը նպատակ չունի ստորադասել կնոջը, այլ այն հավասարակշռվում է փեսային տրվող խրատով, որը շարունակվում է **25-33** համարներում:

- Կարդա՝ **Եփեսացիներին 5.21-33** հատվածը հետևյալ հարցումների մասին խորհելիս:
  1. Ո՞րն է կնոջ պարտականությունը հանդեպ իր ամուսինը և ինչո՞ւ: Ո՞վ է կնոջ տիպարը:
  2. Տղամարդն ինչպե՞ս պետք է վարվի իր կնոջ հետ, ո՞վ է տղամարդու տիպարը:
- Յուրաքանչյուր թագի կողքի գծերի վրա մի նախադասությամբ արտահայտիր **Եփեսացիներին 5.21-33** հատվածի պատգամը:

### Տղամարդ

### Կին

.....

.....

.....

.....




## ԾՆՈՂՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ

- Կարդա՛ ներքևի տողերը: Ինչպե՞ս ես հասկանում գավակներին ու ծնողներին ուղղված խորհուրդը **Եփեսացիներին 6.1-4** հատվածում: Ի՞նչ պատասխանատվություն է դրվում նրանցից յուրաքանչյուրի վրա: Մտորի՛ր ծնողներիդ հետ քո հարաբերության շուրջ սուրբգրային հատվածի լույսի ներքո և գրի՛ր Սուրբ Հոգուն ուղղված մի աղոթք՝ հոգուտ քեզ և ծնողներիդ:

*Չավակներ, իբրև Տիրոջ հետևորդներ՝ ձեր պարտականությունն է հնազանդվել ձեր ծնողներին, որովհետև այդ է ձիշտը: «Պատրվի՛ր քո հորն ու մորը»:* սա առաջին պատրվիրանն է, որ իրեն կապված մի խոստում ունի. «որպեսզի միշտ բարիք գտնես, և կյանքդ երկար լինի երկրի վրա»: Իսկ դուք, հայրեր, մի՛ գայրացրե՛ք ձեր գավակներին, այլ մեծացրե՛ք նրանց քրիստոնեական դաստիարակությամբ և կրթությամբ:

Եփեսացիներին 6.1-4



## ԳՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՌՔ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

Եկեղեցու պատարագը հոգևոր մեղեդիների ու աղոթքների միջոցով ևս արտահայտում է Եկեղեցու սրբությունը: Կարդա՛ Սուրբ Պատարագից քաղված աղոթքները, ապա լրացրո՛ւ խաչքառը:


- Մրանով շնորհի՛ր սեր, հաստատություն և ըղձալի խաղաղություն համայն աշխարհին, Սուրբ Եկեղեցուն և բոլոր ուղղափառ եղիսկոտոսներին, ֆահանաներին, սարկավազներին, ղեկավարներին, ժողովուրդներին, ճամփորդներին, ծովագնացներին, օդանավորդներին, բանասրկյալներին, վսանգվածներին, աշխատողներին և բոլոր նրանց, ովքեր չարի դեմ ղաճե՛րազմի մեջ են:  
Ընդհանուր հիշատակություններ՝ մատուցված քահանայի կողմից
- Գոհություն և փառաբանություն ենք մատուցում Քեզ, ո՛վ Տեր Ասված մեր, այս սուրբ սեղանի վրա բազմած սուրբ և անմահ ղաճարագի համար, որդեսզի սրանով սսանանք կյանքի սրբության քո ղարզեր:  
Ընդհանուր հիշատակություններ՝ մատուցված սարկավազների կողմից
- Գոհություն են հայսնում Քեզ, ո՛վ Քրիստոս թագավոր, որ արժանի դարձիր ինձ՝ անարժանիս, հաղորդվելու քո սուրբ Մարմնիդ և Արյանդ: Եվ հիմա աղաչում ենք քեզ, մի՛ թող, որ սա լինի ղաճածառ իմ դասաղաճության համար, այլ առիթ՝ մեղքերի քավության և թողության, հոգեկան և մարմնական առողջության համար և մղի ինձ ամեն առաքինի գործերի: Թող սա մաքրի իմ շուճը, հոգին և մարմինը և ինձ դարձնի ճաճար և բնակարան ամենասուրբ Երրորդության, որդեսզի քո սուրբերի հետ արժանի լինեմ փառավորելու քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:  
Աղոթք Հաղորդությունից առաջ
- Գոհություն ենք հայսնում քեզ, ո՛վ ամենակալ Հայր, որ մեզ սվիր սուրբ Եկեղեցին որդես նավահանգիստ և ճաճար սրբության, ուր փառաբանվում է ամենասուրբ Երրորդությունը. այլելուիս:  
Գոհաբանություն

### Հորիզոնական

- Հիսուս Քրիստոսի Մարմինը և Արյունը ..... են մարդու մեղքերը:
- Հաղորդվելը մարդուն տալիս է նաև հոգու և մարմնի .....
- Որոշիչ, որով բնութագրվում է Եկեղեցու էությունը 1-ին, 2-րդ և 4-րդ հատվածներում:
- Ամենասուրբ Երրորդության բնակատեղի՝ ըստ 3-րդ աղոթքի:

### Ուղղահայաց

- Սուրբ և Անմահ Պատարագի մեկ այլ հոմանիչ կապակցություն:
- Տաճար սրբության:
- «Կյանքի սրբության պարզև» հասկացությունը՝ մեկ բառով:




## Ճաշու շարական Հարության ԳԿ


*Քո աստվածության լույսով, ո՛վ Քրիստոս, լուսավորեցիր սուրբ եկեղեցին. անշարժ պահիր նրան հավիտյան:*

*Այսօր հավատացյալների բազմությունը Երուսաղեմում փոնում է սուրբ եկեղեցու նավակապիքը. անշարժ պահիր նրան հավիտյան:*


*Բացվեցին նոր Սիոնի հավատքի դռները՝ ընդունելու անմահ փեսային հարսանեկան առաջաստի մեջ, որում բաշխվում է քո սուրբ մարմինը և արյունը. անշարժ պահիր նրան հավիտյան:*

Սկս. 


327 Տըր թա - գա - ւոր - եա - ց վա - յել - չու - թին ըգ - գե - ցա - ւ :

1. 

328 Լու - սով Աստ - ուա - ծու - թեա - ն քո - Քրիս - տոս՝



329 Լու - սա - ւո - ռե - ցեր սուրբ գե - կե - ղե - ցի - - - .



330 պա - հեա - ըգ - սա ան - շա - րժ յա - վի - տեան:

(Նոտաների շարունակությունը տես՝ **Հավելվածում**, էջ՝ 131):

### ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Նիկիական Հանգանակում մենք խոստովանում ենք մեր հավատքը «մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցու» նկատմամբ: Սույն դասին աշակերտներն ուսումնասիրեցին սուրբգրային զանազան հատվածներ, որոնք խոսում են եկեղեցու՝ որպես Քրիստոսի մարմնի սրբության մասին: Քննարկումների միջոցով աշակերտները հասկացան, որ եկեղեցին սուրբ է, որովհետև Աստված սուրբ է, և եկեղեցին Աստծո տաճարն է: Նրանք նաև սովորեցին, որ եկեղեցին՝ Քրիստոսի մարմինը, իրենք են և որպես այդպիսին կոչված են աճել սրբության մեջ՝ ապրելով աստվածահաճո կյանք: Այս նկատառումով նրանք կյանքում կանեն ընտրություններ, որոնք հաճախ անհարիր կլինեն ժամանակակից հասարակության կողմից ընդունված ձևերին:

Դասի միջոցով նաև հնարավորություն է տրվում խորհրդածել քրիստոնյա մեր նախնիներին Սբ Պողոսի կողմից ավանդված հորդորների շուրջ, թե ինչպիսին պետք է լինի քրիստոնեական ընտանիքը: Այսպիսով, ամուսինների հարաբերությունը նմանեցվում է Քրիստոսի՝ եկեղեցու հանդեպ ունեցած հարաբերությանը: Միաժամանակ խորհուրդներ է տրվում ծնող-զավակ հարաբերությունների առնչությամբ:

Ծիսապաշտամունքային աղոթքների և շարականների ուսումնասիրության միջոցով աշակերտները հասու են դառնում գնահատել եկեղեցու սրբության կարևորությունը:

Ժամանակ տրամադրեք ձեր զավակից լսելու իր սովորածների մասին, և թող նա արտասանի Սուրբ Հոգու առաջնորդությունը հայցելու մասին իր գրած աղոթքը, որը նվիրված է ձեզ՝ որպես ծնողներ և զավակներ, որպեսզի ձեր հարաբերության միջոցով առիթ ունենաք անդրադառնալու եկեղեցու սրբությանը:



# 29. ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Է

«Ողջո՛ւյն ձեզ: Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»:

Յովհաննես 20.21



## ՅԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Նայի՛ր ներքևի նկարներին, որոնցում պատկերված են հեռախոսով խոսող մարդիկ աշխարհի տարբեր կողմերից: Մեր ժամանակներում արդեն սովորական երևույթ է, երբ մարդիկ կապվում են իրար հետ համակարգչի միջոցով աշխարհի մեկ ծայրից մյուսը: Մեզնից շատերը տեխնիկական օգնություն են ստանում իրենց համակարգիչների կամ էլեկտրոնային այլ սարքավորումների համար մարդկանցից, որոնք գտնվում են տարբեր երկրներում, օրինակ՝ Հնդկաստանում, Միացյալ Նահանգներում և այլուր: Մենք օգտագործում ենք «գլոբալ տնտեսություն» կամ «գլոբալիզացիա» հասկացությունը նկարագրելու առևտրատնտեսական այն գործունեությունը, որն իրականացվում է երկրների միջև ամբողջ աշխարհում: Սա հնարավոր է դառնում տեխնոլոգիական նվաճումների շնորհիվ:



- Ո՞րն է «գլոբալ» կամ «գլոբալիզացիա» բառերի հոմանիշը: Ընտրի՛ր մի քանիսը բառացանկից և գրի՛ր ներքևի տողերի վրա: Որոշի՛ր, թե հոմանիշներից ո՞րն է լավագույնս համապատասխանում դրա իմաստին և այն գրի՛ր «*Լավագույն Հոմանիշ*» վերնագրի ներքո և բացատրի՛ր ինչո՞ւ:

համաշխարհային տեղական տիեզերական շրջանային դրացիական հարակից բնիկ միջազգային ընդհանրական

Հոմանիշ՝ .....

.....

Լավագույն Հոմանիշ՝ .....

.....

Մենք Եկեղեցին կոչում ենք ընդհանրական կամ տիեզերական՝ նկարագրելու նրա յուրահատկություններից մեկը:

**Աստվածաշնչի դասից պարզի՛ր, թե ինչպե՛ս է Եկեղեցին ընկալում հիշյալ ընդհանրականությունը:**

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՏԵՐՈՒՆԱՊԱՏԿԵՐ ՄԵԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մատթեոս 28.16-20, Մարկոս 16.14-18, Ղուկաս 24.44-49, Հովհաննես 10.7-10



■ Նիկիական Հանգանակում շարունակում ենք հռչակել. «Հավատում ենք նաև մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական Եկեղեցուն»: Ընդհանրական և առաքելական բառերը սահմանում են Եկեղեցու բնույթը նրա գոյության վաղ օրերից: Կարդա՛ համատես ավետարաններից քաղված հատվածները, որոնցում նկարագրվում է Հիսուսի հետհարության հանդիպումներն աշակերտների հետ: Խմբով քննարկի՛ր դրանք, սպա յուրաքանչյուրում գտի՛ր Հիսուս Քրիստոսի կողմից ասված բառեր, կապակցություններ կամ նախադասություններ, որոնք կօգնեն քեզ հասկանալ Եկեղեցու ընդհանրական և առաքելական բնույթը: Գրի՛ր դրանք սույն էջի ներքևի գծապատկերի պատշաճ աղյուսակներում:



Իսկ տասնմեկ աշակերտները գնացին Գալիլեա, այն լեռը, որտեղ Հիսուսը ժամադրվել է իրենց հետ: Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, բայց ոմանք տարակուսեցին: Հիսուսը մոտենալով խոսեց նրանց հետ: Ապա ասաց.



- Ամեն իշխանություն տրվեց ինձ երկնքում և երկրի վրա: Ինչպես որ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես չեմ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին իմ աշակերտները դարձրե՛ք: Մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց այն բոլոր պատվիրանները, որ տրվեցի ձեզ: Եվ ահա ես միշտ ձեզ հետ կլինեմ, մինչև աշխարհի վախճանը:



Մատթեոս 28.16-20



Ամենից հետո Հիսուսը երևաց տասնմեկ աշակերտներին, երբ նրանք սեղան էին նստել: Նա հանդիմանեց նրանց իրենց անհավատության և համառության համար, քանի որ չէին հավատարացել նրան, որոնց ինքը երևացել էր մեռելներից հարություն առնելուց հետո: Եվ ասաց նրանց.



- Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և բոլոր մարդկանց քարոզեցե՛ք Ավետարանը: Ով հավատա և մկրտվի, կփրկվի, իսկ ով չհավատա, կդատապարտվի: Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հեղեղալ նշաններով. իմ անունով չար ոգիներ պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խոսեն. չեռքով օջ պիտի բռնեն առանց խայթվելու և եթե մահացու որևէ բույն էլ իմեն, չպիտի վնասվեն, հիվանդների վրա չեռք պիտի դնեն և բժշկեն նրանց:

Մարկոս 16.14-18



Ապա ասաց.

- Այս բոլորն արդեն ասել էի ձեզ, երբ ձեզ հետ էի, թե պետք է իրականանան Մովսեսի Օրենքի գրքում, մարգարեների գրքերում և Սաղմոսներում իմ մասին գրվածները:



Հետո բացեց նրանց մտքերը, որպեսզի հասկանան Սուրբ գրքերը, և ասաց նրանց.

- Գրված է, որ այդպես պետք է չարչարվեր Քրիստոսը և երեք օր հետո հարություն առնել. նրա անունով պետք է քարոզվեր ապաշխարություն և մեղքերի թողություն բոլոր ժողովուրդներին՝ Երուսաղեմից սկսած: Դուք այս բոլորի վկաներն եք: Եվ ահա ես ուղարկելու եմ ձեզ իմ Հոր տված խոստումը: Մնացե՛ք Երուսաղեմում, մինչև որ գորություն սրանաք երկնքից:

Ղուկաս 24.44-49



| Ավետարան | Ընդհանրական | Առաքելական |
|----------|-------------|------------|
| Մատթեոս  |             |            |
| Մարկոս   |             |            |
| Ղուկաս   |             |            |

**Բառարան**  
**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ**  
 ծագում է «առաքյալ» բառից, որ նշանակում է «ուղարկված» Հայր Աստծո կամ Քրիստոսի կողմից, այսինքն՝ պատգամավոր, դեսպան:

## ԸՆԴՀԱՆՐԱՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՔԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ



Նոր Կտակարանում կան շատ հղումներ, որոնք լուսաբանում և հաստատում են մեր հավատն ու դավանանքը Եկեղեցու ընդհանրականության և առաքելականության առնչությամբ: Դրանց օգնությամբ մենք հասկանում ենք, որ եկեղեցին, կառուցված առաքյալների և մարգարեների հիման վրա, պարունակում է այն ճշմարտության ամբողջությունը, որ Հիսուս Քրիստոսը եկավ հայտնելու Սուրբ Երրորդության և մեր փրկության մասին: Ահա Տիրոջ խոսքերը Հովհաննեսի Ավետարանից:

*Ուսրի Հիսուսը կրկին ասաց նրանց.*

*- Հասարայր իմացեք, որ ես եմ ոչխարների դուռը: Բոլոր նրանք, որ ինչնից առաջ եկան, գող էին և ավազակ, բայց ոչխարները նրանց չհեղինեցին: Ես եմ դուռը. ով իմ միջով անցնելով ներս մտնի, կփրկվի.*

*կմտնի ու կելնի և ճարակելու բան կզգրնի: Գողը զայիս է միայն զողանալու, սպանելու և փչացնելու համար: Ես եկա, որպեսզի կյանք ունենան, և կյանքը լինի առավել լեցուն:*

Հովհաննես 10.7-10

Հետևաբար, Եկեղեցու ընդհանրականությունն ավելի լայն ընդգրկում ունի, քան համաշխարհային բառի ընկալումը: Տիեզերական եզրույթը գործածվում է որպես հոմանիշ ընդհանրականությանը: Բացի համաշխարհային լինելու իմաստից, տիեզերականը նշանակում է նաև ամեն ինչ ընդգրկող, լրացնող: Ահա թե ինչպես է Սբ Կյուրեղ Երուսաղեմացին բացատրում Եկեղեցու ընդհանրականությունը:

*Եկեղեցին կոչվում է «ընդհանրական», որովհետև նա տարածվում է ամբողջ աշխարհով մեկ, մի ծայրից մինչև մյուսը: Նաև որովհետև նա ուսուցանում է ամբողջ վարդապետությունը փեղեկականորեն և առանց բացթողման, որը պետք է հասնի մարդու իմացությանը... և որովհետև նա ճշմարիտ կրոնի քողի փակ է բերում մարդկանց բոլոր խավերը... և որովհետև նա փեղեկականորեն մտրեցնում և բժշկում է ամեն տեսակի մեղք՝ գործված հոգու և մարմնի միջոցով, և իր մեջ ունի ամեն տեսակի առաքիլություն, որ կարելի է անվանել, գործով ու խոսքով, և ամեն տեսակի հոգևոր պարգևներ:*

**Սբ Կյուրեղ Երուսաղեմացի, Քրիստոնեական 18,23**

### ԳՏԻՐ ՀԻՍՈՒՍԻ ԽՈՍՔԵՐՆ ԻՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

- Կարդա՝ քո խմբակին նշանակված սուրբգրային հատվածները Աստվածաշնչից և գտի՛ր այն նախադասությունները, որոնք համընկնում են Սբ Կյուրեղի նշած կետերի հետ: Նախադասությունները գրի՛ր ներքևի համապատասխան սյունակներում: Քո խմբակին նշանակված յուրաքանչյուր հատվածի համար պատրաստի՛ր մի ամփոփ պարբերություն ըստ քո բացահայտումների՝ դասարանին ներկայացնելու համար:

|                  |                   |                   |                   |                 |
|------------------|-------------------|-------------------|-------------------|-----------------|
| <b>Մտ 10.1-4</b> | <b>Մր 3.13-19</b> | <b>Ղկ 9.1-6</b>   | <b>Հհ 10.1-10</b> | <b>Ա Կր 1.2</b> |
| <b>Հո 1.1-7</b>  | <b>Գղ 1.2</b>     | <b>Եփ 1.15-23</b> | <b>Կղ 1.2</b>     | <b>Բ Թս 1.1</b> |

| Տարածվում է աշխարհով մեկ բոլոր մարդկանց համար | Ուսուցանում է Աստծո խոսքի ամբողջությունը | Բուժում է հոգու և մարմնի բոլոր ախտերը |
|---|--|---------------------------------------|
|   |  |                                       |
|   |  |                                       |
|   |  |                                       |
|   |  |                                       |
|   |  |                                       |

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՍԲ ԵՐԱՆՈՍԸ՝ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Վաղ շրջանի Եկեղեցու հայրերն առաքելական ավանդությունը սերտորեն կապում էին Եկեղեցու ընդհանրական բնույթի հետ: Նրանք անվարան հավատում էին, որ առաքելական ուսուցումն է ապահովում Եկեղեցու միասնությունն ու միությունը: Սբ Երանոս (Իրինեոս) Լիոնացին՝ 2-րդ դարի ամենաակնառու աստվածաբաններից մեկը, առաջինն էր, ով պաշտպանեց առաքելական ավանդությունը որպես հաստատ ճանապարհ պահպանելու Եկեղեցու հավատքի ուղղափառությունը կամ ընդհանրականությունը: Կարդա՛ երկու հատված «Ընդդեմ հերձվածոց» հինգ գրքից բաղկացած նրա ջատագովական աշխատությունից, որով մերժվում էր գնոստիկների աղանդավորական ուսմունքը **Եփեսացիներին 2.17-22** հատվածի լույսի ներքո: Ինչպե՞ս կբնորոշես կամ կնկարագրես նրա ընկալումը առաքելականության և ընդհանրականության վերաբերյալ: Ի՞նչ է ի հայտ գալիս որպես հաստատ արդյունք առաքելական ավանդության պահպանության:

...և եկավ, խաղաղության ավերիսը փվեց բոլորին՝ թե՛ շեզ՝ հեթանոսների, որ հեռացել էիք Աստուծոց, և թե՛ հրեաներին, որոնք մոտ էին նրան: Նրանով է, որ մենք երկուսս էլ, հրեաներ ու հեթանոսներ, նույն հոգին ստացած, կարող ենք կանգնել Հայր Աստուծո առաջ: Հեղեբար, դուք այլևս օտար և խորթ չեք Աստուծո համար, այլ Աստուծո ժողովրդի հետ համաքաղաքացիներ եք և Աստուծո ընկալների հարազատ անդամները: Դուք մասերն եք այն մեծ կառույցի, որի հիմքն առաքյալներն ու մարգարեներն են, և որի անկյունաքարն է ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Նրանով է ամբողջ կառույցը ներդաշնակ միասնությամբ աճում ու դառնում Տիրոջ սեփական սուրբ փանարը: Նրան միացած՝ դուք էլ բոլորի հետ միասին դառնում եք Աստուծո բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով:

Եփեսացիներին 2.17-22

*Եկեղեցին, թեպետ ստեղծված ամբողջ աշխարհով մինչև իսկ երկրի չորս ծագերը, այս հավաքը ժառանգեց առաքյալներից և նրանց աշակերպներից... Եկեղեցին, ստացած ունենալով այս քարոզությունը և այս հավաքը, թեև ցրված համայն աշխարհում, այդուհանդերձ նա միայն մեկ փուն ունի, որը զգուշորեն պահպանում է նրան: Նա նաև հավաքում է հիշյալ (վարդապետության) կեղերին, ինչպիսին որ ուներ, սակայն որպես մեկ հոգի և մեկ սիրտ հռչակում է դրանք, ուսուցանում է փոխանցում հաջորդներին կատարյալ ներդաշնակությամբ, որ կարծես թե միայն մեկ բերան ունի: Արդ, չնայած աշխարհի լեզուները նույնական չեն, բայց և ավանդության ներդրումը մեկ է և նույնը... Սակայն ինչպես արեգակը՝ Աստուծո այդ արարածը, մեկ է և նույնը ամբողջ աշխարհի համար, նույնպես և ճշմարտության քարոզումը ճառագայթում է ամենուր և լուսավորում բոլոր մարդկանց, որոնք կամենում են հասնել ճշմարտության գիտությանը:*

«Ընդդեմ հերձվածոց» Ա 10.1-2

Հեղեբար, քանի որ ունենք այսպիսի ապացույցներ, անհրաժեշտ է փնտրել ճշմարտությունը այլ բաներում, քան այն դյուրին կերպով չեք է բերվում Եկեղեցուց, քանզի առաքյալները, ինչպես մեծահարուստը (իր դրամները ավանդ է դնում) քանկում, այնպես էլ Եկեղեցին իր չեքքի փակ եղած ամբողջ ճշմարտությունը կուրակում է, որպեսզի ամեն մարդ, ով որ ցանկանում է, կարողանա նրանից վերցնել կյանքի ջուրը: Արդ, նա է կյանքի մուտքը, մյուսները գողեր են և ավազակ: Հենց այս հավաքածը հիմք ընդունելով ենք խուսափում նրանցից և ընկրության հնարավորություն փախի Եկեղեցուն վերաբերող հարցերին ամենայն ջանասիրությամբ, և ամուր բռնել ճշմարտության ավանդությունը: Ուրեմն, ո՞րն է բանը: Ենթադրենք՝ մեր մեջ մի բանավեճ է ծագում կապված կարևոր մի շարք հարցերի հետ, արդյոք մենք չպե՞տք է անդրադառնանք հնագույն Եկեղեցիներին, որոնց հետ առաքյալները մշտական կապի մեջ են եղել և նրանցից սովորել այն ամենը, ինչ որոշ է և հափսի անրկա հարցի առնչությամբ:

«Ընդդեմ հերձվածոց» Գ 4.1



## ԱՐՏԱՅԱՅՏԻՐ ՀԱՍԿԱՑԱՑԴ

1. **Եփեսացիներին 2.17-22** հատվածում մեկ գծով ընդգծիր այն բառերը կամ կապակցությունները, որոնք արտահայտում են Եկեղեցու առաքելական բնույթը: Նույնպես երկու գծով ընդգծիր Եկեղեցու ընդհանրական բնույթը նշող բառերը:
2. Ինքնուրույն բառերով բացատրիր ընկերոջդ Սբ Երանոսի ասածները Եկեղեցու առաքելականության և ընդհանրականության մասին:

**Բացատրեն...**

---

---

---

---

---

---

## ԱՂՈԹՔՆԵՐ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

- Հիսուսն աղոթեց Իր Եկեղեցու միության համար: Կարդա՛ Տիրոջ աղոթքն առաքյալների համար **Հովհաննես 17.6-19** հատվածում: Ճանաչելով աստվածային օգնությունն ունենալու կարիքը՝ Եկեղեցին շարունակ աղոթում է ճշմարտությունը պահպանելու համար, որը մեզ տրվել է Հիսուս Քրիստոսի կողմից՝ առաքյալների միջոցով: Կարդա՛ հետևյալ աղոթքները Սուրբ Պատարագի և գտիր **Հովհաննես 17.6-21** հատվածի այն համարները, որոնք հիմնավորում են հիշյալ աղոթքներում խնդրվածները:

*Խաղաղություն շնորհիք քո Սուրբ Եկեղեցուդ, խաղաղություն և փոկունություն թշնամիների դեմ պայտերազմի մեջ, և մեկ հավաքի վրա հասարակի կաթողիկե Եկեղեցին: Քե՛զ ենք դավանում Տեր և Աստված, կյանք փուր մեզ:*

Ժամանուտ Եկեղեցու տոներին

*Հիշիր, ո՛վ Տեր, ողորմիր և օրհնիր քո ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցին, որին փրկեցիր քո միածնի պարվական արյունով, և ազատեցիր Սուրբ Խաչով: Նրան շնորհիր անսասան խաղաղություն: Հիշիր, ո՛վ Տեր, ողորմիր և օրհնիր բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, որոնք ուղիղ վարդապետությամբ մեզ ուսուցանում են ճշմարիտ խոսքը:*

Քահանայի ծածուկ աղոթք Սբ Պատարագի Ընդհանուր հիշատակություններից

Հովհաննես 17.

Հովհաննես 17.

## ԵՐԳԵՆՔ

*Այսօր ուրախությամբ ցնծում են երկնային բազմությունները սուրբ եկեղեցու նավակապիքին, որովհետև մեզ շնորհվեց հավիրենական քահանայապետ՝ լուսավորելու համար կաթողիկե եկեղեցին. փառք քո գալստյանը, ո՛վ Տեր:*

*Այսօր քարչունքներից լուսավոր սյունը հովանի է մեզ, որովհետև երկնավոր թագավորը գալիս է սուրբ եկեղեցի, և հրեշտակների զորքերը փոխում են մարդկանց հետ. փառք քո գալստյանը, ո՛վ Տեր:*

*Այսօր ճշմարիտ քահանայապետն աստվածային օրհնքով պարվված կանգնեցնում է խաչի քառանկյուն սեղանը, արժանապես պարարագվում է և բաշխում Տիրոջ մարմինն ու արյունը, մաքուր արտով մոլեցնք փրկված նոր ժողովուրդներ և խնդրեցե՛ք Քրիստոսից, որպեսզի դրանք մեզ շնորհի երկար օրերով:*

Ճաշու շարական Սբ Էջմիածնի տոնի, ԳԶ

(Նոտաները տե՛ս **Հավելվածում**, էջ՝ 132):

## ԱՇԽԱՏԵՆՔ ԳԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅԱԼ

Եկեղեցին կազմված է մարդկանցից, ովքեր շարունակ աճում են և զարգանում սրբության մեջ: Ենթակա լինելով մարդկային մեր անկատար բնության տկարություններին՝ Եկեղեցին դարերով պայքարել է պահպանելու Եկեղեցու միությունը, առաքելական և ընդհանրական ավանդությունը՝ ըստ իր քարոզության, պաշտամունքի և փրկարար առաքելության: Մարդկային անհասկացողությունները պատճառ են հանդիսացել, որպեսզի նույնիսկ Արևելյի ամենահին դավանակից եկեղեցիները բաժանված լինեն: Սուրբ Հոգին, այդուհանդերձ, շարունակում է գործել Եկեղեցու ծոցում, որպեսզի ի վերջո հաջողեցնի այն միությունը, որի համար մեր Տերն աղոթում էր:

Ավելի քան 1500 տարի Բյուզանդական Ուղղափառ Եկեղեցիները և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները բաժանված են: 1964թ.

Սուրբ Հոգու առաջնորդությամբ եկեղեցիների միջև կայացավ ոչ պաշտոնական չորս հանդիպումներից առաջինը՝ աստվածաբանական հարցերի շուրջ խորհրդակցություն անցկացնելու համար: Արդյունքում ստեղծվեց միացյալ հանձնախումբ՝ Բյուզանդական Ուղղափառ և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսություն սկսելու նպատակով: Համատեղ աշխատանքի արդյունքում կազմվեց առաջին համաձայնագիրը 1989թ. Եգիպտոսի Ամբա Բիշոյ վանքում: Երկրորդ համաձայնագիրը կնքվեց 1990թ. Ժնևում:

*«Մենք մեր հայրերից ի Քրիստոս ժառանգել ենք մեկ առաքելական հավատ և ավանդություն, չնայած որպես Եկեղեցիներ մենք դարերով բաժանված ենք եղել իրարից: Որպես Ուղղափառ Եկեղեցիների երկու ընտանիքներ՝ երկար ժամանակ իրար հետ հաղորդությունից դուրս մնալով մենք այժմ աղոթում ենք և ապավինում Աստուծոն՝ վերականգնելու այդ հաղորդությունն առաջին դարերի անբաժան եկեղեցու առաքելական հավատքի հիմքի վրա, որը մենք դավանում ենք մեր Հավատարամքում: Հաջորդող պարբերությունները հավատքի մի պարզ արտահայտություն է, որ նպատակաուղղված համարելով ջանքերով կարելի կլինի վերականգնել հաղորդությունը Ուղղափառ Եկեղեցիների երկու ընտանիքների միջև»:*

Առաջին Համաձայնագրի նախաբանը (1989թ.)



### ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ



Եկեղեցական երկու ընտանիքներից աշխարհական և հոգևորական աստվածաբաններ ուսումնասիրության, աղոթքի և երկխոսության միջոցով ճանապարհի հարթեցին Եկեղեցու միությունը վերահաստատելու համար: Ինչպե՞ս կկարողանաս մասնակցել այս միության նախաձեռնությանը: Գրի՛ր մտածումներդ և աղոթքդ տետրակի մեջ:

### ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԵՏ

Ընդհանրական և առաքելական հասկացություններով է սահմանվել Եկեղեցու բնույթը վաղ դարերից՝ հիմնված Գիսուս Քրիստոսի՝ առաքյալներին տված հետրյալ պատգամի վրա. «Գնացե՛ք, ուրե՛մն, և բոլոր ժողովուրդներին իմ առակներն ընդհանրապես դարձրե՛ք: Սկսեցե՛ք նրանց Գոր, Որդու և Սուրբ Գոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց այն բոլոր դասվորանները, որ սվեցի ձեզ»:

Այս դասին ձեր զավակն ուսումնասիրեց սուրբգրային այն հատվածները, որոնք հիմքն են մեր հավատքի և հռչակում են Եկեղեցին որպես ընդհանրական և առաքելական: Սուրբգրային հատվածների հետ վաղ Եկեղեցու հայրերից Սբ Երանոս Լիոնցու և Սբ Կյուրեղ Երուսաղեմացու մտքերի համեմատության միջոցով աշակերտները հասկացան ընդհանրականության ճշմարիտ իմաստը, այն, որ Եկեղեցին, կառուցված առաքյալների և մարգարեների հիման վրա, պարունակում է այն լիարժեք ճշմարտությունը, որ Գիսուս Քրիստոսը հայտնեց ամբողջ աշխարհին Սուրբ Երրորդության և մեր փրկության մասին: Նաև իմացան, որ Եկեղեցու միասնությունը երաշխավորվում է առաքյալների կողմից քարոզված հավատքի պաշտպանությամբ և պահպանությամբ: Գիսուս Քրիստոսն աղոթում էր իր Եկեղեցու միության և միասնության համար: Մենք շարունակում ենք միջոցառել Եկեղեցու միասնության համար, իմանալով որ մենք կարիք ունենք Աստծո օգնության՝ պահպանելու այն ճշմարտությունը, որ Գիսուս Քրիստոսը տվեց մեզ առաքյալների միջոցով:

Ձեր պատանհան ծանոթացավ նաև Եկեղեցու միասնությունը վերականգնելու ջանքերին, որ սկսվել է Ուղղափառ Եկեղեցիների երկու ընտանիքների՝ Բյուզանդական Ուղղափառ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև, ովքեր միասնական են հավատի հարցում, սակայն բաժանվել են իրարից մարդկային տկար բնության հետևանքով: Որպես Եկեղեցու անդամներ՝ նրանց հորդորվում է աղոթել սույն միասնության վերականգնման համար: Քաջալերե՛ք ձեր զավակին միասին աղոթելու այդ նպատակի համար:

# 30. ՍՈՒՐԲ ԳԱՏԱՐԱԳՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Հետևաբար, ամեն անգամ, երբ ուտում եք այս հացը և խմում այս բաժակից, Տիրոջ մահն եք պատմում, մինչև նրա երկրորդ գալուստը»:

Ա Կորնթացիներին 11.26



## ՐԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Մարդկային յուրաքանչյուր հարաբերություն որևէ ժամանակ ունենում է բաժանության և դժվարության փորձառություն: Չոհարբերությունը մի ձև է, որի միջոցով մենք վերստին մոտենում ենք իրար: Անկախ նրանից, թե ամուսինն է զոհում իր ժամանակն ու դրամը կնոջը ծաղիկներ բերելու վեճից հետո, կամ թե պատանին է զոհաբերում իր ժամանակի մի մասը որևէ կարիքավորի օգնելու համար, արդյունքը միշտ նույնն է. մարդիկ ձգտում են մերձենալ իրար, խզված հարաբերությունը վերականգնվում է:



- Նկարագրի՛ր մի փորձառություն քո կյանքում, երբ դու որևէ բան զոհել ես մեկի համար: Կարելի է նկարել կամ գրել:

Շատ կրոններում զոհաբերություն մատուցելը կենտրոնական նշանակություն ունի, որով մարդկայինն ու աստվածայինը մերձենում են իրար: Հրեա-քրիստոնեական ավանդության մեջ զոհաբերությունը դարձավ անհրաժեշտություն Ադամի ու Եվայի մեղանշումից հետո, որպեսզի կամրջի Աստծո և մարդկանց միջև գոյացած վիհը:

- Հիմնվելով այն սահմանման վրա, որ զոհաբերություն նշանակում է արժեքավոր որևէ բան զիջել ավելի արժեքավոր բան ձեռք բերելու համար, որոշի՛ր, թե ներկայացված տարբերակներից ո՞ր մեկն է պատկերում ճշմարիտ զոհաբերություն և ✓ այսպիսի՝ նշում դիր դրա կողքին: Տրված օրինակներից ընտրի՛ր այն մեկը, որը բացարձակ զոհաբերության օրինակ է և ներքևի տետրակի էջի վրա գրի՛ր, թե ինչու ես այդպես կարծում:

Ա. Չնայած Հովնանն ուներ շաբաթն ընդամենը մեկ ազատ օր, բայց նա որոշեց այդ օրը լիովին նվիրել իր ընկերոջը՝ օգնելով նրան նորոգել իր հեծանիվը:

Բ. Չնայած որ Նանեի կարծիքով դա թանկ արժեք, բայց նա որոշեց իր խնայողություններից գումար ծախսել՝ գնելու նոր համակարգիչ: Այդ գումարը նա պետք է օգտագործեր Փարիզ մեկնելու համար:

Գ. Հենց որ տեսավ, որ բախումն անխուսափելի է, Գոռը մեքենան կառավարեց այնպես, որ բեռնատարի հարվածը հասնի մեքենայի իր կողմին: Դրա շնորհիվ նրա կինը և նորածին երեխան անվնաս մնացին:



Սբ Պատարագն օգնում է մեզ հասկանալ այս զոհաբերությունը: Կարդա՛ **Աստվածաշնչի** հարվածները, որպեսզի ավելի իմանաս Պատարագի Չոհարբերության կարևորության մասին:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՋԱՏԿԱԿԱՆ ԶՈՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԾՆՆՈՒՄ 22.1-14, ԵԼՔ 12.3-12, ԹՎԵՐ 15.22-28

Հին Կտակարանի մարդիկ գոհեր էին մատուցում Աստծուն՝ որպես միջոց հաշտության, գոհաբանության և իբրև նշան Աստծո հետ հարաբերության ամրապնդման: Կայենի և Աբելի գոհաբերությունը դրա առաջին օրինակներն են (ԾՆՆՈՒՄ 4.1-7): Չոհաբերությունը Հին Կտակարանում բազում ձևեր ուներ, գոհեր էին մատուցվում մեղքերի թողության, գոհաբանության և մի տեսակ ընդհանուր գոհաբերություն, որ կոչվում էր ողջակիզում: Կարդա՝ Հին Կտակարանի ներքևի հատվածները և տես, թե ինչպես էին դրանք արվում:

Եթե մեղանչեք և չկարարեք այն բոլոր պարվիրանները, որ Տերը փվեց Մովսեսին, ինչպես նաև այն հրամանները, որ Տերը Մովսեսի միջոցով փվեց ձեզ...: Քահանան դրանով քաված կլինի իսրայելացի ամբողջ ժողովրդի մեղքերը և թողություն կտա նրանց, որովհետև ակամա էր մեղանչել ժողովուրդը: Նրանք Տիրոջ հանդեպ ակամա գործած իրենց մեղքերի համար որպես ընծա պետք է Տիրոջը գոհ մատուցեն: Այսպես թող քավվեն բոլոր իսրայելացիների և օտարականների մեղքերը, որովհետև ակամա գործած մեղքերը վերաբերում են ամբողջ ժողովրդին: Եթե մեկը ակամա մեղք գործի, թող մի փարեկան էզ ու մատուցի մեղքերի քավության համար: Քահանան դրանով քաված կլինի ակամա մեղանչած անչի՝ Տիրոջ առջև ակամա մեղք գործողի մեղքերը, որպեսզի քավություն լինի նրա համար:

Թվեր 15.22-28



Այս դեպքերից հետո Աստված փորձեց Աբրահամին: Նա չայն փվեց նրան. «Աբրահամ, Աբրահամ»: Սա պարասխանեց. «Այստեղ եմ»: Աստված ասաց նրան. «Առ քո միակ որդուն՝ քո սիրելի Իսահակին, գնա՝ մի բարձրադիր տեղ և այնտեղ՝ լեռան վրա, որ ցույց կտամ քեզ, ողջակիզի՛ր նրան»: ...Աբրահամը երկարեց չեռքը, որ վերցնի դանակն ու մորթի իր որդուն: Տիրոջ հրեշտակը երկնքից չայն փվեց նրան ու ասաց. «Աբրահամ, Աբրահամ»: Սա պարասխանեց նրան. «Այստեղ եմ»: Նա ասաց. «Չեռք մի՛ փոր պարսնուն, նրան որևէ վնաս մի՛ պարճառիր, որովհետև այժմ համոզվեցի, որ դու երկյուղ ունես Աստծո նկատմամբ և ինչ համար չես խնայի քո որդուն»: Աբրահամը բարձրացրեց իր աչքերը և տեսավ, որ մացառուր թփի մեջ եղջյուրներից մի խոյ է կախված: Աբրահամը գնաց, առավ խոյն ու այն ողջակիզեց իր որդի Իսահակի փոխարեն: Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տերը տեսավ», և մինչև այսօր էլ ասում են՝ «Այդ լեռան վրա երևաց Տերը»:

Աբրահամը բարձրացրեց իր աչքերը և տեսավ, որ մացառուր թփի մեջ եղջյուրներից մի խոյ է կախված: Աբրահամը գնաց, առավ խոյն ու այն ողջակիզեց իր որդի Իսահակի փոխարեն: Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տերը տեսավ», և մինչև այսօր էլ ասում են՝ «Այդ լեռան վրա երևաց Տերը»:

ԾՆՆՈՒՄ 22.1-14

Դու խոսի՛ր իսրայելացի ողջ ժողովրդի հետ ու ասա՛. «Այս ամսի փրկանքի օրը ամեն մարդ թող մի ոչխար առնի ըստ իր ընտանիքի՝ ամեն մի տան համար մեկ ոչխար: Եթե մի ընտանիքի անդամներն այնքան քիչ են, որ չեն կարող մեկ ոչխար ուրել, ապա ընտանիքի մեծը, ըստ ընտանիքի թվի թող միանա իր հարևանի կամ ընկերոջ հետ, և յուրաքանչյուրը թող սրանա ոչխարի համապարասխան քաժիկը: Չեր այդ ոչխարը որևէ պակասություն թող չունենա, լինի արու, մեկ տարեկան ու անարար: ... և իսրայելացիներն այն թող մորթեն երկյուղյալ: Թող վերցնեն նրա արյունից ու քսեն այն տան դռան սեմին երկու տեղ ու դռան շրջանակի վերևը այն տան, ուր այն ուրելու են: ... Եվ կուրեք այսպես. չեր գոտիները թող չեր մեջքին լինեն, չեր կոշիկները՝ չեր ոտքերին, չեր ցուպերը՝ չեր չեռքին: Արագ կուրեք, որովհետև Տիրոջ զարկին է: Այդ գիշեր ես պիտի անցնեմ Եգիպտացիների երկրով և պիտի պարուռախան Եգիպտացիների երկրի բոլոր արու առաջնածիններին՝ թե՛ մարդկանց, թե՛ անասուններին: Եգիպտացիների բոլոր աստվածներից վրեժ պիտի լուծեմ, որովհետև ես եմ Տերը:



ԵԼՔ 12.3-12



## ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԶՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- Հին Կտակարանի բաժնում տարբեր տեսակի բազում գոհաբերություններ է նկարագրվում: Հետևյալ հատվածները խոսում են մեկ անձի մեծ գոհաբերման մասին: Հենց այս եզակի գոհաբերությունը բավական պիտի լիներ բոլոր մարդկանց համար: Կարդա՛ ներքևի հատվածները և պարզի՛ր, թե ո՞ւմ են վերաբերում այդ հղումները:

|   |  |
|---|--|
| <p style="text-align: center;"><b>Եսայի 53.7-8</b></p> <p><i>Ու նա վճեց իր բերանն անգամ չի բացում: Ինչդեռ չէր խոսում՝ նա մորթվելու և արվեց, և ինչդեռ գառ՝ անմոռունչ կանգնած է խուզողի առաջ և նրա նման իր բերանը չի բացում: Խոնար հուռքան շնորհիվ նրա դասն ասանը վերացավ, և նրա ազգաս ոհմի մասին ո՞վ էր լսում: Երկրի վրա վերջ է վիճնում նրա կյանքին. իմ ժողովրդի անօրենությունների դրոշմով նա մահվան մաս նվեց:</i></p> | <p style="text-align: center;"><b>Հովհաննես 1.29</b></p> <p><i>Չաջորդ օրը Հովհաննեսը և եսավ Հիսուսին, որ գալիս էր դեղի իրեն, և ասաց. - Ահա Աստուծո զառը, որ վերացնում է աշխարհի մեղքը:</i></p> |
|---|--|

1. Ըստ **Եսայի 53.7-8** համարների՝ ինչո՞ւ էր տվյալ անձը գոհաբերվում: Ո՞րն էր նրա տառապանքի նպատակը:
2. **Հովհաննես 1.29** համարում ո՞ւմ էր զուգահեռ գտնում **Եսայի 53**-ի Տառապող Ծառայի հետ: Ի՞նչ ընդհանուր պատկեր է օգտագործվում երկու հատվածներում նրանց երկուսի համար:
3. Աստվածաշնչից կարդա՛ **Ղևտազիներ 16.20-22** համարները: Քո կարծիքով՝ ինչպե՞ս են հիշյալ տողերը արտացոլում այն, ինչ Հովհաննես Սկրտիչն ասաց Հիսուսի մասին **Հովհաննես 1.29** համարում:

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ. ՀԻՇԱՏԱԿՈՒՄ ԵՎ ՀՈՉԱԿՈՒՄ

Մահանալու նախորդ գիշերը Հիսուս Քրիստոսը կիսեց զատկական ընթրիքն իր աշակերտների հետ, ինչպես որ իսրայելացիներն էին կատարում հնուց ի վեր՝ վերհիշելով և վերապրելով Զատկի գիշերը մատուցված գոհաբերությունը, որով Աստված փրկեց նրանց Եգիպտոսի գերությունից:

- Կարդա՛ **Ղուկասի Ավետարանի** քաղվածքը և ծանոթացի՛ր աշակերտներին ուղղված Հիսուսի խոսքերին և ստանա՛լիք հետևյալ հարցումների շուրջ.

1. Նշյալ հատվածում ո՞ր բառերն են հայտնում մեզ զատկական ընթրիքի՝ նոր գոհաբերության փոխակերպվելու մասին:
2. Որո՞նք ենք Հիսուս Քրիստոսի խոսքերը, որոնցով հրավիրում են մեզ վերհիշել և մաս ունենալ նրա գոհաբերությունից:

*- Ծայր ցանկացա իմ շարչարվելուց առաջ զարկական այս ընթրիքը չեզ հեղ սևել: Բայց ասում եմ չեզ, թե այլևս չեմ ուրեղու սրանից, միևնչև որ ճշմարիտ Զարիկը կարարվի Աստծո արքայության մեջ:*

*Ապա վերցրեց գինու բաժակը, շնորհակալություն հայտնեց Աստծուն և ասաց.*

*- Առե՛ք այս և փոխանցե՛ք միմյանց՝ խմելով սրանից: Ասում եմ չեզ, թե այսուհետև գինի չեմ խմելու, միևնչև որ չգա Աստծո արքայությունը:*

*Ապա հաց վերցրեց, շնորհակալություն հայտնեց Աստծուն, կտրեց և փրկեց աշակերտներին՝ ասելով.*

*- Այս է իմ մարմինը, որ չեզ համար է փրկած. կարարեցե՛ք այս իմ հիշարակի համար:*

*Նույն չեզով ընթրիքից հետո բաժակն էլ վերցրեց և ասաց.*

*- Այս բաժակն Աստծո նոր ուխտն է՝ կնքված իմ արյունով, որ հոսում է չեզ համար:*

Ղուկաս 22.15-20

Հիսուսը մահացավ, որպեսզի բժշկի մեր անկյալ մարդկային վիճակը, որը ենթարկվեց հիվանդությանն ու մահվանը Ադամի ու Եվայի անհնազանդության առաջին մեղքի պատճառով: Մարդիկ տառապում են տարբեր տեսակի հիվանդություններից՝ ֆիզիկական, մոլի կախվածության կամ հոգեկան ախտերով: Սուրբ Պատարագի արարողության ընթացքում աղոթի՛ր նրանց համար, ովքեր բժշկվելու կարիք ունեն:

**Բառարան**

**ՊԱՏԱՐԱԳ**

վերաբերում է Զատկի ընթրիքին, որը Հիսուսը կերավ իր աշակերտների հետ՝ փոխակերպելով այն նոր ուխտի իր մարմնով և արյամբ, որ թափեց խաչի վրա մեր փրկության համար: Այս ճաշը մի գոհություն է Աստծուն Հիսուս Քրիստոսի գոհաբերությամբ, ով դարձավ մեր հավիտենական զատկական գառը:

Սուրբ Հաղորդություն ընդունելիս մենք վերհիշում ենք այն գոհաբերությունը, որ Հիսուսը կատարեց երկրավոր իր կյանքի ընթացքում, ու մաս հռչակում ենք նրա երկրորդ գալուստը: Հացի և գինու ֆիզիկական ճաշակումը մեզ կապում է անցյալի հետ և նախաճաշակ տալիս մեզ գալիք բաների մասին: Այս կապը շատ հաճախ զգացվում է:

Տեսրակիդ մեջ նկարագրի՛ր մի ժամանակ, երբ Սուրբ Հաղորդություն ես ստացել և հատուկ կապ ես զգացել Քրիստոսի կամ Հայր Աստծո հետ:

## **ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

### **ՋԱՏԿԱԿԱՆ ԸՆԹՐԻՔՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հիսուս Քրիստոսը կոչում է մեզ հիշել իր կյանքը, մահը և հարությունը: Պատարագի ընթացքում քահանան կտրում է հացը և օրհնում այն, որով հիշատակվում է Հիսուսի մարմնական չարչարանքի մասին: Սուրբ Պատարագին կտրված հացը հիշեցնում է այն ընթրիքի մասին, երբ Հիսուսն ինքը կտրեց հացը և տալով իր աշակերտներին ասաց՝ սա է իմ մարմինը: Ինչպես Չատկի գառն էր ընտրվում, օրհնվում և զգուշությամբ մատուցվում, այնպես էլ արվում է հացի՝ Չատկի ընթրիքի «գառան» հետ:

Սուրբ Պատարագի ծիսական կառույցը բաղկացած է չորս մասերից.

#### **Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

Այս բաժինը կազմված է սաղմոսներից և աղոթքներից, քահանայի զգեստավորումից, լվացումից քահանայի և ժողովրդի երկուստեք մեղքերի խոստովանանք և թողություն, խորան բարձրացում և վարագույրի փակում և սկիհի պատրաստություն: Փակ վարագույրի ետևում հացի և գինու պատրաստությունը խորհրդանշում է Քրիստոսի մարդեղությունը և կուսական ծնունդը՝ մարդու փրկության համար:

#### **Բ. ՃԱՇՈՒ ԺԱՄ**

Պատարագի քահանան և խորանի սպասավորները թափոր կազմած իջնում են խորանից, և քահանան խնկարկում է եկեղեցու հավաքված հավատացյալներին: Թափորը նմանեցվում է մեր Տիրոջ երկրային առաքելությանը, որ երկնքից իջավ և բնակվեց մարդկանց մեջ: Խնկարկող քահանային մոտենալով հավատացյալները խաչակնքվում են, համբուրում են խաչը և խնդրում ասելով. «Հիշի՛ր մաև ինձ Աստծո անմահ գառան առաջ»: Քահանան պատասխանում է. «Հիշված եղի՛ր Աստծո անմահ գառան առաջ»: Թափորին հաջորդում է Փոքր Մուտքը, Սուրբ Գրքից ճաշու ընթերցվածները, Ավետարանի ընթերցումը և Հավատամքի դավանությունը: Ճաշու ժամը կոչվում է մաև Երախայից Պատարագ, որովհետև հին ժամանակներում մկրտության պատրաստվողներին արտոնվում էր եկեղեցում մնալ ճաշու ժամին, լսել Սուրբ Գրքի ընթերցումները, քարոզը և մասնավոր քրիստոնեական ուսուցումները: Բուն Պատարագի սկզբին երախաները գնում էին գավիթ և այնտեղից հետևում Սուրբ Պատարագի շարունակությանը:

#### **Գ. ԳՈՐՈՒԹՅՈՒՆ**

Սբ Պատարագի բուն մասն է, որով Եկեղեցին՝ Աստծո ժողովուրդը, կատարում է Տիրոջ պատվերը՝ վերապրելով Հիսուսի Վերջին ընթրիքը: Վերջին ընթրիքին Հիսուսը ա/ «վերցրեց հացը», բ/ «գոհացավ», գ/ «կտրեց» և դ/ «տվեց իր աշակերտներին»: Գոհության սույն բաժինը վերակոչումն ու վերապրումն է Վերջին ընթրիքին Հիսուսի կատարած հետևյալ չորս էական քայլերի. ա/ Մատուցում, որի ընթացքին սարկավազը հանդիսավորապես քահանային է վերաբերում հացն ու գինին՝ որպես հավատացյալների նվիրաբերում, բ/ Գոհություն, որում աղոթք է մատուցվում առ Սուրբ Հոգին՝ գալու և բնակվելու հացի ու գինու մեջ և դրանք փոխակերպելու մեր Տիրոջ Մարմնի և Արյան, գ/ Թաթախում և Բեկանում, որի ժամանակ քահանան երկրպագելով համբուրում է Սեղանը և հացը՝ Սուրբ Մարմինը, ամբողջությամբ թաթախում գինու՝ անապական Արյան մեջ, ապա Մարմինը մասերի բաժանելով զգում է Արյան բաժակի մեջ, դ/ Սուրբ Հաղորդություն, որի ընթացքում քահանան հավատացյալներին է բաշխում Քրիստոսի Մարմինն ու արյունը՝ մեղքերի քավության և թողության համար:

#### **Դ. ԱՐՁԱԿՈՒՄ**

Մինչ Սուրբ Պատարագը մոտենում է իր ավարտին, պատարագի քահանան իջնում է խորանից և կանգնում ատյանում, որտեղից էլ ընթերցվում է վերջին ավետարանը, և քահանան պահպանիչ աղոթքով ժողովրդին արձակում է «խաղաղությամբ գնալու»:


- Լուծի՛ր խաչբառը, ապա օգտագործի՛ր բառերը լրացնելու այն աղոթքը, որը քահանան արտասանում է Սուրբ Պատարագի ընթացքում: Այն ի՞նչ է հայտնում մեզ զոհաբերության մասին: Ո՞վ է, որ զոհաբերվում է, և ո՞ւմ համար:

**Հորիզոնական**

1. Քրիստոսի մայր Մարիամն ինչպե՞ս կոչվեց:
2. Աստծո Որդու ծնունդը միակն էր, որով նա կոչվեց \_\_\_\_\_:
3. Ո՞վ է Հիսուսը մեզ համար:
4. Ի՞նչ պարզևեց մեզ Քրիստոսը:
5. Հիսուսը մեզ փրկելու համար ի՞նչ զոհողության գնաց:

**Ուղղահայաց**

6. Բառ, որով բնութագրվում է Հիսուսի՝ Հոր և Սուրբ Հոգու հետ փառքը կիսելը:
7. Այն, ինչից վախենում էին բոլորը:
8. Քրիստոսն Աստծո Խոսքն է կամ \_\_\_\_\_:
9. Լինելություն կամ \_\_\_\_\_:
10. Հիսուսի մարդկային ծնունդը բնորոշող բառ՝ մարդանալ կամ \_\_\_\_\_:



\_\_\_\_\_ Որդի և \_\_\_\_\_ Աստված և անմահ \_\_\_\_\_, դու հանձն առար \_\_\_\_\_ միշտ կույս Սուրբ \_\_\_\_\_: Ո՞վ Քրիստոս՝ \_\_\_\_\_ մեր, դու մարդացար անփոփոխելի մնալով, \_\_\_\_\_ և քո մահով \_\_\_\_\_ կործանեցիր: Դու մեկն ես Սուրբ Երրորդությունից, \_\_\_\_\_ Հոր և Սուրբ Հոգու հետ: \_\_\_\_\_ Կույր մեզ:

Երբ մատուցվում են ընծաները՝ հացը և գինին, մենք հավատում ենք, որ Աստված ընդունում է դրանք և վերածում Քրիստոսի մարմնի և արյան: Ընծաների նվիրագործման ժամանակ քահանան արտասանում է հետևյալ աղոթքը, որից հետո հացը և գինին դառնում են Քրիստոսի մարմինը և արյունը:

*Երկրպագում և աղաչում ենք քեզ և խնդրում քեզնից, ո՞վ բարերար Աստված, քեզ հավիտենակից և էակից Սուրբ Հոգիդ ուղարկի՛ր մեր և այս ընծայի վրա: Որով օրհնի՛ր այս հացը և այն դարչրո՛ւ՝ ճշմարիտ մարմինը մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի: (Քահանան երեք անգամ այս ասելով խաչակնքում է ՝ հացը): Եվ օրհնի՛ր այս բաժակը և այն դարչրո՛ւ՝ սրույգ արյունը մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի: (՝ նույնը գինու համար): Որով օրհնի՛ր այս հացն ու բաժակը և դարչրո՛ւ՝ ճշմարիտ մարմինն ու արյունը մեր Տիրոջ և Փրկչի Հիսուս Քրիստոսի՝ փոխակերպելով դրանք քո Սուրբ Հոգով:*

**ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

Կարևոր է իմանալ, որ մենք չպետք է մոտենանք Սուրբ Հաղորդությանն առանց պատրաստության: Սբ Պողոս առաքյալն զգուշացնում է, որ նրանք, ովքեր այդպես են վարվում «դասարարություն են ուրում և խնում իրենց համար» (Ա Կորնթացիներին 11.29): Ինչևէ, եթե նախապատրաստվում ենք, հաղորդություն ստանալով մասնակցում ենք Քրիստոսի զոհաբերությանը, որն օգնում է մեզ ավելի մոտենալ նրան: Ահա մի քանի գործնական հուշումներ Պատարագին պատրաստվելու համար.

- ➔ Ծո՛ւմ պահիր առնվազն վաղ առավոտից, այսինքն՝ ոչինչ մի՛ կեր կամ խմիր Պատարագից առաջ:
- ➔ Եկեղեցում մասնակցի՛ր մեղքերի ընդհանրական խոստովանությանը և արտասանի՛ր Սբ Հովհան Ոսկեբերանի նախահաղորդության աղոթքը:
- ➔ Ամենակարևորը խաղաղության՝ մեջ եղիր բոլորի հետ: Ների՛ր քեզ նեղացնողներին:

**ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ**



Ինչպես արդեն հիշեցիր բժկվելու կարիք ունեցողներին, մտածի՛ր այն ոլորտների շուրջ, որտեղ ինքդ կարիք ունես բժկվելու:

Հիշի՛ր, որ երբ մասնակցում ես Պատարագին, ներկա ես այն զոհաբերությանը, որը քավում է մեղքերդ և դարմանում հոգիդ:

## ԵՐԳԵՆՔ

Սուրբ Պատարագի այն պահին, երբ պատարագիչ քահանան ծածկված խորանի ետևում պատրաստվում է նվիրագործված Սուրբ Հաղորդությունը բաշխելու հավատացյալներին, դպիրները ժողովրդի հետ միասին երգում են «Քրիստոս պատարագեալ» հետևյալ շարականը.

*Օրհնյա՛լ է Աստված: Քրիստոսը զոհվելով բաշխվում է մեր մեջ. Ալելուիա:*

*Իր Մարմինը մեզ է տալիս որպես կերակուր, և իր սուրբ արյունը ցողում է մեզ վրա. Ալելուիա:*

*Մորեցե՛ք Տիրոջը և սրացե՛ք լույսը. Ալելուիա:*

*Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, որ քաղցր է Տերը. Ալելուիա:*

*Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքում. Ալելուիա:*

*Օրհնեցե՛ք նրան բարձունքներում. Ալելուիա:*

*Օրհնեցե՛ք նրան իր բոլոր հրեշտակներ. Ալելուիա:*

*Օրհնեցե՛ք նրան բոլոր իր զորություններ. Ալելուիա:*

1. Հիշյալ շարականն ի՞նչ է հայտնում քեզ Սուրբ Պատարագի խորհրդի նշանակության մասին:
2. Համեմատի՛ր շարականում ներկայացված գաղափարներն արդեն իսկ անցած դասակարգված զոհաբերության հետ:

Moderato

Օրհ-նեալ է Աս-տու-ած: Քրիս-տոս պա-տա-րա-գեալ  
բաշ-խի ի մի-ջի մե-րում, ա-լե-լու-իա:

(Նոտաների շարունակությունը տես՝ **Հավելվածում**, էջ՝ 130):

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասին արծարծվում էր հարաբերությունները վերականգնելու նպատակով զոհաբերության անհրաժեշտությունը: Չնայած Հին Կտակարանում օգտագործվում էր տարբեր տեսակի զոհաբերություններ, մինչդեռ այսօր մենք պետք ունենք միայն մեկի՝ Հիսուսի զոհաբերությանը խաչի վրա: Պատարագը հիշատակությունն է և իրական մասնակցությունը հիշյալ զոհաբերության: Նրանով քրիստոնյաներս հիշում ենք Հիսուսի կատարածը և հասկանում, որ մեր մեղքերը ներվում են: Ուտելով և խմելով Քրիստոսի մարմինն ու արյունը՝ մենք տոնում ենք Քրիստոսի հարությունը մեռելներից և սպասում նրա վերադարձին, երբ բոլոր մահացածները պիտի կյանքի կոչվեն:

Հաջորդող առաջարկները միջոցներ են, որոնցով կկարողանաս նախապատրաստվել այս հանդիսավոր արարողությանը տանը՝ ընտանիքիդ անդամների հետ:

- Միասին արտասանեք Սբ Հովհան Ոսկեբերանի հետևյալ աղոթքը, որը պատարագիչ քահանան ծածուկ կարդում է Սուրբ Հաղորդությունից առաջ, և «Քրիստոս պատարագեալ» շարականը:
- Հատուկ աղոթքներ ասե՛ք Աստվածաշնչի դասին ցանկազարած անձանց բժշկվելու համար:

*Գոհություն եմ հայցում քեզ, մեծարում ու փառաբանում, ո՛վ իմ Տեր Ասված, որ ինձ անաճանհի, արժանի դարձրի այսօր հաղորդակից լինելու քո ասվածային և սուկալի խորհրդին՝ անարատ Մարմնիդ և ղաջակալան Արյանդ: Ուրեմն, այս բարեխոսությանն աղավիհելով աղաչում եմ, որ ինձ քո սրբության մեջ ղախես ամեն օր և իմ ամբողջ կյանքի ընթացքին, որդեսգի քո բարեգոթությունը հիշելով ես ևս քո կյանքին բաժնեկից լինեմ, դու, որ մեզ համար չարչարվեցիր, մահացար և հարություն առար: Ո՛վ իմ Տեր և Ասված, քո ղաջակալան արյունով կնքի՛ր իմ անձը, որդեսգի խոսակիչը չնոսենա ինձ: Ո՛վ ամենակարող, դու ես միայն ամենը, քո ղաջակալան արյունով մաքրի՛ր ինձ իմ բոլոր մահացու գործերից: Ո՛վ Տեր, ղաճոթանի՛ր ինձ ամեն փորձությունից, և իմ դեմ ղաճե՛րազմողին հեռացրու՝ ինձնից ամոթահար ու շվարած, որքան էլ որ ես իմ դեմ դուրս գա: Առաջնորդի՛ր իմ մտքի և լեզվի ընթացքը և իմ մարմնի բոլոր ծամփաները: Մի՛ ետ եղի՛ր ինձ հետ, քո անտուս խոսման համաձայն, թե «ով որ ուսի իմ Մարմնիդ և խմի իմ Արյունից, նա իմ մեջ կընակվի և ես նրա մեջ»: Ո՛վ մարդասեր, հաստատի՛ր ասվածային և անփակելի քո խոսումը, որովհետև դու ես Ասված ողորմության, գոթության և մարդասիրության, և ղաճակիչն ամեն բարիների, և քեզ՝ Հորդ և ամենասուրբ Հոգուդ հետ, վայելում է փառքը, այժմ և միշտ և հավիշյանս. ամեն:*

# ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ, ՄԵՂՔԵՐԻ ԲԱՎՈՒԹՅԱՆԸ...



Նիկիական Հանգանակում ասվում է նաև...

**«Հավատում ենք մեկ մկրտության, մեղքերի քավությանը և թողությանը, մեռելների հարությանը, ... և հավիտենական կյանքին»:**

Սույն գլխի չորս դասերը վերաբերում են Եկեղեցու կյանքին և Աստծո արքայությունը ժառանգելու ուրախ սպասումին:

**Դաս 31** ուսումնասիրում է քրիստոնեական մկրտությունը՝ որպես դուռ մեր փրկության տանող ճանապարհի:

**Դաս 32** դիտարկում է, թե ինչպես ենք ապրում մեր մկրտության շնորհները ներելու և ներում հայցելու գործողության միջոցով:

**Դաս 33** ընդգծում է մեր հավատքի կարևոր այն կետը, որ իբրև Քրիստոսի երկրավոր հետևորդներ մեզ խոստացվում է հավիտենական կյանք և բերկրանք Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալուստին, երբ բոլոր մահացածները հարություն պիտի առնեն:

**Դաս 34** հաստատում է մեր դավանանքը, որ հավատում ենք հավիտենական կյանքին: Մա կօգնի աշակերտներին ապրել հավիտենական կյանքի հույսով Եկեղեցում Աստծո արքայության նախաճաշակն առնելիս:



### ***Ծնողների համար***

9-րդ գլխում աշակերտները պիտի ուսումնասիրեն Նիկիական Հանգանակի վերջին սահմանումը, որն առնչվում է քրիստոնեական մկրտությանը մեղքերի թողության համար, մեռելների հարությանը և հավիտենական կյանքին:

Նախ նրանք կդիտարկեն քրիստոնեական մկրտությունը, որով մարդ դառնում է Եկեղեցու անդամ: Կյանքը Եկեղեցում այնուհետև շարունակվում է որպես մի ցմահ ճամփորդություն՝ ի Քրիստոս մեր փրկության սպասումով: Աշակերտներին հնարավորություն է տրվում տեսնել, թե ինչպես պետք է գործադրենք մկրտությամբ ստացած Սուրբ Հոգու շնորհները և ըստ այդմ ներենք և ներում հայցենք նրանցից, որոնց միզուցե նեղացրել ենք: Գիտակցական կերպով քրիստոսանման կյանք վարելը նախանշում է այն ճանապարհը, որը տանում է մեզ Աստծո արքայություն՝ հավիտենական կյանքով ապրելու Հիսուս Քրիստոսի հետ: Մենք բոլորս էլ սպասում ենք այդ ուրախալի օրվան Վերջին դատաստանին, երբ Քրիստոսը վերստին պիտի գա հարություն տալու բոլոր մահացածներին:

Քաջալերե՛ք ձեր զավակին ջանալու ապրել իր կյանքը Ավետարանի պատգամների համաձայն, Հիսուս Քրիստոսի օրինակով: Աջակցե՛ք նրան, եթե չկողմնորոշվեն և առաջնորդե՛ք դեպի Եկեղեցու խորհուրդները՝ որպես աղբյուր ներման և ուղղորդման: Ամենակարևորը նրա համար եղե՛ք նվիրյալ քրիստոնյայի օրինակ, ով ընդունում է կյանքի մարտահրավերները և Ավետարանի լույսի տակ չի վիստվում ձախողման դեպքում և նորոգում է իր մկրտության ուխտն Ապաշխարության և Հաղորդության խորհուրդների միջոցով:

# 31. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԿ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ

«Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն»:

Եփեսացիներին 4.5



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Ի՞նչ է տեղի ունենում նկարում: Նկարագրի՛ր մի քանի նախադասությամբ:

.....

.....

.....

.....

.....

.....



- Հավանաբար տեսած կլինես ծնողներիդ դպրոցական տարիների լուսանկարներ, որոնցում պատկերված են պիտներության, ապա կոմերիտության շարքերն ընդունվելու արարողակարգը: Խորհրդային շրջանում դպրոցական համազգեստի կարևորագույն բաղադրիչ էին համարվում կարմիր վզկապը և հոկտեմբերիկի կրծքանշանը: Քո կարծիքով ի՞նչ նպատակ ուներ այդպիսի արարողակարգը: Վերհիշի՛ր, թե ի՞նչ են արել քո ծնողները կամ ավագ սերնդի հարազատներդ հիշյալ միությանն անդամագրվելու համար: Գրի՛ր կամ նկարի՛ր դրա մասին:

*Հաջորդող էջերում տես՝, թե ինչպիսի՞ն է անդամագրվելու քրիստոնեական կարգը:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՄԵԿ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՂԹԵՐԻ ԶԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

### Մատթեոս 3.1-17, Հովհաննես 3.1-6

«Հավատում ենք մեկ մկրտության, մեղքերի քավությանը և թողությանը» ահա այսպես ենք հռչակում Նիկիական Հանգանակում «մեկ, սուրբ, ընդհանրական և առաքելական Եկեղեցու» նկատմամբ մեր հավատքը խոստովանելուց հետո: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը պարզեց մեզ մկրտությունը՝ որպես մուտք գործելու պայման դեպի իր Եկեղեցի:

Մկրտությունն արդեն գոյություն ուներ, մինչ Քրիստոսը կսկեր իր երկրավոր առաքելությունը: Մենք տեսնում ենք, որ Հովհաննես Մկրտիչը կատարում էր մկրտություն՝ ի նշան ապաշխարության և արդար կյանք ապրելու փափագի: Եստենականներ անունով հայտնի հրեաների խստակրոն խմբակը, որին Հովհաննեսն ամենայն հավանականությամբ ճանաչում էր, մկրտությունն օգտագործում էր նույն նպատակով:

Կարողա՞ սուրբգրային հետևյալ քաղվածքները, որպեսզի սկսես հասկանալ քրիստոնեական մկրտությունը:

Այն օրերին Հովհաննես Մկրտիչն սկսեց քարոզել Հրեասրանի անապատում՝ ասելով.

- Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է:

Այս Հովհաննեսն էր այն անձը, որի մասին Եսայի մարգարեն խոսել էր՝ ասելով. «Անապատում կանչողի ձայնն ասում է. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը, հարթեցե՛ք նրա ճակատները»:

Հովհաննեսն ուղղի մազից պարաստրված հագուստ ուներ և մեջքին՝ կաշվե գոտի: Նրա կերակուրը մորեխ ու վայրի մեղր էր: Երուսաղեմից, ամբողջ Հրեասրանից և Հորդանան գետի բոլոր շրջաններից մարդիկ գնում էին նրա մոտ և խոստովանելով իրենց մեղքերը՝ նրա ձեռքով մկրտվում էին Հորդանան գետում:



Երբ Հովհաննեսը տեսավ շատ սաղուկեցիների և փարիսեցիների, որոնք եկել էին մկրտվելու իրենից, նրանց ասաց.

- Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ասաց ձեզ, թե կարող եք փախել Աստծո գալիք պատճից: Այսուհետև գործո՞ւմ ցույց տվե՛ք, որ ապաշխարել եք: Դուք չեք մեջ մի՛ խորհե՛ք, թե կարող եք ազատվել պատճից՝ ասելով. «Մենք Աբրահամի որդիներն ենք»: Ես ձեզ ասում եմ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել: Կացինն ահա պարաստր է՝ կրելու ծառերն իրենց արմատներից: Այն ծառը, որ բարի պտուղ չի տա, պիտի կտրվի և կրակը գցվի: Ես ձեզ ջրով եմ մկրտում՝ իբրև նշան ապաշխարության, բայց նա, ով գալիս է ինչևից հետո, ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով: Նա ինչանից ավելի հզոր է, և ես նրա կոշիկները տանելու իսկ արժանի չեմ: Քամիարը նրա ձեռքին է. նա կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի շրեմարանում, իսկ հարող կայրի անշեջ կրակով:

Այն ժամանակ Հիսուսը Գալիլեայից Հորդանան գետը եկավ, Հովհաննեսի մոտ՝ մկրտվելու նրանից: Բայց Հովհաննեսն ընդդիմացավ նրան՝ ասելով.

- Ես պե՞տք է քեզնից մկրտվեմ, և դո՞ւ ես գալիս ինչ մոտ:

Հիսուսը պատասխանեց.

- Թո՛ւյլ տուր, որ այսպես լինի, որովհետև այսպես մենք կատարած կլինենք Աստծո արդար կամքը:

Եվ Հովհաննեսը թույլ տվեց: Հիսուսը մկրտվելուց հետո իսկույն դուրս ելավ ջրից: Եվ ահա երկինքը բացվեց, ու նա տեսավ Աստծո Հոգին, որ իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա: Երկնքից լսվեց մի ձայն, որ ասում էր.

- Դա՛ է իմ սիրելի Որդին, որ ունի իմ բարեհաճությունը:

Մատթեոս 3.1-17

Նիկողեմնոս անունով փարիսեցի մի մարդ կար, մի հրեա իշխան, որ գիշերով Հիսուսի մոտ եկավ և ասաց նրան.

- Վարդապե՛տ, զիտե՛նք, որ Աստծո կողմից ուղարկված ուսուցիչ ես, որովհետև ոչ ոք չի կարող գործել այն հրաշքները, որ դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի:

Հիսուսը պատասխանեց նրան և ասաց.

- Լա՛վ իմացիր, որ եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել Աստծո արքայությունը:

Նիկողեմնոսը հարցրեց նրան.

- Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է: Կարելի՞ քան է, որ կրկին մտնի իր մոր որովայնը և ծնվի:

Հիսուսը պատասխանեց.

- Հաստատ իմացիր, որ եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծո արքայությունը, որովհետև մարմնից ծնվածը մարմինը է, իսկ հոգուց ծնվածը՝ հոգի:

Հովհաննես 3.1-6



## ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՊԱՏԳԱՍԻ ՇՈՒՐՋ

1. Ինչո՞ւ էր Հովհաննեսը մկրտում մարդկանց:
2. Ինչո՞ւ էր Հովհաննեսը քննադատում փարիսեցիներին ու սադուկեցիներին, որոնք եկել էին իրենից մկրտվելու:
3. Ինչպե՞ս էր Հովհաննեսը տարբերակում իր կատարած մկրտությունը Հիսուսինից: Գտի՞ր այն պարբերությունը, որում կհանդիպես քո պատասխանին, և ինքնուրույն բառերով վերաշարադրի՞ր Հովհաննեսի ասածները Հիսուսի մասին:
4. Մատթեոսի և Հովհաննեսի ավետարաններից քաղված վերջին հատվածից երևում է, որ նա քաջատեղյակ էր, թե Հիսուսը կարիք չուներ մկրտվելու: Ի՞նչ հիմնավորում կարող ես գտնել առաջին պարբերության մեջ, թե Հովհաննեսը գիտեր, որ Հիսուսն է խոստացված Մեսիան, հետևաբար կարիք չուներ մկրտվելու:

## ԱՎԵԼԻՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Քրիստոնեական մկրտության նշանակության մասին մենք լրացուցիչ տեղեկություններ ենք իմանում Գործք առաքելոցից և առաջին քրիստոնյաներին ուղղված Սբ Պողոսի նամակներից: Խմբակիդ հետ կարդա՛ նշանակված հատվածը Սուրբ Գրքից և մտածի՛ր տրված հատվածին առնչվող հարցումների շուրջ: Պատրաստի՛ր մի ելույթ սույն հատվածից քո սովորածներից: Կարելի է կա՛մ դերախաղալ հատվածը, կա՛մ ընթերցել այն դասարանին, ապա հարցումներ տալու օգնությամբ հասկանալի դարձնել նրանց: Կարող ես գրել նաև սեփական հարցումներդ:

### Գործք առաքելոց 2.37-39

1. Ի՞նչ երկու բան մենք պետք է կատարենք, եթե ուզում ենք մեղքերի թողություն և Սուրբ Հոգու պարգևն ստանալ:

### Գաղատացիներին 3.23-29

1. Ի՞նչ են արել ի Քրիստոս բոլոր մկրտվածները:
2. Ի՞նչ արգելքներ են բաժանում նրանց, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են:

### Եփեսացիներին 4.1-6

1. Ո՞րն է եփեսացիներին ուղղված Սբ Պողոսի հորդորների նպատակը քրիստոնեական իրենց կոչմանն արժանի կյանք ապրելու համար:
2. Ինչո՞ւ է ասվում, որ մենք կարիք ունենք միայն մեկ մկրտության:

### Եփեսացիներին 4.30-32


1. Ինչի՞ համար է մեզ տրվում Սուրբ Հոգու պարգևը:
2. Ինչպե՞ս մենք պետք է ընդունենք Սուրբ Հոգու պարգևները:

### Տիտոս 3.3-7

1. Ինչպե՞ս է Աստծո ողորմությունը ցուցաբերվում մեզ՝ ըստ սույն հատվածում նշվածի:
2. Ի՞նչ է կատարվում մեզ հետ, երբ մենք «արդարանում ենք նրա շնորհով»:

### Ա Պետրոս 3.20-22

1. Ինչպե՞ս է մկրտությունը նմանվում Նոյյան տապանում հանգրվվանածների հետ կատարվածի հետ:
2. Ի՞նչ չէ մկրտությունը՝ ըստ այս հատվածի:



## Բառարան

### ԴՐՈՇՄ

Խորհուրդ, որն անմիջապես հաջորդում է Մկրտությանը: Դրոշմելիս քահանան նոր մկրտվածին օծում է սրբալույս մյուռոնով:

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Սուրբ Մկրտության և Դրոշմի խորհուրդը հաճախ տարբեր կերպ է ընկալվում քրիստոնյաների կողմից: Եկեղեցին գերադասում է սույն երևույթը որակել որպես «հոգևոր խորհուրդ», քանի որ Աստուծո շնորհի ներգործումը հեշտ չէ բացատրել և մարդկայնորեն ընկալել: Կարդա՛ հետևյալ քաղվածները Սուրբ Մկրտության և Դրոշմի խորհրդակատարությունից և օգտագործի՛ր այսօրվա ավետարանական ընթերցվածը և համաբարբառը՝ դատարկ տողերը լրացնելու համար: Ներկայացրո՛ւ պատասխաններդ դասարանին:

➔ Բոլորը հրաժարվում են սատանայից և չարի բոլոր գործերից:

Սույն գործողությունը հիշեցնում է մեզ Քրիստոսի հետևյալ ուսուցումը. «Ոչ որ չի կարող ծառայել ..... տիրոջ: Նա կսիրի մեկին և ..... մյուսին:



➔ Այա ներկաները քահանայի առաջնորդությամբ արտասանում են Առաքելական Հավատամքը:

Նրանք խոստովանում են և հավատում Ամենասուրբ Երրորդությանը, այսինքն՝ Աստված գոյություն ունի որպես Հայր, ....., և .....

➔ Քահանան սրբագործում է մկրտության ավազանի ջուրը:

Սույն գործողությունը հիշեցնում է մեզ Քրիստոսի ..... մասին: Երբ Քրիստոսը ընկղմվեց ..... մեջ, սրբագործեց աշխարհի ամբողջ ջրերը:



«Դավաճում ենի»



➔ Քահանան երեխային երեք անգամ ընկղմում է ջրում և դուրս հանում ջրից Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Ջրում ընկղմվելը խորհրդանշում է Քրիստոսի հետ մահանալը, իսկ ջրից դուրս գալը՝ նրա հետ .....

➔ Սրբալույս մյուռոնով, որը Սուրբ Հոգու խորհրդանշան է, օծվում է նոր մկրտվածի ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկունքը և ոտքերը: Մարմնի հիշյալ մասը մյուռոնով խաչանիշ դրոշմելիս քահանան ասում է. «Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը...»:

Դրոշմը հաջորդում է մկրտությանը, որովհետև Հոգին Քրիստոսի վրա իջավ մկրտությունից .....



## ՄԲ ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՆ՝ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4-րդ դարում Սբ Կյուրեղ Երուսաղեմացին բավական գրել է քրիստոնեական հավատքի տարբեր կողմերի մասին իր հեղինակած «Քրիստոնեական» գրվածքում: Նրա 3-րդ բանախոսությունը նվիրված է Սկրտության կարևորությանը և նրա ներգործությանը:



*Եթե դու նույնպես ունես աննահանջ բարեպաշտություն, Սուրբ Հոգին իջնում է նաև քեզ վրա և Հոր չայնը արձագանքում է քո մեջ, ոչ թե «Մա է իմ Որդին», այլ «Մա հիմա իմ որդին է դարձել», բանի որ առաջինը վերաբերում է միայն Տիրոջը, որովհետև «Սկզբից էր Բանը և Բանը Աստուծո հետ էր և Բանը Աստված էր»: Գու որդի չես բնութայն, այլ որդեգրության արժանացել ես ընդունելությանը: Նա հավիտենապես «գոյություն ունի», իսկ դու սրբանում ես շնորհն առաջադրվելով:*

**Սբ Կյուրեղ Երուսաղեմացի. Քրիստոնեական III**

- Կարդա՝ հետևյալ քաղվածքը 3-րդ բանախոսությունից և **Եփեսացիներին 1.1-6** հատվածը՝ Աստվածաշնչից: Ո՞րն է ընդհանուր պատգամը երկու հատվածներում: Գրի՛ր մեկ կամ երկու նախադասություն այս ուղղությամբ:

## ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ. ԾԱՆԱՊԱՐՅ ԴԵՊԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՈՉ ԵՐԱՇԽԻԶ

Սկրտության և դրոշմի միջոցով մենք ձեռնամուխ ենք լինում ապրելու Եկեղեցու կյանքով՝ Քրիստոսի կյանքով, և ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը: Այսուհանդերձ, մկրտությունը միայն ճանապարհ է դեպի փրկություն, այլ ոչ թե երաշխիք փրկության: Ուրեմն, մեծագույն հարցումն այն է, թե ինչպե՞ս ենք ձեռք բերում փրկություն:

- Կարդա՝ Եփեսոսի քրիստոնյաներին ուղղված Սբ Պողոսի խոսքերը և խորհրդածի՛ր դրանց շուրջ: Ապա Աստվածաշնչից գտի՛ր **Մատթեոս 25.14-30** հատվածը և ընթերցի՛ր ուշադրությամբ: Ներքևում ցանկագրված հարցումների օգնությամբ ինչպիսի՞ կենսակերպ ես նկարագրված տեսնում, որն առաջնորդում է մարդուն դեպի փրկություն:

*Մի՛ փրպմեցրեք Աստուծո Սուրբ Հոգին, որով կնքվեցիք փրկության օրվան հասնելու համար: Արմատարիսի՛լ արեք չեզնից ամեն դառնություն, բարկություն ու գայրույթ, գոռգոռոց և հայիոյություն և այդպիսով կանխած կլինեք դրանց չար հետևանքները: Միմյանց հանդեպ քաղցր ու գթած եղե՛ք՝ ներելով միմյանց, ինչպես Աստված ներեց մեզ Քրիստոսի միջոցով:*

Եփեսացիներին 4.30-32

- Բառերի կամ նկարների միջոցով ուրվագրի՛ր քեզ համար այն կենսակերպը, հիմնված մեր Տեր Հիսուս Քրիստոսի ուսուցումների և օրինակի վրա, որով կկարողանաս հավատարիմ մնալ Սկրտությանը և Դրոշմով ստացած պարգևներին: Ներկայացրո՛ւ քո ծրագիրը թղթի վրա, որը կարող ես պահել իբրև հիշեցում քեզ համար:

1. Քանքարների մասին առակի ո՞ր մասերը կարող են համեմատվել Սուրբ Հոգու շնորհն ստացած մարդկանց հետ:
2. Ըստ երկու ընթերցվածների, ինչպե՞ս է լինում, որ մենք «թաքցնում ենք մեր տաղանդները» կամ «տրամեցնում ենք Սուրբ Հոգուն»: .
3. Հակառակ դեպքում ինչպե՞ս է լինում, որ մենք բազմացնում ենք մեր «տաղանդները»:

## ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԱՆ

Քահանան նոր մկրտված երեխային դրոշմում է սրբալույս մյուռոնով, որից հետո երեխային հագցնում են նոր ճեմնակ զգեստներ: Այս ընթացքում երգվում է Հարության ԲՁ շարականը: Քո կարծիքով՝ ինչո՞ւ է ընտրված հենց այս շարականը և ի՞նչ է նշանակում «Նոր Իսրայել կոչվեցինք» արտահայտությունը: Պատասխանն իմանալու համար կատարի՛ր ուսուցչի կողմից տրվող հանձնարարությունը:

*Քրիստոսին միանալով՝ Նոր Իսրայել կոչվեցինք,  
Տիրոջ ժառանգությունը եղանք և Քրիստոսին ժառանգակից դարձանք,  
որպեսզի Տիրոջ անվանն ապավինենք և օրհնենք նրան բարձունքներում:*

66  
Նո - ր Իս - րա - յէլ կո - չե - ցաք ի Քրիս - տոս

67  
ե - դա - ք բա - ժին Տեառն եւ ժա - ռան - գա - կից - Քրիս -

68  
տո - սի. զի գա - նուն Տեա - ռըն կար - դաս - ցուք

69  
եւ տուք օրի - նու - թին ի բար - ծունս:

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Իր մկրտությանը Հիսուս Քրիստոսը տիպար օրինակ տվեց մեզ մեր իսկ մկրտության համար՝ ցույց տալով, թե ինչ պետք է անել Տիրոջը հետևելու համար: Ինչպե՞ս է սա ազդում քո կյանքին: Ինչպե՞ս է այն արդեն փոխել կամ պիտի փոխի քո մտածելակերպը կամ ապրելակերպը:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ունի սովորեցնել աշակերտին Սուրբ Սկրտության և Դրոշմի նշանակության ու կարևորության մասին վաղ եկեղեցում:

Ձեր զավակին ներկայացվեց եկեղեցու ծիսական ավանդությունը Սուրբ Սկրտության և Դրոշմի արարողության քաղվածքների և շարականների միջոցով, որպեսզի ցույց տրվի, թե ինչի էր վաղ եկեղեցին հավատում և ինչ էր ուսուցանում Սուրբ Սկրտության և Դրոշմի մասին:

Մեր երիտասարդներն իրազեկ դարձան Սկրտության հիմնական կարևորությանը՝ որպես միակ ճանապարհ դեպի եկեղեցու կյանք՝ փրկության ուղի, որը, սակայն, երաշխիք չէ փրկության: Սուրբ Հոգու շնորհը, որ ստանում ենք Սկրտության և Դրոշմի ժամանակ, պետք է ամրապնդվի սուրբ և բարեպաշտ կյանքով:

Ձեր զավակին հրավիրե՛ք ձեզ հետ քննարկելու, թե ինչ սովորեց Սուրբ Սկրտության և Դրոշմի մասին և թե ինչ է այն թելադրում բոլոր նրանց, որոնք ցանկանում են հետևել Քրիստոսին: Ծրագրե՛ք կանոնավոր կերպով զրուցելու այն ուղիների մասին, որոնցով երիտասարդները կարող են սնուցել Սկրտությամբ ստացած շնորհները կյանքում և ինչպես դուք, որպես ծնող, կկարողանաք սնուցել ձեր կյանքում: Քաջալերե՛ք ձեր երիտասարդին փոքրիկ օրագիր պահելու և կանոնավոր գրառելու, թե ինչպե՞ս է ծրագրում ամրապնդել Սուրբ Հոգու շնորհն իր կյանքում: Նմանատիպ գրառումներ կատարե՛ք նաև ինքներդ և ժամանակ առ ժամանակ քննարկումներ անցկացրե՛ք ձեր զավակի հետ ձեր իսկ փորձառությունների վերաբերյալ:

## 32. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՂՔԵՐԻ ՔԱՎՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԹՈՂՈՒԹՅԱՆԸ



«Նա մեզ ազատեց խավարի իշխանությունից և բերեց իր սիրելի Որդու իշխանության տակ: Եվ Որդին փրկեց մեզ՝ իր զոհագործական մահվամբ թողություն տալով մեր մեղքերին»:

Կողոսացիներին 1.13-14



### ՉԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Լինում են պահեր, երբ բոլորս էլ սխալվում ենք: Երբեմն մեր արածը փչացրել կամ խզել է մեր հարաբերությունը մյուսների հետ: Նայի՛ր գլուխկոտրուկի բաժանված մասերին: Գրի՛ր, թե նշված երևույթներից յուրաքանչյուրն ինչպե՛ս կարող է հարաբերություն փչացնել:



- Գլուխկոտրուկը լրացրո՛ւ այնպիսի բառերով կամ նկարներով, որոնք ի գորու կլինեն վերականգնել խզված հարաբերությունները: Ներքևի տողերի վրա նկարագրի՛ր խզված հարաբերությունը վերականգնելու ուրախությունը:

---

---

---

---

---

---

---

---

*Աստվածաշնչի դասում բացահայտի՛ր ներելու միջոցով հարաբերությունները կարգավորելու կարևորությունը:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՄԵՂՔԵՐԻ ԶԱՎՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԹՈՂՈՒԹՅԱՆԸ

Մատթեոս 6.14-15, Ղուկաս 7.36-50, 23.32-34

Նիկիական Հանգանակն արտասանելիս մենք հռչակում ենք, որ հավատում ենք նաև *մեղքերի քալոթյանը և թողությանը*: Կարդա՛ սուրբգրային հետևյալ հատվածները և մտորի՛ր դրանց շուրջ: Ընթերցելիս ուշադիր եղի՛ր բանալի կապակցություններին, որոնք պատկերում են Հիսուսի՝ մեզ ողորմելու և մեր մեղքերը ներելու կարողությունն ու կամեցողությունը:

*Այո՛, եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, չեք երկնավոր Հայրն էլ չե՞զ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, չեք Հայրն էլ չե՞զ չի ների չեք հանցանքները:*

Մատթեոս 6.14-15

Փարիսեցիներից մեկը խնդրում էր Հիսուսին, որ միասին ճաշեն: Հիսուսը գնաց նրա տուն և նստեց ճաշելու: Քաղաքում մի պռունկի կին կար, որ երբ լսեց, թե Հիսուսը փարիսեցու տունն է, մի շիշ անուշահոտ ազնիվ յուղ վերցնելով՝ եկավ փարիսեցու տուն: Նա, հեղուկ կողմից Հիսուսի ոտքերի մոտ կանգնած, լաց էր լինում, արցունքներով թրջում էր նրա ոտքերը և մազերով սրբում, համբուրում էր ոտքերը և յուղով օծում: Փարիսեցին, որ հրավիրել էր Հիսուսին, տեսնելով այս՝ ասում էր ինքն իրեն.

- Եթե այս մարդը մարգարե լիներ, ասպա կհիմանար, թե ո՞վ է իրեն մոտեցող այս կինը, և թե ինչպիսի՞ մեղավոր կյանքով է ապրում նա:

Հիսուսն ասաց փարիսեցուն.

- Միմո՛ն, քեզ ասելու բան ունեն:

- Ասա՛, Վարդապե՛տ,- ասաց նա:

Հիսուսն ասաց.

- Մի փոխարու երկու պարտապաններ ունեք, մեկը հինգ հարյուր արծաթ դրամ պարտք ունեք, իսկ մյուսը՝ հիսուն: Երբ նրանք չկարողացան դրամը վերադարձնել, պարտավերը երկուսին էլ պարտքը զիջեց: Հիմա դո՛ւ ասա, այս երկու պարտապաններից ո՞ր մեկն ավելի կսիրի նրան:

Միմո՛նը պարտասխանեց.

- Ինչ այնպես է թվում, թե նա, ում ավելի շար շնորհեց:

- Ծի՛շբ դարեցիր,- ասաց Հիսուսը:

Ապա դառնալով կնոջ կողմը՝ շարունակեց.

- Միմո՛ն, տեսնո՞ւմ ես այս կնոջը: Ես տունդ մտա, բայց դու ոտքերս լվանալու համար ջուր չբվեցիր, մինչ սա իր արցունքներով թրջեց ոտքերս և իր մազերով սրբեց: Դու քարի զարուստի մի համբույր չբվեցիր ինչ, մինչ սա տունդ մտնելուցս ի վեր չդադարեց ոտքերս համբուրելուց: Դու յուղով իմ գլուխը չօծեցիր, մինչ սա անուշահոտ յուղով ոտքերս օծեց: Ուստի ասում եմ քեզ, քանի որ նա շար սիրեց ինչ, իր բազմաթիվ մեղքերը ներված են իրեն: Քանզի ում ավելի են ներում, նա ավելի սեր է ցույց տալիս. իսկ ում քիչ են ներում, նա ավելի քիչ է սիրում:

Ապա ասաց կնոջը.

- Քո մեղքերը ներված են քեզ:

Նրանք, որ միասին սեղան էին նստել, սկսեցին ասել իրենց մտքում.

- Ո՞վ է այս մարդը, որ նույնիսկ մեղքերն է ներում:

Իսկ Հիսուսն ասաց կնոջը.

- Քո հավատը քեզ փրկեց. գնա՛ խաղաղությամբ:

Ղուկաս 7.36-50


Երկու ուրիշ չարագործների էլ քերեցին, որպեսզի սպանվեն Հիսուսի հետ: Երբ հասան Գանգ կոչված վայրը, այնտեղ իսաչեցին Հիսուսին և երկու չարագործներին, մեկին՝ Հիսուսի աջ կողմը, մյուսին՝ շախ կողմը:

Հիսուսն ասաց.

- Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում:

Ապա վիճակ գցելով՝ զինվորները նրա զգեստները բաժանեցին իրենց մեջ:

Ղուկաս 23.32-34



## ԽՈՐՀԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ

- Քո խմբի հետ քննարկիր հետևյալ հարցումները, որոնք հիմնված են սուրբգրային ընթերցվածների վրա.
1. **Մատթեոս 6.14-15** հատվածում բացահայտվում է, որ Հիսուսն ի զորու է ներելու մեր մեղքերը, եթե մենք անում ենք մեր բաժինը և ներում մյուսների մեղքերը: Որքանո՞վ է սա ավելի օգտակար մեզ համար, քան եթե հարկադրված չենք եղել ներել մեր դիմացիներին, որպեսզի ստանանք Աստծո թողությունը:
  2. Մեղավոր անցյալով ապրող մի կնոջ մասին է խոսվում **Ղուկաս 7.36-50** հատվածում: Սակայն Հիսուսը, իմանալով հանդերձ նրա անցյալը, ներեց նրան: Հիսուսի ներելու այս արարքն ի՞նչ է հուշում մեզ իր բնության մասին: Սույն հատվածն ինչպե՞ս է հույս ներշնչում բոլոր նրանց, ովքեր կարծում են, թե իրենց գործած մեղքերի դիմաց արժանի չեն քավության:
  3. **Ղուկաս 23.32-34** հատվածում նշմարի՞ր, որ Հիսուսը պատրաստ է ներելու նույնիսկ նրանց, որոնք մասնակից են եղել իր խաչելությանը: Ինչպե՞ս է Տիրոջ անմիջական ներելու արարքը օրինակ դառնում մեզ համար, որպեսզի մենք ևս նույնպիսի ներողամտություն ցուցաբերենք:

## ԴԻՄԵՆՔ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԻ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ

- ➔ Համաբարբառի օգնությամբ Աստվածաշնչից գտիր հետևյալ հատվածները, որոնք վերաբերում են Քրիստոսի ներելու կերպին. «Ների՛ր, և դու ներում կգտնես»:
- ➔ Չմոռանաս նշել Աստվածաշնչի գրքի անունը, որում սույն միտքը կարելի է գտնել, ինչպես նաև գլուխը և համարները:

## ՍԲ ԵՓՐԵՄԸ՝ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սբ Եփրեմ Խորի Ասորին՝ Առաջին Տիեզերական ժողովին մասնակից հայրերից մեկը, մեկնաբանում է, թե ինչու՞ մենք պետք է ներենք մեր դիմացիներին առանց երկմտության.

*Տերը շարք տեղին ասաց. «Իմ բեռը թեթև է»: Ուրեմն, ի՞նչ բեռի մասին է խոսքը, ի՞նչ աշխատանքի, որպեսզի ներես եղբորդ քո հանդեպ գործած հանցանքի համար: Թեթև է, անշուշտ, ոչնչի հավասար, որ մենք պեպք է սեփական կամքով ներենք ու մոռանանք և արդարամիտ գրնվենք: Տերը չասաց մեզ, թե ինչ հարսություն կամ զոհեր կամ մանուկներ կամ ծով կամ խոկում մատուցեք, որպեսզի հանկարծ թե չասես ես այդպիսի բան չունեմ, ես չեմ կարող այդպիսի բան անել: Այլ այն, ինչ թեթև է ու հեշտ և արագ կատարվող: Տերը հեղեղալի է պարզվիրում մեզ անել ների՛ր եղբորդ քո դեմ գործած սխալների համար, և ես էլ կներեմ քեզ Իմ դեմ գործածների համար:*



- Փոքր խմբերով քննարկե՛ք և գրե՛ք ձեր պատասխանները հետևյալ հարցումների վերաբերյալ.
1. Ինչո՞ւ է դժվար մեզ համար երբեմն ներել մյուսներին:
  2. Ինչո՞ւ է Սբ Եփրեմն ասում, թե ներելու արարքը չպետք է ծանր բեռ համարվի:
  3. Ինչպե՞ս է Սբ Եփրեմի գրվածքի վերջում ներկայացված Քրիստոսի պատվիրանը համեմատվում ըստ համաբարբառի աստվածաշնչյան ընթերցումների հետ:
  4. Իմանալով, որ բոլորն էլ մեղանշում են, արդյոք այն հեշտացնո՞ւմ, թե՞ դժվարացնում է քո գործը ներելու մարդկանց գործած հանցանքների համար:

# ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սուրբ Սկրտության խորհրդով մենք սկսում ենք մեր կյանքը Եկեղեցում: Սկրտության շնորհն ստանալով պարտականություն ունենք ինքներս մեզ հոգեպես առողջ պահել և ապրել աստվածահաճո կյանք: Երբեմն, սակայն, մենք չենք ապրում այնպիսի կյանք, որով կփառաբանվենք Աստված: Մեր կյանքի ընթացքով փառաբանում ենք աստանային, որը միշտ բաժանում և անջատում է մեզ Աստծուց: Մեր հոգին ապակամոջ թույլներից մաքրելու նպատակով Եկեղեցին առաջարկում է մեզ ապաշխարության խորհուրդը:

Ապաշխարել նշանակում է ինքդ քեզ հաշտեցնել Քրիստոսի հետ, երբ ինքդ քեզ օտարացրել ես Տիրոջից: Ինչպե՞ս ենք իմանում, որ շեղվել ենք: Կա՞ն արդյոք կանոնակարգեր, որ Եկեղեցին տալիս է մեզ՝ հոգևոր առումով ուղիղ ընթացքի մեջ գտնվելու համար:

Շատերն ամաչում են ապաշխարությունից կամ մեղքերի խոստովանությունից, որովհետև կարծում են, թե այնքան էլ մեծ մեղքեր չենք գործել և ապաշխարելու կարիք չկա: Շատերը նաև կարծում են, թե կարող են իրենց մեղքերն ուղիղ Աստծուն խոստովանել՝ առանց քահանայի: Ո՞րն է քահանայի ներկայությամբ խոստովանելու օգուտները: Քահանան կոչված չէ դատելու, այլ օգնելու հեշտացնել հաշտեցումը և ուղղորդելու մեզ Քրիստոսով կյանք ապրելու համար: Աստված ողորմած է նրանց հանդեպ, ովքեր անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում շեղվելուց հետո վերականգնելու իրենց հաղորդությունը Տիրոջ հետ, քանզի **Ա Հովհաննես 1.9** ասվում է. «*Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, վստահ եղեք, թե Աստված, որ արդար է, կների մեր մեղքերը և մեզ կարթի մեր բոլոր անհրաժեշտություններից*»:

- Ներքևի տողերին գրի՛ր խոստովանելու հետ կապված քո փորձառության մասին: Ինչպե՞ս էիր քեզ զգում նախապես: Խոստովանությունն ի՞նչ տվեց քեզ: Եթե երբեք չես մասնակցել խոստովանության կարգին, մտածի՛ր և գրի՛ր, թե ինչո՞ւ և ի՞նչն է քեզ ետ պահել դրանից:

---

---

---

---

---

Կարդա՛ արձակման աղոթքը, որը քահանան կարդում է ապաշխարողների համար խոստովանության վերջում.

*Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր, Տե՛ր, ողորմի՛ր.*

*Մարդասերն Աստված թող ողորմի չեզ և թողություն շնորհի չեղ բոլոր մեղքերին, թե՛ խոստովանված և թե՛ մոռացված: Եվ ես ինչ տրված քահանայական իշխանությամբ և մեր Տիրոջ Հիսուսի՝ իր աշակերտներին տրված հրամանի զորությամբ, թե՛ «ինչ որ արչակեք երկրի վրա, արչակված կլինի երկնքում», նույն այս խոսքի համաձայն, արչակում եմ չեզ չեղ բոլոր մեղքերից, լինեն դրանք գործված մարքով, խոսքով կամ գործով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Եվ վերստին հանձնարարում եմ չեզ, որ հաղորդակից մնաք Սուրբ Եկեղեցու խորհուրդներին, որպեսզի ինչ բարի գործ որ անեք, ծառայի չեղ օգտին և հավիտենական փառքին. ամեն:*

- Ընդգծի՛ր աղոթքի բանալի բառերը կամ կապակցությունները, որոնք ըստ քեզ աչքի են ընկնում: Նշի՛ր յուրաքանչյուր բառը կամ կապակցությունը քարտի վրա: Դարձերեսին գրի՛ր, թե ինչո՞ւ են դրանք իմաստավոր քեզ համար: Փոքր խմբերով բացահայտի՛ր գրածդ և ասա՛, թե քո կարծիքով ո՞րն է նպատակադրված պատգամն ապաշխարողի համար:

### Բառարան

#### ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր կարգապահությունն կոչված մեր կյանքը Քրիստոսի վրա վերակենտրոնացնելու:



## ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԵՐ

Եկեղեցին ծառայում է որպես մեր հոգիների հիվանդանոց: Ինչպես բժիշկն է դեղորայք նշանակում հիվանդության բուժման համար, այնպես էլ ապաշխարության արժանի գործերը նման են դեղամիջոցների, որոնք նախատեսված են հոգու ախտերը բուժելու համար: Ահա թե ինչու է ապաշխարությունը համարվում ոչ թե պատիժ, այլ հոգևոր կարգապահություն, որը նպատակ ունի վերակենտրոնացնելու մեր կյանքը Քրիստոսի վրա: Մեղավորի համար ապաշխարություն հաճախ նշանակվում է քահանայի կողմից, և վերջինիս է վերապահված ապաշխարելու կերպի և տևողության սահմանումը:

\* Կարդա՝ հետևյալ տարբերակները և համապատասխանեցրո՛ւ, թե ապաշխարության ո՞ր գործն է պատշաճում ներկայացված յուրաքանչյուր տարբերակին, և ըստ այդմ՝ նշված տառը գրի՛ր թվի առջևի գծիկի վրա:

### ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. Երանուհին խոստովանում է, որ թերանում է ամենօրյա աղոթքի մեջ:
2. Ոսկանը խոստովանում է, որ ըստ պատշաճի միշտ չի պատրաստվում Սուրբ Հաղորդության սկիհին մոտենալու համար:
3. Աղավնին խոստովանում է, որ շատ չի հաճախում եկեղեցի և կիրակի օրերը զբաղված է անկարևոր գործերով:
4. Ջարեիր խոստովանում է, որ անցյալ շաբաթ զգեստների խանութից գողացել է մի շապիկ և մի տաբատ:
5. Գիսակը խոստովանում է, որ թերանում է Սուրբ Գրքի ամենօրյա ընթերցանության մեջ:

### ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԵՐ

- Ա. Շաբաթ օրը երեկոյան կարդա՛ կիրակնօրյա ճաշու ընթերցվածները և ծո՛ւն պահիր մինչև առավոտ:
- Բ. Վերադարձրո՛ւ գողացված իրերը, եթե հնարավոր է, և կամավոր աշխատանք կատարի՛ր համայնքի համար, քանի որ այն գողացվել էր համայնքից:
- Գ. Ամեն օր կարդա՛ առնվազն մեկ գլուխ Աստվածաշնչից:
- Դ. Արտասանի՛ր առավոտյան և երեկոյան աղոթքներ, ինչպես նաև աղոթի՛ր մյուսների համար:
- Ե. Ամեն կիրակի հաճախի՛ր Պատարագին և աշխատի՛ր այդ օրը

## ՆԵՐԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման, որը հիշատակությունն է Եղեմի դրախտում Ադամի ու Եվայի պատվիրանգանցության և գործված մեղքի հետևանքով դրախտից վտարվելու: Մեղքի պատճառով խզվեց բնական կապը մարդու և Աստծո միջև, որով մենք միշտ կարիքն ունենք հաշտվելու Աստծո հետ և հաշտեցնելու մեր կյանքը Քրիստոսի հետ: Այս բանն անելու համար մենք պետք է ներողամտության միջոցով հաշտեցնենք մեր հարաբերությունները միմյանց նկատմամբ: Ներողամտության թեման լավագույնս արծարծված է Անառակ որդու առակի մեջ, որը Մեծ Պահքի երրորդ կիրակիի բուն խորհուրդն է:

Անառակ որդու նման մենք ևս պետք է զղջանք մեր վատ արարքների համար և ներում հայցենք մեր ծնողներից, եղբայրներից կամ քույրերից, որպեսզի Աստված թողություն շնորհի մեր մեղքերին:

- Ներքևի ազատ տարածքում գրի՛ր մտածումներդ ներում հայցելու մասին բոլոր այն մարդկանցից, որոնց ժամանակին նեղացրել ես կամ վիրավորել:



## ԵՐԳԵՆՔ

Արի՛, արի՛, հովիվ բարի, եկ փնտրելու մոլորեալ ոչխարիդ.  
Մեղավոր եմ, մեղքի գերի, խնայի՛ր դու ինձ՝ անառակ որդուս:

1



Տէ՛ր, ո՛ -----ղոր-----մեա՛, Տէ՛ր, ո՛ -----ղոր-----մեա՛,  
Տէ՛ր, ո՛ -----ղոր-----մեա՛, Տէ՛ր, ո՛ -----ղոր-----մեա՛:

2



Ա. -----րի, ա-----րի, հո-----վիւ բա-----րի,  
Ա.ո-----րի խըն-----դիր քո ոչ-----խա-----րի.

3



Մե-----ղա -----ւոր եմ, մե-----ղաց գե-----րի,  
խնա -----յեա որդ-----ւոյ ա -----նա -----ռա-----կի:



## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՋ



Կարդա՛ Տասը պատվիրանները Աստվածաշնչից **Երբ 20.1-17**: Ընտրի՛ր մեկը և գրի՛ր, թե ինչպե՞ս կկարողանայիր հետևել այդ պատվիրանին՝ հոգևոր կյանքդ առողջ պահելու համար:

## ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ունի օգնել աշակերտներին Աստվածաշնչի միջոցով սովորելու Աստծո ներելու կարողության և կյանքի մասին, ինչպես նաև վկայել, թե ներողամտությունն ինչպես է դրսևորվում ուղղափառ աստվածաշնչության մեջ և ծիսական կյանքում: Շեշտված կետերից մեկը հետևյալն է՝ որպեսզի Աստված ների մեր մեղքերը, մենք նույնպես պետք է կամենանք ներել նրանց, որոնք սխալ են թույլ տվել մեր համոզեալ: Տերունական աղոթքում ասվում է. «...*ների՛ր մեր հանցանքները, ինչդես որ մենք ենք ներում նրանց, որոնք մեր դեմ նույնդես հանցանք են գործել*»:

Աշակերտները նաև իրագել դարձան իրենց կյանքը Քրիստոսի հետ հաշտեցնելու կարևորության մասին, երբ շեղվել են հոգևոր կյանքից և թերացել ապաշխարության խորհրդին մասնակցելուց: Ընտանիքով քննարկե՛ք Քրիստոսի հետ հաղորդական կյանքով ապրելու նշանակության մասին, և թե ինչո՞ւ է կարևոր անել ամեն հնարավորը խզված հարաբերությունները խոստովանության և ապաշխարության միջոցով վերականգնելու ուղղությամբ:

# 33. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆԸ

«Ե՛ս եմ հարությունը և կյանքը: Ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի: Իսկ ով ողջ է և հավատում է ինձ, երբեք չի մեռնի»:

Հովհաննես 11.25-26



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ավագ դպրոցի երկու դասընկերուհիներ Մարին ու Հասմիկը ճաշում են դպրոցում և վարում են հետևյալ գրույցը.

**Մարի** - Հասմիկ, կարո՞ղ ես համառոտագրել վաղվա դասախոսությունը: Ես դպրոց չեմ գալու, քանի որ մասնակցելու եմ պապիկիս հուղարկավորությանը:

**Հասմիկ** - Իհարկե, ես չգիտեի, որ պապիկդ մահացել է:

**Մարի** - Այո՛, մա երկարատև հիվանդ էր: Ես շատ մխիթարված եմ, որ մա այլևս չպիտի տառապի և այժմ հանգիստ հանգչում է Տիրոջ հետ:

**Հասմիկ** - Հանգիստ հանգչում է Տիրոջ հե՞տ: Դա ի՞նչ է նշանակում:

**Մարի** - Այսինքն՝ նրա հոգին խաղաղության մեջ է:

**Հասմիկ** - Որտեղի՞ց քեզ այդ տեղեկությունը: Եթե մահացել ես, ուրեմն մահացած ես, սա այնքան պարզ է: Հուսամ՝ դու չես խոսում «լավ մարդիկ գնում են երկինք» պատմվածքի մասին, այնպես չէ՞:



- Խորհրդածի՛ր երկխոսության շուրջ: Եթե լինեիր Մարիի իրավիճակում, ինչպիսի՞ն կլինեիր քո պատասխանը Հասմիկին: Մարին ինչպե՞ս կպաշտպաներ իր հավատը: Գրի՛ր մտածումներդ տուփի մեջ:



**Աստվածաշնչի** դասում կարդա՛ և պարզի՛ր, թե մենք որպես ուղղափառ քրիստոնյաներ ինչի՛ ենք հավատում մեռելների հարության վերաբերյալ:


# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆԸ

Մատթեոս 22.23-33, 27.50-53, Հովհաննես 5.25-29, 11.17-27

Նիկիական Հանգանակում մենք շարունակում ենք հռչակել մեր հավատը՝ ասելով. «Հավատում ենք նաև ... մեռելների հարությանը»: Կարդա՛ ընտրված սուրբգրային քաղվածքները և իմացիր Հիսուսի սեփական խոսքերը մեռելների հարության վերաբերյալ, որն էլ կազմում է մեր հավատի հիմքը:

Նույն օրը սաղուկեցիներից ոմանք եկան Հիսուսի մոտ: Սաղուկեցիներն ասում էին, թե մեռելների հարություն չկա: Նրանք Հիսուսին ասացին.



- Վարդապետ, Մովսեսը մեզ հերկյալը սովորեցրեց. «Եթե մեկը մեռնի առանց զավակ ունենալու, նրա եղբայրը պետք է ամուսնանա նրա այրիացած կնոջ հետ, որպեսզի իր եղբորը զավակ րա»: Արդ, մի ժամանակ մեզ մոտ յոթ եղբայրներ կային: Առաջինն ամուսնացավ և ապա մեռավ առանց զավակ ունենալու, ուստի կնոջն իր եղբորը թողեց: Նույնը պարտեց երկրորդի, երրորդի, մինչև յոթերորդի հետ: Բոլորից հետո կինն էլ մեռավ: Արդ, մեռելների հարության ժամանակ կինն այդ յոթից ո՞ւմ է պարկանելու, քանի որ բոլորն էլ ամուսնացան նրա հետ:

Հիսուսը պարտասխանեց.

- Մոլորվածներ եք, որովհետև չեք հասկանում ո՛չ Սուրբ Գրքերը և ո՛չ էլ Աստուծո գործությունը: Երբ մեռելները հարություն առնեն, այլևս չեն ամուսնանա, այլ կլինեն երկնքի հրեշտակների մասն: Իսկ հարության մասին չե՞ք կարդացել, թե Աստված ի՞նչ է ասել չեզ. «Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»: Նշանակում է՝ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ ողջերի:

Երբ ժողովուրդն այս լսեց, զարմացավ նրա ուսուցման վրա:

Մատթեոս 22.23-33

Իսկ Հիսուսը դարձյալ բարձրաձայն աղաղակեց և հոգին ավանդեց: Եվ ահա քանարի վարսագույրը պարտվեց և վերից վար երկու մասի բաժանվեց, երկիրը շարժվեց, և ժայռերը ձեռքովեցին, գերեզմանները բացվեցին, և բազում սուրբ ննջեցյալներ հարություն առան: Նրանք գերեզմաններից ելան և Հիսուսի հարությունից հետո միասին Սուրբ քաղաքը, որտեղ շարերին երևացին:

Մատթեոս 27.50-53

Հասարակ իմացեք, կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ մեռելները կլսեն Աստուծո Որդու ձայնը, և լսողները կասրեն. որովհետև, ինչպես Հայրը կյանք պարգևելու գործություն ունի իր մեջ, այդ գործությունը փվել է նաև Որդուն:

Նույնպես և դարելու իշխանություն է փվել Որդուն, որովհետև նա Մարդու Որդի է: Ուրեմն մի՛ զարմացեք, որ ասացի չեզ, թե կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան նրանք, որ բարիք են գործել, հարություն կառնեն և կասրեն, իսկ նրանք, որ չարիք են գործել, հարություն կառնեն և կդարապարտվեն:

Հովհաննես 5.25-29

Երբ Հիսուսը Բեթանիա հասավ, Ղազարոսն արդեն չորս օր թաղված էր: Բեթանիան մոտ էր Երուսաղեմին. միայն երեք կիլոմետր էր հեռու: Հրեաներից շարերն այնպեղից եկել էին Մարթայի և Մարիամի մոտ՝ նրանց մխիթարելու իրենց եղբոր մահվան առթիվ: Երբ Մարթան լսեց, որ Հիսուսը զալիս է, գնաց նրան դիմավորելու, մինչդեռ Մարիամը մնաց քանդ: Մարթան ասաց Հիսուսին.

- Տե՛ր, եթե այսպեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի: Բայց հիմա էլ գիտես, թե ինչ էլ որ

Ասրծուց խնդրես, Ասրված կրա քեզ:

Հիսուսն ասաց նրան.

- Քո եղբայրը հարություն կառնի:

Մարթան պարասխանեց.

- Գիտեմ, որ հարություն կառնի վերջին օրը, հարության ժամանակ:

Հիսուսն ասաց.

- Ես եմ հարությունը և կյանքը: Ով հավատում է ինձ, քեպեք և մեռնի, կապրի: Իսկ ով ողջ է և հավատում է ինձ, երբեք չի մեռնի: Հավատում ես իմ ասածին:

- Այո՛, Տե՛ր,- պարասխանեց Մարթան,- հավատում եմ, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Ասրծո Որդին, որ աշխարհ էիր գալու:

Հովհաննես 11.17-27



## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՔՐԻՍՏՈՍԻ ԶՈՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎԸ

- Կարդա՛ հանդիպակաց էջի սուրբգրային հատվածները և գտի՛ր ներքևի հատվածներն Աստվածաշնչից: Ընթերցելիս լրացրո՛ւ Աստծո պատգամը մեռելների հարության վերաբերյալ՝ ընտրելով համապատասխան բառը ներքևի բառացանկից:

հարություն առան, կցորդ, երախայրիք, հրեշտակներ արժանի լինենք, երբեք չի մեռնի

### Աստվածաշունչ. Մատթեոս 22.23 - 33

Հիսուսն ասում է, որ մեռելների հարության ժամանակ մարդիկ այլևս չեն ամուսնանա, այլ կլինեն երկնքի ..... մնան:

### Աստվածաշունչ. Մատթեոս 27.50 - 53

Ի՞նչ պատահեց սուրբ մեռելացիների հետ երկիրը շարժվելուց հետո: Նրանք .....

### Աստվածաշունչ. Հովհաննես 11.17 - 27

Հիսուսն ասում է, որ ով ողջ է և հավատում է ինձ, .....

### Աստվածաշունչ. Ա Կորնթացիներին 15.12 - 23

22-23-րդ տողերում կարդում ենք. «Ինչպես Ադամից ծնվածները բոլորն էլ մեռնում են, այնպես էլ Քրիստոսից ծնվածները բոլորն էլ կենդանանալու են»:

Սույն հատվածում Քրիստոսը համարվում է որպես .....

### Աստվածաշունչ. Փիլիպեցիներին 3.7-11

Մենք պետք է մասնակից դառնանք Քրիստոսի չարչարանքներին, որպեսզի ..... մեռելներից հարություն առնելուն:

### Աստվածաշունչ. Հռոմեացիներին 6.3-11

5-րդ համարում կարդում ենք, որ եթե Քրիստոսին կցորդ եղանք՝ նրա մնան մեռնելով, նույնպես նրան ..... ենք լինելու՝ նրա հետ հարու- քյուն առնելով:

## Բառարան

### Սաղուկեցիներ

Հրեական աղանդ Քրիստոսի օրոք, որոնց հետևորդները ընդունում էին մովսիսական օրենքը և հավատում էին ազատ կամքին: Նրանք չէին հավատում մեռելների հարությանը, ոչ էլ հրեշտակներին և հոգիների անմահությանը: (Տե՛ս Գործք 23.8)

### Երախայրիք

Նշանակում է «առաջին բերքը, այգիների առաջին պտուղը» կամ «աշխատանքի առաջին արդյունքը»: Հին Կտակարանում օրենք էր բոլոր բերքերի երախայրիքն ընծայել Աստծուն: Այն փոխաբերաբար գործածվում է Սուրբ Հոգու պարգևների, առաջին նորադարձների և Քրիստոսի համար՝ որպես մեռելների հարության առաջին պտուղը:



## ԱՆՍԱԼՈՎ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԻՆ.

### ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԸ՝ ՀՈՒՅՍ ԵՎ ԲԵՐԿՐԱՆՔ

Թաղման կարգի ընթացքում մատուցվող մեր Եկեղեցու շարականներն ու աղոթքներն վերարժարծում են Սուրբ Գրքի պատգամները մեռելների հարության վերաբերյալ: Նույնը գտնում ենք նաև Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքում, որը պատարագիչ քահանան կարդում է Սուրբ Հաղորդությունից առաջ: Մենք նորոգվում ենք մահից դեպի կյանք:

*Երբ Հոր փառքով զաս արթնացնելու նրանց, որոնք քեզ հավատարացին և ննջեցին, մե՛ր ննջեցյալներին էլ արթնացրու, ո՛վ մեր հայրերի Ասրված:*

Հանգստյան շարական ԳԿ


*Անխախտ թող մնա + Ասրծո այս ծառայի գերեզմանի վրա դրված կնիքը, մինչև երկրորդ գալուստը Քրիստոսի, երբ ինքը փառքով պիտի նորոգի՝ Հոր և Սուրբ Հոգու փառքի համար. ամեն:*

Աղոթք Գերեզմանի կարգից

*Գոհություն եմ հայտնում քեզ, մեծարում և փառավորում, ո՛վ իմ Տեր Ասրված, որ ինչ՝ անարժանիս, արժանի դարչիր այսօր հաղորդակից լինելու քո ասրվածային և սուկայի խորհրդիդ՝ անարար Մարմնիդ և պարվական Արյանդ: Ուրեմն, սրա բարեխոսությանն ապավինելով՝ աղաչում եմ, որ ինչ քո սրբության մեջ պահես ամեն օր և իմ ամբողջ կյանքի ընթացքին, որպեսզի քո բարեգթությունը հիշելով ես ևս քո կյանքին բաժնեկից լինեմ, դու, որ մեզ համար չարչարվեցիր, մեռար և հարություն առար:*

Սբ Հովհան Ոսկեբերանի աղոթքներից

- Կարդա՛ ներքևի սուրբգրային հատվածը՝ **ԱԹեսաղոնիկեցիներին 4.13-18**: Մտածի՛ր և համեմատի՛ր յուրաքանչյուր համարը վերևի շարականի և աղոթքների հետ: Համապատասխանեցրո՛ւ ամեն համարը Հանգստյան շարականին (ՀԾ), գերեզմանի կնքման (ԳԿ) և Սբ Հովհան Ոսկեբերանի (ՍՀՈ) աղոթքներին: Մի քանի համարներ կունենան մեկից ավելի համընկնումներ: Օգտագործի՛ր փակագծերի պայմանական հապավումները նշելու համար:



### ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Խորհրդածի՛ր Քրիստոսի Հարության շուրջ, որպեսզի գնահատես այն, ինչին սպասում ենք, այսինքն՝ բոլոր հավատացյալների հարությանը: Ինչպիսի՞ ընտրություններ կկատարես կյանքում՝ Տիրոջ հետ հավիտյան ապրելու հրաշալի խոստմանն ընդառաջ:

## ԵՐԳԵՆՔ ՓԱՌԱԲԱՆԵԼՈՎ ԵՎ ԱՂՈԹԵՆՔ

Սուրբ Հարության տոնի ճաշու շարականը և գատկական բոլոր շարականներն ուրախությամբ են երգվում՝ փառաբանելով Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Սույն շարականը վերագրվում է Սբ Ներսես Շնորհալուն: Շարականի սկզբում երգվում է «Գովեսա Երուսաղէմ զՏէր» Սաղմոսը (147.12):

*Ո՛վ Երուսաղէմ, զովերգի՛ր Տիրոջը. հարություն առաւ Քրիստոսը մեռելներից. ալելուիա: Եկե՛ք ժողովուրդներ, երգեցե՛ք Տիրոջը. ալելուիա: Մեռելներից հարուցալին. ալելուիա: Այս աշխարհի լուսավորչին. ալելուիա:*

1. *Չափաւոր* Մ. Եկմայան  
 Գո - վեա տ - րու - սա - ղէմ ըզ - Տէր: Յա - ռեա Քրի - ս -  
 տո - - - - - ս ի մե - ռե - - - - -  
 լո - գ ա - - - լէ - - - լու - - - իա:  
 2. *Փառք*  
 Փառք Յօ - ր եւ Որդ - ւոյ ու Յոգ - ւո - յն սըր - բոյ:  
 տ - կայք ժո - ղո - վու - - - - - ղոք, եր - գե -  
 գէ - - - - - ք Տեա - ռն ա - - լէ - լու - իա:  
 3. *Այժմ.*  
 Այժմ եւ միշտ եւ յա - ւի - տեանս յա - ւի - տե - մից ա -  
 մէն: Յա - րու - գե - լոյն ի մե - ռե - լոց ա - - լէ - լու -  
 իա - - - , որ զաշ - խար - հըս լու - սա - ւո - - -  
 րեաց՝ ա - լէ - - - - լու - - - - իա:

### ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը կենտրոնացած էր մեռելների հարության վրա, որով տարբերակվում է հարության մասին քրիստոնեական հավատքն այլ պատկերացումներից: Սուրբգրային ընթերցումների, եկեղեցու հայրերի, շարականների ու աղոթքների միջոցով աշակերտները հնարավորություն ունեցան խորհրդածելու Քրիստոսի հարության շուրջ և անդրադառնալու մեռելների հարության հետ առնչված խոստմանը և հույսին՝ քրիստոնեական մեր հավատքի առանցքային դավանանքին:

Արդի ժամանակներում մենք հաճախ ամաչում և քաշվում ենք քննարկել և խորհրդածել մահվան մասին: Սա ուղիղ հակառակ է մեր եկեղեցու հայրերից մեկի՝ Սբ Երանոսի հետևյալ խոսքին. «Քրիստոնյայի գործը ոչ այլ ինչ է, քան մահվան համար մշտապես մախապատրաստվելը»:

Ամեն օր մենք կարդում ենք մեր էլ. փոստն ու հեռախոսային հաղորդագրությունները, որոնցով մեզ հրավիրում են մասնակցելու զանազան միջոցառումների: Բնականաբար, մենք մախրնտրաբար ենք պատասխանում՝ ընտրելով ամենակարևորը: Նմանապես, իր հարությանը միանալու Քրիստոսի հրավերը պահանջում է մեր լիարժեք, անմիջական և անկեղծ պատասխանն ու գործողությունը: Շարունակե՛ք քաջալերել ձեր զավակին կանոնավոր կերպով աղոթելու և ներկա գտնվելու Սուրբ Պատարագին, մասնակցելու մեղքերի խոստովանությանը և Սուրբ Հաղորդությանը: Հարմար առիթով հիշեցրե՛ք նրան, թե ինչու է ապրում հարության հույսով: Երբ ձեր զավակը վիշտ ու ցավ է ապրում իր սիրելի հարազատի մահվան առիթով, մխիթարե՛ք նրան Սբ Պողոսի խոսքերով, որ չպետք է սզալ հույս չունեցողների պես, այլ սփոփանք գտնեն մեռելների հարության հետ կապված մեր հավատքից: Այս անմիջական հիշեցումները կամրապնդեն նրա հավատը և ավելի կգոտեպնդեն, հատկապես երբ հարցումներ ստանան իրենց հասակակիցներից, որոնք զուցե տկար կամ թույլ հավատք կարող են ունենալ:



# 34. ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅՈՒՄԻՆ

«...քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով հավատում է նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

Յովհաննես 3.16



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

- Երբևէ եղե՞լ եմ դեպքեր, երբ այնքան ես տարվել ընկերներիդ, ընտանիքիդ կամ սիրելի մարդկանց հետ խոսակցությամբ, որ մոռացել ես ժամանակի գոյության մասին: Եթե այսպիսի պահեր ապրել ես, ըստ քեզ, ինչո՞ւ ես «կտրվել ժամանակից»:



.....

.....


.....

- Կա՞ արդյոք որևէ բան, որ սիրում ես անել երկար ժամանակ, ինչպիսին, որ կուզեիր անել հավիտյան:

.....

.....

.....



- Ինչպիսի՞ գաղափարներ եմ գալիս քո մտքին ամեն անգամ, երբ լսում ես «հավիտենական կյանք» կապակցությունը:



.....

.....

.....

Հիմա անդրադառնանք **Աստվածաշնչին** և տեսնենք, թե ի՞նչ է հայտնում մեզ հավիտենական կյանքի մասին:

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՈՒՐԲ ԳՐԶՈՒՄ

Հովհաննես 3.14-15, 5.21-25, 37-40, 6.51-54, 6.66-69, 10.22-28, 17.1-5, Մատթեոս 5.3-11

Նիկիական Հանգանակի եզրափակիչ դրույթում խոսվում է Հիսուս Քրիստոսի փրկագործ առաքելության կատարման մասին: Մենք հռչակում ենք՝ ասելով. «Հավատում ենք նաև ... երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին»: Հավիտենական կյանքն արտահայտվում է նաև «հանդերձյալ կյանք» կապակցությամբ: Կարդա՛ Հովհաննեսի ավետարանից քաղված հետևյալ հատվածները և ծանոթացի՛ր հավիտենական կյանքի մասին Հիսուսի խոսքերին:

Եվ ինչպես որ Մովսեսն անապատում բարձրացրեց պղնձե օջախ, նույնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա, որպեսզի նա, ով հավատում է նրան, հավիտենական կյանք ունենա:

Հովհաննես 3.14-15

Ինչպես որ Հայրը հարություն է փայլիս մեռելներին և կենդանացնում նրանց, նույնպես և Որդին կյանք է փայլիս, ում որ ուզում է: Եվ Հայրը ոչ մեկի չի դատում, այլ դատելու իշխանությունն ամբողջությամբ հանձնել է Որդուն, որպեսզի բոլորն էլ պարվեն Որդուն, ինչպես պարվում են Հորը: Ով չի պարվում Որդուն, չի պարվում և Հորը, որ ողորկել է նրան: Լավ իմացեք, ով լսում է իմ խոսքը և հավատում է նրան, ով ինչ ողորկեց, հավիտենական կյանք ունի և չի դատարարվի, որովհետև նա արդեն իսկ մահից անցել է դեպի կյանք: Հաստատվե՛ք իմացեք, կգա ժամանակ և արդեն իսկ եկել է, երբ մեռելները կլսեն Աստուծո Որդու ձայնը, և լսողները կսարկեն: ... Եվ Հայրը, որ ինչ ողորկեց, ինքն է վկայում իմ մասին: Դուք բնավ չեք լսել նրա ձայնը, ոչ էլ րեհեղ եք նրա դեմքը, ոչ իսկ նրա խոսքն է րեղ գրել չեք արդարում, քանի որ դուք չեք հավատում նրան, ով ինչ ողորկեց: Քննեցե՛ք Սուրբ գրքերը, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք կունենաք. նույն այդ գրքերն են վկայում իմ մասին: Դուք, սակայն, չեք ուզում դեպի ինչ գալ, որպեսզի կյանք ունենաք:

Հովհաննես 5.21-25, 37-40

Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել. ով ուրի այս հացից, հավիտյան կապրի: Այն հացը, որ ես կրամ, իմ մարմինն է. ես այն փայլիս եմ, որպեսզի աշխարհը կյանք ունենա:

Այս խոսքի վրա հրեաներն սկսեցին բուռն կերպով վիճել իրար հետ՝ ասելով.

- Այս մարդն ինչպե՞ս կարող է իր մարմինը մեզ փայլ՝ ուրելու համար:

Հիսուսն ասաց նրանց.

- Լավ իմացեք, եթե չուրեք Մարդու Որդու մարմնից և չիմեք նրա արյունից, կյանք չեք ունենա չեք մեջ: Ով ուրի իմ մարմնից և իմի իմ արյունից, հավիտենական կյանք կունենա, և ես վերջին օրը հարություն առնել կրամ նրան:

Հովհաննես 6.51-54

Այս խոսքերի պարմառով աշակերտներից շատերը հեռացան և այլևս չէին շրջում նրա հետ: Հիսուսը հարցրեց փասներկու աշակերտներին.

- Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ:

Միմոն Պետրոսը պատասխանեց.

- Տե՛ր, ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանք փվող խոսքերը դո՛ւ ունես: Մենք հավատացինք և իմացանք, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստուծո Սուրբը:

Հովհաննես 6.66-69

Չմեռ էր: Երուսաղեմում րեղի էր ունենում փաճարի նավակարիքի րոնակատարությունը: Հիսուսը շրջում էր Սողոմոնի սյունազավթում, երբ նրա շուրջ հավաքվեցին հրեաները և հարցրին.

- Մինչե՛ ե՞րբ ես մեր հոգին հանելու եթե դու ես Քրիստոսը, հարակ ասա՛ մեզ:

Հիսուսը պատասխանեց.

- Ես արդեն ասել եմ չեզ, բայց դուք չեք հավատում: Այն գործերը, որ ես կատարում եմ իմ Հոր անունով, դրանք իսկ վկայում են, թե ո՞վ եմ ես: Բայց դուք չեք հավատում, որովհետև իմ ոչխարներից չեք: Ես ասանչում եմ իմ ոչխարներին. նրանք լսում են իմ ձայնը և հետևում են ինձ, և ես հավիտենական կյանք եմ փայլիս նրանց. նրանք բնավ չեն կորչի: Ոչ որ չի կարող նրանց համաշարկել իմ չեռքից:

Հովհաննես 10.22-28

Հիսուսն այս խոսքերը վերջացնելուց հետո աչքերը բարձրացրեց դեպի երկինք և ասաց.

- Հայր, հասել է ժամանակը, փառավորի՛ր քո Որդուն, որպեսզի քո Որդին էլ քեզ փառավորի: Դու նրան իշխանություն փվեցիր ամբողջ մարդկության վրա, որպեսզի հավիտենական կյանք փա բոլոր նրանց, որոնց փվեցիր իրեն: Եվ հավիտենական կյանքը քեզ ասանչելն է՝ որպես միակ ճշմարիտ Աստված, ասանչել նաև Հիսուս Քրիստոսին, որին դու ողորկեցիր: Ես քեզ փառավորեցի երկրի վրա՝ ամբողջացնելով այն գործը, որն ինչ փվեցիր, որ կատարեմ: Եվ այժմ, ո՞վ Հայր, փառավորի՛ր ինչ այն փառքով, որ ունեի քեզ հետ՝ աշխարհի սրեղծագործությունից առաջ:

Հովհաննես 17.1-5




- Սուրբգրային հատվածների քննարկումն ավարտելուց հետո լրացրո՛ւ խաչբառը՝ ըստ ամբարածո գիտելիքների:

**Հորիզոնական**

- Հիսուսի աշակերտները չէին ուզում լքել նրան, քանի որ Հիսուսն ուներ հավիտենական կյանք տալու \_\_\_\_\_ :
- Միակ ճշմարիտ Աստված և Որդին Հիսուս Քրիստոսն \_\_\_\_\_ է հավիտենական կյանքը:
- Հավիտենական կյանք ունենալու համար հարկ է \_\_\_\_\_ Հիսուսի խոսքերին:

**Ուղղահայաց**

- Հավիտենական կյանքին արժանանալու համար հարկ է \_\_\_\_\_ Հայր Աստծուն, ով առաքեց Հիսուսին:
- \_\_\_\_\_ է կյանքի հացը, որ երկնքից է իջել:
- «Մարդու Որդին» պիտի բարձրացվի արտահայտությունը վերաբերում է Քրիստոսի \_\_\_\_\_ :



- Ինչպե՞ս կբացատրեիր ընկերոջդ, թե քրիստոնյաներն ինչի՛ են հավատում հավիտենական կյանքի մասին՝ հիմք ընդունելով սովորածներդ Հովհաննեսի Ավետարանի քաղվածքներից:

**ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՃԱՆԱՊԱՐԴ ԴԵՊԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

Իր առաքելության սկզբում Հիսուսը ցույց տվեց երանական կյանքի ուղիներ, որոնք մարդուն կարող են Աստծո արքայության քաղաքացի դարձնել, այսինքն՝ ձեռք բերել հավիտենական կյանք Ամենասուրբ Երրորդության ներկայության մեջ:

- Կարդա՛ Մատթեոս 5-րդ գլուխը և մտածի՛ր Լեռան քարոզի ժամանակ Հիսուսի խոսքերի շուրջ: **Մատթեոս 5.3-11** համարներում նշված Երանիներից որ մեկն է ամենաշատը քեզ հոգեհարազատ: Ընտրի՛ր դրանցից առնվազն մեկը և աշխատի՛ր հանձն առնել և կյանքի կոչել ընտրածդ երանին: Գրի՛ր քո հանձնառությունը ներքևի տողերին և ձգտի՛ր հետևել դրան:



Խաղաղություն անել  
**Մատթեոս**

**Իմ Հանձնառությունը**

.....

.....

.....



Օգնել կարիքավոր ընտանիքի  
**Մատթեոս**



Արդարություն պահանջել  
**Մատթեոս**

**Բառարան**

**ԵՐԱՆԻՆԵՐ**

Երանելի կյանքի վիճակ, որի մասին խոսեց Հիսուս Քրիստոսը Լեռան Քարոզի ընթացքում:

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՆԱԽԱՃԱՀԱԿ ՀԱԿԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ

Ըստ Սուրբ Գրքի դիտարկման, մենք հավատում ենք հավիտենական կյանքին, և Քրիստոսն է, ով խոստացել է մեզ հավիտենական կյանք տալ: Մինչ մենք սպասում ենք Քրիստոսի երկրորդ գալուստին, մենք օրհնված ենք նախաճաշակելու Աստծո արքայությունը՝ Եկեղեցու մեջ հավիտենական կյանքը: Սուրբ Պատարագն Արքայության երանելի ու հավիտենական կյանքի արտահայտությունն է և փորձառությունը: Մեզ մատուցվում է Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը, ում կյանքը դարձավ անարատ զոհաբերություն մեր մեղքերի թողության համար՝ այդպիսով մեկ անգամ ևս մեզ բերելով ճշմարիտ կյանքը, որտեղ մենք լիարժեք հաղորդվում ենք Աստծո հետ հավիտյան:

Ծանոթացիր հետևյալ աղոթքին, որն ասվում է Սուրբ Հաղորդությունից առաջ:



*Խոսարովանում և հավայրում եմ, որ դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ կրեցիր աշխարհի մեղքերը:*

*Ո՛վ Հայր Սուրբ, դու մեզ քրիստոնյա կոչեցիր քո Միածնի անունով և մեզ լուսավորեցիր հոգևոր ավազանի մկրտությամբ, արժանի՛ արա մեզ այս սուրբ խորհուրդն ընդունելու մեր մեղքերի թողության համար: Սուրբ Հոգուդ շնորհները դրոշմիր մեզ վրա, որոնք քո մարմինը ճաշակեցին և դարձան մաքրիչները համայն աշխարհի: Եվ արդ՝ ո՛վ Տեր, Հայր բարերար, վերացրո՛ւ մեղքերի խավարը, և մեր մասնակցությունն այս սեղանին նույնացրո՛ւ քո աշակերտների Վերջին Ընթրիքին մասնակցության հետ: Անդեսիր իմ անարժանությունը և մի մերժիր ինձ քո Սուրբ Հոգու շնորհները: Այլ քո անհուն մարդասիրությամբ պարզելիր, որ սա լինի միջոց մեղքերի քավության և հանցանքների լուծման համար, ինչպես մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը:*

*սը, խոսարացավ՝ ասելով. «Ով որ ճաշակի իմ Մարմինը և խմի իմ Արյունը, նա հավիտենապես պիտի ապրի»:* Ուրեմն, թող սա լինի միջոց մեր մեղքերի քավության համար, որպեսզի ուլքեր ճաշակեն և խմեն դրանից, օրհնություն և փառք մաքուրցեն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Սուրբ Հաղորդությունը բաշխելիս քահանան ասում է. «**Քրիստոսի այս Մարմինն ու Արյունը թող լինի քեզ մեղքերի քավություն և թողություն**»:

➡ Ի՞նչ օրհնություններ ենք մենք ստանում Քրիստոսի Մարմնի և Արյան միջոցով:



- ➔ Սուրբ Հոգուն ուղղված հետևյալ աղոթքում Սբ Գրիգոր Նարեկացին շեշտում է Սուրբ Խորհուրդների կարևորությունը: Ինչի՞ն են վերաբերում Հաղորդությունը: Ո՞վ է ներկայացված հետևյալ աղոթքում որպես «բանական պատարագ»:

Ո՞վ բոլորի Աստված, ամենակալ, բարերար և մարդասեր, հորինող տեսանելիների և անտեսանելիների, փրկող և հասարարող, խնամող և խաղաղարար, Հոր հզոր Հոգի, բազկատարած և հեծաշայն պառապանքներով հայցում ենք՝ ներկայանալով քեզ, ո՞վ սեփալոր: Մեծ դողով և սաստիկ երկյուղով ենք մտրենում քո անզնին գործքանդ մատուցելու բանական այս պատարագը որպես աթոռակից, փառակից և արարչակից քո հայրական անկողուպարելի պատվին: Դու ես քննում էմանուելի Հոր ամենակարող կամքի ծածկված խորը խորհուրդները, նրա, ով քեզ ուղարկեց, որ փրկիչն է, կենդանատուն և արարիչը բոլորի: Քեզնով են արեղծվում և հարությունը նորոգվում բոլոր արարածներն այն պահին, որ վերջին օրն է այս կյանքի և առաջինը օրը հավիտենականի: Համակամության քեզ հնազանդվեց՝ որպես իր Հայրը, քո ազգակիցը, Հոր էակիցը, Միածին Որդին, մեր նման իբրև մարդ ծնվելով: Քեզ ավերարանեց որպես ճշմարիտ Աստված, հավասար և համագո իր հզոր Հոր, և քո դեմ հայհոյությունն աններելի հայրարարեց և քո դեմ ըմբոստացող աստվածամարտների բերանները պապանչեցրեց, բայց ներեց իրեն դեմ հայհոյողներին, արդարն ու անարարը, փնտրողը բոլորի, որ մեր մեղքերի համար մարմնվեց և հարություն առավ մեզ արդարացնելու համար: Փա՛ռք իրեն քո միջոցով և քեզ բարերանություն ամենակալ Հոր հեյր, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Սբ Գրիգոր Նարեկացի, աղոթք Պատարագից

- ➔ Որո՞նք են հավիտենական կյանքի յուրահատկությունները՝ ըստ Սբ Հովհան Ոսկեբերանի Սուրբ Պատարագի հետևյալ աղոթքի:

Գոհություն ենք հայտնում քեզ, ո՞վ Քրիստոս մեր Աստված, որ մեզ սուրբ կյանքի բաժնեկից դարձրիր այսպիսի բարի ճաշակում շնորհելով. մեզ պահիր սուրբ և անարար քո աստվածային խնամքի տակ: Հովվի՛ր մեզ քո սուրբ և բարեսեր կամքի անդատարանում, որպեսզի ամուր մնանք բանասերկուխ ամեն հարչակումների դեմ, և արժանի լինենք լսելու քո ձայնը միայն, և հեյրենելու քեզ՝ միակ քաջ և ճշմարիտ հովվիդ, և քեզնից ընդունելու երկնքի արքայության մեջ մեզ համար պատրաստված տեղը: Ո՞վ մեր Աստված, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս, որ օրհնյալ ես Հոր և Սուրբ Հոգուդ հեյր, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Սբ Հովհան Ոսկեբերան, Գոհաբանություն

- ➔ Ընտրի՛ր կապակցություններ հիշյալ աղոթքներից, որոնք առնչվում են ներքևի թեմաներին:


## Բառարան

### ԲԱՆՍԱՐԿՈՒ

Սատանայի համար գործածված բազմաթիվ հոմանիշներից մեկը, որ նշանակում է «հակառակորդ, չարախոս»: Չարության անձնավորում, որը ներկայանում է որպես Աստծո և մարդկության թշնամի և մարդկանց հրապուրելով փորձության է առաջնորդում ու մեղքի գերի դարձնում:

| Թեմաներ                        | Աղոթք Սուրբ Հաղորդություն ստանալուց առաջ | Սբ Գրիգոր Նարեկացու աղոթք | Սբ Ոսկեբերանի Գոհաբանական աղոթք | Աստվածաբանական (ներառյալ հղումը) |
|--------------------------------|--|---------------------------|---------------------------------|----------------------------------|
| Մեղքերի քավություն             |  |                           |                                 |                                  |
| Հավիտենական կյանք              |  |                           |                                 |                                  |
| Քրիստոսի Մարմին և Արյուն       |  |                           |                                 |                                  |
| Սբ Խորհուրդներ (Հաղորդություն) |  |                           |                                 |                                  |
| Հույս մեղավորի համար           |  |                           |                                 |                                  |
| Արքայությունը                  |  |                           |                                 |                                  |

## ՄԲ ԿԻՊՐԻԱՆՈՍԸ՝ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ



*Օ, ինչպիսի՜ն կլինի այն օրը, երբ Տերը շնորհի մեզ հավա-  
րի և նվիրումի պարգևը: Ինչպիսի՜ն կլինի այդ փառքը, և որ-  
քա՜ն մե՞ծ կլինի Աստուծո առաջ ընդունելի լինելու ուրախությու-  
նը: Այնպես պատվված լինել, որ արժանանալ հավիտենական  
լույսի և փրկության Քրիստոսի՝ քո Տեր Աստուծո ներկայու-  
թյամբ, ողջունել Աբրահամին, Իսահակին ու Հակոբին և բոլոր  
նահապետներին, առաքյալներին, մարգարեներին ու մարտի-  
րոսներին... մեզ փրկելիք անմահության հրճվանքի մեջ: Այն-  
պեղ ստանալ այն, ինչ աչքը չի տեսել, ոչ էլ սկանջն է տեսել,  
ինչ դեռ չի հասել մարդու սրտին:*

Մբ Կիպրիանոս Կարթագենցի, Նամականի 55.10

- Ըստ Մբ Կիպրիանոսի՝ որոնք են մեր սպասելիքները Երկրորդ գալստյան ժամանակ:

.....  
.....  
.....  
.....  
.....

### ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Խորհրդածիրք քո մտա-  
ծումների, հույսերի, զգա-  
ցումների, աղոթքների և  
հավիտենական կյանքի  
մասին քո ակնկալիքների  
շուրջ:

### ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասի նպատակն էր հասկանալի դարձնել ձեր զավակին հավիտենական կյանքի մասին մեր պատկե-  
րացումներին ու հավատքին և օգնել նրանց ապրել հավիտենական կյանքի հույսով՝ մինչ աստուծո ենթա-  
յությունը եկեղեցում: Ձեր զավակն աշխատեց սուրբգրային որոշ հատվածների վրա, որոնք հավիտենական  
կյանք են խոստանում բոլոր հավատացյալներին: Նրանք հասկացան, որ Քրիստոսի միջոցով մեզ կարող է հա-  
վիտենական կյանք շնորհվել:

Աշակերտներին հնարավորություն տրվեց ծանոթանալ ծիսական աղոթքներին և խորհրդածել եկեղեցու  
հայրերի ասույթներին՝ կապված հավիտենական կյանքի հետ: Նրանց ուսուցանվեց, որ ընդունելով Քրիստոսի  
Մարմինն ու Արյունը, մենք ճաշակում ենք հավիտենական կյանքը նույնիսկ այս աշխարհում: Դասը ձեր զավա-  
կին օգնում է զինվել հավիտենական կյանքի հույսով, որպեսզի չմոռանա այն նույնիսկ դժվարությունների հան-  
դիպելիս:

Դասում զարգացվող հիմնական գաղափարներից մեկն է Սուրբ Պատարագը՝ որպես նախաճաշակ գալիք  
արքայության: Մինչ ձեր զավակը կփորձի հասկանալ սա, այս առիթն օգտագործելով ընտանիքով միասին սո-  
վորե՛ք այս ամենը: Միասին հաճախեք եկեղեցի՝ Սուրբ Պատարագի և օգնե՛ք ձեր երեխային լավ ուշադրություն  
դարձնել կատարվող սրբազան արարողությանը: Ըստ հնարավորության՝ ձեր զավակի համար քահանայի հետ  
մի քանի րոպե զրուցելու առիթ ստեղծեք, որպեսզի նա կարողանա հարցումներ ուղղել Տեր հորը Սուրբ Պատա-  
րագի մասին: Ամենակարևորը, թո՛ւյլ տվեք նրանց սովորել Սուրբ Պատարագի մեծ նշանակության մասին այն  
վերաբերմունքի միջոցով, որ դուք որպես ընտանիք տածում եք Սուրբ Պատարագի նկատմամբ և թե ինչպես եք  
պատրաստվում ընդունելու Սուրբ Խորհուրդը:

Կյանքում դժվարությունների հանդիպելիս օգնե՛ք նրան հասկանալ, որ ներկա տառապանքները, որ մենք  
աստուծո ենք այս աշխարհում, ոչինչ են համեմատած այն փառքի հետ, որ պիտի հայտնվի մեզ, ինչպես Սբ Պո-  
ղոսն ասում է **Հռոմեացիներին 8.18** համարում: Քաջալերե՛ք ձեր երիտասարդին քայլելու Աստծո հետ և օգնե՛ք  
նրան ապրել հավիտենական կյանքի հույսով՝ միաժամանակ ապրելով Աստծո արքայությունն այսօր եկեղեցում:

Քննարկե՛ք սույն դասի տարբեր հատվածներն ընտանիքով: Միասին աղոթե՛ք կանոնավոր կերպով և փոր-  
ձե՛ք ապրել քրիստոսակենտրոն կյանքով, որպեսզի ձեր երեխան կարողանա ճաշակել դրախտային վիճակը ձեր  
ընտանիքից ներս:

# ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Սույն գրքի վերջին երկու դասերը նվիրված են աստվածպաշտության մեջ Սուրբ Գրքի գործածությանը:

**Դաս 35** քննում է Եկեղեցու ճաշոց գիրքը, որում առանձնացված սուրբգրային ամենօրյա ընթերցվածները ներկայացնում են փրկագործության պատմությունը ծիսական տարվա ընթացքում:

**Դաս 36** հրավիրում է աշակերտներին աշխատել սաղմոսների հետ, որոնք զգալիորեն շատ են գործածվում մեր Եկեղեցու աստվածպաշտության մեջ:



### ***Ծնողների համար***

10-րդ գլխի վերջին երկու դասերը լրացուցիչ հնարավորություն են ընձեռում աշակերտներին՝ տեսնելու, թե ինչպես է Սուրբ Գիրքն օգտագործվում Եկեղեցու ծիսապաշտամունքային կյանքում:

Ճաշոցը, որը պարունակում է նշանակված ընթերցվածներ Հին և Նոր Կտակարաններից ըստ տարվա յուրաքանչյուր օրվա, ներկայացնում է մեր փրկագործության պատմության պատկերը: Հիշյալ ընթերցվածները խրատում և դաստիարակում են ամեն քրիստոնյայի:

Սաղմոսարանը կամ Սաղմոսների գիրքը նույնպես մեծապես օգտագործվում է Եկեղեցու աստվածաշնորհության մեջ: Աշակերտներն առիթ կունենան սերտորեն աշխատելու ծիսապաշտամունքային որոշ դրվագների հետ:



# 35. ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՇՈՑԸ

«Մինչև իմ գալը հո՛գ տար նրանց մասին՝  
ընթերցելով Աստծո խոսքը, հորդորելով և ուսուցանելով»:

Ա Տիմոթեոս 4.13



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Պատկերացրո՛ւ, թե որպես ուսուցիչ աշխատանքի ես ընդունվել դպրոցում միջին տարիքի դեռահասներին դասավանդելու պատանեկան կյանքի մասին: Չափահասներն ասում են, թե չեն հասկանում պատանիներին, և դրա համար քեզ են հրավիրել, որպեսզի օգնես նրանց հասկանալու խնդիրը: Ինչպիսի՞ օգնություններ կպատմեիր նրանց: Ի՞նչ գրքեր կհանձնարարեիր կարդալ: Ուսուցիչները հաճախ նախապատրաստական այս փուլն անվանում են դասի ծրագիր: Ինչպիսի՞ն կլինեն քո դասի ծրագիրը:



Հավանաբար կուզեիր, որ այն լիներ հնարավորինս մանրամասնված: Նաև գուցե ուզեիր քննարկել ամենակարևոր փորձառություններից մի քանիսը, որ դու և քո հասակակիցներն ապրել եք: Որո՞նք կլինեին այդ փորձառությունները: Գրի՛ր քեզ համար դրանցից կարևոր մեկի մասին:

Հնարավորինս ընդգրկում լինելու նպատակով դու պետք է ուշադիր ծրագրես դասը: Այժմ պատկերացրո՛ւ, թե այս դասը տեղի է ունենալու ամեն օր, իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ հատուկ, երկարացված դասաժամերով: Բնական է, որ դասի ծրագիրը մեծ կլինի: Այն կպարունակի մասնակալաժամերի տեղեկություն և կառուցվի քեզ համար կարևոր բոլոր նյութերին: Եկեղեցին ունի նմանատիպ մի բան, որ կոչվում է ճաշոց:

Ճաշոցն օգնում է եկեղեցականներին գտնել Եկեղեցում կարդացվող օրվա ընթերցվածները: Բովանդակելով ծավալուն ընթերցվածներ Նոր Կտակարանից, հոգևորականները համոզված են, որ ժողովրդին ուսուցանում են Քրիստոսի Ավետարանի ամբողջական պատգամը:



Ճաշոցի նշանակությունն ավելին է, քան պարզապես Սուրբ Գիրք ուսուցանելը: Այն օգնում է մեզ ապրել ի Քրիստոս մեր կյանքը հոգևոր տոնակատարությունների միջոցով: Ճաշոցը կապված է տարվա եղանակների հետ.

Չատիկը տոնում ենք գարնանը, և ինչպես ծաղիկներն ու ծառերն սկսում են բողբոջել նոր կյանք ստանալով, այնպես էլ մենք ենք տոնում մեր նոր կյանքը Քրիստոսով: Ինչպես որ կատարում ենք բերքահավաքը աշնանը, այնպես և նշում ենք մեծ տոներից շատերը: Այս արարողությունների ընթացքում ճաշոցն օգնում է մեզ մեկնաբանել մեր կյանքի սեփական փորձառությունները հատուկ ընթերցվածների միջոցով:

*Կարդա՛ Աստվածաշնչի դասը և սովորի՛ր ավելին Եկեղեցում Սուրբ Գիրք կարդալու կարևորության մասին:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՀՈՐՀՈՐ՝ ԱՍԾՈ ԽՈՍՔՆ ԸՆԹԵՐՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### Ա Տիմոթեոսին 4.12-13, Բ Տիմոթեոսին 3.14-17

Տիմոթեոսին ուղղված իր նամակում, որին նա կոչում է «*հավայրի իր հարազատ որդի*», Սբ Պողոսը քաջալերում է իր երիտասարդ գործակցին՝ ամողջովին նվիրվելու Սուրբ Գրքի ուսուցման և տարածման գործին: Տիմոթեոսը, հակառակ իր երիտասարդ տարիքի կամ դրա պատճառով կարող էր օրինակ ծառայել իր եկեղեցու ավելի տարեց անդամներին իր կենսակերպով և Աստվածաշունչը կարդալու նվիրումով:


- Ընթերցի՛ր հետևյալ հատվածները Ա և Բ Տիմոթեոսից և տե՛ս, թե էլ ինչ է ասում Սբ Պողոսը Սուրբ Գրքի ընդհանրական ընթերցանության մասին: Ապա լրացրո՛ւ խաչքառը:

*Եվ որպեսզի ոչ որ քեզ չարհամարհի քո երիտասարդ տարիքի համար, օրինակ եղի՛ր հավատացյալներին քո խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և մաքուր կենցաղով: Մինչև իմ գալը հո՛գ տար նրանց մասին՝ ընթերցելով Աստված խոսքը, հորդորելով և ուսուցանելով:*

#### Ա Տիմոթեոսին 4.12-13

*Բայց դու հաստատիր մնա քո սովորած բաների մեջ, որոնց ճշմարտությունը վարահ ես, որովհետև գիտես, թե ումի՛ց ես սովորել: Եվ արդեն մանկուց գիտես Սուրբ գրքերը, որոնք զորություն ունեն քո միտքը բացելու իմաստությունը, որպեսզի հավատաս Հիսուս Քրիստոսին և փրկվես: Աստված ներշնչումով գրված բոլոր Սուրբ գրքերն օգտակար են թե՛ ճշմարտությունն ուսուցանելու և թե՛ սխալը հերքելու, մարդուն ճիշտ ճանապարհի վրա դնելու և արդար կյանքի դաստիարակությունը տալու համար, որպեսզի Աստվածն նվիրված մարդը լինի կատարյալ և պատրաստ՝ ամեն տեսակ բարի գործեր կատարելու:*

#### Բ Տիմոթեոսին 3.14-17



**Բառարան**  
**ՔԱՐՈՉԵԼ**  
Ավետարանի պատգամի մեկնություն և հանրության ուսուցում՝ ըստ որոշակի հատվածի:

#### Հորիզոնական

1. Սբ Պողոսը Տիմոթեոսին հորդորում է զբաղվել Ավետարանի պատգամի մեկնությամբ և հանրային ուսուցմամբ:

2. Այն բառը, որ նշանակում է, թե Սուրբ Գիրքը Աստծո կողմից է տրված:

4. Սուրբ Գրքի 2-րդ օգտակարությունը՝ հերքելու \_\_\_\_\_:

5. Սուրբ Գրքի 3-րդ օգտակարությունը՝ դնելու \_\_\_\_\_ ճանապարհի վրա:

#### Ուղղահայաց

1. Տիմոթեոսին հանձնարարվում է Սուրբ Գրքի մասին իր սովորածները կիսելու \_\_\_\_\_ եկեղեցու անդամների հետ:

3. Աստվածաշունչն իսկապես փրկությունը հնարավոր դարձավ \_\_\_\_\_ միջոցով:

5. Սուրբ Գրքի 1-ին օգտակարությունը՝ ուսուցանելու \_\_\_\_\_:

6. Ըստ Պողոս առաքյալի՝ Սուրբ Գիրքն ուսումնասիրողներն ու նրա պատգամը լսողներն ինչի են պատրաստվում և առաջնորդվում:

7. Սուրբ Գրքի 4-րդ օգտակարությունը՝ տալու արդար կյանքի \_\_\_\_\_:

Հիսուս Քրիստոսով փրկության պատգամը հենց Ավետարանի պատգամն է: Ամբողջ Աստվածաշունչը՝ Հին Կտակարանը, Ավետարանները, Առաքելական թղթերը Հիսուս Քրիստոսի մասին են: Դաշոնց օգնում է մեզ ունենալ ավելի ամբողջական և հավասարակշռված ընկալում Քրիստոսի կյանքի մասին: Կարդա՛ր հետևյալ ենթաբաժինը և տե՛ս, թե ինչպե՛ս է դա կատարվում:

## ԻՆՉ Է ՃԱՇՈՑԸ

Ճաշոցը, որ կոչվում է նաև տոնամակ, տոնանամակ, մեր Եկեղեցու ծիսամատյանն է: Ճաշոցի բովանդակությունը Տերունի տոների տարեկան տոնակարգի սահմանումն է՝ համապատասխան ընթերցվածներով: Այն պարունակում է կեսօրվա «ճաշու» ժամերգության ընթերցվածները և երգասացությունները: Ճաշոցի նախնական կազմավորումն ավանդաբար կապվում է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Սբ Հակոբոս Տյառնեղբոր (1-ին դար) և Սբ Կյուրեղ Երուսաղեմացու անունների հետ: Ենթադրվում է, որ Եկեղեցու այլ ծիսամատյանների հետ Ճաշոցը հայերեն է քարգանավել և կարգավորվել 5-րդ դարում: Ընթերցվելիք նյութը հիմնականում քաղված է Հին և Նոր կտակարաններից, հատկապես Գործք առաքելոցից, որն ընդմիջարկվել է սկզբնական շրջանում համապատասխան սաղմոսներով և մարգարեական օրհնություններով, իսկ ավելի ուշ՝ նաև շարականներով: Ճաշոցի կարգավորման և պահպանման գործում մեծ ավանդ ունեն Սբ Հովհաննես Օձնեցի (8-րդ դար) և Գրիգոր Վկայասեր (11-րդ դար) կաթողիկոսները: Հատկապես վերջինիս շնորհիվ Ճաշոցն առավել ազգային դիմագիծ է ստացել՝ կապված հայազգի սուրբերին և պատմական իրադարձություններին մվիրված տոների սահմանման և լրավակման հետ: Աստվածաշնչյան ընթերցումներից գատ Ճաշոցում ներառված են տարբեր հատվածներ ինչպես Հայ Եկեղեցու հայրերի (Եղիշե, Չաքարիա Զագեցի, Սբ Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Հովհաննես Երզնկացի Պլուզ), այնպես էլ հույն և ասորի հայրերի (Սբ Բարսեղ Կեսարացի, Սբ Հովհան Ոսկեբերան, Սբ Կյուրեղ Երուսաղեմացի, Սբ Եփրեմ Ասորի) մատենագրական ժառանգություններից:



Ճաշոցը Աստվածաշունչը կարդալու համակարգ է: Ճաշոցը կազմված է հետևյալ երեք աղբյուրներից՝ Հինկտակարանյան ընթերցվածներից, Ավետարաններից և Առաքելական մամակներից: Հիշյալ յուրաքանչյուր գրքերը դասակարգված են ըստ աստվածաշունչյան մեջ կիրառության կերպի:

Հինկտակարանյան ընթերցվածները հաճախ կոչվում են Մարգարեություններ, որոնք կազմում են ամբողջ տարվա ընթացքում Հին Կտակարանի քաղվածքների մեծ մասը:

Մեծ տեղ են գրավում ընթերցվածները քաղված Մատթեոսի, Մարկոսի, Դուկասու և Հովհաննեսի Ավետարաններից: Ճաշոցում կարելի է գտնել տարվա յուրաքանչյուր օրվա աստվածաշունչյան արարողությունների համար նշանակված ավետարանական քաղվածքները և արարողակարգային հիմնական ցուցումները: Տաճարի և Ճաշու Ավետարանները, որոնցից սովորաբար կարդում են օրվա ավետարանական ընթերցվածը, պարունակում են միայն չորս ավետարանները:

Առաքելական մամակները քաղված են Նոր Կտակարանի Առաքելական բոլոր թղթերից՝ բացառությամբ Հայտնության գրքի: Թեպետ Առաքելական մամակների ընթերցվածները հաճախ թեմատիկորեն կապվում են Ավետարանի ընթերցումներին, սակայն ընթերցվում են առանձին՝ հաջորդելով միմյանց:

Մեծ տեղ են գրավում ընթերցվածները քաղված Մատթեոսի, Մարկոսի, Դուկասու և Հովհաննեսի Ավետարաններից: Ճաշոցում կարելի է գտնել տարվա յուրաքանչյուր օրվա աստվածաշունչյան արարողությունների համար նշանակված ավետարանական քաղվածքները և արարողակարգային հիմնական ցուցումները: Տաճարի և Ճաշու Ավետարանները, որոնցից սովորաբար կարդում են օրվա ավետարանական ընթերցվածը, պարունակում են միայն չորս ավետարանները:

Առաքելական մամակները քաղված են Նոր Կտակարանի Առաքելական բոլոր թղթերից՝ բացառությամբ Հայտնության գրքի: Թեպետ Առաքելական մամակների ընթերցվածները հաճախ թեմատիկորեն կապվում են Ավետարանի ընթերցումներին, սակայն ընթերցվում են առանձին՝ հաջորդելով միմյանց:

Մեծ տեղ են գրավում ընթերցվածները քաղված Մատթեոսի, Մարկոսի, Դուկասու և Հովհաննեսի Ավետարաններից: Ճաշոցում կարելի է գտնել տարվա յուրաքանչյուր օրվա աստվածաշունչյան արարողությունների համար նշանակված ավետարանական քաղվածքները և արարողակարգային հիմնական ցուցումները: Տաճարի և Ճաշու Ավետարանները, որոնցից սովորաբար կարդում են օրվա ավետարանական ընթերցվածը, պարունակում են միայն չորս ավետարանները:

Առաքելական մամակները քաղված են Նոր Կտակարանի Առաքելական բոլոր թղթերից՝ բացառությամբ Հայտնության գրքի: Թեպետ Առաքելական մամակների ընթերցվածները հաճախ թեմատիկորեն կապվում են Ավետարանի ընթերցումներին, սակայն ընթերցվում են առանձին՝ հաջորդելով միմյանց:

## ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՐՈՒՄ ԸՍՏ ՃԱՇՈՑԻ

- Կարդալ քո խմբին նշանակված հատվածները Սուրբ Գրքից: Որոշի՛ր, թե որ տոնին է տվյալ ընթերցվածը պատկանում: Տոնի համարակալված թիվը գրի՛ր Ավետարանի համապատասխան հղումի առջև գծիկի վրա:

### ՏՈՆ

- Վերափոխումն Սբ Աստվածածնի
- Անառակի կիրակի (Մեծ Պահքի 3-րդ կիրակի)
- Հոգեգալուստ
- Ավագ Հինգշաբթի
- Ծաղկազարդ
- Խաչվերաց
- Պայծառակերպություն

### ԱՎԵՏԱՐԱՆ

- ..... Հովհաննես 14.25 - 31
- ..... Մատթեոս 20.29 - 21.17
- ..... Դուկաս 15.1 - 32
- ..... Հովհաննես 3.13 - 21
- ..... Մատթեոս 16.3 - 17.13
- ..... Դուկաս 2.1 - 7
- ..... Մատթեոս 26.17 - 30


## ԿՅԱՆՔԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ներքոնշյալ գծապատկերում նկարագրվում է Եկեղեցու կյանքի «շրջանները»: Նկատի առնելով, որ Եկեղեցու կյանքն արտահայտում է և մեկնաբանում մարդկային գոյությունը, Եկեղեցու տոները, հետևաբար, և դրանց հարակից հատուկ ընթերցվածները դասակարգված են ըստ այն իրադարձությունների, որոնք շատ կարևոր են մարդկանց համար:

Հին աշխարհում, որն առավել աչքի էր ընկնում հողագործությամբ, էլեկտրականության չգոյության պայմաններում, ամենակարևոր դեպքերը փոփոխվում էին արեգակի հետ: Չմեռնամուտը նշվում էր օրացույցի մեջ, երբ ցերեկը երկարում էր, իսկ գիշերը կարճանում: Եկեղեցին օգտագործում է լույսի այս թեմաները մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը տոնելիս: Օրինակ՝ Սուրբ Ծննդյան Կանոնի 8-րդ օրվա Օրհնության ԴՉ շարականում, որը երգվում է նաև Ջրօրհների արարողության ընթացքում, ասվում է հետևյալը. «Ո՛վ Լույսից՝ Լույս, Հոր կողմից ուղարկվեցիր և Սուրբ Կույսից մարմնացար, որպեսզի ապականված Աղամին վերադարձնես նորոգես»: Նույն կերպ, Չատկական շրջանը, որ ձգվում է Սուրբ Հարության տոնից և ավարտվում Հոգեգալուստով, սկսվում է գարնանային գիշերահավասարին, երբ գիշերը և ցերեկը հավասարվում են, և ավարտվում ամառնամուտով, երբ գիշերն սկսում է երկարել, իսկ ցերեկը՝ կարճանալ: Արդ, Եկեղեցին տոնում է Քրիստոսի Հարությունը ճիշտ այն ժամանակ, երբ երկրի վրա տեղի է ունենում բնության գարնանային վերազարթոնքը: Տոները հիշյալ կարևոր իրադարձություններին մոտ նշելով Եկեղեցին կրոնական իմաստ է հաղորդում եղանակներին:

- Նոր սովորածդ հիմք ընդունելով՝ մտածի՛ր, թե ինչպե՞ս են հետևյալ տոները կապակցվում իրենց «Կյանքի շրջաններին»:

- Վերափոխումն Սբ Աստվածածնի
- Գաբրիել Հրեշտակապետի Ավետումը Սբ Կույսին



# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ԱՇԽԱՏԵՆԸ ՃԱՇՈՅՈՎ

### Ո՞ՐՆ Է ՆԱԽ ԳԱԼԻՍ...



Երեքսրբյանը հոգևոր երգ է, որը երգվում է Ավետարանի վերաբերման ընթացքում՝ ճաշու ընթերցվածներին նախապատրաստվելու համար: Այսպես կոչվելու պատճառն այն է, որ հետևյալ կապակցության մեջ երեք անգամ կրկնվում է սուրբ բառը, և այն ամբողջությամբ երգվում է նույնպես երեք անգամ. «Սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ հարյար ի մեռելոց, ողորմի՛ր մեզ»: Ըստ տերունի տոների՝ այն փոքրիկ տարբերություններով մշտապես երգվում է Սուրբ Պատարագի ընթացքում:

Երեքսրբենին երգելուց հետո, սարկավազն սաղմոսերգում է մեծ քարոզը, ապա պատարագիչ քահանայի կարճ մաղթանքից հետո եկեղեցու ատյանից սարկավազը, մինչ ճաշու ընթերցվածները կարդալը և ընթերցումներից հետո, բարձրաձայն արտասանում է «ալելուիա, ալելուիա» և կարդում մի սաղմոս:

- Կարդա՛ հետևյալ սաղմոսները և որոշի՛ր, թե դրանք որ տոնին են արտասանվում: Շրջագծի՛ր ճիշտ պատասխանը:

1. **Քահանայք քո զգեցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:**  
 Ա. Խաչվերաց                      Բ. Սբոց Ղևոնդյանց                      Գ. Սովորական կիրակի (ոչ տոնական)
2. **Մեծացուցէ անչն իմ զՏէր, և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:**  
 Ա. Տյառնընդառաջ                      Բ. Սբ Սարգիս                      Գ. Ավետում
3. **Համբարչաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր չայնիւ փողոյ:**  
 Ա. Սուրբ Ծնունդ                      Բ. Համբարձում                      Գ. Հոգեգալուստ
4. **Ամպ լուսաւոր հովանի լիներ նոցա. չայն եղև յամպոյն որ ասէ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ:**  
 Ա. Մեծ Պահք                      Բ. Սուրբ Հարություն                      Գ. Պայծառակերպություն

### ԱՂՈԹՔ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐԳՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Եկեղեցում խոսված քարոզին, ուսուցմանը թե երգեցողությանը յուրաքանչյուրիս պարտականությունն է ուշադիր ունկնդրել ճաշու ընթերցվածներին: Այս ունկնդրումը կրավորական չէ. ամեն մեկը, ով լսում է Սուրբ Գրքի խոսքը, պետք է նաև քննի իր սիրտը, միտքը և խիղճը: Ընթերցանության ժամանակ հոչակվող ճշմարտությունները լսելիս մենք խնդրում ենք, որ Աստված դրանք իրականացնի մեր կյանքում:

Սուրբ Պատարագի ճաշու ընթերցվածներից առաջ, մինչ սարկավազները բարձրաձայն կարդում են մեծ քարոզը, պատարագիչ քահանան ծածուկ, բազկատարած արտասանում է հետևյալ աղոթքը.

*Տէր Աստված մեր, քո ծառաներիդ բազկատարած աղաչանքներն ընդունի՛ր և քո առաջ ողորմութեամբ ողորմի՛ր մեզ: Քո գթությունն ուղարկի՛ր մեր և քո ամբողջ ժողովրդի վրա, ովքեր ակնդեպ սպասում են սրանալ քո առաջ ողորմությունը:*

Ապա քահանան բարձրաձայն ասում է.  
*Որովհետև դու ողորմած և մարդասեր ես, ո՛վ Աստված, և քեզ վայելում է փառքը, իշխանությունն ու պարիվը, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:*



## ԵՐԳԵՆՔ

Սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ հարություն առար մեռելներից, ողորմի՛ր մեզ:  
Փառավորյալ և օրհնյալ միշտ Սուրբ Կույս Աստվածածին Մարիամ,  
ո՛վ մայր Քրիստոսի, մայրուցի՛ր մեր աղաչանքները քո Որդուն և մեր Աստծուն:

6  
Սուրբ Աստ - ուած, սուրբ եւ հը - զօր, սուրբ եւ ան - մահ,  
7  
որ յա - րեար ի մե - ռե - լոց ո - ղոր - մեա մեզ: Փառաւորեալ...  
3  
Փա - ռա - լոր - եալ եւ օրհ - նեալ միշտ սուրբ կոյս Աստ - ուա - ծա - ծին  
4  
Մա - ռի - ամ, մայր Քրիս - տո - սի մա - տո զա - ղա - չա - նըս մեր՝  
5  
Որդ - լոյ քո եւ Աս - տու - ծոյ մե - - - - ռո - - - - յ:

## ՏԵՏՐԱԿԻԴ ՄԵՁ



Սուրբ Պատարագի արարողության ընթացքում Աստծո Խոսքը լսելիս ինչպե՞ս կկամենաս, որ այն լուսավորեն քո սիրտն ու հոգին: Ի՞նչ ոլորտներ կան քո կյանքում հիմա, որ կարիք ունեն Աստծո ներգործության, որպեսզի կարողանաս աճել աստվածսիրության և աստվածահաճո կյանք ապրելու մեջ:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Յայժմ դու սովորեցիր, թե ինչպե՞ս է ճաշոցն օգտագործվում ընդհանրական աստվածապաշտության մեջ: Եկեղեցու ճաշոցը հասանելի է նաև քո անձնական օգտագործման համար եկեղեցական արարողություններին պատրաստվելու համար: Նկատի՛ առ այն եղանակը, որ եկեղեցու ճաշոցը կարող ես գործածել տանն աղոթելու համար: Քո ծովսի քահանայից խնդրի՛ր գրքեր կամ ուղեցույցներ, որոնք կօգնեն քեզ ներհյուսել Սուրբ Գիրքն անձնական կյանքիդ հետ: Հետևյալները ներկայացնում են տարբեր մոտեցումներ ճաշոցը ոչ միայն ներքին՝ եկեղեցական արարողությունների, այլ նաև արտաքին կյանքում կիրառելու վերաբերյալ:

1. **Ավեճ ար ան.** կարդացե՛ք տվյալ օրվա համար նշանակված ավետարանական ընթերցումը: Այդ ցուցումներին կարող ես ծանոթանալ եկեղեցական օրացույցից, որոնք հասանելի են մեր բոլոր եկեղեցիներում և հոգևոր գրախանութներում:
2. **Ամենօր յա սուրբօր ային ընթերցումներ.** կարդացե՛ք թե՛ Առաքելական նամակը և թե՛ Ավետարանի հատված տվյալ օրվա համար նշանակված:
3. **Տոնական.** ընթերցե՛ք Հին Կտակարանի ընթերցումները նշանակված տոնական հատուկ օրերի համար, մանավանդ ժամերգությունների ընթացքում: Միաժամանակ կարդացե՛ք Առաքելական նամակն ու Ավետարանը Սուրբ Պատարագին մասնակցելուց առաջ:

# 36. ՍԱՂԱՄՆԵՐՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Օրհնություն երգեցեք Տիրոջը: Նոր է՛րգ երգեցեք Տիրոջը, աստվածապաշտ մարդկանց համախմբումը օրհներգությանը թող հորդի»:

Սաղմոս 149.1



## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երաժշտությունը միշտ էլ եղել է ինքնարտահայտման յուրահատուկ միջոց: Երգերի միջոցով մարդիկ արտահայտել են իրենց ուրախությունն ու ցավը, երկյուղն ու զարմանքը և նույնիսկ իրենց զայրույթը: Երգերն օգտագործվել են փառաբանելու արժանահիշատակ գործերը կամ մարդկանց: Կարո՞ղ ես մի քանի օրինակ մտաբերել: Գրի՛ր միտքդ եկած որևէ մի երգի բառերը:

- Ինչպե՞ս ես ինքդ քեզ դրսևորում Աստծո առաջ: Ինչպե՞ս ես աղոթում կամ փառաբանում Աստծուն եկեղեցում և եկեղեցուց դուրս: Գրի՛ր պատասխաններդ ներքևի տողերին:

Եկեղեցում՝ .....

.....

Տանը և դպրոցում՝ .....

.....



- Գրի՛ր իմացածդ սաղմոսից մի տող: Եթե ոչ մի բան չհիշես, օգտվի՛ր Աստվածաշնչից:

.....  
.....

- Ինչո՞ւ ընտրեցի՛ր հենց այդ տողը և ինչպե՞ս ես այն հասկանում: Մտածի՛ր, թե ինչո՞ւ է այդ տողը քեզ հոգեհարազատ: Որտե՞ղ և ե՞րբ ես սովորել այն, ե՞րբ և որտե՞ղ ես լսել այն աղոթելիս: Կողքի էջի վրա գրի՛ր, թե քո կարծիքով ի՞նչ է արտահայտում սաղմոսը:



*Աստծո ժողովուրդն օգրագործել է սաղմոսներ՝ օրհնաբանելու Աստծուն: Կարդա՛ Աստվածաշնչի դասը, որպեսզի ավելի՛ն գիտենաս:*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ԱՍԾՈ ժՈՂՈՎՐԴԻ ԱՂՈԹՔԻ ԵՐԳԵՐԸ

Սաղմոս 6.1, 22.18, 32.1-2, 32.5, 38.3-4, 51.2-4, 69.21, 77.19-20, 77.19-20, 92.1-2, 105.16-17, 106.9, 107.1, 150.1

Սաղմոսարանը հին Իսրայելի երգարանն էր ու նաև Եկեղեցու համար է դարձել աղոթքի և փառաբանության գիրք: «Սաղմոս» բառը հունարեն է և գալիս է Հին Կտակարանի Յոթանասնից թարգմանությունից: Եբրայերեն բառն է «թիլլահ», որ նշանակում է «օրհներգություն»: Սաղմոսների արտասանությունն ուղեկցվում է լարային գործիքի նվագակցությամբ:



Սաղմոսները դասակարգվում են ըստ գրական տեսակի կամ ծիսական գործածության և լինում են տարբեր տեսակների: Օրինակ՝ թագավորական, ուխտավորական, տաճարական, գոհաբանական, ողբեր կամ օգնության կանչեր, ինչպես նաև հույս, վստահություն, ներքին խաղաղություն և ուրախություն արտահայտող սաղմոսներ:

*Տե՛ր, զայրույթիդ մեջ մի՛ հանդիմանիր ինձ, բարկությանդ մեջ մի՛ պատժիր ինձ:*

Սաղմոս 6.1

*Ուրեկիքի փոխարեն լեղի փվեցին ինձ, երբ ծարավ էի, քացախ փվեցին խմելու:*

Սաղմոս 69.21

*Նա սաստեց Կարմիր ծովին, և ծովի մեջ ցամաք բացվեց, և Տերն իր ժողովրդին անցկացրեց անդունդների միջով, ինչպես ցամաքով:*

Սաղմոս 106.9

*Երանի՛ նրան, որի հանցանքները թողություն գրաս, որի մեղքերը ներվեցին: Երանի՛ այն մարդուն, որի մեղքը Տերը հաշվի չի առնում, որի հոգու մեջ նենգություն չկա:*

Սաղմոս 32.1-2

*Տերը սով բերեց նրանց երկրի վրա, ուրեկիքի ամեն պաշար սպառեց: Բայց Հակոբի սերունդներին փրկելու համար նրանցից առաջ Եգիպտոս ուղարկեց Հովսեփին, որն իբրև սպրուկ վաճառվեց:*

Սաղմոս 105.16-17

*Գոհություն հայտնեցեք Տիրոջը, որովհետև բարի է, որովհետև նրա սերը հավերժական է:*

Սաղմոս 107.1

*Մեղքս քեզ հայտնեցի, անօրենությունս չժածկեցի, սասցի. «Հանցանքներս խոստրովանեմ Տիրոջը», և դու ներեցիր մեղքս և ջնջեցիր պատիժս:*

Սաղմոս 32.5

*Քո սաստիկ բարկության հետևանքով մարմնիս վրա առողջ տեղ չի մնացել. մեղքիս պատճառով մարմնիս մեջ բոլորովին հանգստություն չկա: Որովհետև անօրենություններս գլխիցս վեր բարձրացան, ծանր բեռի պես ճնշում են ինձ:*

Սաղմոս 38.3-4

*Ինձ ամբողջությամբ մաքրի՛ր իմ անօրենությունից և սրբի՛ր ինձ իմ մեղքից: Գիտեմ, հանցանք գործեցի, մեղքս մտքիցս բնավ չի ելնում: Քո, միայն քո դեմ մեղանչեցի, Տե՛ր, գործեցի այն ինչ որ չարիք էս նկատում: Ուստի արդար էս, ինչ վճիռ էլ որ սահմանես:*

Սաղմոս 51.2-4

*Օրհնություն երգեցեք Տիրոջը: Օրհնություն երգեցեք Աստուծուն իր սրբաբանի մեջ, օրհնություն երգեցեք նրան իր ամրոցի՝ երկնքի մեջ:*

Սաղմոս 150.1

*Իմ հագուստներն իրար մեջ են քաժանում, պատրուճանիս վրա վիճակ են գցում:*

Սաղմոս 22.18

*Ի՛նչ լավ է գոհություն մատուցել քեզ, ո՛վ Տեր, ներքող երգել անվանդ, ո՛վ Բարձրյալ: Ամեն առավուր քո սերը պատմել և հավատարմությունդ հռչակել գիշերները՝ փասնալար նվագարանով ու փավիղով և քնարի նվագակցությամբ:*

Սաղմոս 92.1-3

*Ծովի մեջ դու ճամփա բացեցիր, խորունկ ջրերը կտրեցիր անցար, առանց ուրբերիդ հեղքը թողնելու: Քո ժողովրդին ոչխարի հուրի պես առաջնորդեցիր Մովսեսի և Ահարոնի ձեռքով:*

Սաղմոս 77.19-20





## ԱՇԽԱՏԱՆՔ ՍԱՂՄՈՍՆԵՐՈՎ

- Կարդա՛ նախորդ էջի սաղմոսների հատվածները և գրի՛ր դրանց հղումները աղյուսակի համապատասխան խորագրի տակ:

| Ապաշխարություն/<br>զղջում | Գոհություն | Պատմություն/<br>Աստժող<br>հավատարմություն | Օրհներգություն | Մարգարտություն/<br>Մեսիական | Այլ թեմա |
|---------------------------|------------|---|----------------|-----------------------------|----------|
|                           |            |   |                |                             |          |
|                           |            |   |                |                             |          |
|                           |            |   |                |                             |          |
|                           |            |   |                |                             |          |

## ՍԱՂՄՈՍԱՐԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- Սաղմոսները բաժանված են հինգ գրքերի և 150 գլուխների: Թեպետ նրանք գրվել են մի քանի մարդկանց կողմից, սակայն դրանց մեծամասնությունը վերագրվում է Դավիթ թագավորին: Դրանք հիմնականում գրվել են եբրայերեն լեզվով: Նայի՛ր Աստվածաշունչը և գտի՛ր, թե քանի՞<sup>օ</sup> գլխից է բաղկացած յուրաքանչյուր գիրքը:

| Գիրք Ա | Գլուխ 1-41 |
|--------|------------|
| Գիրք Բ |            |
| Գիրք Գ |            |
| Գիրք Դ |            |
| Գիրք Ե |            |

Սաղմոս 23-ը եբրայերենով

מִזְמוֹר לְדָוִד יְהוָה רֵעִי לֹא אֶחְסָר:  
בְּנֵאֻתֹת דְּשָׂא יִרְבִּיצֵנִי עַל-מִי מְנַחֹת יִנְהַלֵּנִי:  
גִּפְשִׁי יִשְׁוֹבֵב יִנְחֵנִי בְּמַעְגְּלֵי-צֶדֶק לְמַעַן שְׂמוֹ:

- Նայի՛ր գլուխների վերնագրերին և նշմարի՛ր առնվազն տասը գլուխներ, որոնք վերագրվում են Դավիթին:

- Սաղմոսներում կարելի է գտնել մեր զգացումներից ու հույզերից շատերը՝ արտահայտված մարդկանց աղոթքի միջոցով, ովքեր անցնում էին զանազան դժվարին իրավիճակների միջով: Սույն աղոթքներն օգտակար են մեզ համար, քանի որ մենք ևս մեր առօրյա կյանքում հանդիպում ենք բազում դժվարությունների: Հետևյալ վարժության մեջ հնարավորություն կունենաս գտնել հիշյալ սաղմոսների տողերը: Ներքևում տրված Սաղմոսների գլուխ(ներ)ից դո՛րս գրիր երկու կամ ավելի տողերի համարներ, որոնք կիրառելի են յուրաքանչյուր պարագայի համար.

- ➔ Ներքին հաղաղություն. **Սաղմոս 86**
- ➔ Օգնություն նեղության մեջ. **Սաղմոս 70, 77**
- ➔ Ապաշխարություն. **Սաղմոս 32, 38**
- ➔ Տխրություն և վիշտ. **Սաղմոս 42, 43**
- ➔ Մխիթարություն, հույս և վստահություն. **Սաղմոս 121, 124**
- ➔ Անհանգստության և տառապանքի փարատում. **Սաղմոս 55, 102**

# ԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## ՍԱՂՄՈՍՆԵՐՆ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սաղմոսները շատ կարևոր դեր են խաղում եկեղեցական աղոթասացության մեջ: Ծիսական ավանդությունն առանձնացնում է որոշակի սաղմոսներ Առավոտյան, Երեկոյան և Ճաշու ժամերգությունների համար: Միաժամանակ, եկեղեցական ամբողջ տարվա ընթացքում մասնավոր սաղմոսներ կան դրանց տողեր ըստ հատուկ տոների ընդգրկված են ծիսապաշտության մեջ, որպես մարգարեական սահմանումներ, պատկերելով այն գործը, որ Քրիստոսը կատարեց մեզ համար: Սաղմոսների գործածումն օգնում է մեզ հասկանալ Քրիստոսի առաքելության ամբողջությունն իր ժողովրդի կյանքում:


Ահա մի քանի սաղմոսներ, որոնք օգտագործվում են մեր Եկեղեցու ժամապաշտության մեջ: **Սաղմոս 51-ը** գործածվում է ծիսական շատ արարողությունների ու ժամերգությունների մեջ: Կարդա՛ սաղմոսները և պատասխանի՛ր հարցումներին: Միայն որոշ տողեր են տրված այստեղ, և խորհուրդ է տրվում ծանոթանալ ամբողջ սաղմոսին:

### Սաղմոս 51

*Ողորմի՛ր ինձ, ո՛վ Աստված, դու որ այնքան ողորմած ես. քո անսահման գթությանը ների՛ր ինձ իմ հանցանքը: Ինձ ամբողջությամբ մաքրի՛ր իմ անօրենությունից և սրբի՛ր ինձ իմ մեղքից: Գիտեմ, հանցանք գործեցի, մեղքս մաքրիցս բնավ չի ելնում: (1-3)*

*... Սակայն, դու, Տե՛ր, որովհետև մարդու սրտի մեջ ճշմարտությունն ես ուզում րեանել, ծածուկ կերպով իմաստությունն հայրնեցի՛ր ինձ: (6)*

*... Եթե՛ զոհ կամենայիր, կմատուցեի, բայց դու ողջակեզ էլ չես ուզում: Քո ուզած զոհը զոջումով լի հոգի է, ո՛վ Աստված, հեղինակար մի՛ մերժի՛ր զոջումնայից և ընկնված իմ սիրտը: (16-17)*



➤ Ի՞նչ յուրահատուկ քենա ունի այս սաղմոսը:

➤ Ո՞րն է Աստծուն ընդունելի զոհը: Ի՞նչ կարող ես անել, որպեսզի Աստծուն մատուցես այդ զոհը:  
Սաղմոս 141

*Տե՛ր, օգնության եմ կանչում քեզ, հասի՛ր ինձ, լսի՛ր իմ աղաղակը, աղաչո՛ւմ եմ քեզ: Իմ աղոթքը քեզ մատուցված խունկ թող լինի, վեր բարձրացած ձեռքերս՝ իրիկնային զոհ: Տե՛ր, բերանիս պահապան դիր, պահա՛կ կարգի՛ր շրթունքներիս դռան առջև: (1-3)*

➤ Հիշյալ տողերը, քո կարծիքով, օրվա ո՞ր ժամին է գործածվում ժամապաշտության մեջ:

➤ Ինչո՞ւ պետք է աղոթել Աստծուն, որպեսզի «պահակ կարգի շրթունքներիս դռան առջև»: Ի՞նչ ես կարծում, այս աղոթքն անհրաժե՞շտ է օգտագործել քո առօրյա կյանքում:

## Սաղմոս 22

- Սաղմոսի շատ տներ են գործածվում Ավագ Շաբաթվա ընթացքում, որոնք խոսում են Քրիստոսի մասին: Սաղմոսներից մեկը, որ պարունակում է մեսիական մարգարեություններ և օգտագործվում է հատկապես Ավագ Հինգշաբթի արարողություններին, **Սաղմոս 22**-ն է: Կարդա՛ հիշյալ սաղմոսը և գտի՛ր այն տողերը, որոնք առնչվում են Քրիստոսի խաչելության հետ: Գրի՛ր այդ տողերը ներքևի գծերի վրա և մեկ-երկու բառով նկարագրի՛ր, թե ինչպե՞ս են այդ մարգարեություններն իրականացել Քրիստոսով:


- Սաղմոսները կարևոր դեր են խաղում ուղղափառ աստվածապաշտության մեջ: Ի վերջո, Քրիստոսը նույնպես աղոթեց՝ օգտագործելով սաղմոսներ: Կարդա՛ **Սաղմոս 31.5** և **Ղուկաս 23.46** համարները և տես՛, թե ի՞նչ աղոթեց Քրիստոսը խաչի վրա, և այն գրի՛ր ներքևի գծին:

## ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ՝ ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուղղափառ քրիստոնյայի հոգևոր կյանքում սաղմոսների գործառնության մասին լավագույնս ասվում է Սբ Բարսեղ Մեծի կողմից:

*Երբ Սուրբ Հոգին փեսավ, որ մարդկային ցեղը միայն դժվարությամբ է ուղղվում դեպի առաքինություն, որի պատճառը հաճույքին հակված լինելու մեր ցանկությունն է, մենք արհամարհեցինք ուղիղ կյանքը, իսկ ի՞նչ արեց նա: Մեղեդու անուշությունը, որ նա ընկերացրեց վարդապետության հեյր, որպեսզի հնչող ձայնի հաճելիությունն ու փափկությունն ընդունելիս ընկալենք բառերի օգտակարությունը, ինչպես իմաստուն բժիշկ, ով երբ դժվարահաճ մարդուն փայխ է դառը դեղեր խմելու համար, հաճախակի բաժակին մեղր է քսում: Հեփեսաբար, նա սահմանել է մեզ համար սաղմոսների այս ներդաշնակ մեղեդիները, որպեսզի մանկահասակները և նույնիսկ երիտասարդները, որ դրանք հաճույքով երգում են, իրականում կրթվում են հոգով:*

(Քարոզ Ժ, 1, Սաղմոս Ա-ի մասին)



*Որդի՛, Աստվածաշնչի բոլոր գրքերը՝ թե՛ Հին և թե՛ Նոր կրակարանները, ներշնչված են Աստուծոց և օգտակար են ուսուցման համար, ինչպես որ ասված է սակայն նրանք, ովքեր իրապես ուսումնասիրում են դրանք, Սաղմոսարանը մատուցում է յուրահարույժ գանձարան: Աստվածաշնչի յուրաքանչյուր գիրք ունի, իհարկե, իր իսկ հարույժ պարզամբ: Հնգամարյանը, օրինակ, պատմում է աշխարհի սկզբնավորման, նահապետների գործունեության մասին, Ելքը՝ Բարայելի՛ Եգիպտոսից դուրս գալու, Օրենքի փոխության մասին, ... Մարգարեությունները կանխատեսում են Փրկչի գալստյան մասին, մեր մորթի մեջ դրոշմում են պարավիրանները, հանդիմանում մեղավորներին, ...: Հիշյալ գրքերից յուրաքանչյուրը, ինչպես փեսնում ես, նման է մի պարտեզի, որում աճում է մեկ փեսակի պտուղ, և ընդհակառակը, Սաղմոսագիրքը նման է այն պարտեզին, որում բացի իր յուրահարույժ պտղից, աճում է նաև մնացած բոլոր փեսակներից:*

Ալեքսանդրիայի Արքեպիսկոպոս Սբ Աթանասի նամակը Մարցելինուսին՝ Սաղմոսների մասին

Ուղղափառ աստվածաշնորհի մեջ Սաղմոսագրքի վիթխարի ազդեցության մասին է խոսում 4-րդ դարի Եկեղեցու հայրերից Սբ Հովհան Ոսկեբերանը.

*Երբ մենք հսկում կամ խոկում ենք կատարում եկեղեցում, Գավիթն է գալիս սկզբում, վերջում և մեջտեղում: Երբ վաղ առավոտյան մենք ուզում ենք երգել, կրկին Գավիթն է սկզբում, վերջում և մեջտեղում: Երբ մենք տարված ենք ննջեցյալի հուղարկավորության արարողությանը, կամ երբ կույսերը տանը նստած իլիկ են մանում, Գավիթն է սկզբում, վերջում և կենտրոնում: Բնչ զարմանալի հրաշք: Շատերը, ովքեր փոքր-ինչ առաջընթաց են ունեցել գրականության մեջ, անգիր գիրեն Սաղմոսարանը: Միայն քաղաքներում և եկեղեցիներում չէ, որ Գավիթը հայտնի է գյուղական շուկաներում, անապատում և անմարդաբնակ վայրերում նա է հնչեցնում Աստուծո փառաբանությունը: Վանքերում, հրեշտակների դասերի սուրբ զնդերում և Գավիթն է սկզբում, վերջում և կենտրոնում: Կուսանոցներում, որպեսզի հավաքված են Մարիամի հեղուկները, անապատներում, որպեսզի մարդիկ խաչված այս աշխարհի համար ապրում են իրենց կյանքը երկնքում Աստուծո հետ, կրկին Գավիթն է սկզբում, վերջում և մեջտեղում: Բոլոր մյուս մարդիկ, երբ գիշերը տարված են քնով, Գավիթն ինքն է միայն արթուն, և հավաքելով Աստուծո ծառաներին սերով-բեական խմբերում, երկիրը երկինք է դարձնում, և մարդկանց վերածում հրեշտակների:*



- Գրի՛ր մի կապակցություն հայրերի գրվածքներից, որն առավել քեզ հոգեհարազատ է:

---



---



---

- Սաղմոսների շատ տողերին և հայրերի գրվածքներին ծանոթանալուց հետո ո՞րն է քո եզրակացությունը սաղմոսների վերաբերյալ:

---



---

### ՏԵՏՐԱԿԻՂ ՄԵՋ



Գրի՛ր մի աղոթք սաղմոսի նմանողությամբ: Անդրադարձի՛ր սեփական կյանքիդ և փառաբանի՛ր Աստծուն աղոթքիդ միջոցով:

### ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Սույն դասը նպատակ ուներ ձեր զավակին հասկանալի դարձնել սաղմոսների գործածությունն աստվածաշնորհի մեջ և քաջալերել ապրելու Աստված փառաբանելու կյանք: Ձեր զավակը սովորում է, որ սաղմոսները գլխավոր դեր ունեն աստվածաշնորհի մեջ: Աշակերտներին հնարավորություն տրվեց խորանուխ լինել ծիսապաշտական արարողությունների մեջ և խորհրդածել, թե Եկեղեցու հայրերն ինչ են ասել սաղմոսների մասին և ըստ այդմ կատարել իրենց դիտարկումները: Նրանց ներկայացվեցին զանազան թեմաներ Սաղմոսագրքից: Դասում ընդգրկված են տարբեր տողեր սաղմոսներից, որոնք ձեր զավակը կարող է օգտագործել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելիս:

Սաղմոսներում հանդիպող հիմնական թեմաներից մեկը ապաշխարությունն է: Մինչ ձեր զավակն այս ամենի մասին ավելի բաներ է սովորում և առաջնորդվում ապաշխարելու, առիթն օգտագործելով ապաշխարե՛ք միասին որպես ընտանիք: Ներե՛ք իրար և քաջալերե՛ք միմյանց: Սաղմոսների գիրքը նաև տալիս է շատ օրինակներ մարդկանց, ովքեր հույսը դրել են Աստծո վրա և օգնություն ստացել: Այն նաև խրախուսում է մեզ գոհություն հայտնել բոլոր պարագաներում: Թույլ տվե՛ք ձեր երիտասարդին տեսնելու սա ձեր կյանքում: Շնորհակալություն հայտնե՛ք ամեն ինչ համար և փառաբանե՛ք Տիրոջը նույնիսկ դժբախտության մեջ: Ձեր կյանքը կլինի մի օրինակ նրանց համար, մինչ նրանք փնտրում են ապրել Աստված փառաբանելու կյանք: Թող ձեր կյանքն ինքնին նմանվի Սաղմոսների գրքին, որից ձեր զավակը կարող է սովորել ինչպես օրինաբանել Աստծուն:

Քաջալերե՛ք ձեր երիտասարդին քայլելու առ Աստված հետ և օգնե՛ք նրան սովորել աղոթել սաղմոսներով: Սաղմոսների ընթերցումն օգնում է մեզ իրականացնել մեր ունեցած այն ուրախությունը, որ մենք Աստծո զավակներն ենք: Ընտանիքով միասին կարդացե՛ք սաղմոսները և ապրե՛ք այն բերկրանքն ու խաղաղությունը, որ տրվեց մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով:

# ԱՂՈԹՔՆԵՐ

16 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



## 1. ԿՆԻՔ ՀԱՎԱՏՈՒ (ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ)

Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելի և աներևույթ էակների Արարչին:

Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, Միածին, այսինքն՝ Հոր նույն էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ թե արարած: Բնությամբ Հոր հետ նույնը, որի միջոցով գոյացան ամեն ինչ երկնքում և երկրի վրա, տեսանելիներն ու անտեսանելիները: Ով մեզ՝ մարդկանց, և մեր փրկության համար երկնքից իջնելով՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգու գործությամբ, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ մարդկային բնությունն ունի ճշմարտապես, այլ ոչ թե առերևույթ. չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մեռածներին, և նրա թագավորությունը վախճան չունի:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, որ անստեղծ է և կատարյալ, ով խոսեց Օրենքի, մարգարեների և Ավետարանի մեջ, իջավ Հորդանան գետ, քարոզվեց առաքյալների կողմից և բնակվեց սուրբերի մեջ:

Հավատում ենք նաև մեկ, ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցուն, մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության, մեռածների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին:

## 2. ՊԱՅՊԱՆԻՉ ԱՐՈՒԹՔ

Բարձրյալ Քրիստոսին դարձնենք մեզ ապավեն, որպեսզի չարը չմոտենա մեզ և բոլոր ցավերն ու տանջանքները հեռու մնան մեր բնակարաններից. Ամեն:

## 3. ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ԱՐՈՒԹՔ

Քո խաչը թող մեզ ապավեն լինի, Տե՛ր Հիսուս, երբ գաս Հոր փառքով լուսավոր ամպերի միջով: Այնժամ թող մենք՝ քեզ հուսացողները, չամաչենք, այլ քո գործությամբ մեծապես ուրախանանք քո Սուրբ Աջի ներքո՝ որպես լույսի որդիներ և ցերեկվա որդիներ:

## 4. ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՀԱՄԱՐ

(Հասվածներ Սբ Ներսես Շնորհալու աղոթից,  
որ կազմված է 24 սնից՝ ըստ օրվա ժամերի)

1. Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, անստեղծ և անմահ բնություն, Արարիչ հրեշտակների և մարդկանց և բոլոր ստեղծվածների. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
2. Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ անբաժանելի լույս, միասնական Սուրբ Երրորդություն և մեկ Աստվածություն, Արարիչ լույսի և հալածիչ խավարի, հալածի՛ր իմ հոգուց մեղքերի և տգիտության խավարը. և լուսավորի՛ր միտքս այս ժամին աղոթելու Քեզ հաճույքով և Քեզնից ստանալու իմ խնդրանքները. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
3. Հայր երկնավոր, Աստված ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն փնտրելու մոլորված ոչխարի, մեղավոր եմ երկնքի և Քո առջև, ընդունի՛ր ինձ, ինչպես անառակ որդուն, և հազցրո՛ւ ինձ առաջին պատմուճանը, որից զրկվեցի մեղքի պատճառով. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
4. Որդի՛ Աստծո, Աստված ճշմարիտ, որ խոնարհվեցիր հայրական ծոցից և մեր փրկության համար մարմին առար սուրբ Կույս Մարիամից. խաչվեցիր, թաղվեցիր և հարություն առար մեռելներից և փառքով համբարձվեցիր Հոր մոտ. մեղավոր եմ երկնքի և Քո առջև, երբ Քո արքայությամբ գաս, ինձ էլ հիշի՛ր ինչպես ավազակին. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
5. Հոգի՛ Աստծո, Աստված ճշմարիտ, որ իջար Հորդանան գետ և վերնատուն, և լուսավորեցիր ինձ սուրբ Ավագանի մկրտությամբ, մեղավոր եմ երկնքի և Քո առջև, մաքրի՛ր ինձ վերստին աստվածային Քո հրով, ինչպես սուրբ առաքյալներին՝ հրեղեն լեզուներով. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
6. Ողորմություն պարզևող, պարզևի՛ր ինձ ուղղափառ հավատով և բարի գործով և Քո սուրբ մարմնի և արյան հաղորդությամբ գալ դեպի Քեզ. և ողորմի՛ր Քո արարածներին ու նաև ինձ՝ բազմամեղիս:
7. Փառավորյա՛լ Տեր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները և բարությամբ կատարի՛ր իմ խնդրանքները՝ բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի, Հովհաննես Սկրտչի, Սուրբ Ստեփանոս Նախավկայի, Սուրբ Գրիգոր մեր Լուսավորչի, սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի, մենակյացների և երկնավոր ու երկրավոր բոլոր սուրբերի: Եվ Քեզ փառք և երկրպագություն անբաժանելի Սուրբ Երրորդությանդ հավիտյանս հավիտենից. ամեն:





## Տեր Յերկնից ԴԶ

1. 

Գը - թա - Տէ - - ը ի հո - զի - ս մեր նըն - ջե - -



ցե - - - լոց եւ յիշ - եա ո - - - դո - ը -



մու - - - թեամբ. քան - զի զի - նք սու - ըբ ա - ը -



եա - ն քո են. ի յո - - ը - ժա - - մ



հրա - շա - լի ձա - յ - նի - - ւ փո - - - դոյն



յա - - - ո-նեն մե - ո-եա - լքն, եւ կա - ն ա - ռա -



ջի ա - - - լոր քո թե - - - - մին:

**Փառք** 

Փա - ռք Դօ - ը եւ Ո - ըդ-ւոյ եւ Դոզ-ւոյն Աը - ը-բոյ:



Այժմ եւ մի - շտ եւ յա - լի - տեանս յա - լի - տե-մից ա - մէ - ն:

2. 

Զլու - սա - լոր - եալ - քոս ծը - նըն - դեա - մբ



սուրբ ա - լա - - - զա - - - նին. մի բար - կու -



թեա - մբ խրա - - - տեր եւ մի սըրտ - մը - տու - թեամ -



բող քո յա - ն դի - - - մա - - - ներ,



ի յո - ը - ժա - - մ հրա - շա - լի ձա - յ -



նի - ւ փո - - - դոյն յա - ո-նեն մե - ո-եա - լքն,



եւ կա - ն ա - ռա - ջի ա - հա-ւոր քո թե - մին:

## Քրիստոս մեր մեջ հայտնվեց...

Moderato

Քրիստոս ի մեջ մեր յայ-տնե-ցաւ. Որ էնն Աստուած  
 Ե - կե - դե - ցիս մի անձն ե - դեւ համ-բոյ-րըս յօդ  
 4  
 աստ բազ-մե - ցաւ, Խա - դա - դու-թեան ձայն հըն - չե - ցաւ  
 12  
 լըր - ման տը - լաւ. Թըշ - նա - մու - թիւ - նըն հե - ու - ցաւ  
 7  
 սուրբ ող - ջու - նի հրա-ման տը - լաւ. Արդ պաշ - տօ - նեայք,  
 10  
 սէրն յընդ-հա - նու - րըս սը - փոե-ցաւ.  
 14  
 բարձեալ ըզ-ձայն՝ տուգօրհնութիւն ի մի բե-րան: Մի - ա - սնական  
 18  
 աս-տուա-ծու-թեանն, ո-րում սրով-բէքն են սըր-բա - բան:

## Քրիստոս պատարագեալ

(Նոտաների սկիզբը տես էջ 84):

8  
 Զմար-մին իւր տայ մեզ կե - բա-կուր եւ սուրբ գա - թիւնն իւր ցօ-ղէ ի  
 12  
 մեզ. ա - լէ - լու - իա: Մա - տիք առ տէր եւ ա - ուք ը-զ  
 16  
 լոյս. ա - լէ - լու - իա: Ճա - շա - կե - ցեք եւ տե - սեք զի  
 20  
 քաղցր է տէր. ա - լէ - լու - իա: Օ - րհ - նե -  
 24  
 ցէ - ք ը - զ տէր յե - ր - կի - նս. ա - լէ - լու - իա:

28  
 0 - րհ - նե - ցե - ք ը - զ-նա ի բար - ձունս ա - լե -  
 32  
 լու - իս: 0 - րհ - նե - ցե - ք ը - զ-նա ամ - ե -  
 36  
 նայն հրեշ - տակք նո - րա. ա - լե - լու - իս:

## Ճաշու շարական Հարություն ԳԿ

(Նոտաների սկիզբը տես՝ էջ 72):

2. 331  
 So - նե այ - սոր ե - րու - սա - ղեմ.  
 332  
 յա - ւա - տա - ցե - լո - ց բազ - մու - թեամբ՝ զնա - ւա - կա - տիս  
 333  
 սուրբ ե - կե - ղեց - լո - - - - յ. պա - հեա ըզ -  
 334  
 սա ան - շա - րժ յա - լի - տեան:  
 Փառք 335  
 Փառք Բոր եւ Որդ - լոյ եւ Հոգ - լոյն Սըր - բոյ:  
 336  
 Այժմ եւ միշտ եւ յա - լի - տեանս յա - լի - տե - մից ա - մէ - ն:  
 3. 337  
 Բա - ցան դրու - նըք հա - ւա - տոյ նո - ը Սի - ով - մի՛.  
 338  
 ըն - դու - նել զան - մահ փե - սա - յդ յա - ռա - զաստ.  
 339  
 բաշ - խե զմար - մին քո եւ զար - իւ - - - - ն.  
 340  
 պա - հեա ըզ - սա - ան - շարժ յա - - լի - տեան:

## Ճաշու շարական Սբ Էջմիածնի տոնի

Տէր թա - գա - տը - եաց, վա - յել - չու-թիւն ըզ - գե - ցաւ: Այ -  
 սոր ու - ռա - խա - ցեալ ցըն-ծան եր-կնից բազ - մու - թիւքն.  
 ի նա - ւա - կա - տիս սուրբ ե - կե - ղեց - տոյ. քան - զի  
 շնոր - հե - ցաւ մեզ քա - հա - նա - յա - պետ յա - լի - տե -  
 մից. ի լու - սա - տ - ընել ըզ - կա - թո - ղի - կէ սուրբ զե -  
 կե - ղե - ցի. Փառք գա - լըս - տեան թո Տէր:  
 Այս - սոր սիւն լու - տոյ հո - վա - մի ե - ղեւ մեզ ի  
 բար - ծանց. քան - զի թա - գա - տըն երկ - նա - տը ե - կա - տ -  
 ղի ի սուրբ ե - կե - ղե - ցի. եւ զօրք  
 հրեշ - տա - կաց ծա - ւա - լեալ տօ - մեն ընդ մարդ - կան.  
 Փառք գա - լըս - տեան թո Տէր: Փառք Դօր եւ Որդ-տոյ եւ  
 Դոզ - տոյն Ազր - բոյ այժմ եւ միշտ եւ յա - վիտ-եանս յա - լի - տե - մից.  
 ա - մեն: Այ - սոր քա - հա - նա - յա - պետ ճըշ - մա - ղիտ աստ -  
 ուա - ծա - յին օ - ղի - նօ - քըն պատ - ուեալ կանգ -  
 մէ զբառ - ան - կիւն սե - ղան խա - չին ար - ժա - նա -  
 պէս պա - տա - ռա - գեալ բաշ - խէ զմար - մին եւ զար - իւ - մըն  
 Տեառն. մաք - ռա - պէս մեր - ծե - ցա - ղուք փրդ - կեա - լըք մոր ժո -  
 ղո - վուրդք. եւ հայ - ցե - ցեք ի Քրիս - տո - սէ զի  
 շնոր-հես-ցէ ըզ - սա մեզ ընդ եր-կայն ա - - - տուրս: